Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

28
2-20
3191

V 29 9

2010

Ш
Ф 2001

200
255-24
2773

ՏԵՍՔՈՒԹԻՒՆ

ՀՈՎՈՒԿԱՆ

200
255-9

ՏԵՍԱՌՈՒԹԻՒՆ

ՀՈՎՈՒԱԿԱՆ

ՃԱՌՔ

Տ. ՄԱՐԿՈՍԻ ԶԱԿՈՒՌԵԱՑ, ՈՐ ՆԱԽ
ՀԵՆԵՏԱՑ, ԵՒ ԱՊԱ ՎԻՃԵՆՑԱՑ
ՔԱՂԱՔԻՆ ՎԵՐԱՏԵՍՈՒՀ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ

Ի ՊԱՏՈՒԵԼԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԺԱՊԵՏԻ
ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՊՐՈՒՍԱՑԻՈՑ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ՆԵՐՍԷՍԻ ՎԵՀԱՓԱՌ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Տ. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՍՐԲԱԶԱՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ ՊՕԼՍՈՅ Տ. ՅԱԿՈԲԱՅ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԱՅՑ

1856

Հ.Ս.Խ. Հանրապետության Գրադարան
Государственная Библиотека
С.С.Р.А.
7/XI 1922
Именная Библиотека
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
(1004/9134)

30954-42

14103-58

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Կարևորագոյնն 'ի պաշտամունս հովուաց հոգւոց՝ որոց յանձնեալ է եկեղեցի Աստուծոյ, է հրահանգել զանաւոր հօտն Քրիստոսի յուսմունս հաւատոց և բարուց։ Յայս իսկ ամենայն հարք և առաջնորդք մեծ ջանս եդին քարոզութեամբ իւրեանց զանարատ հաւատս և զմաքուր վարս հաստատել 'ի միտս ժողովրդեան. զոր և տեսանեմք առ ամենայն առաջնորդս եկեղեցւոյ առ հինս և առ նորս, որ 'ի ղեկավարութիւն իւրաքանչիւր աղանց քրիստոսադաւանից կարգեալ իցեն։ Այսն այսորիկ ամենայն գիրք դոգցես հարց և վարդապետաց յածին զայսպիսեաք վարդապետութիւնք. և ոչ ոք շատ ասէ զառ 'ի նախնեաց գլուրեալն. այլ ամենեքեան որ 'ի քարոզու-

թեան պաշտօն են կոչեցեալք՝ 'ի գիր հարկանեն զոր ինչ պարտ և արժան վարկանին աւանդել հօտի իւրեանց ըստ պիտոյից իւրաքանչիւր ժամանակի։ Զ՝ի որպէս 'ի հաւատոյս աղանդք հերետիկոսաց, նոյնպէս և 'ի վարս մոլութիւնք ոչ միշտ միօրինակ բարգաւաճեալք են. այլ ոմանք խափանին և այլք զտեղի նոցա փոխանակեն. զանազանեալք տեսակաւ, այլ արդեամբք համանմանեալք միմեանց, 'ի կորուստ և 'ի վտանգ փրկութեան հոգւոց դէտակն ունելով։ Վ՝ասն որոյ հրահանգք բարուց որ ուղղին ընդդէմ շուայտութեան և շուայլութեան՝ անպիտանք իմն թուին 'ի ժամանակի յորում ագահութեանն ախտ իցէ զօրացեալ. զնոյն է իմանալ և զայլոց մոլութեանց, որպէս վարդապետական բանք աստուածաբանից ընդդէմ աղանդոց ինչ առ իւրեանց ժամանակաւ զօրացելոց, չունին զնոյն կարևորութիւն յետ խափանելոյ և 'ի մոռացօնս երթալոյ մոլորութեանն այնմիկ։ Վ՝ասն այսորիկ հարկ է ընդդէմ մոլութեանց և մոլորութեց զօրացելոց յիւրաքանչիւր ժամանակս ուղղել զխրատս հոգևորս։

Յաղագս այսորիկ պատշաճ համարեցաւ զառաջիկայս գործ Մարկոսի Զակուռեայ եպիսկոպոսին Զէնեռայ քաղաքի Խաղացւոյ՝ զԹարգմանեալն բազմաց յառաջ յիտալացի բնագրէն, այժմ 'ի լոյս ընծայել. զի եղծմունք բարուց ոչ ոչոց ընդդէմ խօսի բարենախանձ եպիսկոպոսն, յաճախելով հաղորդակցութեանն եւրոպական անձինս սպրդին և 'ի մեզ. սակայն և յոլով բարեմասնութիւնքն որ առ նոսա գտանին, զի յերկրի պարարտացելում գիտութեամբ և հանճարով՝ ըստ չափու որոման և ցորեանն ուռճանայ, առ մեզ անտեսք լեալ թագչին։ Վարդապետաց բանին կենայ անկ է խըլել զորոմունսն, և զցորեանն սերմանեալ մշակել. մինչև տանուտեառն եկեալ ըզվերջին մաքրութիւն գործեսցէ։ Այլ ժողովուրդն շահեալ յարդիւնաբեր վարդապետութէ գրոցս՝ մտադիր ընթերցմամբ, փառս տայէ շնորհողին բարեաց, որ բազմապատիկ օրինակօք խնամ փըրկութեան ունի ամենեցուն։ Այլ ամենեքեան յամ ժամանակի յունկնդրութիւն քարոզութեանց հասանեն գտանիլ. զի այս ընդ սահմանաւ ժամանակի փակեալ

է. այլ յորժամ մատեան վարդապետու-
թեանց 'ի տիպ արձանացեալ 'ի ձեռս
ասացի իւրաքանչիւրոց, ամենայն ոք տէր
լեալ ժամանակին ընդհանրելոյն մա'ի տեառ-
նէ՝ կարէ գտանել ժամանակ բաւական
յընթերցումն և 'ի մտադրութիւն այս-
պիսեաց, միայն զի կամիցին։ Իսկ որ ոչն
հաճեսցին բժշկիլ, և ոչ ինքն իսկ Աստ-
ուած որ իշխան անձին ստեղծ զմարդն՝
բուռն առնէ կամաց նորա. այլ ազդ մի-
այն առնէ թէ ահաւոր պատասխանա-
տուութիւն առաջի կայ նորա 'ի հան-
դերձեալսն վասն ժամանակաց զորս կա-
րէր վարել 'ի բարին և ոչ կամեցաւ։

ՏԵՍԱՐԱԹԻՆ

ՀՈԳՈՒԱԿԱՆ



ԾԱՌ Ա.

Ի՝ Հոգեբանութեան յերկրորդական ասպիճան։

Ցանխանձելի համագումարումդ, որով պատուէք այսօր զմուտս իմ յայս տաճար աստուածեան՝ սիրելիքդ իմ Ձենէտացիք. և զնատիլս իմ յայս Աթոռ հոլուական՝ հանդիսիւ իմն զարդարէք, ոչ այնչափ հաճայս ինչ ընդունիմ, որչափ առիթս ներս առաջի մատուցանէ խորին և կարևոր խորհրդածութեանց։

Դաջ իմանամք, զի պերճաշուքդ եւ ոյժ, աղնիւ ընթացակցութիւնդ, խուռնելդ բազմամբոխ, խնձանք աւուրս՝ են արդարև կարի օտարոտի իրք 'ի մերոց

ըստ պատշաճի չափաւորութեանց . և ոչ զայսպիսի կայթիւն արժանաւորեցայ վաղ ուրեմն առ 'ի ձէնջ ։

Այս զինչ նշանակեն իրքս . զինչ ինչ աղդ առնեն մեզ ։ Լռելեայն փողք են սոքա՝ որք բանս հաւատոց աղդեն մեզ՝ և զկրօնսն . որով այդպէս ակն ածէք անձին , որ կայուցեալ է 'ի Յիսուսէ Քրիստոսէ տեսուչ հոգւոյ ձերոյ , որում փոխանորդ նորա զեպիսկոպոսի է տուեալ զպաշտօն ։ Ծածուկ աղդարարութիւնք են այս ամենայն , որով անձամբ խոստովանիք զպարտս հնազանդութեան որ ձեզ անկ իցէ , և զձեր պատկառուկ զոր ունիք առ սուրբ խորհուրդս՝ որոց կարդեցայ մատակարար ։ Զայնք և աղդմունք , որք յուշ բերեն մեզ կշռադատել զվսեմութիւն պաշտամանն , և զբազմապատիկ ծանր ծանր հոգոցութիւնս՝ զորոց արժան է մեզ բուռն հարկանել 'ի պահպանութիւն պաշտամանս ։ Այս իսկ էր խորհուրդ մտաց մեծի եպիսկոպոսին սրբոյն Օգոս-

տինոսի՝ յիւրաքանչիւր տարեդարձ հան-
դիսի եպիսկոպոսութեան իւրոյ. «Սեր-
կեանս օր ազգ առնէ ինձ ինամով խոր-
հել զմեր ծանրաբեռնութիւն»։ Ոչ որ-
պէս թէ նախ ոչ ինչ զայսցանէ խորհե-
ցեալ՝ այժմէն իսկ նորոգ 'ի միտս գայ-
ցէ մեր, այլ զի յառաջնոյ անտի վայր-
կենէ ընտրութեան մերոյ այդ է մեր
խոկումն։ Այլ օրս այս կամեցեալ ձայ-
նակցել սրբոյն՝ կենդանագրէ 'ի տես մեր
առոյգ երանգաւ. և այնպէս պայծառ
նկարէ մեր առաջի՝ մինչև անտեսութի
կեղծել անկարէ մեզ ընդ այնպիսի բու-
ռն տպաւորութիւն։ «Օրս այս այն-
պէս զմ'ներկանէ զմիտս, զի 'ի խորհրդ-
դոյ յայսմանէ դարձուցանել զուշ իմ
ոչ կարեմ»։ Այլ այս յայն սակս՝ զի տր-
կարութեան մեր յիշատակաւ երկիցուք
և զահի հարցուք 'ի ծանր բեռանէս, և
յանաչառ դատաստանէն որ 'ի վերայ կայ
մեր։ Այլ խոր խոնարհեալք ընդ առա-
քելոյն առաջի Աստուծոյ և Հօր Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի, հայցեսցուք

զՆորհս Հոգւոյն սրբոյ մեզ 'ի լոյս և 'ի զօրավիգն։

Դիմեսցուք բարեյոյսք առ մատակարարն առատաձայնին Շնորհայ առ ամենասուրբ կոյսն Մարիամ՝ լինել մեզ զօրութիւն 'ի տկարութեան մերում։ Խաղեսցուք կալցուք մեզ խոնարհութեամբ զՀրեշտակն պաշտպանս այսոր եկեղեցւոյ, և զմեծ խոստովանողն և զքահանայապետն զսուրբն Դիոնիսիոս՝ որ յաստուկ պաշտպաննէ մերում ամ այս քաղաքի։

Ապա՝ որդիք սիրելիք, առաջի արասցուք ձեզ զվտանգն՝ որ դարձցի ձեզ ապա 'ի միսիթարութիւն։ Ասացից ընդ խոնարհ բանից սրբոյն Օգոստինոսի։ «Զինչ լինձ առնել է այսօր, բայց թէ զիմ վտանգ մերկանալ ձեզ, զի ապա լիջիք լինձ 'ի խնդութիւն»։

Դրաւական ունիմք զժողովդ՝ զոր այսօր ժողովեցարուք. վկայ անսխալակ՝ թէ յօրէ յայսմանէ և անդր՝ ձեր համարեսջիք զիս բոլորովին. սիրեցէք զիս՝ որպէս և ես գորովանօք սիրեցից զձեզ։

Աղէ՛, սիրելիք, եկայք մատերուք առաջի սեղանոյս՝ որովք մերձիմք առ Աստուած նուիրական պաշտամամբք. դաշինս կռեսցուք ընդ Աստուծոյ փոփոխակի. «Ուխտս դիցուք առաջի Տեառն». Բ. Մնաց. Լդ. 31։ Մեք վստահացեալ յօգնութիւնն աստուածային՝ ուխտեսցուք 'ի մեր կողմանէ, ունել որպէս այժմ, նոյնպէս և առ յապա առաջի աչաց ղորբութի եպիսկոպոսական պատուոյն, և զպարտս պաշտամանն՝ ամենայն արթնութեամբ պաշտել զնա և խնամով մեծաւ, 'ի տածել զհոգիս՝ որոց եդ զմեզ Աստուած՝ հայր, վարդապետ և հովիւ։ Այլ և դուք խոստասէրք՝ և՛ որդիական ակնածութիւն և սէր դորովական առ հրահանգս մեր և աղդեցութիւնս, որոց ոչ այլ նպատակ ինչ է, բայց որ յօգուտ է հոգւոց, և յաւիտենական կենացն առքերող։ Ահա այսպէս փոխադարձ կապովք սնդեալք ընդ միմեանս՝ ասել կարացուք. «Գնացուք միաբանութիւն 'ի տանն Աստուծոյ». Սղ. ԾԴ. 15։

Քաջ գիտէք սիրելիք, զի պատգամաւորք եմք Քրիստոսի առ ձեզ, պահպանել զհաշտութիւնն՝ որ ընդ Աստուած և ընդ ձեզ, բերեալ առ ձեզ զնորա հրամանս և զօրէնս՝ և տարեալ առ նա զձեր հլութիւն և հնազանդութիւն. «Այսպէս Քրիստոսի պատգամաւորիմք, և Աստուծոյ բարեխօսութիւն մեօք». Բ. Կորն. Ե. 20։ Այս է աղբիւր եպիսկոպոսական վսեմափառութեան, և պարտք պաշտամանն՝ յոր տուաք զանձինս։ Այսպա մեզ բաժինք պարտին լինել անկեղծաւորքարքք, և անսգիւտ վարքք. սոքա պարտին կնիք լինել 'ի հոգւոյ մերում՝ որոշիլ յայլոց, քան մարմնոյ զգեստուք յաչս ռամկին պերճ հանդիսանալ։ Այս և նոյն իսկ արտաքին շքեղութիւնք՝ որք չեն սնոսի գիւտք օտարոտի պաճուճապատանաց, այլ հաստատուն և պատկառելի յիշատակարանք հին պատարագաց և գերապայծառ կրօնիս, միշտ յուշ պարտին մեզ ածել թէ պարտ է մեզ զհետ գնալ զհետոց, և նմանել այնմ՝ զորոյ

նշանս յանձին բարձեալ բերեմք։ Ար-
ժան է մեզ առնել զայն՝ զոր սուրբն
Պաւղոս յանձն առնէ Տիմոթէոսի և Տի-
տոսի զորս եպիսկոպոսունս արար, ու-
սուցանել յորդորել և քարոզել. որպէս
զի մի երբէք վերծցի յուշոյ մերմէ մերս
պարտաւորութի՝ ընթացակիցք եղայք
'ի հանդէս նուիրանացս։ «Եպիսկոպոսին
պարտ է դատել, մեկնել, սրբել, կար-
գել, մկրտել և հաստատել»։

Այս գործ եղիցի մեզ բաղում աբք-
նութեամբ զդոյշ կալ 'ի հրահանգս հա-
ւատոյ և 'ի մատակարարութեան սուրբ
խորհրդոց։

Մինչ առաջի դնել ձերոց աչաց՝ մի-
անգամայն և որոշակի զհրամանս աստ-
ուածային օրինաց՝ յուղղութի հոգւոց.
և տեղեկագոյնս զձեզ առնել աւետա-
բանական պատուիրանաց և խրատուց՝
որոց եմք քարոզք. «Ցուցանել զխոր-
հուրդս աւետարանին՝ վասն որոյ պատ-
գամաւորիմ». Եփես. Զ. 19, 20։

Գործ եղիցի մեզ բորբոքել 'ի ձեզ

զեռ անդն, քաջալերել զձեզ յառաքինութիւնս քրիստոսեանց, մեծաւ փութով ստածել 'ի խաղաղութիւն զձեզ. խրատ խոյս տալ ձեզ 'ի դործ հոգևոր և մարմնաւոր ողորմութեանց, յուսումն յանկուցեալ զանգէտ մանկունս. հասանել 'ի վերայ 'ի սէաս աղքատաց և անընչից: Հատուսցուք զպարտս մեր հաստատելով զյողդողդան, բուժելով զվատառողջն, զբեկեալն յանձանձելով, առաջնորդ լինելով մոլորելոց, 'ի խնդիր ելանելով կորուսելոց:

Առ այս արժան համարեսցի տէր զօրացուցանել զսկարութիւն մեր, որ բարուոք միտս ունիմք յարդել զսաղանդն՝ որ 'ի մեզ, զջանս և զերկս վաստակոց 'ի հատուցումն դաշանցս յանձն առելոց. (դիցուք ուխտս առաջի տեառն:) Ժամանակ մերումս տկարութեան առաքեսցուք առ ձեզ ձեռնարկս աւետարանական՝ լուսաբանեալս վճռովք մեր. զի մի և առ ձեզ յարմարեսցի սդտանաց բանն. «Մանկունք հաց խնդրէին, և

ոչ էր՝ որ բեկանէր նոցա »։ Ղէ։ Դ։ 4։

Այլ և զդոյշ կացցուք, մի գուցէ փոխանակ սրբոյ Բաղարջին, որ ըստ առաքելոյն՝ նշանակ է անկեղծ հաւատոյ և անախեղծ ճշմարտութեան, 'ի վերբ երևեսցի շառաւիղ մոլորութեան և խաբմոր առասպելեաց, որ ապականեալն է քացախով չարութեան և անօրէնութեան։ «Աբասցուք ոսնա՝ մի 'ի խմորն հին, և մի 'ի խմորն չարութեան և անզգամութեան, այլ յանխմորն ատուգութեան և ճշմարտութեան »։ Ա։ Կրն։ Ե։ 8։

Յուշ լիցի մեզ, զի երբեմն եպիսկոպոսութիւնն էր պատրաստութիւն ինչ առ մարտիրոսութիւն։ ապա համեմատութեամբ և այժմ՝ արժան է լինել այսմ։

Պարտ է եպիսկոպոսին լինել մարտիրոս հաւատարութեան՝ իրաւանց՝ և ամբծութեան, մարտիրոս կրօնի և փառաց Տեառն։ պարտ է նմա յոչինչ համարել զամենայն որ կանս։ «Յաջմէ և յահեկէ (ըստ առաքելոյն) փառաւք և անարգուս

թեամբ. իբրև անծանօթք և ծանուցեալք». Բ. Կորն. Զ. 8։ Պարտ է նմա հոգալ միայն զոգւոց փրկութիւն։

Այլ մեք պատրաստ եմք առ ամենայն գործ պաշտամանս մերում. դնեմք 'ի ձեր վերայ զամենայն ինչ մեր, զողջութիւն, զյարդ, և զկեանս իսկ զլեսովին։ Պատրաստ եմք թողուլ զանձինս յամենայն դժոխըմբեր աղէտս, քան թոյլ տալ ծըփիլ նաւուս սրբոյ 'ի մէջ ամբարիշտ և վատշուէր չարաբարոյութեանց։ «Ուխտս դիցուք առաջի Տեառն»։

Այլ զինչ և ձեզ անկ իցէ ըստ կըռելոյ դաշինդ, և ըստ սրբոյ կոչմանդ, յոր գտանիք այժմ։ Աղաչեմ է ձեզ միշտ սիրելիք, յարդելլ զձեր կոչումդ՝ պատուելով 'ի մեզ՝ զոր անձամբ ունիմք ըզվերհատառ առաքեանն. 'ի մեզ՝ այլ ոչ 'ի մէնջ։ Մեծ քահանայապետն Ղեւոնդիոս ասէր առ ժողովուրդն Հռովմայ. «Հայեցարուք 'ի սփիւռս լուսոյ Աթոռոյն՝ յոր նստիմ, յարգասիս առաքելոյ՝ որք զայս հիմնեցին. և թէ՝ և ոչ դոջիք յիս

գնորհս և զառաքինութիւնս՝ որովք արժանի համարեցայց գահակալութեան, զգահն պատուեսջիք արժանապէս. քանզի պատիւ աթոռոյն մնայ անվկանդ նա և 'ի ձեռս անարժան ժառանգաւորի։

Ճշմարիտ է, զի մեր 'ի մեզ ինքեանս հայեցեալ՝ ոչինչ իմիք պատուոյ արժանաւոր զանձինս գտանեմք. այլ ոչ վասն այսորիկ թոյլ տայ մեզ աստիճան մեր՝ զաստուածային զօրութիւն գաղտագողի յանձին կրել, որովք որոշեալ է զմեզ Հոգին սուրբ։ Այս յիշեցուցանէ մեզ զհեղինակ շնորհիս, որ է Յիսուս Քրիստոս. զնախնի ժառանգակալս, որ են սուրբք Առաքեալքն։

Այլ ձեզ արժան է 'ի նուաստութեանս մերում բարեփառ հաւատով հայել յայնոսս և եթ՝ որք 'ի շնորհացն Աստուծոյ են 'ի մեզ, որ գիտէ զանգոյն 'ի գոյակցութիւն ածել, զակարութիւնն 'ի զօրութիւն փոխել՝ և զկաւարն 'ի լոյս։ Կարեմք ամենայն ճշմարտութեամբ ասել զանձանց, զոր ինչ առ խոնարհուս

թեան միայն ասէր Բեռնարդոս. «Այս եմ հրաշք ժամանակիս»։ Այսինքն՝ հայեցեալ՝ի գերազանցութիւն պատուոյս՝ մեծ ումն եմ. հայեցեալ յիմ արժանաւորութիւն և յարգասիս՝ ոչինչ եմ։ «Հրաշք ժամանակիս». Այսպիսկոպոս եմ, այլ զանուն միայն զեպիսկոպոսութիւն՝ և զպերճութիւն և զիշխանութիւն ունիմ. մեծ ումն եմ, դարձեալ և ոչինչ եմ։ «Հրաշք ժամանակիս». Այլ ձեր ակնկառոյց լինել անկ է յիս, ոչ ըստ իմում մասին որ ընդ մարդկային գիւրայեղութեամբ է, այլ ըստ այնմ որ նշալ է երկնային զօրութեանն. և ունկն մատուցանել ձայնի եպիսկոպոսին՝ որ խօսի, որ աղօթէ, որ երդնու, որպէս ասէ սուրբն Օգոստինոս։ Այս առաւել յայնժամ, իբրև անարգեալ պախարակիցէ զձեր մոլութիւնս կամ անձամբ, կամ՝ի ձեռն նուիրակաց իւրոց։

Կամք յուխտիս մերում սիրելիք, եթէ բարձրացուսցուք զձայն մեր պատմել զմեղս ձեր, և կարկառեսցուք ձեռս՝

բառնալ զչարաչար սովորոյթս, որք են դառնարմատ սրտմտութք, զոր տայր Թշնամի ցանէ 'ի վերայ բարւոյ սերմանն՝ յապականել զբարեբոյսն աստուցեալս, և նուաղել յերկնային մշակէն զընտիր և զտոհմականաց լի հունձն։ Այլ այս է, յոյր սակս Տէր ընտրէ առաջնորդս եկեղեցւոյ իւրոյ ըստ սրբոյն Օգոստինոսի։ Այլ վայ հովուին որ լռէ, ասէ Աստուած իւրովքն մարգարէիւք. "Վայ է ինձ եթէ լռեցից". Յոյժ. Զ. Ե. ըստ լատին թարգմանութեան։ Վայ զօրաւարին, որոյ տեսեալ զգալ Թշնամւոյն՝ ոչ փող հարկանէ։ Այլ թէ անհոգայոյց ուղղել, ասէ նոյն սուրբն Օգոստինոս, չար ևս եղէց քան զմեղուցեալն։

Ա՛ղէ, սիրելիք, հանգուսջիք զոգի մեր ըստ այսմ մասին։ Սուրբն Պաւղոս զնոյն յանձն առնէ մեզ 'ի ձեռն Տիմոթեայ՝ յանուն Յիսուսի որ դատելոց է զկենդանիս և զմեռեալս. խրախոյս տայ մեզ խրատել, աղաչել, սաստել քաղցրամտութք երկայնմտութք և տոկոյ մտաւք։ Կամիջիք

մնալ մեզ խարդախս ոմանս յատենի Աստուծոյ դատաւորի, և պարտաւորս անն-
ներելի տանջանաց։ Մէջ երբեմն արդարև։
Այսպա դուք սրտացուցէք զմեզ, քաջալե-
րեցէք. ձայնատուք ի դիմի հարկանել չա-
րեաց, զի չարքն փրկեսցին։ Համաշունչ
ինձ եղերուք խլել յընտրեալ այգեւոյ աս-
տի զգաղձս անպիտանս, զփուշս ժան-
տաժուտս և մոլեբոյսս. որպէս զի ա-
ձեսցի այգին և պտղաբերեսցէ ոչ ա-
զոխս թթուահամս ատամնառուս, այլ
խաղողս ընտիրս անուշուն ընծայեսցէ
երկնային այգորդին, որոյ գոլոր ձեռաց
է տունկդ հոգևոր. “Ուխտս դիցուք
առաջի Տեառն”։ Հաճեսցի Տէր՝ որ բա-
րեսէրն է, երկիր առնել զձեզ ընդու-
նակս սերմանց հոգևոր ազդմանց. որ-
պէս և այժմ ցուցանէք զանձինս խան-
դոտս առ մեզ՝ և պաշտօնասէրս. և պայ-
ծառ խնծանք սերկեան հրճուանաց մի
մացէ ընդ մտից արևուն մթանալ։

Օ, ինչ ասա մնայ մեզ։ Մնայ զի յու-
շի կալեալ զգերակայ բարձրութիւնս՝

ասուէն իսկ առաջի սրբութեան սեղանոյս հանդիսիւ ուխտս կուիցէք պահել առ մեզ յարդ որդեկան, և գորովուն սէր քաղցրագութ. զի յամենայն 'ի պէտս ձեր և 'ի կարիս դիմեսջիք առ մեզ որպէս որդի առ հայր, որպէս բարեկամ առ բարեկամ։ Յաճախեսջիք յեպիսկոպոսարանս մեր, որ է մեր ասուն բնակութեան. քանզի բաց է դուռն նորա առ ամենայն խնդիր ձեր, առ սէր ձեր, առ պէտս ձեր։

Այլ զինչ քրիստոնէիւն է՝ որ յածի 'ի ձերում միջի, և զպայծառ աւուրս հանդէս խրթնացուցանէ. յիշեմ զոր Երեմիաս անէծ զուխտազանցս օրինաց. "Այսպէս ասէ Տէր. անիծեալ լիցի մարդն այն, որ ոչ լուիցէ բանից ուխտիս այսորիկ". Երեմ. ԺԱ. 3. ըստ լատին թարգմանութեան։ Խնդրէ, տեսանէ Տէր, զի առանց կամաց մերոց զաստուածային անէծն ածեմք 'ի վերայ ոմանց ցանկալի որդեկացդ իմոց, յորոց վերայ ցանկամք տեղալ զաստուածային օրհնութիւն։

Այլ մարթ ի՞նչ իցէ ումեք դատանել յայսպիսում հրահանգեալ և մարգասէր ազին՝ որ ընկճեալ յողին կայցէ ընդդէմ հաստատութեանն ուխտիս այսրիկ, կամ պատրաստ լիցի խժաբար խըրամատել զայս՝ ոգի ոք չարագրգիռ, անզգամ և խռովայոյզ։ Ով ոք «կամի հակառակող լինել». Ա. Կորն. ԺԱ. 16. այնպիսին 'ի Նոցանէ է, զորոց աստուածայինն Պաւղոս ողբայ առ Թեսաղոնիկեցիս. «Սատակութեամբ գնան, գործ ինչ ոչ գործեն, այլ յուլայեալք հետաքրքիր լինին». Բ. Թեսաղ. Գ. 11։

Այնպիսոյն մերկանամք զթակարգն՝ յոր պարանի, մեկնեմք զապաշաւն՝ զորմէ հանդերձի բուռն հարկանել։ Ով. ահա՛ սոյն իսկ այսր աւուր հանդէս լիցի այնպիսոյն 'ի վկայութիւն. «Դարձին՝ քըս այս եղիցին ձեզ 'ի վկայութիւն». Յեսու. Ի Դ. 27։ Նոյն և հրեշտակք՝ որք են 'ի պահպանութիւն սրբոյ տաճարիս, և նշխարքք սրբոց, և պատուական ոսկերք վկայից՝ որք հանդիսին յանդորրու-

ընդ այսաքիւք սեղանովք, գիտակիցք սրբոյ հանդիսիս, որով հաստատեցաւ սերկեւանս ուխտ՝ վկայք եղիցին ընդդէմ այնպիսւոյն։

Իսկ առ մեզ՝ յայտնեցի առաքելութիւնս մեր առ ձեզ մնայուն 'ի սէր, 'ի համբերութիւն և 'ի խաղաղութիւն. «Նշանք առաքելութեան մերոյ ամենայն համբերութեամբ» Բ. Կորն. ԺԲ. 12։ Ո՛չ երբեք յայդ սակս ատեցուք զայդ եղբայր և զորդի անճանաչող, բաբերաբել նմա, զամենայն հոգալ՝ որ 'ի շահ նորա իցէ. աղօթս առնել վասն նորա արտասուօք բազմաւ։ Ասացուք առ Տէր. «Խնայեա՛ 'ի պատանեակն իմ Աբեսողոմ» Բ. Թագ. ԺԸ. 5։ Ոչ թէ և թշնամի, սակայն որդի է, և որդի փաբելի. հաստատուն կալցուք զխաղաղութիւն նա և ընդ այնոսիկ՝ որ խաղաղութեան թշնամիքն իցեն։ «Լաւ էր խաղաղարար, յորժամ խօսէի՝ մարտնչէին ընդիս։ Ընակեցաւ անձն իմ ընդ այնպիսիս՝ որք ատէին զողջոյն» Սաղ. ՃԻԹ. 7։

14103-ՏՅ (1004/19137)
Հ.Ս.Խ.Հ. Հանրային Գրադարան
С.С.С.Р. Центральная Библиотека
7/XI 1922
Մոսկվա, Մոսկվայի
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Սովին ոգւոյ խաղաղութեան վստահ եմք, զի հովանի արասցէ Տէր զաջ իւր 'ի վերայ մեր ամենեցուն, որպէս երբեմն 'ի վերայ տոհմին Յուդայ՝ միջնորդութեամբն Եղեկիայ արքայի։ Այլ և 'ի վերայ ձեր՝ որք համախմբեալք 'ի մի կամս՝ ունկնդիր լինիք և շահիք 'ի հայրական խրատուց աստի մերոց։ «Լաւ է, զի ձեռն Տեառն տալ նոցա սիրտ մի, զի արասցեն... զբանն Տեառն». Բ. Մնա. Լ. 20. լատ. Թարգ։ Այս աստուածային շունչ համակամութեան և խաղաղութեան բերեալ առ մեզ 'ի Յիսուսէ Քրիստոսէ, և 'ի նմանէ ժառանգութիւն թողեալ առ ամենայն աշակերտս իւր, և նոքօք աւանդեալ ճշմարիտ հաւատացելոց, եղկցի միշտ ընդ ձեզ. «Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն». Ա. Թէսաղ. Ա. 2։ Խաղաղութիւնն որ 'ի հոգւոյ մերում նշան դրոշմվէ զառ Աստուած բարեկամութիւն. խաղաղութիւնն որ թագաւորեսցէ 'ի տունս ձեր, պատշաճեալ զսիրտս ձեր՝

տուչութեան շնորհաց Հոգւոյն սրբոյ՝ որ 'ի ձեզ իջանէ, բորբոքեսցէ զձեզ և արծարծեսցէ քաղցրութեամբ աստուա ծային սիրոյն. «Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն». ամէն։

ՕՐԱՐ.

Ի յարոգութեան Յիսուսի Քրիստոսի, օրինակ Յարութեան մերոյ 'ի նոր կեանս՝ որ ընդ Աստուծոյ։

Անանգամայն օժանդակեն մեզ 'ի բացատրութիւն փառաւոր խորհրդոյ յարութեանն Քրիստոսի, և 'ի մեծարել և սրբել զվսեմափառ տօնս հրաշալի, ընութիւնն, հին կտակն, և սուրբ Աւետարանն։

Ընութիւնն օգնէ իւրովք օրինակօք. և օրինակ է յարութեան՝ արեգակն ծագեալ յետ թաղմանն 'ի մութս. «Արև մեռանի, և դարձեալ ծնանի». ասեն

Տերտուղիանոս և Գրիգորիոս։ Գարուն՝ որ ծաղկունս նորաստեղծէ, և աշունն՝ որ զծառոց պտուղս ընծայէ մեզ, և զսերմունս յառաջածէ. սերմունք նորածնեալք յիւրեանց գերեզմանէ. որ ծուի նորափետուր զարդարեալ. օձ՝ ըզհին խորին մերկացեալ, և նորովն նորազգեստեալ. և եղջերու դեռակենդան զուարթացեալ խայտացեալ առ վճիտ աղբերբք. ամենեքեան սոքա նշանակք են խորհրդաւորք, նշանակք յարութեան, որպէս սուրբ հարքն ասեն, Եպիփան, Բասիլիոս, Ամբրոսիոս, Երոնիմոս, Օգոստինոս, որ 'ի պաշտպանութիւն մերոյս հաւատոց զբնութիւնն ածէ զօրավիգն։

Հին կտակն նախանկարէ զայս՝ իւրովք օրինակօք. և օրինակ է յարութեան՝ աղաւնին որ դարձաւ 'ի տապանն՝ ոստոս ձիթենւոյ կալեալ 'ի բերանին. Իսահակ 'ի զոհ գնացեալ 'ի լեառն, և անտի դարձեալ կենդանի. Յովսեփ հանեալ 'ի գբբոյն, և իշխան եղեալ Եգիպտոսի. գաւազանն Ահարոնի որ ծաղկեցաւ ըստ

սեռի իւրում. Յովհան եղեալ յորովայնէ կիսին. Դանիէլ 'ի գբոյ առիւծուց. ա-մենեքեան նշանակք յարութեան, որ-պէս ասեն ընդ Թէոդորեատոսի սուրբ հաբք և մեկնիչք, օրինակք են յարու-թեան 'ի կենագործել զմեր յոյս։

Այլ զայս ամենայն որ ինչ ազգին մեզ օրինակաւ 'ի բնութենէ և 'ի հին կտա-կէն, նորոգէ յուշ մեր սուրբ Աւետա-բանն, և վաւերացուցանէ և հաստատէ և կնքէ իւրով անստերիւր վկայութիւն ասելով. Յարեաւ, յարեաւ։ Վկայք են այսմ կանայք բարեպաշտք գտեալք յայն-ժամ առ գերեզմանաւն. սարսափ զին-ուորացն՝ որք պահէին զգերեզմանն. ա-մօթ փարիսեցւոց թշնամեաց խորհրդ-ոյն, և հանդիպումն առաքելոց ապշե-լոց։ Վէմն, այո՛, նոյն իսկ վէմն յայտնէ զնա, որ կափարիչն էր գերեզմանին։

Յարեաւ, ասէ սուրբն Թովմաս, 'ի վճար արդարութեան. որում կամք է-ին, զի որ խոնարհեցաւն մահուամբ ջաւ և մահու խաչի, բարձրասցի յաղ

թանակաւ՝ փառաւոր յարութեամբն։

Յարեաւ 'ի վճար ողորմութեան, ասէ սուրբն Օգոստինոս, 'ի լրումն փրկութեան մերոյ. յոր ոչ բարուք յուսայաք, եթէ չէր նա յարուցեալ։

Հուսկ ապա՝ յարեաւ 'ի վճար գթութեան և սիրոյ, ասէ Բոնավենդուրա, տալ մեզ օրինակ հոգևոր յարութեան մերոյ 'ի մահուանէ մեղայ 'ի կեանս շնորհայ։

Ի մէջ այսր ամենայնի՝ որք առաջի ընծային մեզ 'ի խորհուրդ յարութեան 'ի շահ մեր, կալցուք մեզ նպատակ ըղձերջինս զայս խորհրդածութիւն։ Յարութիւնն Քրիստոսի օրինակ է և նրկարագիր յարութե մերոյ 'ի նոր կեանս ըստ Աստուծոյ, ըստ երկուց մտածեալ։ "Յարեաւ ճշմարիտ". Ղ՚ուկ. ԻԴ. 34. առաջին հանգամանք յարութեան։ "Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց, այսուհետև ոչ մեռանի". Հռովմ. Զ. 9. երկրորդ հանգամանք յարութեան։

Ա. Յսպէս պարտի լինել և մեր յարու-

թիւն, այսինքն ճշմարիտ և իրական, (այս ՝ա. մասն)։ Ինայուն և տեւական. (և այս ՝բ. մասն)։ Ի տեսանել սրբոց առաքելոց զՏէրն՝ զոր մեռեալ կարծէին և թաղեալ՝ կենդանի և խօսող, ապշեալ մնացին. ուշակորոյս եղեն առ զարմանալեայն, և ոչ կարէին հաւանել՝ թէ մարմին իցէ այն ճշմարիտ. յանձն առնուին կարծել զայն մանաւանդ պատրանս երևակայութեան, ասուերս ինչ առ աչք. «Խռովեցան և համարէին ինչ ոգի տեսանել». Ղ՚ուկ. ԻԴ. 37։ Յայնժամ ոչ կամեցաւ Յիսուս, զի կացցեն մնասցեն նոքա յայն տարակոյս. ասուգէ նոցա զճշմարտապէս յարութիւնն. տեսէք ասէ զձեռս իմ և զոտս. շօշափեցէք զվերս իմ, տեսէք զի չէ՞ առ աչք. մարմին իմ ճշմարիտ է և իսկական. «Ոգի մարմին և ոսկերս ոչ ունի». Ղ՚ուկ. ԻԴ. 89։

Հարցանէ ասա սուրբն Յովհան ոսկեբերան. զի հոգ էր Քրիստոսի ասուգել առ աշակերտսն զճշմարիտ յարութիւնն. և պատասխանէ. բայց յայլ

պատճառաց նա և վասն այսորիկ զի տայցէ մեզ ճիշտ դաղափար դարձի մեղաւորաց, և յարութեան նոցա 'ի մահուանէ մեղաց 'ի կեանս շնորհաց. որովհետև յարութիւն նորա էր օրինակ և նախագիծ յարութեան մերոյ։ Բանզի թաղեցաք ընդ Քրիստոսի 'ի մահ, պարտ է մեզ զնոյն օրինակ յառնել 'ի նոր կեանս. "Որպէս յարեաւ Քրիստոս 'ի մեռելոց, նոյնպէս և մեք 'ի նորոգութիւն կենաց շրջիցուք". Հռովմ. Զ. 4։

Այս առ հոգևոր օգուտս հոգևոյ մերոյ 'ի մեզ ինքեանս դարձցուք սիրելիք, և տեսցուք թէ և մեր յարութիւն 'ի նոր կեանս, և բարեկամութիւն ընդ Աստուծոյ իցէ այսպէս. ճշմարտութիւն և իրօք իցէ, թէ սոսկ կարծիք ինչ և ցնորք առ աչօք։

Արդ իսկ ժամ էր, զի դուք սվ քրիստոնեայք, ծառայք մեղաց և անբարի սովորութեանց և յանցանաց, ինքնին խորհրդածուք կացջիք յաղագս անձանց ձերոց, և հրաժեշտ տուեալ 'ի

զուարթարար խորհրդոց, ողբս առջևք 'ի վերայ գերութեան անձանց, որպէս երբեմն իսրայէլեան ժողովուրդն գերեալ 'ի Բաբելոն՝ ողբայր 'ի վերայ գետոյն Յորդանանու, փափաքեալ իւրումն աղաւաւութեան. «Աստ գետս բաբելացւոց, անդ նստէաք և լայաք». Սղ. ՃԼՋ։

Բանեղն ըստ եմեսացւոյն, զոր օրինակ 'ի խմբել զայն ժողովուրդ՝ հնչէին փողք արծաթիք, այսպէս 'ի խմբել զձեզ յանցեալ քառասնորդս հնչեայ փող մարգարէին Յովելեայ. «Փող հարէք 'ի Սիովն». Յովել. Բ. 1. 15։ Պոչեայ ձայն ուրումն նախանձաւոր պաշտօնէի՝ զոր առաքեայ Տէր ժողովել զձեզ, 'ի ձայն բարձր գոչելով՝ արք, կանայք, ծերք և տղայք, եկայք խորհեցարուք զձեր թերուսաւ վիճակ և կոծեցարուք։ «Ողողվեցէք զժողովուրդս... ընտրեցէք ըզծերս, ժողովեսջիք զտղայս սանդիացս». Յովել. Բ. 16։ Եւ եղև այսպէս։

Եկեալ էք դուք միխիթարութեամբ բազմաւ, և խուռն բազմութեամբ 'ի

ձայն այսր փողոց յայսմ քառանորդի, տեսաք զձեզ ողբալ զանձինս լեր օրի-նաղանցս, և զուարճացաք ոչ ընդ լա-լիւն ձեր, այլ ընդ բացայայտ նշանն՝ զոր ցուցանէին այն կոծք. « Ոչ զի տրտմի-ցիք, այլ զի յապաշխարութիւն տրտմի-ցիք ». Բ. Կորն. Է. 9։

Արդ քանզի այժմու վիճակ ժողովուրդ-դեանդ է՛ վիճակ նորածնելոց ապաշխա-րութեամբ, վիճակ դարձելոց, և յարա-տաքին յառեալ երևոյթ՝ յարութիւն ձեր ճշմարիտ է և իսկութեամբ. բայց եթէ 'ի ներքս անդր յառեսցուք զաչս մեր 'ի սիրտս՝ լրտեսել զդաղանիս, կա-րի երկիւղ ունիմ սիրելիք վասն ձեր. և արդարև յանդորրու էք դուք, աղատա-ցեալք յապաշխարութենէ. քանզի նը-կատէք միայն 'ի խորհրդական խոստովա-նութիւն, և ոչ 'ի զառանցանս՝ որք կարեն կեղտ բերել 'ի ձեզ և պարուսաւորել։ Վստահ էք դուք զցաւոյ ձերմէ (յաղագս մեղաց), որ թերևս չեղև ընդհանուր, և ոչ ըստ բաւականին գործուեալ։

Գոհ էք դուք, զի արձակումն ընկալայք, որ Թերևս առ յանցանաց ձերոց գերեաց զձեզ մեղաց. ուստի որպէս երբեմն առ բազումս, նոյնպէս և այժմ առ ձեզ հնար իցէ ասել. «Ի՛ա նուն կենդանւոյ ունիս, և մեռեալ ես». Յայտ. Գ. 1։ Կարծես դու ո՛րդեակ, կենդանի զանձն քո, և զուարթուն, և առողջ. մի՛ գուցէ դի իցես վաղափուտ և որդնակեր. կարծես յանձնէ լուծեալ զշղթայսն՝ որք կապեալ կաշկանդեալ էին զքեզ 'ի սովորոյթ չարաչար, մի՛ արդեօք իբր զառաջինն նովիմբ կապանօք ձգիցիս։ Կարծես դու . . . ։

Ի վանգի էր երբեմն Սաւուղ վասն անձին և վասն զօրաց իւրոց 'ի հղօր զինուորութեանց փղշտացւոց, ուստի պարանեալ երկիւղիւ, անձկութիւ և անյուսութեամբ, անգիտացեալ յո՛ հասատատեսցէ զիւր յոյս, յուշ եղև նմա զոր անդ ուրեմն երբեմն լուեալ էր, (նախ քան զամս երկուս,) մինչև էր մեռեալ մարգարէին Սամուէլի, շուարեալ խոր-

հեցաւ երթալ առ չարադև ոմն կիւ-
սահմայ, առ կին ոմն գեսնակոչ. ասէ
ցնա. «Յարմ ինձ զՍամուէլ». Ա. Թագ.
ԻԸ. 11։ Ո՛վ անցայս խորհրդոյս. զայս ա-
սայ, և ահա անդէն Սամուէլ՝ մահա-
գուշակ դիմաք, ծերութեան հայեցուա-
ծովք, կնճռեալ ճակատու, բարկացայտ
աչաք գոչեայ բանիւքս այսպիւք. «Ո՞վ
ելկեցեր զիս ելանել ինձ». անդ. ԻԸ. 15։
Ո՛վ Սաւուղ Սաւուղ, և ընդէ՞ր ոչ թո-
ղեր զիս հանգիստ յիմումդ գերեզմանի.
յանդորրու էի, ընդէ՞ր զիս խռովեցու-
ցեր. ընդէ՞ր կոչեցեր զիս վերստին 'ի տես
թաղծագին աղետից. «զի՞ ելկեցեր զիս»։
Ընդէն բաղմաք յառաջ գուշակեցի քեզ
զկորուստ քո. և ահա այժմ լցան ժա-
մանակք. «Ընդ քեզ Տէր, որ-
պէս և խօսեցաւ». անդ. ԻԸ. 17։

Այլ թողցուք զՍաւուղ յիւրում
յուսահատութեան, և մեք 'ի նպատակ
մեր դարձցուք խնդրել ընդ սրբոց հարց,
թէ արդարև Սամուէլ յարուցեալ իցէ
'ի մեռելոց։ Թէպէտ բաղումք հաստա-

տեն զայս, այլ ժխտեն այլ սուրբ հարք՝ Տերտուղիանոս, Պրոկոպիոս, Եւգերիոս, Բեդա, Թէոդորիտոս, առ աչօք լսեն էր ասեն այն, և երևայթ, և ուրուական Սամուէլի. այլ ոչ նոյն ինքն Սամուէլ. «Դիւական ցնորք էր այն, և ոչ հոգի Սամուէլի»։

Եւ ոչ տեսանէք. ընդէր ի նոր կեանս կոչէ Սաւուղ զՍամուէլ, առ յուսահատութեանն, վասն երկիւղին, և ոչ վասն նիւթոյ ինչ հաւատոյ։ Եւ զինչ զօրէ Սաւուղ ի դէս, ի դիւթս, ի գետնակոչս, ի հարցուկս։

Ուրեմն խորհեաց, չէ՛ այն Սամուէլ. ուրուական նորա է։ Չէ՛ այս յարութիւն իրական, այլ պատիր, ցնորական, առ աչօք. «Ցնորք դիւական՝ և ոչ հոգի Սամուէլի»։ Արդ՝ տարակոյս է ինձ սիրելիք, մի՞ այսպիսի ինչ իցէ և ձերդ վերածնութիւն։

Եւ արդարև յումմէ՞ շարժեցաւ, առ մարդկանն ինչ ակնառութենէ, ի ձայնէ՞ արկածից ինչ բարեաց բաղդի, ի

յորդորանաց բարեկամաց և խնամակա-
լու�ց, առ երկեղու�կս. ապա առ աչք
է դարձդ ձեր, ստուեր է, ուրուական
է, և նմանութիւն ինչ դարձի. «Ցը-
նորք դիւական, և ոչ հոգի Սամուէլի»։

Այլ 'ի ձեռս բերել զայն՝ որպիսի մի-
ջոցաք վարեցարուք. զի՞նչ ինչ 'ի գործ
առեալ է ձեր. դիմեցիք առ Տէր՝ և առ
հաւատարիմ ումն սպասահարկու նորա,
որ հաստատիցէ զձեզ, լուսաւորեսցէ և
ուղղեսցէ. թէ ընդ հակառակն՝ որպէս
Սաւուղ 'ի դիւական արուեստս ապա-
ւինեցայք, այն է՝ խաբել զկոստովանա-
հայր ձեր՝ որ ոչ գիտէ զի՞նչ կրի 'ի ձեզ.
կեղծել երևոյթ ինչ ապաշաւանաց. 'ի
շրթունս և եթ առաջադրութիւնս ձե-
ւացուցանել՝ և ոչ 'ի սրտի։ Այլ ու-
րուական է դարձդ ձեր՝ և նմանութիւն
դարձի. իսկ ճշմարիտ դարձ ոչ է. «Ցը-
նորք դիւական, և այլն»։

Այլք 'ի ձեռս կշիռ արդար՝ կշռել
զայս մեր տարակոյս, տեսանել թէ յառ-
նելդ ձեր այդ նմանն է յարութեանն

Քրիստոսի, որ արդարև յարեաւ. և մեք առ սիրոյ համառօտութեան անցցուք 'ի միւս խորհրդածութիւնն. «Քրիստոս յարուցեալ է 'ի մեռելոց, այսուհետև ոչ մեռանի»։

Բաղձումք յարեան միջնորդութեամբ մարգարէիցն Եղիայի և Եղիսէի։ Որպէս ընթեռնումք 'ի սուրբն Մարկոս, յարեաւ դուստրն Յայրոսի, Ղազարոս, մանուկն որ 'ի Նային, որպէս պատմէ սքն Ղուկաս, գլ. Է։ Այլ այս ամ յարուցեալք անկատարք էին. քանզի դարձան յարուցեալք յիւրեանց առաջին հանգամանս. «Յարեան առ 'ի մեռանել վերստին». ասէ Գուլիելմոս փարիզեցի։

Ոչ այսպէս Տէրն մեր՝ որ յարեաւ՝ զի այլմի մեռցի. «Քրիստոս յարուցեալ է 'ի մեռելոց, այսուհետև ոչ մեռանի»։ Այլ ահա այսպէս քրիստոնեայք՝ պարտ է լինել և ձերումդ յարութեան, որով նորածնեալք եղէք 'ի կարգս հնորհաց, զի մի ևս անկջիք 'ի մեղս։ «Յարուցեալ առ Տէր դառնալով, զի այլմի մեռ-

ցիս յառաջին մեղանդ շաղեալ». ասէ Բոնավենդուրա։

Արդ՝ ժամ է տեսանել, թէ յարուցեանդ ձերոյ հանգամանք՝ այսմ յարմարակա՞նք իցեն. եթէ հաստատո՞ւնք իցեն թողուլ զամենայն հրապոյրս, զամենայն գրգիռս, զամենայն վտանգս մեղաց։ Օդայշ կացէք, դարձցի՝ դարձցի սատանայ բնակել առ ձեզ ամենայն չարարուեստ հնարիւք իւրովք. այն անմաքրութեան հրապոյրք 'ի տուփոտ ինչ տեսարանի նկարեսցին դարձեալ առաջի աչաց ձերոց. աշխարհ որ ամենայն ուստեք տեղայ 'ի վերայ ձեր որոգայթս, զի զմարդարէին 'ի մէջ առիցէ փոխաբերութիւն, զամենայն ճարտարանս հայթայթիցէ 'ի հաղբսն՝ ձգել զձեզ յիւր թակարդ. Սղ. Ի. 7։ Ո՞ գիտէ, զի՞արդ իցէ այժմս արձակումդ ձեր. և որչափ ըզդէմ կալցի յարձակմանց մարմնոյ, աշխարհի, և սատանայի։

Յորժամ ժողովուրդ Տեառն առաջնորդութեամբ և խրախուսանօք քաջի

զօրավարին Յեսուայ եդ զոտս իւր 'ի ճանապարհ բարեպարիշտ ընթացակցութեամբ հանդիսի Տապանակի ուխտին, ետես նորահրաշս, բաժանեալ ըղջուրն Յորդանանու յերկուս, թողեալ ցամաք և ապահով ճանապարհ յանցս։ Այլ այն ինչ տապանակն եհաս 'ի գետափն, և ընդ նմա փրկեցաւ ամենայն Իսրայել, և ահա՛ յորդահոսանք գետոյն կալան զառաջին գնացս իւրեանց, և կալան զնախնի ձորափորս իւրեանց. «Դիմեաց ջուրն յորդանանու 'ի տեղի իւր, և գնայր որպէս յերեկն և յեռանդ ընդ ամենայն յատակս նորա». Յես. Դ. 18։

Արդ երկնչիմք՝ մի գուցէ և յաւուրըս մեր նորոգեսցի այս դիպուած. մի արդեօք յաւուր յայսմիկ նորոգեսցի 'ի մէջ ձեր։ Այն չարայոյզ կիրք՝ որք յանծանօթս մնան 'ի ձեզ 'ի կերպարանս ծպտեալ բարւոյ, մի երբէք դարձցին կալցեն զընթացս իւրեանց ըստ ջրոցն Յորդանանու որպէս զաւուրցն առաջնոց՝ որ նախ քան զապաշխարութիւնն.

մի զայն կալցեն և յաւուր յայսմիկ՝ որ է օր պասեքի, որ Թարգմանի անցք։

Այլ ապա յետ անցանելոյ աւուրս այսմիկ՝ Թերևս մարթ ինչ եղիցի ասել Թէ այն ամենայն կիրք զիւրեանց զառաջին ճանապարհ կալեալ իցեն։ «Դիմեաց Ջուրն Յորդանանու, և գնայր 'ի տեղի իւր որպէս յերեկն և յեռանդ ընդ ամենայն յատակս նորա»։ Այն խաղք, ցոփութիւնք, զեղխութիւնք, խեղկատակութիւնք, արբեցութիւնք, քրքրթմնջիւնք, քսութիւնք նահանջեսցին սոքա ընդ անցանելն սրբոյ Տապանակին։

Այլ ինչ ապա. երկնչիմ Թէ և ձեզ անկ իցէ ասել. «Դիմեաց Ջուրն Յորդանանու, և գնայր 'ի տեղի իւր որպէս յերեկն և յեռանդ, ընդ ամենայն յատակս նորա»։ Այլ Թէ վաղնջուց հեղգութիւնն, ծուլութիւնն, զեղխօրէն կեանքն հասարակաց լեալ այժմ յաւուրս մեր, որ զամենայն բարիս և զքրիստոնէական գործս յետս ընկրկէ, և զամառ 'ի հոգւոյց վրկութի պատշաճեալս։

Բ՚ամբէ, երկնչիմք թէ դարձցի 'ի խաղաղ ժառանգութիւն իւրոցն ըստ աւուրցն առաջնոց. «Դիմեաց Ջուրն Յորդանանու 'ի տեղի իւր»։ Յաւելու զերկիւղ մեր՝ օրինակ ամայն անցելոց։

Ա՚յլ և այսօր իսկ 'ի զատկական աւուրս տեսանին 'ի ձեզ իսկ նշմարանք բանիցս. դարձեալ առաջնոց վարուց ախորժակք կենդանանան. դարձեալ հեշտասիրութիւնք ամբէն զկամս, և զցանկութիւս անյագս. դարձցին ապա յառաջին տեղի իւրեանց։

Ա՚յլ առաւել ևս ունիմք պատճառս յարտասուս ցնդելոյ՝ ասէ Բեռնարդոս, զնորանոր անտեղութիւնս արարեալս պատճառաւ հանդիսի աւուրս։ Թողէք մեզ սիրելիք. Թողէք մեզ ճոխանալ յարտայայտութիւն իրացն՝ զոր յանձին ըզգամ. և կարի ծարաւի եմ յաւիտենական փրկութեան հոգւոց ձերոց։

Թողէք մեզ նովին համարձակութիւն խօսել՝ զոր Թողացուցանէ մեզ սրբազան պաշտօն մեր՝ յորում եմք առանց ինչ

մերոցս արժանեաց, միայն յաստուա-
ծային առատութենէն յայն սահման-
եալք։ Իցէ՛ թէ գոնէ այս անգամ զեղ-
ջըդ ձեր գործով իցէ, և ոչ լոկով բա-
նիւ. «Ա՛ռէք բանս և դարձարուք առ
իս». Ովսէ. ԺԴ. 3. ասեմք ձեզ ընդ
մարգարէին Ովսեայ։ Ոչինչ արժեն բանք
անարծաթք 'ի հաճել զփոխատուն։ Ոչ
ինչ պիտին բանք առ հանգանակողս 'ի
մեղս, եթէ ոչ զհետ գայցէ և հրաժա-
րումն. «Ա՛ռէք բանս, և դարձարուք»։
Ո՛չ բանք, ո՛վ ագահ, այլ բանալ զգան-
ձըս, ձիրք դրամոց, ողորմութիւն։ Ո՛չ
բանք, ո՛վ տուփոտ, այլ ժուժկալութիւն
աչաց յարատ հայեցուածոց, հրաժեշտ
յընկերաց, հեռանալ 'ի տանցն յայնցա-
նէ, փախուստ 'ի մօտալուտ վտանգաց։
Ո՛չ բանք, այլ աղօթք, գործք բարիք,
խորհուրդք, պտուղք արժանիք ապաշ-
խարութեան։ «Ա՛ռարէք պտուղս ար-
ժանի ապաշխարութեան». Ղ-ի. Գ. 8։

Յայս հրաւիրէ Եկեղեցի՝ որ կոչէ.
Քրիստոս յարեաւ. և յարուցեալ յо-

գուտ ձեր շարժէ զձեզ, և հաւանեցու-
ցանել նկրտի այնպէս, զի այս տօն՝ զոր
յամենայն ամի հուշակէ սուրբ Եկեղեցի,
ոչ միշտ տօնեսցի վասն ձեր։

Զի 'ի վախճան բանիս յայտնեցից
ինչ մի՝ որ ամբոխէ զոգի իմ յայսպիսի
մեծահանդէս աւուր։ Եւ զայս տօն ոչ
յամենայն ամի կարեմ ասել կատարել։
Ասեմ յայսմանէ բեմբէ՝ և այլ ոք գիտա-
պետ զայս ունի ազգ առնել ձեզ։ Այդր
'ի տեղւոջ յոր դուքդ նստիք այժմ՝ այլք
նստեալ լուիցեն զաղդարարութիւնքս.
և յայնժամ ուր իցեմք մեք։

Ահա, սիրելիք, երկնչիմ և դողամ նա և
յասելս իսկ բանիս լսկով. լիցուք յայն-
ժամ յանվախճան յաւիտենին։

Եւ այսմ առ բաղումս 'ի ձէնջ չափ-
տին աւուրք բաղումք, զի սուղ է կեան-
քըն. և վասն ոմանց 'ի մէնջ նա և 'ի սին
իսկ ամի հանդերձեալ է գալ։ Հնար է,
զի այլ չիցէ ումեք դիւրին գտանել
զանցեալ աւուրս պատրաստութեանց
զհրաւէրս և զկոչմունս՝ որ 'ի մեծ պա-

հրա եղեն. չիցէ այնպիսւոյն այլ ևս տո-
նել զայս զատիկ։ Եւ այսպէս, եթէ յա-
ղուԹիւն ուրուք 'ի կեանս շնորհաց չէ՛
լսա օրինակին Քրիստոսի ճշմարիտ այ-
ժըմ, « Արդարև յարեաւ Տէր ». ոչ է
այնպիսուն մնայուն և տևական. « Քրի-
ստոս յարուցեալ է 'ի մեռելոց, այսու-
հետև ոչ մեռանի »։

Այս ահաբեր խորհուրդ՝ զոր ցան-
կամ ունել միշտ 'ի սրտի ձերում յամե-
նայն 'ի գործս ձեր, և քաջալերս յամե-
նայն վտանգս, զօրավիգն յամենայն ան-
ձկուԹիւնս, սանձ յամենայն փորձու-
Թիւնս, Թողում զձեզ յայս խորհուրդ
օրհնուԹեամբ Տեառն մերոյ։

Ճ՛ԱՌ Գ.

Ի վերայ ճշմարիտ խաղաղութեան՝ վկայութեամբ հաստատեալ։

Աղաչեմ զձեզ այսօր մայրս մեր սուրբ Եկեղեցի աւետիս մեծ յասելն. «Աղաչեմ զձեզ ուրախութիւն մեծ». Գ՛ոկ. Ե. 10։ Ուրախանան հրեշտակք 'ի յերկինս, և ուրախ կատարեն սուրբք։ Արև եցաւ յերկրի անձկալի խաղաղութիւն, զի ծնաւ Փրկիչն աշխարհի. «Փառք 'ի բարձունս... յերկիր խաղաղութիւն. ... զի ծնաւ ձեզ Փրկիչ»։ Ո՛չ որպէս 'ի դուշակութիւնս մարգարէից կամ 'ի նախագիծ երևմունս, և ո՛չ 'ի յոյս ապագայից, այլ արդեամբք և ճշմարտութեամբ եկն յաշխարհս Աստուած հզօր, հայր հանդերձելոյ աշխարհի, իշխան խաղաղութեան. Իսայի. Թ. 6։

Ի զո՛ւր է խնդրել ձեր զայս խաղաղութիւն յաւուրս խաւարչտին եղկութեանց, յաւուրս թախծագինս, որ նախ

քան զդալուստ Փրկչին։ Ի նանիր է խոշ և խնդիր իմաստասիրացն հեթանոսաց՝ որ անուանիքն էին, և մեծահամբաւք 'ի մթին դարսն յայնոսիկ։ Ի նանիր է խընդրել զայս խաղաղութիւն՝ Սատանիկեան կարծեցեալ անխռովութեամբն, որ զանվերդով դիմակս արկանել ուստուցանէ զերեսաքն և եթ, և ոչ զանդորրութիւն ինչ 'ի հոգւոջ ծնանել։ Ի նանիր է խընդրել զնա՝ կազմակերպեալ ձեռնարկս սատիրս և առասպելս անհաւանելիս, համոզել զմիտս յանհամոզելիսն, զանձամբ առեալք զՅովբայն կշռամբանս. «Ամբխիթարիչքն չարեաց ամենեքին». Յոբ. Ժ.Զ. 2։

Ո՛չ գտանի սա յանշահ ախորժակս, ոչ 'ի առ փմունս չար ցանկութեանց, ցոփութեանց, զեղխութեանց, ո՛չ գտանի այս խաղաղութիւն. ոչ գտանի սա 'ի թունալից հրապոյրս ձերոց վարժութեանց, այո՛, 'ի չարաչար վարդապետութիւնս՝ որք պղծեն զնուիրականն ամուանութիւն, զմիութիւն հարսանց,

զպատիւ որդւոց, զհաւատարմութիւն բարեկամաց, և կանգնեն սեղանս անօրէնութեան, զոհս մատուցանեն անամօթութեան, անիրաւութեան, անհաւատութեան, դրժողութեան և ժծղնէութեանց։ Ո՛չ գտանի բազմաստուեր լուսով մարդկային բանի՝ որ ինքնօրէն համարձակիցի խնդրել առանց օգնութեան գերբաբուն ուժոյ Տեառն որ լուսաւորէ զնա և զօրացուցանէ։ Միակ աղբիւրն՝ յորմէ յորդեալ ծաւալի մխիթարութիւն ստոյգ, անդորրութի սրտի անդրդուելի և ճշմարիտ՝ քրիստոնէական հաւատքն է։

Այս խաղաղութիւն տեսանի 'ի միջօրէի նոր լուսոյն՝ որ ծագէ յայրէ անտի, 'ի մարոյն, 'ի գծուծ խանձարրոցն, յարտասուաց նորածին Մեսիային՝ որ լուսաւորէ զաշխարհ. և է «լոյս ճշմարիտ, որ լուսաւորէ զամենայն մարդ»։ Յովհ. Ա. 9։ Գտանի այս խաղաղութիւն լուսոյն՝ որ նոր վարդապետութիւն ածառ մեզ. որում հետևի ամենայն մարդ։

Գ·ատանի 'ի սկզբունն՝ որ տայ օրէնս արդարութեան և համեստութեան. առ հպատակեալս քարոզէ հլութի. խնդրէ 'ի փառամոլ հպարտացելոց խոնարհութիւն, 'ի մեծատանց գութ և գորով, յաղքատաց համբերութիւն, յամենեցուն մեռելութիւն, հրաժեշտ, ճնշումն յախտից։ Մ'եզ միայն պահեալ այս խաղաղ ժառանգութիւն անստանալի գանձուցս, որք շնորհիւ Տեառն ծնաք 'ի փարախ սուրբ Եկեղեցւոյ։ Մ'եզ՝ որք բարւոյ դիպաք դնել զբան մեր 'ի հնազանդութիւն հաւատոյ, և ճանաչեմք զծնեալ Մեսիան՝ մեզ 'ի վարդապետ, յառաջնորդ և 'ի փրկիչ։ Մ'եք՝ որք երկիր պագանեմք 'ի նմա խորհրդոց դերազանցելոց քան զմտաց հասողութիւն՝ կամակար գերութեամբ հաւատոյ, ըստ բանի սրբոյն Օգոստինոսի։

Վ՝ան որոյ քաջ է խրախոյս մեր սիրելիք ընդ քաջադիպութիւն աւուրցս։ Ա՝յլ քանզի այս ինդութիւնք 'ի ճշմարիտ վախճան իւրեանց հասցեն, քննելի

է, զինչ ուսուցանէ մեզ սուրբ Հաւատք մեր յայսմ ուրախութեան աւուրս, որ յօգուտ յաւիտենական յեղանակեսցի մեզ։ Արդեօք իցէ՞ ձեզ այլ ևս խնդրել զստացութիւն խաղաղութեա՛ն մուրացածոյ լուսով նախնի իմաստասիրութեան. այս է՝ ցանկալի՞ իցէ ձեզ վայելել զաշխարհական խաղաղութիւն իբրև պտուղ ծննդեան Փրկչին։ Կամ թէ խնդրիցէք զՀշմարիտ, զանսայթաք և զերանելի խաղաղութիւնն քրիստոնէական։

Այս է մեզ նիւթ քննութեան, առ որ ստիպէ զմեզ հովուականս մեր պաշտօն, և ապաժոյժ նախանձ մերս նուաստութե։ Այլ՝ ի բաց արասցուք յանձնէ զամենայն հեղգութիւն. խնդրեսցուք, ո՞ւր է այս խաղաղութիւն աւետարանական քրիստոնէից. էջ ապաքէն յերկիր ընդ ծնելոյ Փրկչին, «յերկիր խաղաղութիւն»։ Խնդրի նա, այլ ո՞ւր արդեօք. կարծեմք կալեալ նորա զընթացս՝ ի յայնկոյս՝ ուր լցեալ զեղուն բարիք բաղդի։

ուրորկորստուԹիւն, անձնդիւրուԹիւն, աղատուԹիւն, շուք, պատիւ, մեծուԹիւնք. այլ խաբիմք, չէ՛ անդ. կորուսանեմք զՃանապարհն, քրիստոնէական խաղաղուԹիւնն չէ՛ անդ։

Ա՛ռ ՚ի զդաստացուցանել զձեզ, անցցէ ՚ի մէջ Սողոմոն. ոմ քան զնա բարեյաջող, կարծել այնպէս էր Թէ աշխարհ ՚ի գոգ նորա լցեալ իցէ զամենայն ճոխուԹիւնս և զմեծուԹիւնս։ Ի մատաղ տիս՝ իւրոց ոտնառուցս տիրեալ և ընդ ոտնհար լեալ Թշնամեաց, էանց ՚ի խաղաղական ժառանգուԹիւն երկուց ԹագաւորուԹեանց՝ Յուդայի և Իսրայէլի։ Ըստ գիտուԹեան մասին առեալ Աստուծոյ իբրև յօժիտ՝ առ ամենայն մարդիկ մեծապատիւ յարգեցաւ։ Ամենայն ակնարկուԹիւնք նորա էին օրէնք. բանք նորա պատգամ. հրամանք նորա օժանդակք ամենեցուն. կանգնեաց զհրաշակերտն զայն տաճար յապշուԹիւն ամենայն աշխարհի, որոց նման ո՛չ տեսաւ յաշխարհի ո՛չ յառաջ և ոչ յետոյ. ոմ

երջանկութիւն անհամեմատ, ասէք դուք. ահա՛ տեղին ուր բնակէ և թագաւորէ խաղաղութիւն իբր յիւր սեպհական գահոյս. այսպէս կարծեն բազումք։ Այլ եղև այր՝ որ հաստատեալ՝ ի թագաւորութեան՝ ի խնդիր եղև սորա։

Այլ ով անակնկալ բանիցս. և ինքն յայնպիսի ըմբռնեալէր թախծութիւն, մինչև հաղիւ տեսանել զնա՝ իւրոցն. լայր և ողբայր, ընկղմեր դառնապէս՝ ի խորհրդածութիւնս՝ որք փղձկէին զսիրտ նորա. և աշխարհ ամենայն չէր բաւական մխիթարել զնա։ Զէր նորա անդորրութիւն սրտի. «Հայեցայ, և ահա՛ սընոտի է». Յող. Բ. 11։ Խոստովան լինէր՝ թէ աշխարհս գլխովին ձանձրոյթ էր նորա. «Ամենի միանգամայն զկեանս իմ՝». անդ. Բ. 17։ Ի՞նչ է, քանիք են յաւուրս մեր՝ զորս դուք երջանկացեալս ոմանս կարծէք. և նոքա յայանեսցեն զիւրեանց բազմախառն տաղտապանս՝ որ զիւրեանց կեանս ատել տայ նոցա։ Այսպա՛ մի խոստովանեսցէ զաչս գերաշուք փայլա-

ծոյք և մեծապատուութիւնք, ընդ որս չէք անդորրութիւն սրտի։

Այլուր խնդրեսցուք։ Այլ ուր արդեօք։ Ուղղեցէք զաչս ձեր ի ձերոց՝ յայնկոյս, ուր բաղմութիւն բարձակցաց, բարեկամաց և բանկայից. ահա անդ է ըստ որում կարծի՝ անդորրութիւնն քրիստոսական։ Այլ մոլորիք։ Յեղամբոյութիւն մարդկան նման է բեկանուտ եղեգան՝ որ առ ամենայն շնչիւն հողմոյ տատանի, և ասա անդ բարբարի։ Մի լեցի սիրելիք, թէ վստահասջիք 'ի բարեկամս ձեր և 'ի խրախճանակիցս. դաստիարակն չէ՞ բարեկամն մանկանն՝ որ 'ի խնամս նորա ապստարի. այլ կարի քաջ բարեկամ է ճոխ գանձուցն մնացելոց 'ի հօրէն, պատուոյն՝ որում ակն ունի։ Մի լեցի ընծայել զանձինս 'ի հաւատ դաստիարակին, իբր թէ արդարացի հոգ կալցի զմանկանէն, նահանջ արկանել նմա յամենայն վտանգաւոր հարուածոց բաղդի։

Խորախոյզ լերուք անդ 'ի մէջ երգոց

ցնծութեան, և ուսանելոյ ձայնից։ ուստ է մանուկն՝ որ 'ի հոխտաց անտի Սփեսդոմինայ դառնայ այսր, կալեալ 'ի ձեռին զանձառնուցն Գողիաթու գլուխ բոսորաներկեալ։ Այս ինքն է Դաւիթ։ Ինայ ընդառաջ Սաւուղայ պաշտպանին իսրայելի. սպանողն անարդիլ փղշտացւոյն, փառաք հաստատելոյ 'ի գլուխս սեառն իւրոյ զապարօշն և զգաւազանն 'ի ձեռին։ Արդ ո՞րպիսի ինչ խայտալ ցնծութիւնս ակն ունիք տեսանել յընդունելութիւն սորա, սէր, նուէրս մեծապարգևս, որք երաշխաւոր կացցեն երջանկութեան վարուց և աւուրց նորա յօրէ յայնմանէ և անդր։

Ահա անդորրութիւն հոգւոյ, և խաղաղութիւն երանելի։ Այսմ այսպէս լինել արժան էր, այլ արդիւնք իրացն վերիպեցին յարժանեացն։ Դարձայց 'ի նա Սաւուղ զկոցեալ աչս իւր, և հարեալ 'ի նա ցաւ նախանձու՝ մինչև տանջել զնա, հարցանէ նմա զամօթալի հարցումն. «Ուստի՞ ես մանուկ դու».

Ա. Թ. Ա. Ժ. Ե. 58։ Զիարդ՝ ոչ սա ինքն է Դաւիթ՝ զոր անձկանօք սիրէիր. այո, Դաւիթ է սա. այլ Սաւուղ դերեալ 'ի նախանձուէ՝ ոչ ևս է նոյն։ Լաւ քանի՛ գոսին իբրև զԴաւիթ բարերարք՝ որոց 'ի տրիտուր փոխարինի հատուցան անշնորհակալիք։ Այ՛հա սիրելիք, որպիսի՞ հանգստեան ակն ունիք 'ի բարեկամս, 'ի խնամակալուս, 'ի ձեր մտերիմս. տեսէք, զի չիք և 'ի նոսա խաղաղութի՛ն ցանկալի։

Դարձարուք ապա ըստ դիպաց իմն և յայն կողմն ուր վայելք աշխարհի հանդիսանան, ուր լինի կեալ ըստ հաճոյս՝ 'ի հեշտութիս, 'ի ցանկալիսն ամենայն, 'ի մէջ ծաղուս և խնդութեանց։ Այլ օ՛ն անդր, 'ի բաց տար և զայդ վարկած. հրամա՛ն է քեզ քաջ զննել և զայն որ հաճոյ թուեցաւ յաշխարհի յաչս քո. և տեսցես զի ընդ քոզով հաճայիցդ՝ որ թովէ զմարդ, թագչի և ծածկի մահաբեր թոյնն մեծամեանդ։ Ընդ 'ի մարտի է փեսայ ընդ հարսին, եղբայր ընդ եղբօր. չիք անդ սէր, և ոչ իսկ 'ի մէջ

հօր և որդւոյ. ամենեքեան ընդդէմ մի-
մեանց հեռո

և խայթք խղճի անողոքելիք։ Այս ամենայն փուշք են հաճոյարար բերկրութեանց. այսոքիկ վրդովեն զմարդոյ և զքուն գիշերային զխաղաղականն։ Զթէ 'ի շքեղաշուք դահոյս և 'ի վերամբարձ իշխանութիւնս խնդրիցեմք զքեզ, 'ի փաղփիւնս հանդիսից, 'ի ձայնս ընդհանուր ծափաձայնութեանց. ոչ այլ ինչ և 'ի նոսին է տեսանել, բայց ծփանս մրրրախառն, նախանձորդութիւնս չարաստանջ, խարդաւանութիւնս, պատրանս, մարդելոյզ շողմութիւնս, նենգս, թակարդս։ Նոյն այսոքիկ զսիրտն կծանող հոգովք և դառն մտախոհութեամբք, որք դառնացուցանեն զոգի, անվախճան խորհրդովք՝ որ 'ի մէջ իւրեանց հեղձուցիկ առնեն զմարդ, բառնան զճաշակն 'ի քմայ, և մթագնեն զուղղն. ապա և անդ չիք հեաս նշմարել զանդորրութեան։

Դարձեալ կրկնեցից ձեզ աստանօր, զի զայս ձիր քրիստոնէական խաղաղութեան եբեր յաշխարհ մանուկն Յիսուս,

ծնեալ յաղքատութեէ, յանընչութեան, 'ի լռութեան, յառանձնութեան, 'ի խոնարհութեան։ Վասն այսորիկ խաղաղութիւնն բազում անգամ գոսանի յաղքատին այրս, յանշուք հիւղս, յանմարդի բնակարանս, յանշահասէր 'ի հաւատարիմ ընկերութիւնս և 'ի քաղցր արգահատանս։ Ինդ է տեսանել բազում անգամ զաղքատ շինականն յիւրում անդեկի, զարհեստաւորն յիւրում ձեռագործի, զխստակրօն ապաշխարօղն յիւրում խստամբեր ճգնարանի. կեան սոքա ուրախ՝ վկայութիւն մատցն խղճի։ Ու թէ դէպ լինի երբեմն կայսառ ըզդէմն ուրուք տեսանել՝ որ յղփացեալն ինչէ բաղդի բարեօք, այսր է պատճառ՝ զի ներդաշնակութիւն գոյից չէ խանգար։ Հլութիւն յորդիս, և յամենեսեան երկիւղ աստուածային անդ մնանէ ամենեին իբրև պտուղ հեզութեան, արդարութեան և հաւատոց. "Ու եղեցին գործք արդարութեան՝ խաղաղութեամբ"։ Ասայի։ ԼԲ։ 17։

Նրանելի խաղաղութիւն, որ իբրև պատուղ արդարութեան օթևանի յանձինս արդարոց, և որպէս գետ օրհնութիւնաբեր յորդէ անդ, և ուռգանէ զայն, զի զմարդարէին ասացից բան, «Որպէս գետ խաղաղութիւն քո». անդ. ԽԸ. 48։ Աստուածային խաղաղութիւն՝ ասէ առաքեալն, որ 'ի վեր է քան զամենայն բերկրալիս. «Խաղաղութիւնն Աստուծոյ 'ի վեր է քան զամենայն միտս». Փիլիպ. Դ. 7։ Նոյն ըստ մեկնութեան Օգոստինոսի՝ «Խաղաղութիւնն լուսափայլէ զմիտս, խաղաղէ զոգի, ընդ ըգսիրա պարզև անապակ խնդութեամբ»։ Նոյն Ոսկեբերան ասէ. «Այս է մանանայն ամենահամ՝ զոր տայ Աստուած անեղեւակի 'ի անուանդ իւրոյն հաւատացելոց, և երկնային զօրութեամբ զօրացուցանէ, և նոր կենդանասոսեղծէ»։ Յետ բազմամեայ խուզողութեանց և յոգնամոլոր դեգերանաց զՃաշակ սորա էառ և սուրբն Օգոստինոս. և այնքան քաղցրութեամբ 'ի բիմն նորա Ճաշակս այս, մին-

չև տաղտուկ թուիլնմա զդայական հեշ-
տութեանց, որում սակաւ ինչ յառաջ
զհետ էր կրթեալ անհնարին ըղձիւ։

Լոյս դուք առէք զճաշակ սորա սիրե-
լիք, առ ոսն հարեալ նոխաւ զամենայն
զդալեաց ախորժակս. և տեսջիք՝ զիաբրդ-
'ի յափրութիւն դառնայ ձեզ այն ամ.
"Ճաշակեցէք և տեսէք". Սղ. ԼԳ. 9։
Ճաշակեցէք անհրահանգ մանկունք, որք
զհետ սնդիք սնուտեաց, աղտպատանաց
և ազատութեան. Ճաշակեցէք՝ որք ան-
ձնանուէրք էք 'ի դանդաղանս, 'ի զեղ-
խութիս, 'ի գրգռանս. Ճաշակեցէք և տե-
սէք՝ զի օգուտ է ձեզ մի օր համեմեալ
անապակ խաղաղութիւն սրտի, քան զհա-
զար ամս խռկեալս սուտ հաճութեամբ,
զորս ամ ուստեք պաշարեալ են չարիք։
"Լաւ է ինձ մի օր 'ի գաւիթս քո քան
զհազար". Սղ. ՁԳ. 11։ Լոյս յորժամ առ-
ջիք զճաշակ նորա, քաջափոյթ լինիք 'ի
պահպանութի. "Խաղաղութիւն Աստու-
ծոյ... պահեսցէ զսիրտս ձեր և զմիտս
ձեր 'ի Քրիստոս Յիսուս". Փիլիպ. Դ. 7։

Ա՛ԼՈՒ Դ.

Ի սոբ խաղաղ-ութեան աղաչելի՛ դեղոյ։

Երեշտակք սուրբք մի՛ ընդհատանեք զձայն երգոց ձերոց և զպարուց, նուագս յօրինեցէք՝ ի փառս և՝ ի գովութիւն Աստուծոյ, և զի ըստ հաճութեան կամաց իւրոց նուիրեցաւ մարդկան բազմերան խաղաղութիւն։ Ուրախութիւնն և ցնծութիւնն երկնային միահիմնեցան արդարև՝ ի Սեսիայն՝ որ գալոցն էր. «Ուրախ եղիցին երկինք, և ցնծասցէ երկիր յերեսաց ցեառն՝ զի գայ». Աղ. Դէ. 11։ Լիկեալ է աւասիկ Աստուած հզօր, հայր հանդերձելոյ աշխարհին, իշխան խաղաղութեան. ածէ ընդ իւր պարգևս երկնանուէրս՝ ուրախ առնել զերկինս և զերկիր, զՀրեշտակս և զմարդ։

Խոնարհեսցին առաջի նորա դէմք բարձրայօնք՝ և խոնարհ հպատակողք. ծունր կրկնեսցեն առաջի նորա ընդդէմ

թենամեաց նորա հոգի փառաց, որ նախ ճոխանայրն յարքունիս՝ առ մեծամեծս և առ քաջս աշխարհի։ Հոգի կաշառուց՝ որ զիշխանութիւն կալեալ ունէր զաստենից և զիտաստաբանից։ Հոգի շահասէր՝ որ տիրէր 'ի վաճառաշահութիւնս և յառուծախս։ Հոգի միտողութեան՝ որ 'ի դպրոցս և առ գրագէտս։ Հոգի անմիաբանութեաւ՝ որ 'ի մէջ ընտանեաց և հաւատակրաց բարեկամաց։ Այոցէ 'ի նոսա իբրև դշխոյ՝ խաղաղութիւնն. միսիթարեսցէ զնոսա և յաջող արասցէ. որպէս 'ի նախկին դարու աշխարհիս եբանելիս արար զտուն հաւատացելոց 'ի հանդերձեալ Մեսիայն, զՆոյեանս, զԱբրահամեանս, զՅակովբեայն, զորս Խաչակայն էին, մեծատուն զնոսա արարեալ և ընչեղս ըստ ամենայն առաքինութեանց, որպէս և Եկղէսիաստիկոսն ասէ «Մեծատունք յառաքինութիւնս. գեղեցկութիւնք յորս սիրեն զիմաստութիւնս, և խաղաղարարք 'ի տունս իւրեանց»։ Արդ. Խդ. 6։ Այս արդիւնք

մարգարէական գուշակութեանց, և աշխարհ ամենայն ընդ հովանեաւ նորա նստցի։ «Լիս բնակեսցի ժողովուրդ իմ 'ի գեղեցկութեան խաղաղութեան». Եսայի. ԼԲ. 18. (ըստ լատին թարգմանութեան)։

Այդ՝ ոմն է 'ի ձէնջ որ ոչ համաձայնեսցի երդոց հրեշտակաց ձայնիւ ցընծութեամբ։ Ոմն է՝ որ ոչ անձուկ կալցի և սէր յաղագս այսր խաղաղութեան. կամ 'ի խորհուրդս իւր քաղցրութիւն, կամ հաճոյականութիւն 'ի կենակցութեան, կամ 'ի դէմս պատկառելիս։ Ոմն է՝ որ ոչ մեծապէս ուրախ լիցի ընդ գալուստ նորա, նորոգել զկերպարանակիցն լինելնմա, և ոչ ցանկասցի յանձնէ բաղխել անուշակ խորհրդածութիւս։ Այլ ահա հրեշտակք 'ի յայրն Բեթլեհեմի 'ի թեւս թեթեւս բարեկարգեալք, 'ի ձեռին իւրաքանչիւր ոստս ձիթենւոյ՝ գան թարուցեալք աւետարանել զդալստեան Մեսիային զամենընակիր ձիր, զխաղաղութիւնն երկնային։ Ով անուշակ տեսա-

բանիս, ոմ բերկրական տեսլեանս. ուստ-
տի ասա, ուստի է աստղն՝ որ փայլէ,
և բոցս ճառագայթից յիւրմէ 'ի բաց
հատանէ. այլ ոչ ամենայն ուրեք միօրի-
նակ փայլէ, այլ միակերպ ազդէ և թա-
փանցէ յամենայն սիրտս։ Ոմանք է խա-
զաղութիւնն խորհրդաւոր սեանն՝ զոր-
մէ յԵլան գրի, առ բազու

ւադ են քան զամենայն. վասն սոցա անպակասելի են արկածք չարաբերք, կամ իբրև մեղք մարդոյ ընդդէմ Աստուծոյ, կամ իբրև պատիժ Աստուծոյ ընդդէմ սատահակեալ մարդոյն։

Հոգիք արդարոց, ժառանգաւորք ամենայնի այսոցիկ երկնային շնորհաց, մի՛ տաղտուկ ինչ ձեզ թուեսցի այն, զի հատեալ զկարգ բանիցս՝ որ խնդակցութեանն էին յաղագս լաւագոյն վիճակի ձերոյ, դարձուսցո՛ւք զբանս առ եղբարս ձեր՝ աղդ առնել նոցա զպատրանս. և նոքօք հանդերձ զնպաստ շնորհացն հայցեսցուք մեծաւ եռանդեամբ հոգւոյ, որ լրջացուսցէ զնոսա 'ի մահահանգոյն թմբրութենէս, յոր անկեալ դնին արք ննջեալք 'ի պատիր խաղաղութեան՝ որ 'ի մեզս լինել երևի։

Այսպա առ ձեզ են բանք իմ եղկելիք դուք, որք գիտացեալք 'ընդ մեզ զձեր հեատել յուզիչ պոզտոայէն, գնայք տակաւին յանդորրու և 'ի խաղաղութեան։ Այ ձեզ՝ որք հրձուիքդ 'ի գրգանս, 'ի

սեր անկանոն, որպէս երբեմն Դաւիթ։
Ար ձեզ՝ որք խաղաղք էք, և ժառան-
գէք զժառանգութիւնս արեամբ սպա-
նելոց՝ որպէս զԱբեսաբ։ Ո՛չ գտանէ կա-
չումն առտուտածային՝ մուտ՚ի սիրտս ձեր.
ոչ ծանրացաւ ձեռն Տեառն՚ի Թիկու-
նըս ձեր՝ դարձուցանել զձեզ յառողջ
միտս ճշմարտութեան. անազդակք էք
խայթման խղճի մտաց, որք ընտանիք
լեալ մեղաց՝ առ ոչինչ զերկիւղն ունիք՝
որ՚ի մեղաց անտի, և ոչ ուղղէք զե-
զեռնաւոր գործս ձեր որ յօրէ. և՚ի վե-
րայ այսր ամենայնի բացաւ երեսաքս պարծիլ ոչ չիկնէ զձեզ, ոչ ամաչեցուցանէ.
այլ խայտայք իբրև ընդ փառաւոր ինչ
յաղթութիւն՚ի վերայ նեղբին մարդոյդ
ձերում, ցնծայք իբրև ընդ երջանկու-
թիւն ինչ, որ զաւուրս ձեր ունիցի դարձուցանել՚ի բարեկենդանութիւն, ըզ-
ներկայս և զհանդերձեալսն։ Այլ իբրև
զչիմարն զայն՝ զորմէ իմաստուն սմն մա-
տենագիր վկայէ նողկանաք, աղաղակէք.
"Շ իջաւ մնացորդ կրօնիս. դոհութիւն

իմոյ իմաստասիրութեան. ոչ ևս յայսմ հետէ քրիստոնեայ եմ »։

Լեղուակ դու. և ոչ երբէք դարձար հայել ընդ պատարագն՝ զորս ընծայէ քեզ այս սուտ և պատիր խաղաղութիւն։ Սիրելիք, բանն, կրօնն, հաւատքն, և խիղճն մատաց, այսոքիկ են ողջակէզքն՝ զորս նուիրէք անբարի կռոց 'ի պիղծ սեղանս ձեր։ Լու յոյզք կրից և պատրանք աշխարհի ոչ ներէ ձեզ ակն յառուլ յայդ սրտաբեկ տեսարան. այլ ողջակէզք ձեր և նուէրք ընծային ամենապիղծ ա-նօրէն ծիսիս, որչափ լինչ հայթայթել մարթացաւ բազմահնար արուեստն դիւական։ Արքաբ՝ հանդէս այնմ, որ ընթերցեալ լինի 'ի գիրս Թագաւորութեց, և մարգարէն արհամարհելով ա-նարգէ 'ի Սաղման. զի խժդժօրէն բարբարոսաբար զմատաղ մանկունս ամենայցուոց կորզեալ 'ի գրկաց մարց՝ ողջակէզ մատուցանէին կռոցն Մողոքայ։ 'Ոտեր անիրեալի դրօշուածն մեծաշուք փառօք յորքուանի գահոյս, տարածեալ զձեռս

իւր որպէս այն՝ որ սատարագս ընկալցի յերկրպագուաց իւրոց։ Առաջի գնային նորա խոնարհ գեանամածուքեամբ ծընդաց՝ կանայք մատաղամարք անմեղ ըստընդիեցիւք իւրեանց։ Յետ զի շուրջանակի դրօշածայն հուր էր մեծաբոց բորբոքեալ նեբքոյ և արտաքոյ, և պարփակ յամենայն կողմանց, շամբուշ և աղամոզեալ մոօք մարքն անագորուանք յայն հրատապ բազուկս և 'ի խանձողիչ գիրկսն գնէին զսիրելի պտուղս արգանդի իւրեանց։ Յայնժամ ձայն հնչման թրմբկաց և նուագարանաց և ամենայն աղդաց արուեստականաց գոչեցուցանէին զանտառն, լերինք և վէմք բարձունք արձագանգս հնչեցուցանէին դոռալոյ ձայնից անդ եղելոց, որք բոլորովին խափանէին զակար ձայնս փոքրունց մանկանց աղաղակողելոց 'ի մահահրաւէր դիրկս Մոլոքոյ, մինչև հեղձուցիկ առնէր զնոսա հուրն՝ որ կիզոյր մինչև ցընդերս նոցա. այս օրինակ էր կատարման անագորոյն նուիրանացն։

Այդ՝ սուտ ինչ իցէ արդեօք ասելդ իմ առ ձեզ եղբայր մեղաւոր, քոյր մանրեալ, թէ նմանագործ էք նոցա, որք ընդ սուտ խաղաղութիւնդ ձեր հաւատն գտեալք՝ անփոյթ լինիք զճշմարտիւն։ Դուք ասացէք զայդ։

Վաճառական դու՝ այր շահու, ցէր պահեսցէ զքեզ. քանիցս, քանի՞ անգամ անվաւերական դաշինս և սակ կռեցեր. քանի՞ անգամ 'ի տուրևառս խարդախութիւնս ճարտարեցեր. լինէր քեզ լսելի ձայն ողբոց և աղաղակի մտացդ քոց խղճի։ Այլ դու յաղմկայոյզ շառաչմանց կրից եղեալ էիր որպէս խուլ անլսող ձայնիցն. եղեալ զհոգի քո 'ի խոշտանգիչ բազուկս, յանագորոյն գիրկս անյիշելոյն Մողբայ, կռոցն ասեմ շահասիրութեան։

Պատանի՞ դու՝ ասա ինձ, որ բացեր զականջս քո յուսումն այբուբենից սիրոյ, յընդարձակութիւնս, յազատութիւնս, 'ի յընկերշակութիւնս. չիցէ՞ ճշմարիտ զի խիղճ մտաց ձերոց զեւբ կա-

կանս և զՀեծուԹիւնս լսելի առնէր ձեզ, այլ 'ի զուր. զի առաւել մեծաձայն աղաղակ ելանէր 'ի խառնաձայն խուժանէ կրից. որոց աղաղակ հեղձուցիկ առնէ զողջս հոգւոց ձերոց, որք հեծեն 'ի մեծաբորբոք հրայրեացս գրկաց Մողոքայ, կռոցն ասեմ անպատկառուԹեան։

Աղատազգի դու պատանի, խոստովան լեր ինձ կամակարուց, այն ինչ 'ի զեղխուԹիւն լինիս անձնատուր, և 'ի միոջէ վՀէ չարուԹեան յայլ վիՀ դահավէժ խարդաւանիս, մինչև կորնչիլ յանդունդս չարուԹեան. յորժամ ճանապարՀ քո առ ոչինչ ուղղի, ո՛չ 'ի ջատագովուԹիւն, և ոչ յանսոդիւտն լինել, ոչ կրօնիւք և ոչ բանիւ, ոչ առ քրիստոնեայս, և ոչ առ մարդ զգաստ բանաւոր. նա աւանիկ և խիղճ մտացն բողոքէ։ Ո՞չ ճշմարիտ ի՞նչ արդեօք, զի յաւելուք և խուժան փառաց 'ի վերայ բազմապատիկ և անԹիւ կրից ախտարծարծից, և դնէք զՀոգի ձեր 'ի գիրկ Մողոքայ չաստուծոյ հաւատադրժուԹեան։ Դրօ-

շուաձ՝ որում մինչև յայսօր սեղանք և նաւակատիք կատարին սոսկալի մարդաղոհիւք՝ յանհամար անձանց քրիստոնէից։

Սրբապիղծ քուրմ են կռոցս վարդապետքն անօրէնութեան և անկրօնութեան, ջատագովքն անաստուածութեան, կարապետք և հրաւիրակքն դժոխոց, որոց ամբարձեալ յերկինս զգլուխս իւրեանց՝ վարդապետեալ զգայուն լուսանս աստուածընդդէմս՝ առաջի անձեռագործ սրբութեանցն։

Արդ՝ դուք փափաքողք խաղաղութեանս, դժկամակք յարհամարհել զօրէնս անօրէնս՝ դաշինս կռեցիք ընդ նոսա. առնէք զամենայն ըստ խորհրդոց կամաց նոցա, արբեալք 'ի գինւոյ ամենայն անառակութեանց. «Արբեցան 'ի գինւոյ արբեցութեան պոռնկութեան նորա»։ Յայտ. ԺԷ. 2։ Չէ՞ ոչ շատացեալք ընդ խստորնակ վարդապետութիւնս և ընդ այլանդակ օրինակս ըստ սկզբանց նոցա՝ գօտէպնդեցայք այնու հոգւով յիմարութեան, որով զգածեալ բաղմաց՝

ագահօրէն յարին յայնպիսի մատեանս, որք յածին այսօր քաղաքէ 'ի քաղաք, գաւառ 'ի գաւառէ, որովք ըստ բանից Բեռնարդոսի՝ քմացածին հաւատս նոր բաստեղծուն, և ճարտարակեն աւետարան նոր։ «Թուանին մատեանք, և նոր աւետարան հաստատի առ ժողովուրդն. նոր հաւատք դնին առաջի»։ Մատեանք հողմավարեալք Աբեբնեան հողմովք (դժոխոց) ընուլ զճանապարհ ոտից մերոց անհնարին շփոթիւք նորաձայն կարծեաց, զորս ոչն գիտէին մեր հաբք, կարծիք անիրաւք առ Աստուած, և միաստակաբք առ մեզ։ Մատեանք որ 'ի թեւս թեթեւս թռչին, սաւառնեալք ընդ ուղորս տիեզերաց, զորոց կարէ ասիլ հոգեշունչ բանիւք Զաքարիայ մարգարէին, զոր հարցանէր հրեշտակն զտեսիլն զոր եսես. «Մատեան թռուցեալ տեսանեմ ես, քսան կանգուն յերկայնութիւն, և տասն կանգուն 'ի լայնութիւն». Զաք. Ե. 2. (ըստ լատ. թարգ.) 'ի ցուցանել զամենայն ուրեք սփիւռ ծաւա-

լումն։ Ա՝ատեանք՝ յորոց վերայ արժան է առ 'ի զգուշութիւն ամենեցուն արձանագրել. « Այդ են անէծք, որք ելանեն 'ի վերայ երեսաց ամենայն երկրի »։ անդ. Ե. Զ. 'ի ցուցակութիւն, զի 'ի նոցանէ բղխեն ամենայն հեղեղատք և ուղիք անիծից, որոյ ջուրք յափշտակեն անձինս անթուարկելիս, պատրաստական գործեալ զոգիս յընդունելութիւն թիւրաթեք շաւղաց անհաւատութեան։

Ընդա՛ր հոգիք, անմեղ աղաւնիք, զի՞ այդ արտասուախառն երկիւղՁեր 'ի ձերոց իսկ անձանց, որ պարզութեամբ և անկեղծութեամբ սրտի ծառայէք Աստուծոյ հոգւով և ճշմարտութեամբ։ Ընթէ խօսիմք մեք 'ի լեզու անծանօթ և անլուր առ ձեզ, զոր չիմանայք բարեաւ, փառս տուք Աստուծոյ, և օրհնեցէք ըզնա. և աղաչեցէք զնա հեռի պահել զձեզ միշտ. « Ի քանէ ստոյ, և 'ի լեզուէ անիրաւէ »։ Սիրաչ. Ծ.Ա. 7։ Այս ունիլ զձեզ միշտ յայսմ անբասիր տգիտու-

թեան՝ որ անձկալի է քան զամենայն վը-
րիպանուն գիտութիւնս։ Օ՛հ՛ետ ընթա-
ցէք միշտ զհետոց Տեառն երկիւղիւ և
դողութեամբ։

Ա՛լ դուք՝ որք յայս դպրոց և այսու
վարդապետութեամբք 'ի թերութիւն
հաւատոց յարդարէք զձեզ. դուք՝ որք
զանձամբ արկէք ոգի անտարբերութե-
զհոգևորաց և զկրկարար արդեանց, և
ընդ այս ճանապարհ զհետ մոռեալ էք
խաղաղութեան՝ որ այսչափ անձկալին
է ձեզ, զմրեցուցեալ զկիզճ 'ի մեզս,
և մինչև հեշտութիւն կատարեալ ըղ-
պտուղ մեղաց համարել ժպրհիք ըստ
Սողոմոնի. «Ծիծաղելով գործէ անըղ-
գամն զչարիս». Առակ. Ի. 23։

Երկնչիք դուք և զարհուրիք յան-
ձանց. երկերուք այո՛ և զահի հարջիք
ընդ այդ ձեր ստապատիր խաղաղութի՝
որ արդարապէս ուրացութիւն իմն է
ճշմարիտ և սրտիւ. և այնչափ մեծե-
ղեռն, որչափ զի կամակարուց խնդրէք
զայն, հեշտանայք 'ի նմին, և զկամս ձեր

'ի նա բևեռէք։ Ինչուա՛ սարսափ հարկանի 'ի հոգիս դրժողուսուցչաց, որք և անուան քրիստոնէի արժանաւոր ոմանք չէն. որք յահուր յանդգնութեամբ ժպրհեցան առ ոտն հարկանել զուխտն զոր ուխտեցին առ Յիսուս Քրիստոս 'ի մկրտութեան, ուրացեալք զնա և հայհոյեալք, և պիղծ դահամուենս ձօնեալք 'ի սպաս կռոց։ Բառամանեակ էր այն կախեալ զպարանոցէ նոցա, պսակ եղեալ 'ի գլուխս նոցա. դրուանք դրախտին բաց էին 'ի մուտս նոցա, այլ անզգայեցան շամչեցան հրաժեշտ տալ՝ օն անդբր կարդալ այսր ամենայնի սիրով թըշուառ՝ համառօտ և անցաւոր կենաց։

Խաբէ, զլիաբդ, աւանդ, ոբքան ողբոց արժանիք են սոքա. նա՝ եթէ ճշդիւ կամեսցուք խօսիլ, ուրացութիւն նոցա այդ՝ առ երևելեաս է, արտաքին և շըրթամբք և եթ, զի հաւատք թագաւորէ 'ի միտս նոցա և 'ի սիրտս. սրտիւ սիրեն զԱստուած, զհաւատս և զկրօնս, յորմէ լեզուալ միայն կան 'ի բաց։ Կամին պա-

հել՝ի մի թեր զհաւատոն անձեռնամերձ, և աղաբաիչք կան այդմ տմարդութիւն մեայն և շինականագոյն մտաք։ Ձեր ուրացութիւն ոչ մեղաւորք, ՝ի միջի ձերում է և ՝ի սիրտս ձեր, որոց հեշտին է մնալ յայնմ սուտ խաղաղութեան։ Դուք սրտիւ իսկ անեբկիւղ կայք ՝ի սպառնալեաց անՆերելի տանջանացն, և անողբելի մնայք, անընդոստ առ խոստմունս անճառելի պատկացն, առանց ինչ մօտալուտ վտանգի կորստեան կենաց, բարեաց և ազատութեան։ Ուրանայք զԱստուած սրբութիւն, խոստովանեալ զնա շրթամբք և եթ՝ միայն առ ՝ի միտս բարեհաճոյ այլոց լինելոյ, կամ այլովք ըստ աշխարհի դիտողութեամբք։ Ունիք դուք խաղաղութիւն այլ՝ զոր ընտրեալ էք անձանց, կանգնեալ առաջի նորա իբրև զԱստուած՝ զ՝ի վաղուց տարփացեալ սեղանս, աչօք բացօք ոչ կամեցեալք ՝ի տեսանել, և քաջալուր ունկամբք դժուարինք ՝ի լսել, ոչ ձայնի փրկչին ունկն դնէք, և ոչ զայս շնորհաց նորա տեսանէք։

Արդ՝ ո՞չ ապաքէն այս ձեր խաղաղութիւն մեծ իցէ 'ի չարիս ձեր՝ եթէ գիտեացուք առ ձեզ, և քրիստական յանցաւորութիւն և աստուածընդդէմ անօրէնութիւն։ Բ։ 'ի վերայ այսր ամենայնի կասեցա՞ք 'ի հաճութենէ ընդ անձինս ձեր և ընդ խաղաղութիւնն, ասելով. «Մեղայ, զի՞նչ ինձ պատահեցաւ տրտմական». Սիրա. Ե. 4։ Մեղայ, այլ քաջառողջ եմ. մեղայ, այլ ամենայն ինչ ըստ կամս իմ գնայ. «Մեղայ, և զի՞նչ ինձ պատահեցաւ տրտմական»։ Աւաղ, զի 'ի մոլորութեան կայք, քան զոր չէք ինչ այլ թախծագին. քանզի այժմեան յաջողուածք ձեր այդորիկ՝ մեծի բարկութեանն Աստուծոյ են նշանակք 'ի վերայ ձեր, և սպառնալիք են հանդերձեալ ահագին պատժոց։ Եթէ սրբատատրոփք ինչ էր ձեր, զԱստուած ունէիք այնմ բժիշկ ճարտարապետ. արդ դատաւոր է այն ձեր կնքել զպատճէն պատժոց ձերոց։ Եթէ առաքէր 'ի վերայ ձեր փորձութիւն՝ հայր էր ձեզ, որ

գաւազանաւ յուղիղ պողոտայն ածիցէ զորդի ընդ զարտուղի ելեալ, և կորըստեամբ բարեկամաց, բարեաց, աղաւաւ-թեան որդւոց՝ յապաշխարութիւն ածէ. այլ այժմ մեզաց ծնողց խաղաղութեամբ թողու զձեզ ծփալ 'ի խորս անդընդոց։ Իցէ՞ թէ յաւելցին և այժմ սրտաբեկ սրտառուչ առնել զմարդ՝ անակնառու հրեշտակութիւնք, կծանող երգիծանութիւնք. որպէս երբեմն ուրուականին Սամուէլի առ Սաւուղ կրճտամբութիւնն. «Օ՛ի լկեցեր զիս եւ լանել ինձ». Ա. թագ. ԻԸ. 15։ Յոր որպէս առ Դաւիթ ասացաւ. «Դու ես այրն այն». Բ. թագ. ԺԲ. 7։

Յայնժամ այլ խորհուրդք 'ի միտս ձեր յածէին. փոփոխութիւն լինէր 'ի ձեզ բարուց. լռութիւն և խաղաղութիւն խղճի մտաց է, որ բևեռակայ պնդէ զձեզ յայդ տարազ կենաց, և իբր զձեռանէ կալեալ առաջնորդէ տանի մինչև իսպառ յանզգուութիւն։ Այլ մեծ թշուառութիւն է այդ խաղաղութիւն,

յորժամ ճանաչեմք լինել զայն պատիժ բարձրելոյն։ Ո՛չ երբէք տեսաւ երկիւղած մեղաւորի 'ի բարձրասեպ վախից 'ի վայր հոսիլ որպէս անկասկած առն։ Ի ժամու մեծամեծ յաջողութեանց ըմբռնեցան երբեմն մեղաւորք 'ի հեղեղաց Ջուրց. յաւուրս բարեկենդանութեան իւրեանց այրեցան 'ի հուր ծըծմբուա՝ ընակք Սոդոմայ և Գոմորայ։ Ա՝ինչդեռ ամենայն ինչ լի էր ժողովրդեանն՝ կորեան յանապատին. մինչդեռ 'ի հարսանեաց խնձոյս էին որդիքն Ջամբրեայ՝ ելին ընդ սուր Յովնաթանու մակաբեանց. 'ի գիներբուս Բաղդասարայ ընթերցաւ վճիռ դատապարտութեան նորա։

Ա՝ման այսորիկ 'ի մէջ ամենայն ահագին պատժոց, զոր նոյն ինքն Աստուած սպառնացաւ 'ի ցասման իւրում, ահագին է այս եղանակ անդորրու։ Ո՛չ հրբայրեացք քաղաքաց, ոչ հրընկէցք մանկանց, ոչ անկած իշխանաց յաթոռոց իւրեանց, կամ ճակատ զօրաց սրաճարակ

խողխողէալ, կամ ջրահեղձայց զմահ ողջ ջուն եալ։ Այլ անդորրութիւն ի մեզ։

Ասէ Աստուած Երեմիայիւ, լցաւ չափ անօրէնութեան ժողովրդեանդ այդորիկ. զանց արարին զուխտիւ իմով. զոպասեակս իմ արհամարհեցին. երկիրս պագին աստուածոց օտարաց. կանգնեցին նոցա մեհեանս. ամբարձին ամբարիշտ սեղանս առ աստուածս սուտս. վասն այսորիկ «Արբեցուցից զնոսա, զի թըմբրեսցին»։ Երեմ. Ե.Ա. 30։

Նիրհ արկից զնոքօք ի մեզ իւրեանց, որպէս զի բաւեսցին որպէս զուարակս յօր կոտորածի. և արդարութիւն առ ժամն թագուն՝ և սանձ ի բերան, պահեսցի այլուստ ժամանակի յառաւել վիշտ նմա. յորժամ շեղջաշեղջ բարդեսցին զնոսիւ փառք, աւուրք յաջողուածոց և երանութեան, յեղակարծուց յաջորդեսցէ այնպիսի պայծառ աւուրց գիշեր բաղմակոծ. «Դարձուցանէ ի գիշեր, և խրոովեսցին»։ Յոբ. Լդ. 25։

Հաճոյ թուեսցի ձեզ յուշ ածել

զայն գիշեր, զայն ահագին գիշեր ե-
ւ օրեայ՝ որովք պատժեաց Աստուած զե-
գիպտացիս. չէր ինչ յայնմ գիշերի վիշտ
նոցա, ոչ մրրիկք՝ որք յուզեն զտափա-
վայրս, ոչ կայծակունք մարդածախք. ա-
մենայն ոք կայր անշարժ յիւրում կայի՝
որպէս և գտաւ 'ի հատանել մթութեն.
ճանապարհորդք 'ի ճանապարհս, մշակք
յանդս, տրուեստաւորք 'ի խանութս,
դատարկանձունք 'ի հրապարակս, մեծա-
մեծք յապարանս, պաշտօնակալք և իշ-
խանք յարքունիս. « Մինով խաւարային
շղթայիւ ամենեքեան կապեցան ». Իմաս.
ԺԷ. 17։ Այլ յամենայնէ երկնչէին, որ-
պէս թէ ամենայն ուստեք սուր իցէ ըն-
նոքօք՝ ծախել զնոսա, « Խուսափեալք
յամենայնուստ 'ի սրոյ ». Յոբ. ԺԵ. 22.
ըստ լատ. թարգ։ Ամենայն դուզնաքեայ
փչիւն որ հատանէր զնորին ըստ թիւն
շշաւիսելի խաւարոյն՝ կայծակն երևէր
նոցա սրավարեալ 'ի բարձանց՝ լուծա-
նել զնոսա 'ի փոշի։ Ամենայն առուս որ
հեղասահ խոխոջիւք ընդ իւր ծործոր ըն-

թանայր՝ թուէր նոցա ուղխաջուր յոր-
դեալ անհնարին՝ կլանել զնոսա։ Ամե-
նայն թռչուն որ ոստնոյր ծառ 'ի ծա-
ռէ, կարծեցուցանէր նոցա սուլմունս
վիշապայ, կամ գոռմունս գազանաց ար-
տաքս վազելոց յիւրեանց որջոց՝ 'ի ժա-
նիս իւրեանց ըմբռնել զնոսա։

Եւ այսպէս ահագին ցնորք անհնա-
րին լն սրտմտութեամբ մի զմիով կու-
տակեալք առ աչս նոցա՝ նորանոր ահս
և երկիւղս ածէին 'ի վերայ նոցա. մինք
ոստանեալ, սիրտ բաբախեալ, ոգի տա-
րուբերեալ, յանձանց իւրեանց իսկ իբ-
րև այլ յայլմէ եղեալք խուսափէին.
«Լքոյց զնոսա զարհուրեցուցեալ». Յովասպ. ԺԷ. 18։

Այս վիճակ է մեղաւորին, որ հեռի
առնէ յանձնէ զսուրբ երկիւղն աստուա-
ծային. և անկանէ անձին հիւսկէնս անդ-
ընդով խաղաղութեան 'ի մեղս իւրում։
Այս այն խաղաղութիւն է, որ երբեմն
յընթացս կենաց, բայց գրեթէ միշտ 'ի
ժամ մահու փոխարկեալ՝ լինի փոթորիկ

'ի մտացն խղճի։ Յայնմ աղետաւոր գի-
շերի առկայծեն փոքր ինչ կայծակունք
լուսոյ, որով տեսանեն եղկելիքն, զի չիք
'ի ճանապարհս՝ ոչ լոյս և ոչ վստահու-
թիւն. «Ճանապարհք նոցա 'ի խաւար
և 'ի գայթակղութիւն». Սղ. ԼԴ. 6։
Տեսանեն խաւարեալ առ ինքեանս զլոյս
նպաստից աստուածային շնորհաց. քան-
զի որպէս 'ի յաջողութեան իւրեանց մե-
ղանս 'ի մեղանաց վերայ կուտեցին, նը-
ւազեալք գտան ընդ նմին յաստուա-
ծային շնորհաց և յերկնապարգև օժան-
դակութեանց. վասն այսորիկ միշտ սի-
րէ 'ի նոսա և ճնշէ զնոսա բուռն իշ-
խանութիւն դիւին. սանձակոծէ և ճըմ-
լէ զաղատ իշխանութիւն անձին. ծան-
րացուցանէ կարի՝ զմէտ նժարի բնաւոր
միտողութեանց և աղխատրոյզ կամաց։
Անսանձելի խեռ կիրք և ախաք յաճուրդ
գնան օր ըստ օրէ. իսկ իշխանութեան
բանին ամենեքեան կան ապստամբք.
«Եղեցին ճանապարհք նոցա 'ի խաւար
և 'ի գայթակղութիւն»։ Այլ աւաղ

եղկելի վիճակի այնոցիկ՝ որք յարանան
'ի մեղս՝ կարծեցեալ խաղաղութեանն
գտակաւ, յորս կամ յանցանք են մար-
դոյ առ Աստուած, կամ պատիժ է Ա-
ստուծոյ առ մարդ։

Այլ և այս ճշմարիտ է, զի սուրբն այն
երկիւղ աստուածային՝ որ յառաջէ, ընդ-
թացակցի, և զկնի գոյ ամենայն գործոց
մերոց, այն միայն է ճշմարիտ ճանապարհ
աներկեան. զհետ լինել խաղաղութե՛-
որ ծագէ 'ի սուրբ սրտէ, խաղաղու-
թեան՝ զոր Տէր Յիսուս երբեր յաշխարհ
առ մարդիկ, միայն զի խնդրեսցեն։ Ապա
երանի՛ այնմ, որ «Յորժամ 'ի խաղաղու-
թեան իցէ, ահ նորա յականջս նորա». Յոբ. ԺԵ. 21։ Որոյ կատարեալ խաղա-
ղութիւն սրտի ստացեալ՝ միշտ յանձնէ
և 'ի թշնամեացն կայ յերկեանի. միշտ
հսկէ, և տեսեալ զանձամբ զոյս շնոր-
հացն, և այնպէս երկնչի՝ մի գուցէ պա-
կասեսցի լոյսն, կամ դարձցի 'ի խաւար,
հեռանէ ելով խրատու Յիսուսի Քրիստո-
սի. «Զգոյշ լերուք ... գուցէ լոյսդ որ 'ի

քեզ է, խստաբար ասեցեր »։ Ղուկ։ ԺԱ։ 33։ Այս է արդարև երանելին մխիթարիչ երանութեամբն, որ մայրն է ճշմարիտ խաղաղութեան սրտի, զոր եբեր յաշխարհ մանուկն Յիսուս։ « Երանելի է այր՝ որ արհամարհիցէ զամենայն վասն երկիւղածութեան »։ Առակ։ ԻԸ։ 24։



ՃԱՌԵ։

Ի ճշմարիտ յոյսն՝ որ ի Քրիստոնէայն է։

Դատաւոր նստեալ ի յաթոռ փառաց և մեծվայելչութեան իւրոյ, և անկաշառ ի դատել, և ահաւոր ի վրէժս պահանջել։ Դատաւոր՝ որ ընդ ծանուցեալս և ընդ թեթևագոյն յանցանս գրգռի ի բարկութիւն, և անաչառ խրատութեամբ պատժէ զյանցաւորն. կարկառէ զաջ վրէժխնդրութեան իւրոյ ընդ ամենայն ազգս. առնէ այցելութիւն ի

բարկութեան իւրում մինչև յերիս և
'ի չորս ազգս։ Զատաւոր՝ որոյ հայե-
ցուած թափանցէ և 'ի ներքինս սրտի.
քննէ, կշտամբէ, և դատապարտէ զկսոր-
հուրդս և զտենչս անգործս։ Զտանէ
թիւրութիւն ոչ 'ի բանս միայն, այլ և
'ի նմին իսկ լուութեան. անիրաւութիւն
դատանէ յարդարութեան, և 'ի գործս
բարիս՝ պակասութիւնս և զառանցանս
չարս։ Զատաւոր՝ որ զհանդերձեալ գա-
լուստ իւր հրատարակեալ ամենեցուն
ծանուցանէ, այլ զտեղին և զժամանակն
բոլորովին լռէ. այսչափ ինչ յայտնի է,
զի եկեսցէ 'ի ժամու՝ յորում մարդն ոչ
ունիցի, նման գիշերաշրջիկ գողոյ՝ ժո-
ղովել զվնասաբերս տերութեան իւրոյ,
և 'ի զոհ բարկութեան իւրոյ ածել ըզ-
նոսա։ Մի է այս 'ի կենդանագիր պատ-
կերաց և յանպատրաստ նկարուց, ո-
րովք առաջի դնի մեզ 'ի սուրբ գիրս
հնոյ կտակի՝ Ատուած արարիչ և գե-
րագոյն վարիչ ամենայն աշխարհի։ Պատ-
կեր՝ յորմէ աղդի 'ի սիրտս երկիւղ սուրբ

և փրկարար, որ սկիզբն է և հիմն ամենայն գիտութեանց։ Լու արդարև մի՞ զոք ընդ ակն արկանել և եթ ընդ այսնըկար՝ ոչ գոչեսցէ զմարդարէին. մի՞, զի՞ մարդ ահագին են Տէր դատաստանք քո՝ ի վերայ որդւոյ մարդկան։ Մի՞, զի՞ մարդ զարհուրի և դողայ անձն իմ ընդ ածելս զմտաւ՝ թէ և ինձ պարտ է յայնպիսւոյ դատիլ դատաւորէ։

Այլ աղէ՛, ոդի՛ առէք, քաջալերացարուք. վախճան տուք երկիւղիդ. դադարեսցին անձկութիւնքդ. զօրասցին սիրտք ձեր. պարզեսցին ճակատք ձեր. անցցեն և պակասեսցին ցաւք ձեր. և սարսափանաց ձերոյ և երկիւղի փոխանակ յաջորդեսցէ արդահատիչ ուրախութիւն։ Մի՞ զանողանքելի դատաւորի և եթ զկերպարանս ունի Աստուած մեր. չեմք այլ և ս այնպիսի թշուառականք, որք բարկութեան նորա միայն ակն կալցուք։ Քանզի միածին որդին իւր Յիսուս Քրիստոս յարուցեալ՝ ի գերեզմանէն՝ ի նորահրաշ կեանս անմահական՝

նասի ընդաջմէ Հօրն յաւիտենականի. ապա յայլ եղանակ փոխեցաւ վիճակ մեր. արդարութիւնն իսկ 'ի մեր կողմն է. դատաստանն մեզ 'ի նպաստ և 'ի հաճոյս. դատաւոր ընդմոտաւոր ոգւով, կարեկից և բաղմագութ։ Այլ զիմբդ մարթ իցէ այլազգ ինչ լինել, այն ինչ տեսանէ առ իւր զԱստուածորդին իւր, որ իբր փաստաբան՝ արդարութի խնդրէ վասն մեր, և 'ի նմին իսկ յարդարութեան դատողականն բեմբի դնէ զիւր վստահութիւն և զմեր։

Այլ զի՞նչ քան զայս զօրագոյն քաջալերութեան պատճառք. որպէս հնար իցէ ոչ դողէլ զմարդարէին. Տէր, այսօր արդարև հաստատեցեր զիս, և յաներ-կեան յոյս քո ամրացուցեր զիս։ "Դու Տէր առանձին միայն յուսով քով բնակեցուցեր զմեզ". Սղ. Դ. 10։ Այլ ո՞վ 'ի մէնջ յերկրայս կայցէ ընդ զօրութիւն բանից այնպիսի փաստաբանի՝ որ անցեալ է 'ի մէջ 'ի մեր կողմանէ, պաշտպանել զմեր դատ։ Ո՞վ իցէ, որ ոչ եր-

կնիցէ 'ի մահ վստահութիւն կատարեալ առ աստուածայինն հովանաւորութիւն՝ յիշատակաւ աւուրս հանդիսի։ Այս ընդարձակեցուք զխորհրդածութիւն մեր յայս կարևոր առաջարկութիւն։

Յայն է սովորաբար գերագոյն ուղղիչ և տնօրէն ամենայն ազատ գործոց մարդկան, ևս և 'ի սոսկ բնական կարգի. սա է առանցքն՝ զորով պարայածին խորհուրդք և տենչք. այն միջակէտ և բևեռք՝ որք յինքեանս զդիտումն մեր և զձեռնարկ քարշեն. այն խարիսխ՝ յորում է հաստատութիւն ամենայն կարևոր գործոց մերոց. յուսով շահու ամոքէ զանձն ճանապարհորդն, և զդիմի հարկանի ամենայն վշտաց վտանգի, նոյն և նաւաստիք 'ի ծովուն։ Ի յոյս և եթ ապաստան՝ 'ի կշիռ դնէ զօրականն ըզկեանս իւր ընդդէմ յարձակմանց թշնամեաց, այր վաճառական մատնէ զանձն իւր և զինչս 'ի վտանգ աւարուց և նաւաբեկութեան։ Յուսով ընծայէ բժիշկն դեղ ախտացելոյն՝ որ յանկելա-

նոցի։ Ի սա ապաստան դատ վարէ փաս-
տաբանն 'ի դատողական ատենի։ Լու-
դուք երկասէր մշակք՝ օգտիւ ճգնեալք
'ի դաշտային մշակութիւն՝ հեղուք քրքը-
տուն։ և ամենայն վաստակք ձեր և
ճգունք խարսխին միայն 'ի յոյս տոհմա-
կանօք հաւաքման հնձոյն։

Այս ամենայն փորձիւ ճշգրտեալ
ցուցանի նա և 'ի գործս շնորհականս։
Միածայն ուսուցանեն սուրբ հաբ, թէ
յոյսն է կանոն շնորհայ՝ որ 'ի մեզ. և
սուրբն Թովմաս ստուգէ մեզ թէ այս
է հիմն և արմատ ստացման մերոյ և ժա-
ռանգութեան, որպէս և սէրն սկիզբն
է և հիմն արժանեաց և բարի գործոց։
Ուստի որպէս արդիւնք մեր չափի 'ի սի-
բոյն՝ որ տայ մեզ առաքինանալ, նոյն-
պէս ժառանգութի երկնային բարեաց
չափէ 'ի յուսոյն՝ որով վատահիմքն խլնդ-
բել։ Այլ արդ՝ այսր անստերիւր ճըշ-
մարտութեանս գիտութեամբ զնոր նիւթ
մեծի ուրախութեան ոչ ընծայիցէ մեզ
քաջալերութիւն սուրբ եկեղեցւոյ՝ ս-

բով յաւուր յայսմիկ սրտապնդէ զմեզ յարութեամբն Յիսուսի Քրիստոսի։ Այս առաւելու, պահէ հաստատուն, ճշգրտէ և ուղղէ զյոյս հանդերձեալ վերածնութեան մերոյ 'ի նոր և յանմահ կեանս։ Մինչ զի Յիսուս Քրիստոս մարմին էառ մարդկային՝ փրկել զտիեզերս. եկաց 'ի մէջ մարդկան, ախտակրեաց 'ի մէջ նոցա, և եառ մեզ մինչև զմարմին և զարիւն։ Այս սակս արժան էր առաւելուլ վստահութեան մերոյ, վայելել զպտուղ և զարդիւնս չարչարանաց նորա և զմահուն։ Յիշատակ վերայ նորա, խաչին և գերեզմանին՝ արժան էր բարեյոյս առնել զմեզ, արդէն իսկ նոր նորոգեալ զհին մարդոյն զասպականութիւն. պատրաստեալ գերեաց բանտարկելոց 'ի դիւէն զազատութիւն. անհուն պարտեաց մերոց ըստ սահանջել աստուածային արդարութեն՝ թողութի, ջնջելով զյանցանս մեր. «Մատնեցաւ վասն յանցանաց մերոց». Հռով. Դ. 25։

Այլ և զայս ինչ չէ՛ տարադէպ խոս-

տուման լինելը, այսու ամենայնիւ չէր հաստատեալ տակաւին նոր մարդն, չև էր շնորհեալ նմա շնորհդ, չէր դեռ աներ-կևան ընդ փրկութիւն իւր, չև էր անդորրամիտ յաղաղութեն իւրում. «Յաբեաւ վասն զմեղ արդարացուցանելոյ»։ Այս զի՝ թէ չէր յարուցեալ Քրիստոսի, ամենայն մեր վստահութիւն 'ի նանիր էր և ընդունայն. «Եթէ Քրիստոս չէ՛ յարուցեալ... ընդունայն են հաւատքն ձեր». Ա. Կրն. ԺԵ. 24։ Մինչ՝ վասն այսորիկ՝ զի Քրիստոս յարեաւ, վճարեալ է ամենայն ինչ ըստ սրբոյն Օգոստինոսի, և ոչ ևս մնայ ինչ տարակոյս զատացեալ ժառանգութենէն։ Քրիստոս յարեաւ, ապա յապահովի է հաւատքն, ապա կարևոր են պատուիրանքն. օգտաւէտ են խրատքն. անվրէպ և անսայթաքելի կանոն է աւետարանն, և բանս պարունակէ աստուածային, և նոքաւ ամրացեալ հաստատի յոյս մեր 'ի հանդերձեալ յարութիւն մեր։

Այլ արդ՝ զբարեսի խթան մեզ ածեն

'ի մէջ ստիպել 'ի բարի գործս՝ այս ա-
մենայն արգահատիչ խորհրդածութիւնք
'ի վերայ յարութեանն Քրիստոսի, որ
հիմն է յարութեան մերոյ յերկիւղած
և յաղնուապաշտ ոգիս։ Միրելի է արդ
նոցա այն ամենայն, զոր հաւատք և կը-
րօնք ուսուցանեն և հրամայեն. հրա-
հանգք գործոյն քաղցունք և բաղմա-
բեղունք, ծանունքն իսկ 'ի նոսա մե-
ծարգոյք և անուշունք։

Այս ընդ հակառակն՝ այն ամենայն որ
չէ օգուտ առ 'ի պէտս փրկութեան,
անհաճոյք նոցա թուին, տաղտուկք և
անբերելիք. բորբոքէ 'ի նոսա նախանձ
յաղագս կրօնի ջերմն եռանդն 'ի պաշ-
տօն աստուածային և 'ի յարգութիւն
եկեղեցւոյ նորա, անկեղծ սէր առ եղ-
բարս ցաւոտս և կարօտս օժանդակու-
թեան. արժանաւոր ցասումն ընդդէմ
բարուց և աղանդաւոր սկզբանց լիսեր-
դինեանց, ընդդէմ գայթակղութեան
նոցա և ընդդէմ զեղծման նորօրինակ
վարուց նոցա։ Այլ, զինարդ հաստատուն

մեայ 'ի նոսա բնական անհաստատութիւն սրտի, որոյ խարիսխ ամրութեան յաբատեւութիւն բարեոյն է և մեայուն-ութիւն։ Տեսէք զապացոյց բանիդ յառաքեալս, որք նախ տարակուսեալք և յերկուացեալք, ապա քնդ տեսանել զՔրիստոս յարուցեալ՝ հաստատունք և անշարժք։ Բննեցէք զայդ 'ի սուրբն Պետրոս, որ նախ տկար 'ի հաստատութիւն անձին անգամ, և ապա զբաւոր 'ի հաստատել զայլս. զնոյն գաջիք և 'ի հաւատացեալս նախնի գարուց։ Ամ կալաւ զնոսա հաստատուն 'ի մէջ այնքան հակառակութեանց և հալածանաց։ Ամ. Քրիստոս յարեաւ՝ ասեն, ապա և մեք յարիցուք նովաւ. ահա խորհուրդն զբրութեան։ Ամ զայն անհամար երամն վկայից յաճախեաց պնդութիւ ոգւոյ, որք քստմնելի՝ միանգամայն և փառաւոր տեսարան յանձինս բարձեալ բերէին, հարուածեալք, տանջեալք երկաթի տապակօք, անուօք, տապարաւ և քերանօք։ Ամ ասեմ զբացոյց զնոսա, բայց եթէ

խորհուրդ և յիշատակ հանդերձելոյ փառաւոր յարութեան նորա, կերպա-
բանակից Քրիստոսի եղեալ։

Թուի ինձ տեսանել զբարեբաղդ մայր Մակաբայեցւոց արտասուաթոր աչքն՝ի զնին տանջանաց և քերանաց սիրելի ծննդոց որովայնի իւրոյ։ Լուարուք, ո-
րովք բանիւք քաջալերս մատուցանէ որդւոցն. որդեակք իմ ասէ, անուշակ որդեակք, աղաչեմ զձեզ՝ի մէջ տանջա-
նաց ձերոց՝ զոր սիրէք, ամբարձէք զաչս ձեր յերկինս։ Ոչ այլ ինչ համարեսցի ձեզ, բայց տեղի անցից. հայրենիք ձեր յերկինս է, ուր սպասեալ մնան ձեզ. անդ ունիք մնալ միշտ։ Այս անդամք յօշատեալ՝ի հարուածոց, այս միս և այս ոսկերքս չարչարան խղճայթեալք. այս մարմին համակ՝ որ յետ սակաւուց մնայ դի անկենդան, նոր նորոգեսցի նորահրաշ կենօք, և մեծաշուք փառաւորեսցի յերկինս։ Անդ պայծառասցին պատուելի սպիք առաջնիկայ վկայիցդ՝ իբր նշանք արժանի լինելոյ ձեզ պսակացն,

զոր սուանալդ ունիք անվրէպ յերանա-
ւէտ հայրենիս անդ ընդ հրեշտակս և
ընդ սուրբս ամենայն, ընդ ամենայն
յաւիտեանս։

Այլ վասն ձեր զինչ, մեղաւորք.
դիտեմ զի խոչընդակն ունիք ձեզ ըղ-
հոյլս չարեաց՝ որք հատանեն զյոյս ձեր։
Այլ յայսպիսի գթութեան ժամանակս,
յայսպիսի աւուրս փրկութեան, յորս
անմարթ է հաւատալ թէ չիցէ ձեր
գէթ զմտաւ ածեալ կամ անձկացեալ
զարձի առ Աստուած, չէ՞ արժան հա-
տանել զյոյս առ յիշատակէ յանցուածոց
ձերոց։ Դիք 'ի սիրտս ձեր ունիլ միակ
զօրութիւն յեռս կալոյ յամենայն մե-
ղաց զոյն՝ զոր 'ի յոյսն հաստատեսջիք.
"Յուսով եղիցի զօրութիւն ձեր". Լ.սայ.
Լ. 15. (ըստ լատ. թարգ.) Վերջին և
անբուժելի հարած լիցի ձեր սէ վատա-
հիլդ 'ի միայնակ յայն նպատակ՝ որ մնայ
'ի փրկութիւն ձեր։ Ար 'ի զօրացուցա-
նել զանձինս ձեր՝ առաջի աչաց նկա-
ռեսջիք զպատկեր սիրոյ քաղցրագութ

Հօր ձերոյ և զՏեառն սովորեալ անյիշաչարութիւնն, որ ընդ յանցաւորս և ընդ ապերախտս բնակէր ընդ նմանիս ձեր։

Օրինակ առէք այսմ զարքայն Դաւիթ, որչափ ինչ տարար ընդ անշնորհակալս որդին իւր, և ընդ ապստամբ ծառայն Աբիսողոմ։ Հաստատութիւն սթռուոյն, ապահովութիւն արքայական կենացն և հանգիստ ժողովրդեանն խնդրէին՝ զի ամենայն զինուորական զօրութիւն արքայի ընդդէմ նորա յարիցեն։ Այն ինքն Դաւիթ ստիպէր գալ 'ի գերեզման զօրուն, ըստ որում պարտիք են գերադոյն իշխանի։ Այլ 'ի վերայ այսր ամենայնի ոչ անհոգացաւ վտանգել ըզկեանս նորա՝ որ սիրելի էր նմա քան ըզկեանս իւր։ Յանցանաց որդւոյն չէր արժան լինել այնչափ եղեռնաւոր, բայց և սիրոյ հօրն չէր պարտ լինել այնպէս մեղկաղէտ։ Այս զիարդ կարծէք դուք, որպէս եղանակաւ զիւր ճառ աւարտեալ լոյծ արքայն 'ի խրախոյս զինուորական

դասուն առ 'ի բաղխիւն մարտի։ Որ-
պիսի սրտառուչ աղերսանս կարծէք թէ
արարեալ ի՞նչ նոցա 'ի կատարումն կա-
րևոր գործոյն, 'ի քաջալերութիւն առ
'ի պատերազմ։ Այլ, առաջին հոգ իւր
եղև Աբիսողոմ, վասն այսորիկ հրաման
տայ նոցա. «Խնայեցէք 'ի պատանեակն
իմ Աբիսողոմ». Բ. Թագ. Ի.Ը. ե։ Ան-
շնորհագէտ է, ապառուամբ է, այլ որդի
է, խնայեցէք. եթէ կորուսանել էր ինձ
զդաւաղանն, զթագն, զարքայութիւն,
և զկեանս իսկ գլխովին, հաւան եմ ընդ
այդ. միայն՝ մի՛ կորիցէ իմս Աբիսողոմ.
առանց նորա դամն է ինձ գաւաղանս
այս և՛ թագաւորութիւն և կեանք.
խնայեցէք։

Ահա՛ բանք զթոյ, որովք ընդ քեզ
վարի գթած փրկիչն և Տէր, մեղաւոր
եղբայր և քոյր։ Այսէ՝ անշնորհագէտ է,
ապառուամբ է, ստահակ է. այլ քանզի որ-
դին իմ միածին Յն՞ Քն՞ և եղբայր դո-
ցա՝ զդա ինձ ստացաւ յորդեգիրս, սի-
րելի՛ է ինձ, խնայեցէք. ընթացէք հը-

ըեշտակք իմ 'ի պահպանութիւն դորա. հաւատարիմ քարոզք բանից՝ օգնեցէք դմա ձերովդ խրատու։ Ուղղեցէք զդա 'ի ճանապարհս փրկութեան, խնայեցէք։ Եւ դուք արարածք իմ, որ զինեալքդ էք անօթով բարկութեան իմոյ առնուլ զվրէժ իմ 'ի դմանէ, խնայեցէք։

Ոչ գտէք տակաւին զբարերար արդիւնս երկնային յուսոյն՝ սիրելիքդ իմ մեղաւորք։ Ո՞վ աղաւաւեաց զձեզ յայն ինչ մրրկէ. ո՞վ զերծոյց զձեզ յայս ինչ անակընկալ դիպուածոյ։ Ո՞վ կարկառեաց ձեզ աջ լիսաձեռն 'ի պէտս ձեր 'ի սմին երաշտութեան տարւոջ, բայց եթէ Տէր ձեր գթած. որում և ոչ 'ի հարս՝ գթութեան նորա և խանդաղատանաց հաւասար չէք ըստ Տերտուղիանոսի։ Օ՜ան ըացոյց զձեռն իւր 'ի վերայ թիկանց ձերոց պէսպէս կարօտութեամբք՝ որովք ուղղել զձեզ խորհեցաւ. "Արկ զմեօք ցաւս ստամանց և կարօտութիւն հայցի։ Աստուծ. Դ. 6։ Եհար, այլ յայս սակս միայն՝ զի զգուշացուսցէ զմեզ փախչիլ

'ի մեծ և սա բարկութենէ. «Այս նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան». Սմ. ԺԹ. 6։ Այլ տեսեալ զմեզ ցաւածս և զղջացեալս՝ պատրաստ է զԻՆՔԱՆԵԼ մեզ 'ի կարիս մեր, միխիթարել զմեզ, շնորհել աւուրս երանաւետեալս, յուղղութիւն մեր հոգ կալեալ և ոչ 'ի կորուստ։

Արդ՝ այսոքիւք արդարհատական յիշատակօք Աստուծոյ, որ թէպէտ և բարկացեալ աղիս ունի խանդակաթ և կարեկից հօր. ՈՎ 'ի ՁԷՆՔ սիրելիքդ իմ մեղաւորք, ունիցի սիրտ սալացեալ ոչ ընուլ և ոչ կատարել զկարևոր գործ դարձի իւրոյ առ Աստուած։ ՈՎ այնպէս ապառուսմ առ աստուածայինն ողորմութիւն, դիւնել նմա չափ և սահման։

Դիտեմք, զի է և յոյս ցնորական, խօլական, ընդունայն և պատիր. և է յոյս այնորիկ՝ որ մնալ կամի 'ի մեզս յանդորրու ըստ իւրոյսանն ուժի. և 'ի ժամանակի՝ զի պակասին նմա դիպուկք առ 'ի մեզս դառնալ առ Աստուած, յորժամ ոչ և կայ այլ ժամանակ. Յայտ. Ժ. 6։

Այլ այս անիրաւ ակնկալութիւն ոչ առաւելաւ, այլ մանաւանդ եղծաւ յիշատակաւ յարութեանն։ Յուշ առնէ մեզ այն յարութիւն, զի յարիջիք նշանաւք անմաքրութեան ձերոյ և ամբարշտութեան. նովին մարմնով՝ զոր զեղխութեամբն անարգեցիք. նովին ձեռաւք՝ որով գործս խաւարի գործեցիք. նովին ոտիւք՝ որովք ընդ մոլորաշաւիղ հետս գնացիք, որք մատենագրեալք և արձանացեալք են 'ի մատենադարանի ցասմանն Աստուծոյ։

Վստահութիւնն՝ պտուղ յարութե՛քաջալերէ յառնել 'ի մեղայ, և հաստատիլ 'ի շնորհս և 'ի սէր Աստուծոյ, և ճանապարհ բանայ առ 'ի փրկութիւն. "Յուսով ապրեցաք"։ Վասն այսորիկ զսմանէ միայնոյ են բանք մեր, և յորդորիմք ոչ կորուսանել զայս։ Այլ մանաւանդ զամենայն հնարս հնարել՝ զի ըստ ամենայնի առաւել ևս զարգացի 'ի մեզ. յանցեալ աւուրս մեզ և այլոյ ոմանց, որք 'ի սոյն պաշտօն հոգևոր մա-

տակարարութեան հաղորդք մեր եղեն, դէպ եղև մեծ քաջալերութիւն 'ի տեսանել զբարեաց դարձ ձեր 'ի հառաջանս ձեր և յողբս, որոց վկայք եղաք։ Անք աղօթիւք մերովք և սրբագործ սպասարագաց աղաչեցաք զՏէր տալ ձեզ առաւել շնորհս առ 'ի կատարեալ զգաստութիւն։ Անդ թացայնք խափանել ըղձգունս մարմնոյ զունայնս և զանօգուտս բերս. քակել անվստահութեամբ զայն՝ զոր 'ի դուզնաքեայ ձեր իղձ հիմն 'ի վեր կառուցեալ շինել կամեցաք։ Արդ յետ զաստուածային ողորմութիւնն աղերսելոյ 'ի վերայ ձեր, ստիպիցէք խնդրել վրէժխնդրութի յարենէ Յիսուսի Քրիստոսի անարգելոյ յաղագս շնորհայ՝ զոր յանպէտս թողուցուք, յաղագս խորհրդոյ՝ զոր սրհամարհիցէք, յաղագս նպաստից՝ զորս չընդունիցիք, այնպէս ամենևին որպէս Մովսէս անդ ուրեմն 'ի վերայ լերին՝ յորժամ տարածեալ զբազուկս իւր յերկինս 'ի վեր՝ խօսէր աղօթիւք ընդ Աստուծոյ 'ի դիմաց ժողո-

վերդեանն, իսկ ապա ընդ ժողովրդեան 'ի դիմաց Աստուծոյ խօսէր սրով և հաւատաւոր ածովք։ Բան 'ի ձէնջ այդպիսի ինչ առաւել և սքաջացարուք 'ի խնամս փրկութեան ձերոյ, յաւելջիք 'ի ձեզ զյոյս սուրբ։ Աղաչեմք զձեզ և երդմնեցուցանեմք յայն ամենայն՝ որ ինչ կայ պատկառելի յերկինս 'ի վեր և յերկիր 'ի խոնարհ։ Կալարուք աչայ, միշտ 'ի ներքոյս սրտից ձերոյ խորաքանդակ տապաւորեսցին բանքս՝ պահել զձեզ և հրաժարեցուցանել 'ի չարէ. խրախոյս և սիրա քաջ մատուցանել ձեզ 'ի գործել ղբարին, զի կարասջիք ընդ սաղմոսերգու տրքային ասել. «Ի ճանապարհս պատուիրանաց քոց ընթացայ, զի անդորր տարարեր սրտի իմոյ». Սղ. ՃԺԸ. 32։

ԺԱՌ Ջ.

Ի վերայ սուրբ Լպսահոռենեան, կամ յանդիմանութեան։

Եղէք արտաքս յայրիացեալ հարս-նարանէ ձերմէ՝ թախծեալ դստերքդ Սիոնի, և ընդ նոսա որչափ ինչ անմխի-թար կայք 'ի բնակիչս հոգևորականն Երուսաղէմի. եղէք տեսէք զնոր յաղթա-նակ Քրիստոսի, որ մեծաւ փառաւք յա-րեաւ. և առաւել շքեղս յօրինեսջիք շնորհիւ յարութեան զձեր թագ արքունի, որով թագաւորդեալդ էք այսօր 'ի տօնիս։ «Եղէք դստերքդ Սիոնի, և տեսէք յարքայն Սողոմոն զպսակն՝ որով պսակեաց զնա մայր իւր». Յերգ. Գ. 11։ Եւ դու ով մահ, անհամոզելի բռնակալ մարդկայինս ազգն, յաղթա-կան մարդոյ, սանձ ամբարտաւանութեան, ամբարհաւաճութեան, և հպարտութեան, որ հուսկ ուրեմն յաղթեցար յԱստուա-ծամարդոյն։

Դու բարձր 'ի գլուխս սիգայիր 'ի վե-

բայ անհամար բազմութեան դիականց անշնչացելոց, և 'ի քէն 'ի հող մահու տարածելոց. և ահա ընդ ելանել Քրիստոսի 'ի խաւարչուտ նեմութենէ գերեզմանին, եմուտ 'ի նոսա շունչ կենդանութեան՝ հոգևորել զնոսա և կենդանագործել։ Տես, զի՞նչ աղխաղխեալ յարին ոսկր առ ոսկր. որպէս ծածկի 'ի վերայ նոցա մարմին, և յառնէ նոր ժողովուրդ 'ի նոր կեանս հոգևորեալ և քաջառոյգ։ Արդ՝ ձաղէ և յաղթանակէ մարդկայինս ծնունդ՝ 'ի քէն կողոպտեալ յաղթական աւարս. և հակառակ ընդդէմ քեզ դարձուցեալ զքո իսկ սպառազինութիւնս, անապաքինելի վերս դընէ 'ի վերայ քո։ Այ՛ էս այսուհետև երկնչի 'ի յարձակմանց քոց կամ 'ի հարուածոց, այլ տոնական խնդանաք դընայ զհետ Քրիստոսի. որ յարուցեալ ելբայց նմա ճանապարհ փառաց, յաղթանակի և թագաւորութեան։

Օ՜այս մխիթարութեան բանս յաղքատ մտաց մերոց յուշ ձեր ածէ տոնի

աւուրս հանդէս, և առ ձեզ ևս ինքնին իսկ յիշատակ դան՝ սիրելիքդ իմ քրիստոնեայք. այլ անձուկ եր ինձ զձեր հաստատակաց զդայութիւն ուրախութեան յայտնել՝ի հանդերձեալ փառաւորյարութիւնն։ Այլ սերն որ կարեւոր է ձեզ առ ամենայն ճշմարիտ գործս բարութեան, յաւելուլ՝ի ձեզ առ անյապաղ ղհետ գալնալ փափաքանաց ձերոց, և զայս և զայլ սոցին նման բանս զօրութեան և միխիթարութեան ասել ձեզ։ Այլ հարկ պաշտամանս մերոյ ստիպէ զմեզ՝ զձեր ուրախութիւդ չափաւորել բանիւք առաքելոյն, զի թէ վասն ամենեցուն է յարութիւն, այլ ուրախութիւն չէ նոյնպէս. ոչ փառքն, և ոչ հանդէսն յաղթական. «Ամենեքեան նընջեսցուք, այլ ոչ ամենեքեան փոփոխեսցուք». Ա. Կորն. ԺԵ. ՅԱ. (ըստ լատ. թարգ.) Մանաւանդ այսու առ զձեր օգուտ գալտանել՝ ծագէ՝ի սրտի խորհուրդ քննելոյ, սիր ի՞նչ է, և ուստի՞ բղխեսցի անարկիւն և հաստատուն յոյս հանդերձելոյ փառաւորի և քաջայաղթ յարութեան։

Ա. Հիմնեալ է այն յաստուածային գթութիւնն և ողորմութիւնն, որ հրաւիրէ զձեզ, սպասէ ձեզ, զհետ կըրթի ձեր, յածի զձեւք, և զձեռանէ կալեալ ձեր առաջնորդէ։ Արդարև ծանր է այն անյատակ՝ աստուածային գթութեանց, և վայ և եղուկ այնմ՝ որ զիւր յոյս ոչ հաստատէ 'ի նմին։ Այլ սուրբն Օգոստինոս ցուցանէ ձեզ երկուս ժայռս հաւատարմանգս՝ առ ապահովութիւն ձեր, յոյս ժպիրն՝ և յուսահատութիւն վհատիչ. "Վ տանգի մարդ և՛ յուսով և անյուսութեամբ"։ Այո՛ սիրելիքդ իմ քրիստոնեայք, չափազանց անհիմն յոյս աստուածային ողորմութեանն՝ վտանգ մեծ է, քանզի 'ի յանձնապատան լինելոյն ծագէ։ Այս երկիւղ է, մի գուցէ այսպիսի ինչ յոյս ի ցէ ոմանց 'ի ձէնջ. և առ ի՞նչ արդեօք առաջնորդ լինի ձեզ այն յոյս. առ լքանելըն չարն և գործել զբարին. թողուլ զվատշուէր հրահանգս և զախտայոյզ բնաւորութիւնս. զգուշացուցանէ՞ զձեզ յան-

ձինս մի վատահիլ, և յայլոց անձնասպահ լինել. իսկ խուսէ՞ զձեզ բուռն հարկանել զՀգանց՝ որոց սրտուղ իցէ կեանքն յաւիտենից։

Զրանն թէ յաջողեալ էր արդ, յայնժամ խորհրդմամբ հաստատեալ լինէր յոյս ձեր 'ի փառաւոր յարութիւնն իբրև ըստ յոյս երանելւոյն Յովբայ, որ զաշխատայոյսն և զցաւալից աւուրս կենաց իւրոց յուսով յարութեան ամբէր. «Այսինքն անեալ զաւուրս՝ յորս զինուորիմ, սպասեցից մինչև եկեսցէ ինձ փոփոխութիւն». Յոբ. Ժդ. 14. (ըստ լատ. թարգ.) Այլ եզուկ ոչ. ամենայն ինչ ձեր ընդ հակառակն է, քոռք իմ և եղբարք։ Արդ իսկ բացայայտ ընթեռնուցք 'ի ճակատս ձեր, և յայտնի նշմարեցք 'ի գործս ձեր զկորհուրդս՝ զոր 'ի սրտի երկնէք։ Աստուած ողորմած է՝ ասէք. մեռաւ նա 'ի զկնուցանել զաստուածային բարկութիւնն գրգռեալ վասն մեղաց մերոց, և յարեաւ ժառանգս առնել զմեզ արդարութեան մերոյ. «Ասանեցաւ վա-

սէն մեղաց մերոց, և յարեաւ վասն ըն-
մեզ արդարացուցանելոյ ». Հռովմ. 25։

Այս արդ՝ զինչ ասի և երկիւղի իցեն
պատճառք. աւասիկ անքօղ մերկապա-
բանոց ապարասանութիւն անձին, որ
թողու զձեզ վասս, հեղգասիրաս, ան-
հոգս 'ի յաւիտենական փրկութի՛ ձեր։

Լուարուք մեծի հօրն սրբոյն Օգոս-
տինոսի, որ բանայ և հոլանի առնէ ըզ-
ներքին ծածուկս սրտից ձերոց։ Յերեկ
յանցեայ, և եթող ինձ տէր. այսօր յան-
ցեայ, նոյնպէս եթող ինձ տէր. նոյնպէս
և վաղիւ մեղայց՝ զի թողցէ ինձ տէր.
ապա ողորմութիւնն Աստուծոյ ծառայ-
եսցէ ձեզ 'ի թմբրութեան ձերում 'ի
քնածութեան մեղաց, և դուք այդպէս
շուայլացի մխիթարութեամբ տարապարա-
վատնէք զանհուն դանձ աստուածային
ողորմութեանն։ Աղաղակէ առ ձեզ մե-
ծըն 'ի հարս սուրբն Ամբրոսիոս. «Բան-
զի բարի է Աստուած, վասն այսորիկ դու
չար ես, և զդանձ բարութեանն զուր
տարապարտուց շուայլես »։

Զեն այսոքիկ ճանապարհք նշանա-
կեալք ձեզ յաստուածային տեսչութե-
նէն, զեն շաւիղքն այնոքիկ՝ զորս եցոյց
սաղմոսերգու արքայն. «Արդարութիւն
առաջի նորա գնասցէ». Սաղմ. ՁԴ. 14։
«Ողորմութիւն քո ցէր զհետ իմ եկեսց-
է». անդ. ԻԲ. 6։ Լաւ արդարութեանն
յառաջել արժան է, և ապա զհետ գալ
ողորմութեանն. այսինքն սարսափ եր-
կիւղի աստուածային արդարութեան՝
հիմն լինել արժան է և խարիսխ ճշմա-
րիտ յուսոյ մերոյ 'ի բարերար ողորմու-
թիւնն Աստուծոյ։ Այսպէս կայ գրեալ
'ի գիրս սաղմոսաց թէ առնէ արդարև
ողորմութիւն, բայց առ այնոսիկ զք երկ-
ղնչին 'ի նմանէ. «Ողորմած է ցէր եր-
կիւղածաց իւրոց». անդ. ՃԲ. 13։ «Ար-
նէ ողորմութիւն ազգաց յազգս, (բայց
միշտ) երկիւղածաց իւրոց». Ղուկ. Ա. 50։
«Օրհնեսցանէ ցէր զողորմութիւն իւր,
(այլ) 'ի վերայ երկիւղածաց իւրոց».
Սաղմ. ՃԲ. 11։ Սուրբ աւետարանիչն
Յովհաննէս 'ի հռչակեալ այրին Պատմա-

սի լուսաւ ձայն, որ հրաւիրէր զնա յու-
րախութիւն ընդ յաղթութիւն յու-
դայեան առիւծուն. «Յաղթեաց առ-
իւծն յազգէն Յուդայ». Յայտ. Ե. 5։
Զնայ Յովհաննէս 'ի հանդէս յաղթա-
նակացն, և տեսանէ գառն հեզ և սի-
րելի. «Եւ տեսի, և ահա 'ի մէջ աթո-
ռոյն գառն կայր». Յայտ. Ե. 6. (ըստ
լատ. Թարգ։) Զ մինչ խորհուրդ յայսմ,
հարցէք զՕգոստինոս և ասասցէ ձեզ,
թէ Քրիստոս օրինակեցաւ յառիւծն
յայն և 'ի գառն։ Ուստի ուսցի երկրն-
չել 'ի նմանէ իբր 'ի զայրագին առիւ-
ծոյ, որ կամի տեսանել զնա հեզիկ որ-
պէս գառն։ Այսպա յորում արդարութեն
երկիւղ չիք, սնոտի է յանդուգն ժպիրը-
հութիւն կարծելոյ քաղել զպտուղս ո-
ղորմութեան՝ յոր յուսայ վարկպարագի-
ասէ սուրբ քահանայապետն Գրիգոր.
«Ի նանիր յուսայ յողորմութիւնն՝ որ
չերկնչի յարդարութենէն»։

Մանաւանդ՝ երկիւղի իբք են, ոչ
հանդերձեալ արդարութիւնն միայն,

այլ և նոյն իսկ ողորմութիւնն, նոյն իսկ արդեան տստուածային ներողութիւնն. «Որ սատիկս պատժէ, զի համբերը բաշխմաւ երկայնմտութեամբ», ասէ սուրբն Դրիգոր։ Զ՝թութիւն և ողորմութիւնն Աստուծոյ, որ որչափ յամր է 'ի պատժել, նոյնչափ և ծանրի ձեռն նորա։ «Որչափ համբերէ, այնչափ սաստկութեամբ վրէժս պահանջէ», ասէ սուրբն Օգոստինոս։ Զ՝թութիւն և ողորմութիւն Աստուծոյ, որ «Զաղէղն իւր լարեալ է, և 'ի նմա պատրաստեալ». Սաղմ. Է. 13։ Լարեաց, ասէ սուրբն Բարսեղ, և որչափ ընդգիրկն մտանէ և ձգէ զլարն, այնքան զօրեղ և ուժգին լինի հարուածն և անվրէպ։ Լարեաց. և որչափ հեռի է տեղին, խոր թափանցէ նետն ըստ նըվին, և հարկանէ անվրէպ, և վերս 'ի վերայ դնէ անբուժելիս։ Երկերուք, մի գուցէ այդ ժամիրհ յանձնապատանութիւն պատիժ լցէ եկեալ 'ի ձեր վերայ յաստուածային արդարութենէն. մի ի-

ցէ թէ նուաւ շեղջս վրիժուց յանձին վերայ գանձիցէք յօր վրէժինդրութեան. «Գանձել անձանց բարկութիւն յաւուր բարկութեան». Հռովմ. Բ. ՃԵ։ Մի արդեօք այս կոյտք վրէժինդրութեան գահավէժ թօթափեսցին 'ի ձեր վերայ, թշնաառացուցանել զձեզ փոխանակ գանձուցն ողորմութեան, որ արդ միայն վասն յանցանաց ձերոց յումպէտս և ընդ արհամարհ սնոտիս համարի, ասէ Բեռնարդոս. «Գանձք բարկութեան փոխանակ գանձուցն ողորմութեան՝ զորս արհամարհէս»։

Այլև Սամփսոն յուսացաւ, վստահացաւ 'ի զօրութիւնն՝ զոր շնորհիւն Աստուծոյ ունէր 'ի գիսակս գլխոյ իւրոյ. «Աբարիկ որպէս յերեկն և յեռանդն». Դատ. Ժ.Զ. 20։ Այլ ընդ գիսակացն բարձեալ էր 'ի նմանէ և առանձին տուչութիւնն. զի ոչ բարեաւք արկ 'ի կիր ըզբարերար ողորմութիւնն, և ահա հաւասար բարձաւ 'ի նմանէ ազատութիւն և կեանքն։

Այլև Սիսարա սովորեալ 'ի յաղթել և ձաղել երկնապարգև շնորհին օգնութեամբ, 'ի ճակատ զօրացն խորտակելոյ ննջէ յանդորրու 'ի խոր քուն, և ոչինչ գիտէ զմահարկածեան բևեռէն՝ որ վարսեաց զնա 'ի գետին ընդ ծամելիս նուրա, և զժամանակաւոր նինջն փոխեաց 'ի քուն յաւիտենից։ Դ։

Այլև Յուդա. եղբ՞ակ քեզ Յուդա, խորհեցաւ և կատարեաց զչարաչար մատնութիւն անօրէն ատուածասպանութեանն, վստահացեալ ըստ Ոսկեբերանին 'ի քաղցրութիւն և 'ի բարութիւն վարդապետին։ Այլ այս յանդուգնն յոյս հորդեաց նմա ճանապարհ անյուսութեան. ըստ այնմ ահա ճշմարիտ է, զի ապաւինելով յողորմութիւնն Աստուծոյ՝ յորժամ չէ այն կարգեալ ըստ շաւղաց ուղիղ բանի և հաւատոյ, անկանի մարդ 'ի վտանգ փրկութեան։ "Վտանգի մարդ և՛ յուսով"։

Բ. Այլ թերևս այդ ձեր վստահութիւն՝ որով անդորր ոգւով ակն ունիք

փառաւոր վերստին ծննդեան, 'ի ձեր վերայ, և 'ի ձեր վարս հիմնեալ և խարսխեալ իցէ. և յոր վարս։ Յանցեալն. և զնաիրդ համողէ այդ զձեզ, որպէս անմեղս ոմանս, ուչ. դուք ինքնին ասէք. արդէն աներևոյթ եղեն յաչաց դարք՝ յորս փայլէր յաշխարհի անապակ սարզամուրթիւն աղաւնոյ. եհաս ժամ՝ յորում թագաւորէ խորամանկ խորագիտուրթիւն բիւրանենգ օձին։ Այս՝ որպէս ապաշխարողս ոմանս։ Իրանի՛ ձեզ, թէ այնպէս իցէ վարք ձեր՝ որպէս արժան է նմա, որ զգեցեալ է զհոգի ճըշմարիտ քրիստոնէական ապաշխարուրթե, այն է՝ սեպհական կնիք քրիստոսեանց, որ յարուցեալ՝ պահեաց յանձին զսպիս խոցուածոցն. և այսու եթող մեզ օրինակ կալ 'ի մեռելուրթեան և 'ի զեղջսրտի, ասեն սրբազան մեկնիչքն, Բեդա, Բոնավենդուրա, և Բեռնարդոս։ Այս է քան զայլս հաւատարիմ և աներկուանալի նշան յարուրթեան 'ի փառս, հիմնեալ 'ի կերպարանակիցն լինել վըշ-

տամբեր և ցաւալից կենաց Յիսուսի Քրիստոսի լսոտ առաքելոյ. «Լրթէ ոչնչակիցք եղեաք նմանութեան մահուն նորա, այլև յարութեան նորա լինիցիմք». Հռովմ. Զ. ե։

Այլ ո՞ր աղաչանք կանխոյ ընդ ծաղեալ առաւօտին՝ յերկարեալ ցգիշեր. ո՞ր սատեպ ժուժկալութիւնք ի կերակրոց, ճգնութիւնք, ճնշմունք մարմնոց։ Ո՞ր լռութիւն, փոխանակ անպատկառ և ախտաշարժ շաղփաղփութեանց. ո՞ր ի միացնութի հրաժարիլ փոխանակ հանապազօրեայ խենհշ ընկերշակութեց։ Ո՞վ աղէտիցս. անցեալ կեանք ձեր աղխաղխումն էր անարժան ծաղու, խաղու, բերկրութեան, փափկութեան, կամ գոնէ հեղգութեան, և ի զուր վատնելոյ ղժամանակն, և դեգերմանց։

Այլ արդ՝ զինարդ ի վերայ այսպիսում հիման մարթ իցէ ձեզ առիթ առնուլ յուսալ յարութեան կենաց. և զի՞նչ օրինակ և գաղափար իցէ ի միտս ձեր՝ կենաց քրիստոնեայ ապաշխարողի։

Զերբանց ինչ արդեօք զաչս ձեր սասկու�մն Հերոնիմոսի, սղբք Գրիգորի, լալիք և կա-կան Բեռնարդոսի, դողումն Օգոստինոսի՝ ճիշդ և խստամբեր ապաշխարողաց։ Ոչ սթափեցին զձեզ 'ի պատրանաց ոբ միանձունքն, զորոց զվարս գրեաց Յովհաննէս Կալիմաքոս. անուանիք և մեծահամբաւք յամենայն ազգս ճգնութեանց, և այնու իսկ տարակուսեալք և երկմիտք զապագայ հանգամանաց իւրեանց։ Այլ ոչ երբէք անցեալ կեանք ձեր կարէ 'ի համար մտանել պատճառաց յուսոյ ձերոյ, անհերկեան ժառանգելոյ զյարութիւնն 'ի փառս։

Թերևս յայժմու վաթս ձեր հիմնեալ իցէ այդ, այն ինչ 'ի նոր կեանս վերադարձեալք՝ ուխտս ուխտեցիք մնալ 'ի դմին. զթութիւն ցեռան արդիւնայուսցէ զայդ։ Այլ ուսեալք 'ի փորձոյ անգիտանալ չմարթիմք. զի վասն ոմանց 'ի ձէնջ խոստմունքդ այդոքիկ կեղծիք են, յուշ ածեալ զբան Պաղմոսին. «Ի պատկերի շրջի մարդ»։ Սղ. Լբ. 7։ Խոսա-

մուռնք մարդոյ յոչինչ լուծանին, որպէս ոչնչանայ պատկեր մարդոյ 'ի հայելւոջ, ասէ Ուղան կարդինալ. կամ մնայ որ-պէս զպատկեր նկարչին զուրկ յարդեանց լոտ սրբոյն Բարսղի. «Մ'չ եղծանին ե-բանդք 'ի պատկերէ»։ Հայեցարուք ան-դանօր 'ի պատկեր սրբոյն Հերոնիմոսի. յորոյ 'ի ձեռս քար կայ, զի կոշկոձեսցէ զանձն. աւասիկ և 'ի ձեռս Ֆրանչիսկո-սի գաւազան՝ ձաղկել զանձն։ Բանիցս անգամ թէ դէպ լեցի ձեզ զդէմս յայդ կոյս դարձուցանել. քանիցս պշուցեալ հայիցիք ընդ նկարս ընդ այդոսիկ, միշտ 'ի ձեռին կայ միւսն քար պատրաստա-կան 'ի կոշկոձել, և միւսսն 'ի ձաղ-կել. այլ ոչ երբէք տեսանի հարուած կամ ձաղկումն։

Յամենայն պասեքի տեսանեմ զձեզ սիրելիք իմ, 'ի տեղւոջէ ասէ յայսմա-նէ. են ոմանք 'ի ձեզ՝ որք միշտ պատ-րաստ են փոխել զտարաղ կենաց և կա-տարել զխոստմունս, այլ միշտ կամքն կայ մնայ այնպէս անգործ, անպտուղ և անո-

ոմ. «Ի պատկերի շրջի մարդ»։ Ուրեմն նկարէն պատկերը ոմանք էք դուք եղբարք, ցուցանել լալ զմեզ, փոխել ըստ վարս, լքանել զհին սովորութիւնս. այլ միշտ պատրաստք, և ոչ երբէք ձեռն 'ի գործ արարեալք. «Ի պատկերի շրջի մարդ»։ Նկարէն պատկերը էք դուք քրիստիանք իմ, պատրաստք թողուլ զզարդ, յապաւեալ զսուտ հաճութիւն կանայի, առնուլ 'ի ձեռս զչափաւորութիւն և զբազդաստութիւն նախնեաց. այլ միշտ պատրաստք, և ոչ երբէք 'ի գործ յառաջացեալք. «Ի պատկերի շրջի մարդ»։ Այլ և ոչ այժմու վարքք ձեր կարիցէ տալ ձեզ օրինաւոր յոյս հաստատուն և արդարացի։

Այլ յետ այսորիկ այնպէս լեցի կեանքն ձեր, յոր գնէք զձեր յոյս. այլ սիրելիքդ իմ քրիստոնեայք, ոմ զայնցանէ ձեզ յերաշխի կացցէ։ Յովք ասէ՝ թէ տերև է այն ծառոյ որ յամենայն հողմոյ տատանի. Սողոմոն ասէ. ամպ է թեթև, որ ընդ դոյն հնչիւն հողմոյ ցրուի։

Սու�էր և ծուխ, որ ուրչափ և 'ի վերը
ամբառնայ՝ այնքան առաւել ցնդի և
պակասի ըստ սաղմոսին։ Սուրբն Յակո-
բոս նմանեցուցանէ զնա թեթեւ գոլոր-
շեաց, և Ոսկեբերան արագ ընթացո-
ղի, որ արդէն ընդ տես՝ անյայտ լինի
յաչաց, թէ և 'ի բիւրս զհետ նորա յա-
ռեցիս։ Այլ սատուածաբանն՝ սրամիտ
և անհնարին երագընթաց գեաց 'ի ծով
թափելոյ։ Ուստի սուրբն Պաւղոս կնքէ
զբանն. «Անդանիմք (ասէ) զօրհանա-
պազ». Ա. Կորն. ԺԵ. 31։ Այլ թէ՝ և եր-
կար վիճակեսցիս կենաց, ոմ զքեզ հա-
ւատարմացուսցէ ընդ անփոփոխ մնալ
կամացդ, ոմ երաշխաւոր լիցի սատուա-
ծային ձեռնին օգնութեան։ Աղէ, սի-
րելիքդ իմ, 'ի մեզ ինքեանս դարձցուք.
և թէ չէ մեզ բաւական ողորմութիւնն
Աստուծոյ միայն, ոչինչ քաջալերս կա-
րեն տալ մեզ առ այս ապաստան, ոչ
կեանք մեր անցեալք, ոչ այժմուս, և ոչ
որ գալոյն է։ Այլ այս մեր վստահու-
թիւն անհիմն է բոլորովին, որ զհան-

դերձեալ յարութենէ մերմէ 'ի փառս։

Յոյս՝ զոր դէն ազդէ 'ի մեզ, զի լաւ էս ապահովացուսցէ զմեր կորուստ, ասէ սուրբն Օգոստինոս։ Յոյս՝ զոր տայ մեզ աշխարհ վրէպ գուշակ, մատնիչ, որ խոստանայ մեզ արգասիս անանցաւոր երանութեան, և փոփոքանայ յուսոյ սաղարթս միայն մատուցանէ ըստ նորին սրբոյ։ Յոյս՝ որոյ գոյութիւնն առ աչքէ և խօլական, իսկ կատարածն ոչ գոյք իբրև զսարդիոստայն, ասէ Յովք. "Իբրև զսարդիոստայն՝ յոյս նորա"։ Ը. 14. (ըստ լատ. Թարգ։)

Այս այսուհետև փրկաւէտ երկիւղ լեցի առաւօտ աւուրն այնորիկ, որ բարձեալ բերէ մեզ նորոգութիւն վարուց, և նովաւ հանդերձ արդարացի և հաստատիմն պատճառս յուսոյ 'ի փառաւոր յարութիւնն։ Այս եղեցի օրն այն ըստ աւուրս ըստ այսմիկ՝ օր կենդանանորոդ, որոյ ճառագայթք նախ քան զարևու լուսափայլութիւն 'ի դերեզմանէ անտի 'ի վեր ցոլայան, ասէ սուրբն Հերոնիմոս։

ՀԱՌ Ի.

Ի ԳԻԽՈՒԼԻՆ ՊԱՐԽԱՅ ԽԻՍՈՆԷՈՒԼԻԱՆ։

Լոյս երկնային արշալուսոյն՝ լուսաւորիչ մտաց, որ Թափանցէ մինչև 'ի սիրտ. լոյս՝ որ ճառագայթէ ցուցանել զմեծափառ ճանապարհս ուղիղ բանի և գերաբուն հաւատոյ. լոյս՝ որ անսայթաք և անվրէպ առաջնորդէ յընտրել զպատրանս և զվտանգս՝ որք խարդաւանեն 'ի վիհ մոլորութեան չարաչար առածից և եղծեալ բարուց. և յանմոլարութենէ նորա ուղիղ խրատք վարուց բղխեալ՝ տան գործել գործս արժանիս կենացն յաւիտենից։

Այս այն լոյս է, զոր եբեր յաշխարհս մանուկն Յիսուս ծնեալ յաղքատին այրի, ծածկեալ գծուծ խանձարրօք, եղեալ 'ի ցածուն մսրի. «Լոյս՝ լոյս յաշխարհ եկի». Յովհ. ԺԲ. 46։ Լու պատճառ բերելոյ զայս լոյս, որպէս զի՝ որք յառաջագոյն շուրջ պատեալք էին 'ի

թարձրամած մառախլոց խորին մթութեանց և թիւր դատաստանաց, անեալք ի նոսին և աճեցեալք. և յայն սակս որդիք եղեալ խաւարի, յայսմ նսեմութեամբ խորագիշերոյն ըղձացեալք՝ որդիք լեցին լուսոյ. «Որդիք լուսոյ եղիջիք». Յովհ. ԺԲ. 36։

Արդ՝ կարծիս ինչ մանրթ իցէ ի մտի դնել, թէ ի ծագել ճառագայթիցս ամենապայծառ այս լուսոյ ընդ ոլորտս երկրի, իցէ՞ տակաւին՝ որ ի թանձր խաւարի և ի մէջ մթութեան գիշերոյ խարխափիցէ. և արտաքոյ կանոնի խօսել կամեցեալ՝ հնարին իցէ յետ այսր առատաձիր պարգևի երկնային լուսաւորութեան շնորհելոյ յԱստուծոյ ի ծանօթս առնել զմարդիկ աստուածային գիտութեանն. «Զի ամենայն որ հաւատայ, ի խաւարի մի մնասցէ». Յովհ. ԺԲ. 46։ Զի գոցի դեռ ի մէջ մարդկան անգիտութիւն առաջին սկզբանցն՝ և կարի կարևոր գիտելեաց քրիստոնէութեան։ Այլ գտանի այս տգիտութիւն

ոչ միայն առ մենաւոր բնակեցեալս 'ի դժոխեալանելն և 'ի չարասէպ լերինս, այլ նիւղ գտանին բացողք երկնային գանձուս, այլ և 'ի քաղաքս ականաւորս և 'ի մէջ քաջակիրթ ընկերութեան. և գտանի ոչ առ ռամիկս ոմանս, առ շինականս, և առ չմարդիս, այլ և 'ի մէջ մեծամեծաց, մեծատանց և իմաստնոց։ Ոչ առ ժամանակին ինչ բերման, այլ առ վատթարութեանն բարուց, ոչ պակասութեամբ միջոցաց, այլ յոչպէտս վարելով զհոգին, և եղեռնաւոր անցաւակրութեամբ. զի անհոգանան հրահանգիլ 'ի սեպհական պարտիս կրօնի, որ անհանջելի հարկ է ամենայն քրիստոնէի։

Ահա, այս տեսանի տակաւին նա և յայսմ անբարի դարուս՝ յորում կամքս, և շարժէ և փղձկէ զհոգի այնորիկ՝ որ բերէ յանձին նախանձ յազգս կաթուղիկէ հաւատոյ. և կարեկից լինի եղկելի վիճակի այնքան հիւսացելոց, որոց կամաւ են կուրացեալք։

Եւ ահա այս իսկ է չարաչար սովորութիւն ձեր, զոր հերքել առնում յայսմ առաւօտու, չար կիրառութիւն հոգւոյ, որով բաղումք ոչ առանց մեղայ անգիտանան զկարևորագոյնս քրիստոնէութեան, զընդհանուրս և զմասնաւորս, զիւրաքանչիւր յատուկ պատշաճեալն, բացայայտ ընդդիմութեամբ ընդդէմ առատաձեռնութեան Աստուծոյ, որ այնքան սիրեաց զմեզ՝ մինչև մարմին զգենուլ մարդկային առ 'ի փարատել յաշխարհէ զայս աղջամղջին մեզ մթութեան. «Ո՛չ մի խաւար ձեզ հասցէ». Յովհ. ԺԲ. ՅԵ։

Աննահանջելի հարկ 'ի վերայ կայ քրիստոնէից, յինչ վիճակ և իցեն, զի կնիք է քրիստոնէութեան, պատրաստունել զմիտս յաստուածային գիտութիւնն, և յօրինաց նորա տեղեկութիւն, և 'ի պատուիրանս նորա հմտութիւն։ Պարտ է քաջութեամբ 'ի խորս խորհրդոց թափանցել, հաւատալ 'ի նոսա որպէս յանխաբ աչօք տեսեալս և զնեա-

լոս։ Պարտ է ընտանի լինել Ճշմարտու-
թեան և սկզբանց սրբոյ Աւետարանի.
զհետ ընթանալ՝ զորս ցուցին պատուի-
րանք պարուրնակեալք ի նմա առ ի սրբ-
բութիւն։ Պարտ է ի խնդիր ելանել
հոգւոյն՝ որով սիրեմք և յարգեմք զԱ-
ստուծոյն, և զվերածնողն ի կեանս եր-
կնային, զանց առնեմք և լքանեմք զաշ-
խարհիքս, և զկեանս երկրաքարշս և վա-
զանցուկս։

Ահա այս գերագոյն ծանօթութիւն,
զոր ծայրագոյն գիտութիւն կոչէ առա-
քեալ, և գիտութիւն խաչելոյն, մեծար-
գոյ որեարն կամակարուց բոլորանուէր
յանձնեցին զևրեանց հրահանգս և ըղ-
խորհուրդս, որք կէին յանցեալ ամս,
որք առ կորովի հանճար իւրեանց և բազ-
մապատիկ իմաստութիւնս յեռին և ըղ-
սուրբ խոհականութիւն և զվարս անբ-
բասրելիս, և թուին ի դասակարգս սքց։

Արդ այժմ ի մեր ժամանակս, մա-
նաւանդ ի մերում քաղաքի, մանաւանդ
ի ձերում իսկ միջի, որք նստեալ ունին

մատուցանէք բանիցս, ով է՝ որ զկուր խորհուրդ յառեալ յայս գիտութիւն սրբոց՝ որ գլխաւորն է յուսմունս իւր, 'ի Քրիստոսմունս և 'ի ճառս բանից։ Զաստացուք միայն զգեղջուկ ժողովրդն, մի այն զառամկէն. 'ի նոսա իսկ՝ որք որոշին 'ի ռամկէն կենցաղակիրթ և գիտնաւոր անուամբ, և գերագոյն և մտավարժ ուղղութեամբ, գտանի այս անհոգութիւն։ Այնչափ քաջուշիմք, ճարտարք, նրբամիտք և բազմահմուտք 'ի գիտութիւնս՝ որ ըստ աշխարհի, ոգէտք են և հեռեալ կրք յաստուածային գիտութեան։ Խոսեցարուք ընդ ոմանս 'ի նոցանէ զհոգւոյ, զյաւիտենից, զհանդերձելոց կենաց, ով աղէտիցս. ահ մեծ է նոցա և 'ի լրկոյ անուանէն անգամ. կարծել այնպէս է նոցա, թէ առաքնորդին օտար, անճանաչ և բիւրտանգ "Նրկիր... մարդածախ բնակչաց իւրոց". Թէ՝ ԺԳ. ՅՃ։ Նա՝ պատճառս և փաստս առջիք 'ի մէջ. անկեղծ խոստովանեսջիք զայս սիրելի ունկնդիրք. ոչ արդեօք ճշգրտ-

տեալէ այս յաճախակի, յամօթ երաստից ընտիր անձանց. զի գեղջուկ շինականն 'ի պարտիզին, բաւականաձեռն արհեստագէտն 'ի կրպակին՝ կերպարանէ անձին գաղափար վայելուչ քրիստոնէի, և ըստ այնմ կրթէ զանձն և ճգնէ 'ի վաստակս ձեռաց իւրոց։

Բազում այն է՝ զի արք պալատան, մեծ կենցաղակիրթք, քաջուշիմ մատենագէտք անդ գնան ուղղել զճանապարհս գնայից իւրեանց. և 'ի խոնարհ բնակարանէ և յանձուկ յանշուք խրճթէ ուսանել զայն՝ զոր անգիտանան կամ ցաւելի անհոգութեամբ, կամ աննեբելի ամբարտաւանութեամբ, որպէս զի՝ ճշմարիտ է, զի ոչ փոյթ ունին ըստ շնորհացն Աստուծոյ զոր ընկալան քաղում յաճախութեամբ։ Անտաւանդ մեծութիւնն երևի լինել ժառանգութիւն իմաստնոց ժամանակիս, և առաքինութիւնն պարզամիտ անձանց և ռամկաց։ Ընձինք ազնուաց հեռի թուին 'ի շաւղաց աւետարանին, և 'ի խոստովանու-

թենէ քրիստոնէութեան։ Այս առտի է ըստ Եսայեայ, զի խորքք դժոխոց բացեալ են. «Այնեցին դժոխք զանձինս իւրեանց». Այսայ. Ե. 14։ Բանզի ամենաձախ քմայ իւրոց համեղաճաշակ բուսա են մեծամեծք, մեծատուք, իմաստուք և զօրաւորք. «Այս ինչեն առնա զօրաւորքք... և փառաւորքք և մեծամեծք»։

Արդ՝ չկրէ՞ արժան բողոքք ունել զայսպիսւոյ անարգ կիրառութենէ շնորհայ. ապա սիրելի ժողովուրդք, որովհետև այս պաշտօն ինձ յանձնեցաւ 'ի Տեառնէ, ոչ կամիմ երբեք լինիլն կողմանէ զայսոսիկ վերիպակս թողուլ անդարման։ Ոչ կամիմ, մինչ շունչ իմ յիս է, և 'ի կեանս վայելեմ, զի առ շնորհաւոր ձեր անհոգ եղէց ազգ առնել ձեզ զայն ինչ՝ առ որ պարտաւորիք։ Ոչ կամիմ անգործ թողուլ առ ձեզ յամենայն ժամանակի զգործս քրիստոնէական զթութեան, զխրատս, զկրթութիւնս մանկութեան, զհոգևորական հրահանգս, զհաստատակաց և զմասնաւոր յորդորակս, զբարո-

զութիւնս, զքրիստոնէական հմտութիւն և զվարդապետութիւնս։ Կամիմ խընդրել մեծաւ խնամով վասն ձեր իմաստուն և խոհական վարուց հրահանգիչ հարս խոստովանութեան, և ողղութեան և բարեպաշտ առաջնորդս հոգւոց. որպէս զի՝ եկեալք առ ձեզ, և առաքելական աղաւութեամբ մի՛ կասեսցին յեղյեղելոյ ձեզ ստէպ. զի մի՛ յուշոյ ձերմէ զերծցին յիշատակքս այսոքիկ, զորս առաջի առնէ ձեզ Տեր առ ստանալ ձեզ զյաւիտենից փրկութիւնն։

Կրկնեսցուք ձեզ աղնուականք և պարոնայք, վաճառականք և արհեստագէտք, կանայք փափկասուն և բարեկեցիկք. ըստ կարծեաց աղքատ շինականաց՝ ձեզ անկ է պատկառ կալ հրահանգաց քրիստոնէական կրօնից, բացատրութիւն խորհրդոց օրինաց և պատուիրանաց 'ի ճահ է ձեզ, որչափ զի տենչայք առ 'ի փրկութիւն։ Մ'ատեան կրօնաւորական ջերմեռանդութեան, որ ձեր պարտիս ուսուցանէ ձեզ՝ որ առ

Աստուած՝ առ ընկերս և առ անձինս ձեր, հարկաւոր է ձեզ եթէ 'ի ժա-
ռանգութիւն դրախտին ակն ունիք։
Կարևոր է ձեզ հոգեշահ խորհուրդս առնուլ յիմաստուն և 'ի բարեպարիշտ անձանց, որ զվերիպակս և զկանխակալ մտահաճութիւնս՝ որով պարապնդեալ ունիք զմիտս ձեր և կաշկանդեալ ըղ-
սիրտս, 'ի բաց փարատեսցէ, միայն թէ կամիցիք ապրել 'ի յաւիտենական հրոյն դժոխոց։

Այս են ձայնքն որովք գոչեմք զհետ ձեր ընդ ամենայն տեղիս՝ յամենայն ժա-
մանակի, զի մի կամիջիք վրէպ առնել յաչաց զծանր հոգողութիւնս, զմեծ գործ և զկարևոր գիտութիւն օրինաց և պատուիրանաց Տեառն։ Այնպէս ա-
մենևին՝ որպէս մարգարէն Երեմիա յա-
նապատացեալն Երուսաղէմ քաջալե-
րէր զընարեալ ժողովուրդն 'ի Բաբելա-
կան գերութենէն. եղբարք, ասէր սուրբ մարգարէն, գնայք 'ի մէջ կռամալ ժո-
ղովրդեան, և 'ի մէջ ամբարտաւանու-

թեանց և մարդ թեանց, ոչ այնչափ երկիւղալի են շղթայք և կապարանք պատրաստեալք մարմնոյ ձերում, որպէս գայթակղութիւնք և վտանգք պատրաստեալք հոգւոյց ձերոց։ Ի մէջ այնքան պրդծութեանց մի հեռի առնէք 'ի մոտաց ձերոց զյիշատակ սրբոյ քաղաքին, սրբոյ տաճարին Աստուծոյ և միայնոյ Աստուծոյն Իսրայէլի, խոստովան լինելով միշտ զի նմա միայնոյ վայելեն խնամք ձեր խորհուրդք, պաշտօն և երկրպագութիւն. «Զնա պարտ է երկիրպագանել Տէր»։ Բարոյ. Զ. Ե։

Այլ դուք սիրելիք իմ ունկնդիրք, ընդ ելանել ձեր յայս սուրբ տաճարէ՝ անդէն ունիք մտանել 'ի մեծն Բաբելոն, որ է աշխարհ զեղծ և ապականեալ 'ի բարս իւր և 'ի վարս, և հեղձուցիկ ապրացեն զձեզ արտաքին հոգք աշխարհի։ Այլ աղէ՛, վասն սիրոյ ձերոյ խոտորեցուցէք 'ի նմանէ զաչս ձեր, դարձջիք պշուցեալ հայել ընդ օրէնս նորա և ընդ հեղինակ նորին, ստէպ յեղյեղեալ ըստ

բանս, «Րեզ պարտ է երկիրպագանել Տէր»։ Պատաղէսցին միաք ձեր 'ի դիտութիւնս և յուսմունս, բայց որչափ ինչ կարևորք իցեն յուղղութի կենաց։ Այլ առաջին կրթանոց լեցի ձեզ դպրոցն քրիստոնէութեան. ուսջիք նախ տարագիր հանել յանձանց զօրհասաբեր տգիտութիւն ընդհանուր սկզբանց հարկաւոր եղելոց քրիստոնէի։ «ՐեզՊարտ է երկիրպագանել Տէր»։ Այս տգիտութիւն ընդհանուր պարտականութեանց ամենայն քրիստոնէից՝ թագաւորէ ընդ ամենայն աշխարհ. այլ ոչ ինիաղ քան զայս է բռնակալութիւն տգիտութեան պարտականութեանց սեպհական եղելոց իւրաքանչիւր անձանց։

Կարի յերկարէր մեզ ճառս, եթէ 'ի քնին առեալ էր մեր մի ըստ միոջէ զամենայն քրիստոնէական պիտոյս. այլ մեզ շատ է մի և եթ հարևանցիկ տեսութիւն միանգամայն 'ի վերայ ամենեցուն, որ կամքս գեր քան զամենեսեան իբրև գըլուխ գերդաստանաց՝ հայր և տէր։ Ով

ոչչափ պարտականութիւն ունի յինքեան այս վիճակ՝ մեկն բացատրեալ յայս բան առաքելոյն. «Տէրնին, որպէս թէ համարս տալոց իցեն ընդ ձեր». Եբրայ. ԺԳ. 17։ Որ 'ի դլուխս կայ այլոց՝ արժան է նմա հսկել յառաջնորդութիւն նոցա, իբրև այն որ պահանջի զսաստկապահանջ համար վասն հոգւոց նոցա։ Եւ որպիսի՞ համար. «Ինձն ընդ անձին». Ղեւ. ԺԴ. 18։ Պարտական է առ նոսա կառավարել, ուղղել, և 'ի վեր քան զամենայն զանձն տալ օրինակ. և որք ընդ նովաւ են՝ ունին իրաւունս խնդրելոյ նպաստ 'ի նմանէ նահանջել զնոսա 'ի չարեաց ընդ կրունկն, և 'ի բարիս խրախուսել։ Այլ արդ՝ ո՞ 'ի ձէնջ տանուտէր, հայր, մայր, տէր, ծանուցեալ իցէ զայս ամենայն, և յայսոսիկ քաջակիրթ յանխուսափելի պարտականութիւնս իւրում վիճակի։ Ո՞վ 'ի ձէնջ, արդարև ո՛չ որ. դուք ոչ ճանաչէք զայն տանուտեարք, որք գայթակղութեանց տայք պատճառս ընտանեաց ձերոց, որդւոց և ծա-

ուայից. գործակիցս առնելով և կամակատարս 'ի լրումն չար կամաց ձերոց և ախտաւոր կրից։ Ա՛չ ճանաչէք զայն տեսակքդ, որ զձեր պակասութիւնս ոչ ծածկէք յաչաց դատերաց ձերոց և աղաղնեայց. զսէր ձեր առ հեշտութիւնս, զմոռացեալ ձեր զԱստուած, զհոգի և զկեանս յաւիտենից։ Այլ որպիսի՞ կուրութիւն է ձեր այդ, որ ոչն գիտէք զմանաւոր պարտականութիւն, որ ձերումդ վիճակի է սեպհական. և գլխաւոր անկարգութիւնք աւասիկ ասոի յառաջ բերեն, և չարաչար կիրառութիւնք, որք զդերահրաշ վայելչութեամբ քրիստոնէութեան ստերուածս արկանեն։ Այնպուստ բարք խեղաթիւրք, վարուց ծլուութիւնք, մոլորութեանց վարդապետութիւնք, որք 'ի գործ ելանեն 'ի հասարակաց և 'ի մասնաւոր գործս։ Այստի ընդհանուր զանցառութիւն ամենայն պարտականութեանց 'ի ճահ պատկանելոց քաղաքական բարեկարգեալ ընկերութեան. եթէ խնամով տանու-

տեարց ուղղեսցի խեռուԹիւն ընտանեաց, ընդ հուպ տեսցէ աշխարհ զընդհանուր նորոգուԹիւն վարուց։

Ո՞վ է այն օրիորդ փափկասուն, աչագեղ, չքնաղ, հրաշատիպ գեղաղարդեալ։ Յուդիթ է նա, անուանին Յուդիթ, այրի մնացեալ 'ի դեռափԹիԹ հասակի, և 'ի գլուխ անցեալ կառավարուԹեան բազմաԹիւ դերդաստանի։ Պատաղեալ 'ի խնամս տնտեսական կառավարուԹեան, և տպա հրաւիրեալ աղաչիչ լինել ժողովրդեան. և յետս ընդ կրունկն դարձուցանել զերկիւղալից յարձակմունս զինուորելոց զինուզարդու վառելոց. անտե՞ս արդեօք արար զոնտեսուԹիւն զիւրոյ վիճակին. անհոգացա՞ զկրԹուԹէ իւրում զաւակին։ Ազէ՛, եկայք տանուտեարք, տեարք, եկայք և տեսէք. տեսէք զկինն զայն անհամեմատ, որ զներքին տան իւրոյ իբրև աղօԹավանս ինչ յօրինեալ է հրաժարմամբ յաշխարհական իրաց. և ինքն կայ իբր մենաստան աղօԹաւոր, զօր ամե-

նայն մտադիր պարապի 'ի խոկալ զօրէնս և զպատուիրանս Աստուծոյ, առ 'ի ուսանիլ զամենայն գիտութիւն իւրում վիճակի քաջադէպ, զգենուլ ոգի անապակ առաքինութեան առ քաջ անտեսել զևեր դերդաստան։ Օ՛յն ոգի՝ զոր ապա պահեաց 'ի հրապարակական և յառանձնաւոր իրողութիւնս, 'ի քաղաքական և 'ի զինուորական գործս, յընդարձակ զեղխութեան առատալիր բանակի, 'ի մէջ խենէշ զօրականաց և 'ի զեղծ ընկերակցութեան պագչոտն Հողաբեռնեայ։ Եկայք և տեսէք, զի կարասջիք և դուք կառավարիչ այլոց լինել, և անձնապահ 'ի թուլութեանց աշխարհական վայելչութեանց։

Այլ աստ ո՞ր աղետաւոր խորհուրդ զմեզ տրտմեցուցանէ. և մեք 'ի համարի եմք նոցա՝ որք հոգևորական պաշտամամբ վերակացու են այլոց, հարկեալք 'ի հոգւոյն։ Եւ մեք պարտականութիս ունիմք, զի պաշտօնեայքս եմք սրբութեանցն եկեղեցականքս և միջնորդք

հաշտութեան ընդ երկինս և ընդ երկիր, և դասասցէ աստուածային գիտութեանն։ Սիպլիսէ գործովք մերովք լինել պէտք հայելի, գաղափար և օրինակ վարուց անբասրելեաց և լուսափայլ բարոյից, անսգամանելիք. զի համարս պահանջիմք ոչ զանձանց միայն՝ այլ և զայլոց հոգւոց։ Արդ՝ թագաւորեսցէ՞ ի ձեզ տգիտութիւն ի վերայ այսց որոշակի սահմանեալ գիտելեաց՝ ձերդ վճակի պատշաճելոց։ Իսկ՞ ոք ի ձեզ որ անզգոյշ եղիցի զանձին սրբութենէ անհոգացի աղդ առնել, ուղղել, հրահանգել արդարև ոչ ճանաչէ այնպիսին զիւր պարտս, որ մեծ է քան մեծութիւն աստիճանին, իշխանութեանն, պատուոյն, զոր մատակարարէ իւրաքանչիւրոց եկեղեցական քահանայապետութիւնն։ Այլ յայս նիւթ այսչափ բաւեսցէ։

Այլ ամենամեծդ Աստուած, մեծ և իմաստութեամբ են անտեսութիւք խորհրդոց քոց. դու զանարդ կաւն՝ անօթ ընտիր արարեր շնորհաց և փառաց։

մերժեցեր զսակի և անարդեցեր, և յա-
նարդ ծառայութիւնս և յանամբաւս
զնա սահմանեցեր։

Այս մեծ խորհուրդ գաղանի տես-
չութեան ամփոխեալ զսիրտս մեր, տարա-
կուսեալ վարանեալ, և տրամեցուցանեալ 'ի
սակս մեր և ձեր յաւիտենական փրկու-
թեան։ Ով քրիստոնեայք՝ ունկնդիրք
բանիցս, որք գումարեալ կայք ստոյ-
մենայն հաստակեալ և յամենայն վիճակեալ.
մեք և դուք 'ի թուսն եմք այնոցիկ, որք
պարապին ճանաչել զաստուածային գի-
տութիւնն և զպարտականութիւնս քրի-
ստոնէութեան զընդհանուրս և զեղ-
մանաւորս պատշաճեալս իւրաքանչիւր
հանդամանաց։ Ի լոյս քրիստոնէական
վարդապետութեան ցնծամք, թէ 'ի խա-
ւար հեթանոսական տգիտութեանն դան-
դաչեմք։ Կարիցեմք հաւանեցուցանել
անձանց, թէ անվարժք յարտաքին իրս՝
զճաշակ առնումք զգերաբուն և զեր-
կնայնոց իրաց, թէ տրամիլ թէ քաջա-
կիրթ կրթեալքս 'ի մարդկային գիտու-

թիւնս, 'ի գրաւորական արհեստս և 'ի կենցաղակրթութեան, անգիտանամք զկրօնիցն։

Ապտուած իմ, առ ամենայն ձիրս շնորհաց, առ ամենայն յաջողակութիւնս՝ որ տկարանայ հասուցանել զմեզ առ այս գիտութիւն, բարեաւ մնալ ասասցուք. և ոչ փոյթ կալցուք 'ի թիւս մարդկան մտանել առ աչս աշխարհի, մինչև հասցուք 'ի ծանօթութիւն կարևոր պիտոյից քրիստոնէական կրօնիս մերոյ։ Շ.ա.ուաւիղ երկնային լուսոյն՝ զոր եբեր յաշխարհ մանուկն Յիսուս, հեղցի 'ի մեզ յայս պէտս, և լուսաւորեսցէ զմեզ 'ի բաց մերկանալ յանձանց զայսպիսի ա.մօթալի տգիտութիւն, թէ ելցէ 'ի մեզ արդարև. «Լոյս տուր ՏԷր աչաց իմոց, զի մի երբէք ննջեցից 'ի մահ». Սաղմ. ԺԲ. 4։

Այս է հասարակաց մաղթանք, որ լիցի լսելի յընդունել ձեզ զօրհնութիւն հոլովին ձերոյ։

ՕՐԱՐ.

Յաղագս ծո-ը-ՐԵԱՆ։

Յայն բեթղեհեմի հրաւիրեա ըղ-
մեզ այսօր եկեղեցի սուրբ, սիրելիք.
զի անդ միաձայնեալք ընդ հովուացն
լուսաւորելոց 'ի հրեշտակէ ցեառն, և
ընդ մոգուց արքայիցն՝ որք յասաեղէն
առաջնորդեցան, տեսանել զայն որ յայ-
սմ երկրաւոր դրախտի պարուն ակի,
զերկնայինս և զանծայինս. եկայք երթիւ-
ցուք մինչև ցԲեթղեհեմ. Ղ-ի. Բ. 15։

Անուկնորածին խանձարրապատ լոյս.
կոյս ամենամաքուր և բարեպաշտ մասա-
խորհ կոյս. այր որ պատկառելի խոնարհ-
հութիւն և անարատութիւն նմա սպաս հար-
կանէ. անարգ խրճիթ հովուական՝ տեղի
պատսպարութեան նոցա ընծայէ. դասք
հրեշտակաց՝ որք 'ի վերայ վայրացն կա-
ցեալք երգս գոհութեան և ցնծութիւն
եղանակեն, երգք հիանալիք՝ որք նորա-
նոր զարմանալիս յուսնկն մեր հնչեն։

Լոյս մեք ապա ամ.քրիստոնեայք՝ ընդ տեսիլ այսր երկրաւոր դրախտիս կենդանացուսցուք զսուրբ հաւատս, և խոնարհաստեղծելք մտօք 'ի խորս պատկառելի խորհրդոցս՝ ընդ որբոյն Բեռնարդոսի քննեսցուք. զի ձայն արձակեալ գոչեն առ մեզ, այրն, մտուրն, արտասուքն և խանձարուրքն. և լսելի առնեն զձայն իւրեանց 'ի սիրտս մեր, թէ մանուկն որ անդ հանգչի, մանուկ է այնպիսի, որոյ և նոյն իսկ մանկութիւնն խօսուն է, և լսելի առնէ մեզ զձայն իւր. «Մանուկ է, այլ բան մանկացեալ»։

Լոյս զի՞նչ արդեօք խօսին առ մեզ մրտուրն այն և արտասուքն, և զի՞նչ բանք ելանեն յերկնային մանկանէն. «Հուր եկի արկանել յերկիր. և զի՞նչ, կամիմ թէ արդէն իսկ բորբոքիր»։ Ղ.-Ի. ԺԲ. 49։ Աշասիկ նորա բանքն. ինչ ես ասէ յերկնից յերկիր. առի մարմին մարդկային. եկի բոց հրոյ ծաւալել ընդ սիրեղերս ամ։ Պատճառ և նպատակ գալստեանն այս է, հրդեհել զաշխարհ ամենայն. «Լոյս

զինչ, կամիմ թէ արդէն իսկ բորբոքեր։։։
Եւ զինչ բոց են այդոքիկ, զինչ հրայ-
րեալ։։։

ծրա ծուխ ինկոց նուիրեալ 'ի վերս դի-
զանայր։ Ո՞վ ոչ ծանիցէ թէ գալատեամ
բրն Յիսուսի Քրիստոսի փրկչին ընդ-
մենայն երկիր հուր սիրոյ տարածեցաւ։

Այլ արդեօք 'ի ճարակել այսպիսւոյ
մեծաբոց հրոյ՝ իցէ՞ յաշխարհի անկիւն
անկէղ մնացեալ 'ի բոցոյ սորա։ Ո՞վ
սիրիցէ զծուլութիւն, զհեզգութիւն,
զցրտութիւն, զպղերգութիւն և զհո-
վանալ 'ի պատշաճեալս առ Աստուած՝
'ի հոգեկանս և 'ի փրկագործս։ Հնարք
լցէ այսպիսում հեզգութեան 'ի ամին
իսկ քաղաքի թագաւորել, 'ի քաղաքա-
ցիս յայսոսիկ, 'ի ձեզ իսկ որք յայս տա-
ճար սուրբ գումարեալ էք ունկն մա-
տուցանել ինձ։ Ընդունք բանս ընդ մի-
մեանս անկեղծութեամբ և հաւատար-
մութեամբ սիրելիք՝ 'ի քննութիւն ի-
րացս, զի և արդիւնք իսկ իրացն և շահ
ձեր զդոյն պահանջէ։

Ոչ ապաքէն անձկայք 'ի փրկութիւն.
գիտէք զի առ 'ի փրկութիւն հաւատք
միայն անբաւական են. ինդրին և գործք

որք ցուցցեն զհաւատս, որպէս ուսուցանէ սուրբ առաքեալն Յակոբոս. և կենագործեսցեն զնա, և սիրով յօդեսցեն. առանց որոյ ոչ բարեկամութիւն է ընդ Աստուծոյ, և ոչ որդեգրութիւն նմա, ոչ ժառանգութիւն, ոչ թագաւորութիւն, ոչ պսակ, ոչ փրկութիւն։ Արդ՝ զի՞նչ լինի եթէ թերի գտջիք զանձինս 'ի գործոցս յայսցանէ. ոչ այլ ինչ է այս, եթէ ոչ արդասիք դատարկութեան, հեղգութեան, անզգայութեան և դանտաղկոտութեան, որ հեռի առնէ զձեզ 'ի հրահանգաց կրօնի և 'ի կրթութեանց առաքինի գործոց։

Այլ արդ իսկ ազգ առնեմք ձեզ սիրելիք, զի այս հեղգութիւն և անհոգանալդ ձեր զբարի գործոց և զմիջոցաց փրկութեան՝ յայտնապէս վտանգ է մօտալուտ դատապարտութեան։ Ընձեզ խօսիմ անխորհուրդ քրիստոնեայք, որք բաւական համարեալ՝ զի ոչ հակիք 'ի մեղանս դարշելիս և անուանարկս, ոչինչ խղճէք ընդհանապազորդեան պը-

ղերգութիւն ձեր, ընդ մշտնջենաւոր յածմուենս մտաց, ընդ տարաղ ինչ կենաց՝ որ արտաքս թողու զամենայն գործս օգտաւէտս հոգւոյ առ 'ի յաւիտենական փրկութիւն։

Ընդ ձեզ խօսիմ, որք զբաղեալք 'ի հոգս շահավաճառութեան, առիւծ, ժառանգութեանց և բարձրութեց, թողուք 'ի մշտնջենաւոր մոռացօնս զաղօթս, զխորհուրդս, զպատարագ, զեկեղեցի, զքարոզս, զամենայն ճարակ՝ որ բուսէ զհոգի, զամենայն ջահ՝ որ պայծառացուցանէ զառկայծեալ լոյս հաւատոց։ Դուք էք, որոց արժան է 'ի խօսիլ իմ ընդ ձեզ՝ ես այսու տարաղու կենաց եմ 'ի մօտալուտ վտանգի դատապարտութեան։ Կամիք այսմ փորձ անսուտ և յաղթահարիչ մտաց։

Բացէք զսուրբ Աւետարանն, անդ գտջիք, զի յիմար կուսանք արտաքս մընացին 'ի հարսանեացն Յիսուսի։ Աղէ, զպատճառն քննեցէք. զի չունէին իւղ 'ի լապտերս, այն է՝ չունէին ունակու-

թիւնս և գործս առաքինիս. ննջել և մնալ յայնմ վիճակի՝ այս և եթէ ահա մեզք նոցա։ Աւասիկ ճշդրիտ հեղգութեան և ծուլութեան՝ զորմէ մեր բանքըս են, նկարագիր. այսու միայն դատապարտեցան։ Եւ զինչ նշանակէ դատապարտութիւն այնմ ծառային, որ ըզլսողս զարհուրեցուցանէ, որ ծրարեալ պահեալ էր զտաղանդն՝ որ տուեալ էր նմա 'ի յարգել։ Այս պահեաց զայն ըզգուշեաւ, այլ առանց շահեցուցանելոյ ինչ։ Եւ ահա իսկական պատկեր վախճանի դատարկացելոյ և հեղգացելոյ։

Եւ առ ինչ 'ի յաւ իտենից հուր դատապարտեցաւ աւետարանական մեծատունն. ագանէր ծիրանիս, ուտէր և ըմպէր առատապէս. 'ի միջէ յայլ զբօսանս անցանէր անընդմէջ. անհոգ լինէր յանձանձել զաղքատ ոմն 'ի ճանապարհին. Ղ։-ի. Ժ.Զ։ Ահա բովանդակ նկարագիրը և փուրսիշ մեծատանն առեալ 'ի սուրբ Աւետարանէն. ոչ ասի լինել երկրպագու կռոց անստեաց, անարգու Աստու-

ծոյ ճշմարտի, պղծիչ սուրբ տաճարաց, կամ անօրէն մարդասպան, կամ այր վատաշուէր, անհաւատ և անկրօն, ոչինչ յայտցանէ. « Թողեցաւ 'ի դժոխս ». (ըստ լատ. Թարգ.)

Այլ երկերուք հեղգք և ծոյլք, արք անձնանուէրք 'ի փափկութիս աշխարհի, և 'ի վայելչութիւնս նորա 'ի զբօսանս և 'ի բարեկենդանութեան։ Քանզի վիճակ պղերգութեան դնէ զմարդ 'ի մօտաւոր վտանգ յաւիտենական կորստեան։

Թերևս առ ձեզ չեն բաւական վըկայութիւն և օրինակք։ Կամք են ձեզ, զի այս ճշմարտութիւն առաւել ևս լուսափայլեսցի մարդկային բանիւ և պատճառաւք, որ հաճելի է ձեզ, և պարծի իսկ ընդ քարուք կիրառութիւն այնոցիկ՝ այժմու ժամանակս. ուշ դիք ըզգաստութեամբ, և ես հաճեսցից զձեզ։

Խնդրել ինչ և զանց առնել զհարկաւորս միջոցաւք առ 'ի հասանել այնմ, է որպէս թէ կամիլ միանգամայն և ոչ կամիլ, ըստ որում թելադրէ բանն։ Սեր-

մանէ՝ որ հնձելն կամի. պահէ և յարդէ զարծաթ՝ որ հարստանալ ինդրէ։ Յորժամ տեսանէք արուեստաւոր զոմն՝ որ ոչ աշխատի, անդէն վաղվաղակի ասէք՝ թէ շահիլ չէն նորա կամք. թէ զայլ ոք որ ոչն պարապիցի ուսման, վճիռ՝ի վերայ ածէք՝ թէ չկամի ժառանգել զանուն գիտնաւորի։ Օ՛ինծաղիք ընդ այր այնպիսի՝ որ իշխանութեան իմիք ցանկայ, և ոչ քայլափոխ մի մօտ մատչի առն պաշտօն՝ ածել զցանկալին զբռամբ։

Մի՛թէ չիցէ՞ այդպէս. և ընդէ՞ր այս։ Քանզի այդպէս ընթանալ, և այդպէս առնել՝ ուսուցանէ ձեզ բնատուր լոյս բանին, որ ինքեամբ միայն իմանայ ըզհամեմատութիւն միջոցաց առ վախճան, և զհարկաւորութիւն առնելոյ զայնոսիկ, եթէ կամիցիմք ստանալ զայսոսիկ։ Արդ՝ ո՞ւրպէս կարծէք, այս ճառ յերկրային իրս այսպէս պայծառ, շօշափելի, բացայայտ, ոչ այդպէս համարեսցի՝ յորժամ զհոգևորայս և զերկնայնոց բանք իցեն։ Այլ մեծ ևս բարի է վարձքն՝ զոր

պատրաստեալ է Տէր վասն մեր 'ի հան-
դերձեալ կեանսն։ Բաւական է ածելըզ-
մտաւ, թէ անդ ժառանգեմք զԱստուած
որ իւրով իսկ երանութեամբ երանելի
առնէ զմարդ. չիք չափ մեծութեան նորա,
ոչ վախճան տեւելոյն. ոչ յագուրդ 'ի ժա-
ռանգութեան անսողկալի վայելիցն, որոյ
աթոռ է կեանքն այն երանական։ Ա-
ռ 'ի ձեռս բերել զայս բարի՝ զի՞նչ ոչ արար
Յիսուս Քրիստոս. կամեցեալ զայն ժա-
ռանգել վասն իւր և վասն մեր՝ մի՞չև-
ճգանց տարաւ, վատաւակոց, տրտմու-
թեան, անտանելի չարչարանաց։ Զ՞ի՞նչ
ոչ արարին վկայքնորա փորձեալք 'ի սուր
և 'ի հուր և 'ի քաղմապատիկ տեսակս
լկանաց, առ 'ի արժանի լինել այնմ։ Ա-
խոռոմանողք և կուսանք, և արդարք
յամենայն սեռէ մի՞չև առաքինութիւն
արարին, քանի՞ կիրս կրեցին, մի՞քան զլ-
ժընդակ պատերազմաց տարան, քանի՞
աղօթս, արտասուս, աքնութիւնս, խոկ-
մունս, անընդհատ և հանապազօրեայ
մեռելութիւնս։

Եւ ընդէր արդեօք այս ամենայն, բայց թէ՝ քանզի այս ժառանգութիւն մեծամեծ բարեաց ըստ կոչաւ Քրիստոս, ոչ ուրեք պարգևի վասն արդեանց Քրիստոսի, եթէ ոչ և մեր գործք բարիք միակցորդք ըստ այնմ լիցին. քանզի արժանիք հաստատեալէ յայն, զի վարձք իցէ՝ և ոչ շնորհք, ստացուած՝ և ոչ ժառանգութիւն, սրսակ կենաց աշխատասրոց՝ և ոչ պատուղ կանացի վատութեան։

Արդ քննեցէք զանձինս. 'ի ձեզ ինքեանս կոչեմ զձեզ. 'ի ձեր 'բան առնեմ զձեզ ասասան. որ այն առաքինութեան գործք իցեն, որ աշխատութիւն, որ արժանիք, յազագս որոց յոյս ունիք այսպիսի հատուցմանց։ Այս հատուցումն առ ողորմածս խոստացեալէ, և որ են նպաստք որովք 'ի Թիկունս հասեալ իցէ քո առ աղքատս։ Խոստացեալէ աղօթիկերաց, և որ ժամանակք իցեն, զի՞նչ ժամք, որ տեղիք յորս ջերմեռանդութեամբ յաղօթս կացեր։

Ով տաճար սուրբ. ով պատուական

պարիսպք նուիրեալք օգոստափառ կրօնի. ուր այն ընտիր մասն ժողովրդեանդ՝ որ յաճախէրն յայցելութիւն քո, որ մնայր 'ի ժամ պատարագի, որ յարգութեան քո էր գործակից։ Ի՞ուր քաջ գիտէք զառանձնութիւն և զմիայնութիւն՝ յոր կայք նաև յաւուրս մեծահրաշակ ծանից, 'ի հանդէս մեծապատիւ խորհրդոց հաւատոյս մերոյ. առանձնութիւն և լքումն, որ ընդ զտեղն անարգելոյ, և զարքութեան վայրս արհամարհելոյ, և ըստ ինքեան ազգ իմն է նախատանաց և պղծելոյ զսուրբ տեղիս։ Եւ այսմ անպատուութեան կցորդք են նա և սրբարանն, պատուական քահանայք և պաշտօնեայք սեղանոյն։ Ընդ վարագուրաւ ծածկեսցի այս գայթակղութիւն եկեղեցւոյ, որ պատկառանաց իրք են քահանայից։ Այլև դուք աշխարհականքդ ոչ կարէք ջատագովել կամ արդարացուցանել զանձինս, որք որպէս քրիստոնեայք պարտաւորիք զգործս քրիստոնէութեան ղոր դաւանիքդ՝ և

արդեամբք ցուցանել։ Այլ դարձցուք 'ի մեր ապացոյց անդ՝ ուստի մեկնեցաք, ուստի զարտուղեաց զմեզ արտաքին նախանձ մեր հովուական։

Արդ սիրելիք, կամիք դուք զայդ հաստուցումն. այլ ընդ որմոյ արժանեաց փոխարէն, քանզի փախեբուք յընկերութեանց, յանպարկեշտ սիրոյ, յայցելութեանց, 'ի խաղուց և 'ի զուարճութեաց։ Յանկանչք թերևս զի և փոխանակ փափկութեանց ձերոյ վարձս առջիք, փոխանակ զի զհետ շահու ձերոյ կրթեցայք, փոխանակ զի ոչ իւրք վտանգեցիք զկարծեցեալ հանգիստն՝ որ 'ի հեղգութեան ձերում. եթէ և այլ ինչ ունիք, ածէք և զայն 'ի մէջ. գտէք յընթացս կենաց ձերոյ և 'ի դասակարգի դորձոյ ձերոյ գործ ինչ աստուածահաճոյ, զորոյ զփոխարէնն կարիցէք խընդրել 'ի նմանէ հաստուցումն յաւիտենական, ծայրագոյն և աստուածային։ Որպէս զի ստուգիլ յայնժամ բանի աւետարանին՝ զոր յաճախս կրկնել արժանէ.

անձնիկ է ճանապարհն. նեղ է դուռն, և սակաւ է թիւ ընտրելոց։

Այլ առ ինչ ուժիցեն այնքան օրինակք Քրիստոսի, այնչափ հրահանգք և միջոցք հաստատելք 'ի նմանէ 'ի ըստացուութիւն յաղթութեան 'ի փորձութիւնս, ազատութեան 'ի վտանգս, զօրութեան 'ի պատերազմի, թագաւորութեան՝ շնորհաց և օժանդակութեան 'ի ոգեւոր հոգւոյ և յահաւոր փորձութիւնս յորս անկանիմք։

Ո՞վ սիրելիք, զարթիք առ մի նաւագ 'ի խոր քնոյ այսր, մանաւանդ թէ յօրհասաբեր ախտէդ քնախտութեան, յաւրում կայք և յորում ընկղմեալքդ եք. զի այժմեան հեղգութեան կեանք ձեր կարապետ է նախընթաց՝ ապագայ կորստեան ձերոյ. և այս էր վասն, վասն զի աւուրց յաւուրս այժմու չար սովորութիւնդ զօրացուցանէ զկապանս իւր, կրկնապատկէ զհանգոյցս իւր, և կապեալ կաշկանդէ զձեռս ձեր գործել զ՝ ոչինչ։ Այսպէս անցանեն ամք ձեր.

այսպէս կեանս վարէք ցվախճան. և յայ-
սրմ վիճակի հասանէ մահ 'ի դրունս։
ԱՀեռեալք ապաշնորհք և եղկելիք, (սի-
րեցեալ որդիք,) թէպէտ և ընդ նմա գբ-
նան արտասուք, և ամենաքաւական նը-
պաստք սուրբ եկեղեցւոյ. կամիք հա-
ւատս ընծայել այնմ՝ որ հանդիսա կոչէ
զմահ այնպիսւոյն, այլ և ընդ սուրբս
դասիլ 'ի համար, եթէ Աստուած կա-
մեսցի։ Ա՞վ պատրանաց, որո՞վք խաբէ
զմեզ սատանայ հնարիւք։

Այլ մեք երկիրպագանեմք աստուա-
ծային ողորմութեանն. գիտեմք զի ըս-
քանչելի են շնորհք նորա. և մարգա-
րէիւն ասեմք և հաստատեմք, թէ յո-
րում ժամու դարձցի մեղաւորն՝ արդա-
րացի և կեցցէ. այլ և գիտեմք, զի այս
ամենայն գործք են տեսչութեան հրա-
շալիք արտաքոյ կարգի։ "Եթէ կարիցէ
հնդիկ փոխել զմորթ իւր՝ ասէ Տէր"։
Երեմ. ԺԳ. 23. կարէք և դուք փոխել
զչար սովորութիւն ձեր ծուլացեալքդ. և
լինել եռանդուն, աշխոյժ և կրօնասէր

և լի գործովք սրբութեան. որք երբեմն հեղգք, դանդաղկոտք, ամուլք և անպտղաբերք առաքինութեաւ։ Այլ ճանապարհն՝ որ առ փրկութիւն առաջնորդեալ տանի քնութեամբ, չէ այս. պարտ է այնմ դժուարակոխ լինել։ Յիսուս Քրիստոս ծնեալ և զարգացեալ ի վիշտս՝ օրինակ զանձն իւր ետ մեզ։ Այս զի եկն նա, և զօրինակ իւր եթող ձեզ, չէք արդարանալ ի հեղգութիւնս ձեր. «Զիք պատճառ վասն մեղայ իւրեանց». Յովհ. ԺԵ. 22։

Եկն Յիսուս Քրիստոս բորբոքել յաշխարհ հնոց սիրոյ և գթութեան. «Հուր եկի արկանել յերկիր»։ Եւ յայրէ անտի բեթղէհէմէ հրաւիրէ զմեզ, ստիպէ և յորդորէ թողուլ զվարս զեղծս և զչաւիղս ծամածուսս. ի ձեզ ակնկալութիւն է բորբոքել ձեզ քրիստոնէական եռանդեամբ ի կրթութիւն դորձոց բարեաց, փրկարար հրահանգաց, աղօթից, ճգնութեան, ընդունելութեաւ խորհրդոց, յայցելութիւն անձաւոյն՝

ուր ածիմք առաջնորդեալք, ուր բեռ-
ոսք զձեզ և թողումք հանդերձ օրհ-
նութեամբ Տեառն։

ՃԱՌ Թ.

Յանմանութիւնք գործոց ընդ հաւատոց։

Ընդհանուր և մեծաշուք վկայու-
թիւն յարդական ուրախութեանն՝ որ
ընծայի այսօր 'ի ձէնջ 'ի սրբում տաճա-
րիս 'ի փառաւոր յարութեանն Յիսու-
սի Քրիստոսի, ուրախս առնէ զմեզ, և
մխիթարէ և բժշկէ։ Քանզի արդարև
խոստովանութիւն իմն է այդ ընդհա-
նուր այլոցն ամենայնի վսեմափառ խոր-
հրդոց՝ զոր խոստովանիք, և ամենայնի
այնոցիկ՝ որք կերպարանեն զայս մեր ա-
մենասուրբ դերապայծառ կրօնս։ Որ-
պէս և 'ի նախնի ժամանակս անտի քրի-
ստոնէութեան իբրև որոշիչ նշան ճրչ-

մարիտ հաւատացելոց ծանուցաւ և դոր-
ծեցաւ։ Այլ որպէս զի մի՛ անպտուղ լե-
նիցէ այս վկայութիւն և զուրկ ի քրիս-
տոնէական շահու, կարեւորէ ըստ բեռ-
նարդոսի զհամեմատութիւն հաւատա-
ցեալ կոչելոյն մերոյ ընդ բազմապտուղ
գործս, որովք հասանիմք հանդերձեալ
յարութեան մերոյ։

Այլ ասասանօր երկբայութիւն ինչ
ի միտս մեր ծագէ. զի նշանակ այժմու
դարուս յորում կեամքս՝ հակառակ է
պարաբեաց, որք պահանջին ի տոնի ա-
ռաջիկայ աւուրս։ Այնմանութիւն՝ որ
ի մէջ ճշմարտութեան հաւատոյ և ա-
պականութեան վարուց. որ և մանա-
ւանդ յատուկ նշան թուի այսր դարու,
տարբերիչ յայլոց։ Այս արդարև ճիրք զի-
պաւ ժամանակ այսպիսի՝ քան թէ այժմ,
յորում պէտք եղեն յուշ ածել քրիստո-
նէից գոնէ ի չարութիւնս լինել զգու-
շաւոր, զի մի՛ և ի հաւատոյս երկուա-
ցեալ ոմանք համարեսցին։ Այս ճիրք՝ քան
թէ այժմ հարկէ աղղել նոցա քաջագ-

տի սնդիլ'ի հանդէս լաւութեանց՝ առ
ոչ վեհերոտս երևիլ 'ի յոյս։

Արդ ընդդէմ երկուցս այսոցիկ մա-
լորութեանց և անկարգութեանց գըր-
գռի և սթափի նախանձ իմ փանաքի.
և որք սատանօր գումարեալքդ էք 'ի
շինութիւն այլոց, խնդրի 'ի ձէնջ մտա-
նաւոր իմն եղանակաւ յարդարել զուշ
և զգի 'ի հուչակ խորհրդոց յարութեան՝
զհաւատս ձեր ունելով նմանս վարուց։

Կրթութիւնն զօրանալոյ օր քան զօր
'ի յաղթահարել զսխտաւոր կիրս, և հե-
ռի կալ յամենայն աղտեղի գործոց՝ հա-
ստարակաց է առ նախնի քրիստոնեայս յա-
մենայն տեղիս, յամենայն ժամանակս,
և յամենայն դէպս։ Այլ և յաւուրս՝ որք
յառաջին քան զտօն յարութեան և այ-
լոց օգոստափառ խորհրդոց մերոյ կրօ-
նիս, ընտանի էր նոցա այս կրթութիւն։
Ո՛չ նէին նա և զիսորարմատ հիմնեալ ստ-
վերութիւնս չարս՝ 'ի բարի յեղանակել։
Այլ անդ 'ի խոնաւուստ գետնափոր նը-
կուզս առաւել արտասուօք և եռանդ-

եամբ ճշմարիտ և անկեղծ երկրպագուք յայտնէին։ Բանզի ընդ յիշատակ խորհրդոց կրօնին միահետ ունէին և ըզճիշտ պահպանութիւն հրամանի օրինաց։

Այ՝ յորժամ՝ ի յետագայ ժամանակսն անդ սուրբ հարք քարոզէին զքրիստոնէական հաւատոցս ճշմարտութիւն ընդդէմ այլափառից և անհաւատից, հայեցարուք ասէին՝ ի մերքրիստոնեայս, զիաւրդ հեռի են նոքա յամենայն աղդաց մոլութեան. ընդ անբռնադատ արդարութիւն նոցա դիտեսջիք, ընդ քաջասիրտ համբերութիւնն, ընդ հեղութիւն և ընդ ժուժկալութիւն նոցա. և ապա եթէ խիղճ ձեր տացէ թոյլ, յետս կացէք՝ ի հաւատոյ այսի։ Այլ ո՞ր ժողովուրդ երբէք, և ո՞ր ազգ յոյն և անյոյն. և յորո՞ւմ ժամանակի առաջ մի և եթ եցոյց բղխեալ յայնպիսի անապակ սկզբանց, և առաջնորդ անտխեղծ վարուց։

Այլ զի՞նչ մեծ քան զայս փորձ մաքրութեան և սրբութեան օրինաց նոցա

և հաւատոց, և խորհրդոց, մաքրութեան և սրբութեան վարուց նոցա։ Այս էր մի ի բազմաց զօրաւոր փաստից ի յաղթել և ըմբերանել զորս ընդ այն ժամանակս էին՝ զմարդիկ հնչաւորս և հակառակս քրիստոնէութեան։

Այլ հնար ինչ իցէ արդեօք և մեզ յայսպիսի փաստս ձեռն արկանել՝ առ պապանձեցուցանել զայլափառս մերոյ ժամանակիս, յաւուրս՝ յորս այսքան դիւրութիւն է և համարձակութիւն ի գործել զչար, և այնքան ապականութիւն բարուց; որք են գրեթէ պարծանք մերոյ դարուս։

Այսպէս ասիցեն նոքա. զի՞նչդ հաւանելի է թէ քրիստոնեայք հաւատան այսպիսի սուրբ վարդապետութեանց, անարատ օրինաց, զի խենէշ վարք նոցա ագահութիւն և ամբարտաւանութիւն՝ հակառակ կողմանն են ապացոյց։ Վարս ունին անբարիս, և բարի օրէնս ունիլ ասեն. զի՞նչդ կարեն անառակիլ, յորժամ օրէնք նոցա զդաստ ողջախոհութեան

խնդրէ։ Զ՚իարդ զայլոցն յափշտակեն, երբ զարդարութիւն պատուիրեն յօրինեցաց։ Եթէ սուրբ են օրինաց, ուստի տոկոսիք, նենգանք, և բղջախոհութիւնք այսչափ ընտանիք են նոցա։

Այլ աւաղ, զի և նոցին իսկ անհաւատից մարթ է զնոյն փաստս վարել ընդդէմ մեր, և արդարացի դառն կըշտամբութեամբ 'ի վերայ մեր յարձակիլ յամօթ մեզ, ասելով, չէ՞ հաւանելի թէ ոմանք 'ի քրիստոնէից մերոց ժամանակաց երկրպագուք իցեն այսպիսի սուրբ օրինաց, որք 'ի թիւր վարս են, և պարծին իսկ 'ի մոլեգնութեանն լինել յաւաջադէմ. և թուի թէ շառագունին ընդ կոչումն իւրեաց, և սիրեն գործով խոստովանիլ զմերս հեթանոսութիւն։

Զ՚ինչ ջատագովութիւն իցէ մեր յայսմ ամբաստանութեան, ասէ սուրբն 'ի հարս Ոսկեբերան. բարուց արժան է լինել քարոզ հաւատոց։ Արդ եթէ այս կանոն է իմոյ դատաստանի՝ ասէ սուրբն, ուստի՞ իցէ ճանաչել ընդ քրիստոնեայս

զամանս 'ի հաւատացելոց աւուրց մերոց. 'ի տանից, որք ոչ պաշտին. 'ի պահոց, որք ոչ պահին. յեկեղեցեաց, յորս ոչ ոք յաճախէ. 'ի քանից անպատկառ լոց. 'ի խենէշ վարուց. յայրատ աչաց. 'ի հրապարակս, յորս գաղտնի ժողովք լինին. 'ի խանութս, ուր չափ և կշիռ խարդախին. 'ի թանգարանս, ուր վաճառք նենգին. 'ի տնտավաճառս, ուր երդմունք և լուտանք մի զմիով ել և եկ առնեն։ Յայնմանէ՞ արդեօք՝ զի այրիք տառապեալք են, որբք անխնամք, առաղաստք պղծեալք, մանկունք անկիրթք, արհեստագէտք 'ի խաբկանս ըմբռնեալք, աղքատք 'ի մուրացօնս անկեալք, և առաւել ևս ննջեցեալքն՝ որք 'ի նանիր ակն ունին նպաստից։

'Այր ոմ կռուոյ էր զոր ընթեռնումք 'ի սուրբ գիրս, որով եգիտ Բաղաամ հնարս ընդդէմ յաղթուելեան Իսրայէլացւոց. Թիւ-Ի. Իե։ Յայնմ ժամանակի զինուորք Մովաբու ոչ վառեցան նիզակաւ և դաշնակաւ 'ի մարտ, այլ թողին

զնոսա յանդորրու հանգչիլ ընդ հովանեաւ տաղաւարայ իւրեանց։ Այլ ՝ի՞նպէս յաղթեցին. նորալուրս լուարուք։ Օգեցան հրապուրիչ զարդու գեղաղեշ օրիորդք քաղաքին ամենայն պչրանօք և հպտանօք զարդարեալք պոռնկօրէն. և յառաջնումն անդ երևեցան յաչս Իսրայէլի անամօթ և անսանձ, դիմօք կընոջ պոռնկի, որպէս ասէ Ոսկէբերան։

Այսպիսի ամբարիշտ և օտարոտի հընարքք յարուցեալ է և այժմ ՝ի պատերազմի՝ որ է ընդդէմ սրբոյ նախնի հաւատոյ՝ ՝ի դիւէն, որ անյաղթ է յայսպիսիս. ՝ի խրախուԹիւնս մեր կոչեմք աղջկունս զառանցեցուցիչս՝ ՝ի գիշերային խրախճան, յախտարծած տքնուԹիւնս, ՝ի պարառիկս, յոր հանապազորդեմք զօդուտ ժամս զցայդ և զցերեկ։

Զառանցեցուցիչ աղջկունք՝ փափկուԹիւնք հասարակաց եղեալք յաւուրըս մեր առ ամենայն վիճակ մարդկան, որով հնարէ կոչել զմոլուԹիւնն՝ իշխան ժամանակիս՝ որք զօրաւոր ձեռամբ բաղ-

խեն զամենայն վարս բարիս, զամենայն սուրբ կրթութիւն և զնոյն իսկ զհաւատս։ Նոքա որովք «Ընկէր ... և փափկանայք». Գ.Թիմ. Զ. 4. ըստ ասելոյ մարգարէին, այնոքիկ են՝ որովք դարան դորձէ սատանայ ընդարձակել զտէրութիւն իւր 'ի թերահաւատութեան, ճգնի զօրացուցանել զանհաւատս, և խախտել զհաւատացեալս 'ի հաւատոյ։

Այսպիսի դիմակօք աղջկունք հրապուրիչք՝ որք են տպականեալ բարք՝ պատերազմին ընդ հաւատոյ, և գերեն զնա սէսպէս նորաձայն վարդապետութիւք. որ յաղագս շնորհաց, տեսչութեան, աղատութեան, և մինչև 'ի վերայ յարութեան Քրիստոսի՝ որ է հիմն մերում վարդապետութեան, զորմէ կախեալ կայ յարութեան մարմնոյ մերոյ հաւատարմութիւն. որ կարծեմ թէ հաճոյ թուի բազմոց այս օտարալուր գտումն նոր իմաստասիրաց մերոյ դարուս՝ առ 'ի յաւիտենիցն մեռելութիւն, յանդգնեալք նոյն համարել վախճան մարդոյ ընդ վախ-

ճանի անդէոց և խաչանց. և չկցէ՞ն մեր
արդեօք իրաւունք 'ի խնդրել անդ մե-
ռում բարեաց պատրաստութիւնս կա-
ցեալ ոչ, տարեւոր տօնական յիշատակութե
յաւրութեանն Յիսուսի Քրիստոսի, զայն
նմանութիւն հաւատոց, որով հեռի կալ
ստիպին 'ի գործոց չարեաց առ 'ի ոչ տա-
լոյ կարծիս թէ երկմիտ են 'ի հաւատս
իւրեանց, և ընդդէմ կամաց իւրեանց
բռնադատին գործել զբարիս՝ ցուցանել
զանձինս 'ի յայս ակնկալեալս իրաւամբք։

Երկիւղն 'ի բարիս գործել, նա ինքն
է՝ որ զանհաստատութիւն սրբոյ վստա-
հութեանն հաւատի առնէ մեզ. և սա՝
որ խոչընդոտն է փրկութեան հոգւոց,
յատուկ նշան է մերում դարու։ Արդ՝
զբաջութիւն խնդրի թուամբ կանգնել
ընդդէմ խոլական արհաւրացդ, և զմեծ-
անձնութիւն ընդդէմ մարդկային ակն-
առութեան։ Ի բոլորիցդ քրիստոնէից
այս և եթ խնդրի ժամանօք, որ ամենօ-
գուտ պատրաստութիւնն կիթելոյ պը-
տուղս 'ի տօնախմբութէ ասի սերկեան

խորհրդոյս, խնդրի հաւատարիմ լինել յառնել ընդ Քրիստոսի արժանի հաւատոց գործովք՝ որք ուրախ արասցեն զհաւատացեալս և ապացոյցք իցեն ընդդէմ ժանտաժուռ խառնաղանջին. գործք՝ որք հանապազօրեայ հրահանգք էին քրիստոնէից նախկին դարուց, մանաւանդ առ 'ի պատարաստութիւն մեծահանդէս տօնից։ Այսպիսիք խնդրին, զի իցեն ձեր հանապազօրեայ վաստակք և ոգեշարժ մխիթարութիւնք. խնդրի 'ի ձէնջ զամենայն խնամս ունել 'ի նպաստ հաւատոյ և կրօնից, որք փառաւորեն զԱստուած, շահ հոգւոց, շինութիւն եղբարց։ Այլ ոչ առաջի առնէ մեզ դարս՝ քրիստոնեայս բաղուսմս կարեկցութեան արժանաւորս, որք կոյրք են առ ոչ տեսանել, և խուլք առ ոչ լսել նմա. որ կոչէ զնոսա, հրաւիրէ և խրախոյս տայ նոցա առ 'ի գործս բարիս, և առ 'ի կրթութիւնս ջերմեռանդութեան կրօնի։

Կամ ի ցեալ Եղիայի խայտառակել ըզբուրմս կռոցն Բահաղու, և ծանուցա-

նել նոցա թէ էր այն դրօշուած խուլ, անզգայ և անշունչ, ասէ. աղէ՛, սեղան ուղղեցէք, ողջակէզ՝պատրաստեցէք առ՝ի ղոհ. ձայն տուք, կոչեցէք զկուռս ձեր. իջնէ հուր յերկնից, և ծախեսցէ զողջակէզս ձեր՝ի հոտ անուշից։ Ընդուն՝նին զհրաւէրն, զի այսպէս ասացից, անխորհուրդ քահանայք դրօշուածոյն, և եղեալ՝ի վերայ սեղանոյն եղն պարարակ, շուրջ բոլորեալ զնովաւ՝ աղաղակ բառնան ասելով. Բահա՛ղ, Բահա՛ղ. այլ լուարո՛ւք, ունկն մատուցէք, յակՃիռս կացէք, իցէ՞ թէ լսելի լիցին ուստեք ձայն պատասխանւոյ. ցտէին ղդէմս իւրեանց՝ որք աղաղակն բառնային, և ոչ գոյր ունկնդրութիւն։ Հապա բարձր արարէք զձայն ձեր՝ ասէ Եղիա, պաշտօնեայք մեծաղօր Աստուծոյ. աղաղակեցէ՛ք, գոչեցէք՝ մինչև կերկերեսցի ձայն ձեր. Գ. Թագ. ԺԸ. 27։ Մեծաձայն կարդայցէք, Թերևս Բահաղ ձեր՝ի քունի իցէ, վասն այսորիկ ոչ լսէ. կամ՝ի զբօսանս ուրեք զգիներբուօք պարապիցի, կամ՝ի

ձեմելիս ինչ զբօսնուցսս, կոչեցէք զնա 'ի ձայն բարձր։ Մեծաձայն կարդացէք։

Բ. Զատ ամին յառակս առնու Հիզկիաս զանազդակ արբանեակս Բահաղու, որք յանկատակս զբանան իմացեալ գոչէին առաւել և'ս մեծաձայն կարդալով զՔ. Բահաղ, մինչև սպառիլ ձայնի նոցա, և թոքոցն վաստակիլ, և կշտացն առ'իտուր և առ շնչոյ ծանրիլ. այլ այս ամենայն զուր տարապարտուց, զի խուլն Բահաղ ոչինչ ունկն մատուցանէ նոցա, և բոց յերկնից ոչ իջանէ. ոչ ձայն ուստեք և ոչ ունկնդրութիւն։

Իսկ թէ Նորոգէին և այժմ այն եր գիծեցուցիչ դառն հեգնութիւնք մարդարէին 'ի յայպանել զնոսի կռովքն և զընդունայնամիտ պաշտօնէիւք նորա՝ 'ի մեծ տմարթ մերումս դարու, և 'ի կըշտամբութիւն մերոց քրիստոնէից, որոց խցեալ է զականջս իւրեանց իբր զխուլն Բահաղ. առ չլսելոյ ձայնի՝ որոց կոչէնն զնոսա զինուորիլ հոգւով 'ի սրբազան հրահանգս կրօնի։

Ընչեն զանդակք և ժամահարք հրաւիրել զհաւատացեալս յեկեղեցական պաշտօնս. այլ չիք ունկնդրութիւն։ Որդեն պաշտօնեայք նուագ սրբերդեան. բան Աստուծոյ բաշխի 'ի նուիրական բեմբէն. յատեան ապաշխարութեանն հրաւիրին հաւատացեալք. այլ ընդ վայր, զի չիք ունկնդրութիւն։ Ոանին նշանք քրիստոնէական վարդապետութեան, յաճին ընդ փողոցս գործակալք բանին, կոչեն և աղաչեն. այլ ընդ զուր, զի չիք ուկնդրութիւն։ Այլ որ առաւելագունի ամօթոյ են իրք, նոյն ինքն Յիսուս Քրիստոս, կամ եղեալ յերկրպագութիւն ամենեցուն 'ի սուրբ սեղանի, կամ թոշակ առ հիւանդս տուեալ, կամ սեղան պատրաստեալ կազդուրել զսիրտ առողջաց 'ի խորհուրդ հաղորդութեան, 'ի զուր սպասէ և կոչէ, զի չիք ունկընդրութիւն։ Այլ չիցէ՞ այս գործ այնոցիկ որք ակն ոչ ունին յառնել ընդ Քրիստոսի. "Որոց ոչ գոյ յոյս"։ Ա. Թեսաղ. Դ. 12։

Ո՞վ քրիստոնեայք, այսպիսի անուն

ամենայն ակնածութեան արժանաւոր՝ պարտէ արդ յուշ ձեզ ածել, զի զօրաս-
ջիք հոգւոյվ խորհիլ ըստ արժանի քրիս-
տոնէութեան, ըստ կրօնիցն՝ զոր դաւա-
նէքդ։ Ամենեքեան տեսցեն և գիտաս-
ցեն թէ ճշմարտիւ քրիստոնեայք իցէք՝
եթէ պարծիցէք զանձանց լինել այնպի-
սիս, եթէ յայսմ աշխարհիս 'ի տես ա-
մենեցուն գործիցէք զոր ինչ արժանն է
քրիստոնէի. զի յուսասջիք ժառանգել
զկեանս յաւիտենից, և զպարգևս խոս-
տացեալս առ քրիստոնեայս. և այսպէս
յայտնեսցի թէ յինչ հաւատս իցէք։
Յարդարեցէք զվարս ձեր. բարւոք դի-
տեմք, զի են ոմանք 'ի ձեզ՝ որք պատ-
կառ կան 'ի քնեան հրահանգս, այլ եր-
կիւղդ ձեր և պատկառանք արդեամբք
այնպէս երևելոյ ցուցանեն զձեզ ծա-
ռայս լինել մարդկային աչառութեան.
կարծիս տայ թէ չունիցիք քաջութիւն,
զոր այլք ոմանք ունին, և երկմիտք ի-
ցէք յաներկբայելի հաւատարմութենէ
հանդերձելոց յաղթական փառացն, և

թէ ոչ տայ ձեզ հաւաստիս այս հաւա-
տարմութիւն՝ ստուգել ձեզ զայն գործ-
ովք և արդեամբք։

Այլ և 'ի ձէնջ որք որդեակս ունիք,
և գերդաստանաց էք տեարք, և որոշ-
եալ էք ըստ աշխարհի բաղդիւ, պաշ-
տամամբք, պատուով, յաջողուածով,
հանճարով, յարգանաք, նախ զայս 'ի ձէնջ
պահանջի, զի «Ուսաւորեսցէ լոյս ձեր
առաջի մարդկան». Մատթ. Ե. 16։ Ցա-
յտնեսցէ օրինակդ ձեր և շինութիւն,
և լեցի վահան ընդդէմ անպատկառու-
թեանցն որով գործին գործք չարք։ Ի
ձէնջ պահանջի այս մեծապէս, արք պայ-
ծառ տոհմիւ և ազնուականութիւն, առ-
պեսք զուարթաբարոյք, կանայք փափ-
կասնունդք։

Օգուտն՝ զոր հնար է ձեզ օգտեցուց-
ցանել զեկեղեցի, զկրօնս և զհաւատս,
մեծարոյութիւնն յոր վայելէք դուք ա-
ռաջի ամենայն ազգի մարդկան, մնալով
'ի ձեր քաղաքս, առ ձերովք ընտանեաք,
ընդ համաշխարհիկս ձեր, 'ի ամին յայս-

միկ ժամանակի՝ յորում զհասարակաց շահուց զհետ էք սնդեալք և զձերոց առանձնականաց, կարէք առաքեալք լինել քրիստոսական հաւատոց. ոչ թագչի բարեպաշտութիւնն և բարի վարքն ի տեսոյ ռամկին, և ամենեքեան լուսաւորին նոքօք։ Զե՛ն պէտք մենաւոր վայրաց և անդորրն պահու. չերկնչի ի դատողութենէ Լիպերդինեանց. ոչինչ հոգան զծաղրածութենէ թերահաւատից կամ իմաստուն արանց։ Խնդրեն նոքա խաղաղել զխղճի իւրեանց խայթ, անդորրացուցանել զոգիս իւրեանց։ Խնդրեն ընկերս. կամին նոր նորոգել զանհաւատութիւն իւրեանց։ Զե՛ն արժանիք խորհրդեան ձերում։

Այն նախանձաւորութիւն ձեր՝ որ որոշէ զձեզ յայլոց ի զարդ ազնուականութեան տոհմի և հայրենեաց, փառաւոր և սքանչելի գործոց, հասարակաց շքոյ, որոշեսցէ զձեզ նոյնպէս մասնաւոր կրթութեամբք քրիստոնէական առաքինութեանց։ Խարութեան գոր-

ծովք ՀառագայԹեսջիք։ Այն նախանձ
ձեր, որովք ստէպ յայց ելանէք ան-
կելանոցաց, արգելանոցաց, բարեպաշտ
սահմանադրուԹեանց, զոր առնէք դիւ-
ցազնական անշահասիրուԹեամբ, կեն-
ցաղական ոգւով 'ի փառս մարդկան՝
ընտանեաց և հայրենեաց, և քրիստոս-
նէական շինուԹեամբ՝ որ գովեստից է
արժանաւոր, մինչև զամենայն բերան
ստանալ օրհնաբանս. այս ամենայն ա-
ռաւելցի և ևս յայլ գործս սիրոյ և
կրօնից. և խոնարհամիտ եռանդն ձեր
առ սուրբ տաճարս, մշանջենաւոր հա-
ղորդելն ձեր սրբուԹեան սեղանայն,
ընկերելդ ձեր հանդիսիւ սրբոյ Թոշա-
կին, որ առ հիւանդս տարեալ լինի. նը-
շանաւոր հաստատուԹիւն ձեր 'ի քրիս-
տոնէական վարդապետուԹիւնս, պայ-
ծառս առնէ զձեզ և նախանձելիս, և
զաչս ամենեցուն 'ի ձեզ դարձուցանէ.
որք առաւել յայնժամ յառեալ հային,
որքան Թէ 'ի պերճաշուք զարդ հան-
դերձից ձերոց, ոսկեզօծ շքեղայց, ըս-

փիւռ վայելչութեանց։ Ընչին աշխարհութիւն մարդկային մի՛ զօրեսցէ նուաճել զձեզ և խափանել զձեր բարի բարի աշխարս. մի՛ ծաղր լիցի բարեպաշտութիւն յերեսս իսկ ձեր, և 'ի գործ ածցի աղտոտութիւնն։

Ընտէն 'ի սմին յայսմ վայրի՝ տիկնա՛յք փափկասունք, կոչեմք զձեր ուշ և ըղձանաձար. զձերս՝ զի հաճոյ լիցի ձեզ ըղձուտացող զանդուռն բերան մերոց նորաբողբոջ հանճարեղաց պատանեցուցանել, եթէ ոք 'ի նոցանէ 'ի մօտոյ կամ 'ի հեռուստ ակն յայրատ արկանել յանդգնիցի զձեօք. մի՛ տանիք, թէ ոք նորօրինակ ոճով կամ հրապուրանօք բանից կամ սեթևեթիւք անմաքուր լեզուով ճառ 'ի մէջ արկցէ խօսել յաղագս շնորհաց, յաղագս վարձուց և յաղագս հանդերձեալ կենաց։

Ո՛յարդ ձեր ամենեցուն սիրելիք՝ նշանակեմք մեք 'ի հաւատոյս, որ այժմ այսքան անարգեալ է և թշնամանեալ, յանուն հասարակաց մեր մօր սրբոյ Ե-

կեղեցւոյ, 'ի շնորհս լուացման միրտուն-
թեանն՝ որ մաքրեսցն զձեզ յակնածելի
դաշնն ձերում զոր կռեցիք, յանձն առ-
նեմ 'ի ձեզ զհաւատսն. մանաւանդ՝
նոյն ինքն աղերս մատուցանէ առ ձեզ
իւրով ձեռամբ, և զձեր օժանդակելդ
աղաչէ։

Գիտեմ զի եկեղեցականաց է անկ
պահել զսրբազան աւանդս, այլ ոչ դա-
դարիմ ողբալ զանզգայ տկարամտութիւն
այնոցիկ՝ որ հեղգանան կալ 'ի լուսն 'ի
նոսա յանձնեցեալ պաշտօնի, և բարի
օրինակաւ իւրեանց 'ի վարս ուղիղս յորդ-
որել զամենեսեան։

Այլ և դուք աշխարհականքդ, մա-
նաւանդ յայսմ բազմաքննին ժամանակի,
արժան է և ձեզ նախանձաւոր աւանդապահս
լինել աւանդիցս և հզօր
պաշտպանս. այս լոյսն մշանջենաւոր պարծանք
անուան ձերում, գերդաստանի
ձերոյ, և համօրէն ընտանեաց ձերոց։

Ո՛չ ձեր նախնիք միայն են, զորոց անջինջ և անմոռաց պահէք զյիշատակս 'ի

կիճս քանդակեալ, կամ 'ի գորգս նկարեալ, որք մեծանուն հանդիսացան կենցաղոգուտ գործովք 'ի խաղաղութեան կամ 'ի պատերազմի։ Այլ ձեր նախնիք են նա և սուրբ վկայքն, որք զինչս իւրեանց և զարիւն ետուն վասն հաւատոց. սուրբ կուսանք՝ որք անհպելի ըզկուսութիւն իւրեանց պահեցին, ողջակէզ բոլորանուէր ընծայեալք Աստուծոյ։

Սոքա են ձերում տեսմի դիւցազունք են, որ շինչանի օր ըստ օրէ ընդ նշանակաց քրիստոնէական կրօնի. սոքա զիւրեանց արիւնս հեղին վասն հաւատոց. ձեզ առ ոչինչ գրել պատուիրի զառ 'ի մարդկանէ աչառութիւն, և խնդրել փառս զհաւատոյս այսորիկ։

Այս է ճշմարիտ ճանապարհ յարդարելոյ զանձինս տօնել ըստ արժանւոյն զայս տօն՝ որ հիմն և արմատ է մերում որբոյ կրօնի. «Օ գործս համաձայն ունել հաւատոց»։

ԾԱՌԻ Ժ.

Յաղագս անթո-ժկալութեան։

Ոչ երկայնատոզ աղգաթիւ նախ-
նեաց հռչակելոց և մեծանուն եղելոց
յազգի անդ իւրում, ոչ հանրածաւալ
և համայնասփիւռ համբաւ դիւցազնա-
կան գործոց խաղաղութեան կամ պա-
տերազմի, ոչ գաւազանք, բեհեզք, ա-
պարօշք, ծիրանիք, պատուանշանք, պա-
տուոյ անուանք և պաշտամունք, ոչ այն-
քան շքեղացուցանեն զազնուութիւն,
զտոհմ և զյարգանս ցեղի և անձին մե-
ծում, որպէս ծնեալ լինել 'ի գաւթի
քրիստոնէական կրօնից, սնեալ և զար-
գացեալ 'ի քրիստոնեայ ծնողաց, և ընդ
կաթին դիեցեալ զբարս, զսկզբունս և
զվարս քրիստոնէութեան։

Եւ չկայ արդեօք 'ի նմին իսկ ԱՍ-
տուծոյ՝ ունել քրիստոնէականին զկիր
հնատոհմ աղգ յայնմանէ՝ յորմէ և զծը-
նունդն էառ. և չէաւ արդեօք զկիր նոր

հաստատութիւն 'ի միածին Որդւոյն Աստուծոյ, և զզարդացումն մեծափառ և գերապայծառ. և չէր այս գործունեայ կեանս շնորհել ամենեցուն 'ի նա հաւատացելոց և 'ի հանդերձեալ Մեսիային 'ի սկզբանէ անտի աշխարհի, և յորորանայ անտի մանկացելոյն Աստուծոյ, 'ի լալենից և 'ի խանձարրոց նորա. յորոց եղեալ էառ ընդ հովանեաւ բազկաց, ժողովեայ և մեծարեայ զհաւատացեալս իւր, և միշտ զհետ եղև ժողովել զնոսա, համաբուռնս արարեալ աստուածայնոյ բնութեն մարդեղութեամբ բանին, և աղնուացուցեալ նովաւ և փառօք շքեղազարդեալ զմարդոյս վիճակ։

Վասն որոյ խոնարհ դիմօք մատչին առ նա միապետք, դիւցազունք և աշխարհակալք՝ որք 'ի հեթանոսութենէ անտի ունին զծագումն, և կեան 'ի նըմին, ծունր խոնարհեցուցանեն քրիստոնէութեան. թէ և աղքատ ոք լցեն քրիստոնեայն, զուրկ 'ի բարեաց յաջողութեանց, 'ի ձրից և 'ի պատուոյ, նուաստ

ծննդեամբ և արհամարհ կենաց։

Ոսկի, ծիրանիք, շինգղ և նշանա-
զգեստքն հեթանոսի՝ որ 'ի հեթանոսու-
թեան կայցէ, ոչինչ են առ անարգ գըլ-
դլեկաւ և պատառատուն խորշոմք առն
քրիստոնէի, որ 'ի քրիստոնեայ վարս կեայ։
Այսպա մեզ երանի է 'ի յաջողութեանս
մերում, որ 'ի գիրկս քրիստոնէութեան
եմք ծնեալ, և զնայն հաւատս պաշտեմք
յանդորրու։

Զի զջուկ գամ մի անասնոց, մուր
անշէն, և գծուծ խանձարուրք են նը-
շանք փառաց Աստուծոյ մանկացելոյ,
պարարիմք և մեք առ 'ի փառս ունել
զայնպիսիս։

Այս է պատճառն, զի 'ի նորոգել
զյիշատակ այսց նշանաց հրաւիրէ զմեզ
'ի տարեւոր տօնախմբութիս յայս։ Վասն
այսորիկ իսկ յամենայն ժամանակս և 'ի
դարս համայն՝ մեծահոչակ տօնախմբու-
թեամբ կատարի հանդէս այսր աւուր։

Այլ այս տօն ծննդեան այդչափ մե-
ծահոչակ և փառաւոր ընդ համօրէն

կողմունս մերումն խտալեոյ, ուր այսչափ փայլէ քրիստոնէութիւնն, զնաթրդ այժմ այսքան անհոգութեամբ և թմբրութիւն խմբի. և այլ ծնունդք տօնախմբին արդեօք յաւուրս մեր 'ի մերոց քրիստոնէից. այս է՝ ծնունդ այսոյն պղծոյ, որ ելեալ 'ի դժոխոց զգեստ առնու մարդկային 'ի պատրուակ. փոխի 'ի մարդ, և զնորա առնու երևոյթ, և փոխարէն շնորհէ նմա թուլութիւն վարուց՝ և բարս խառնախորթս, հաստատէ 'ի նոսա ախտս անստնանելի. և թէ ելանէ 'ի նմանէ, այլուր չէք նմա դուլ և դադար մինչև դարձցի անդրէն 'ի տեղի իւր առաջին՝ բնակել անդ խաղաղութեամբ. "Յորժամ այսն պիղծ ելանէ 'ի մարդոյ, շրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ և ոչ գտանէ, և ասէ. դարձայց 'ի տուն իմ, ուստի ելի. Ղ՞ուկ. ԺԱ. 24։ Դուք ինքնին քաջ իմանայք սիրելի ունկնդիրք, զի խօսի զանարդ հեշտութենց և զցոփութեանց։

Հրեշտակք օրհնաբանեալ, որ գերը-

մարդկային զօրութեամբ յանբնակ ա-
նապատ տարեալ կապեցեր Յեգիպտոս
կոյս զԱզմոդէոս այսն անմաքուր, որ 'ի
սուրբ առագաստի եբաց Հերիմ գերեզ-
մանի եօթանեցունց արանցն Սարրայի,
որ նախ քան զհարսնանալն մնայր այրի.
տուր և իմոյս բանի զօրութիւն, զի տա-
բաշխարհիկ եղիցի դէն անառակութե-
'ի ցանկալի քաղաքէս, և 'ի սիրելեաց
իմոց 'ի բնակչաց քաղաքիս։

Կամեսցի և տացէ Տէր, զի չիցեն ան-
հեռացեալք 'ի միջոյ այն բաղմերան ա-
ւուրք, յորս Կիպրիանոսք, Ամբրոսիոսք,
Օգոստինոսք ներբողեանս յօրինէին 'ի
գովեստ կուսական մաքրութեան, ա-
ռանց ինչ բանս ածելոյ յաղագս հակա-
ռակ մոլութեանն, որ և յայնժամ բըռ-
նաւոր էր, և անգութ բռնաւոր, բայց
միայն առ 'ի հանդերձել մարտիրոսս
կուսութեան, որպէս Ներոն և Մաք-
սենտիոս մարտիրոսս առնէին կրօնից և
հաւատոց։

Այլ արդ՝ եթէ ազդեցութեամբ

հոգւոյն անմաքրութեան այնքան ընդ-
հանուր ղեղծմունք բարուց տիրէ 'ի
մարդումն յաւուրս մեր, որպէս հաս-
տատէ սուրբն Գրիգոր, զնաւդ ոչ ա-
ռաւելցի. այլ կասեցցի նախանձ մեր
յանդիման հարկանել զժպիրհ գարշու-
թիւն այսր ոգւոյ՝ առ 'ի զգուշութիւն
հոգւոց մեզ յանձնելոց, և 'ի պատիւ
Աստուծոյ իջելոյ յերկնից յերկիր 'ի
փրկութիւն նոցա։

Արբեմն առ յամօթ առնել ղեպի-
կուրեանս՝ նկարիչն բացաւ երանգաւք
զհոգի անառակութեան իբրև թագու-
հի բազմեալ 'ի գահոյս, և առ նովաւ
շղթայակապ գերեալ առաքինութիւնք
ամենայն, և 'ի ներքոյ և արտաքոյ շուրջ
զնովաւ ամենայն մոլութիւնք 'ի պարս
և 'ի խաղս յաղթանակաց։ Եւ չէր ինչ
.քան զայս երգիծական նկարագիր, ասէ
սուրբն Օգոստինոս. այլ մեք՝ զի մի վա-
նասեցցէ այս պատկեր համեստ ակնար-
կողաց իւրոց, որ այդչափ պայծառ ե-
րանգաւք է արուեստակեալ, յաւելցուք

յայդ միայն ընակիրնթաց և զհետևորդ գործս անառակութեան՝ զորս Բոյեսիոս ստորագրէ. «Ախորժ շնութեան՝ հոգ և տաղտապանք, իսկ յագուրդ նորա՝ դառն ապաշաւանք»։

Եւ ոմն է որ ոչ գիտիցէ, բայց թէ աւաղելի փորձիւ անձին, կամ գոնէ յայլոց ստուգեալ, թէ այսն պոռնկութեան նախընթացս առաքէ իւրում գաղտստեանն ընդառաջ իւր։ Եւ նախ ընթանան առաջի սորա հնարք դիւրագայթք և վտանգահոծք. կարապետք են սորա համարձակ խօսք, բանք անստոյգք և հոմք խեղկատակութիւնք, կապէնք. այս ամենայն առաջնորդք են այսոյս պղծոյ. ձանձրոյթ յաղօթից 'ի պահոց և 'ի ճրնշելոյ զանձն. դժկամակութիւնք յաճախելոյ յեկեղեցիս, լսելոյ զբանն Աստուծոյ, ընդունելոյ զսուրբ խորհուրդս, յառաջընթացք են որք զմօտաւոր գաղուստն քարոզեն։ Արդ՝ որոյ կարապետք են այսոքիկ, ապա և ինքն անմեկնելի ընդ իւր ուն զհոգ և զանհանգիստ կեանս.

«Լխորժ շնութեան հոգ և տաղտապանք». այն՝ զոր Բեռնարդոս խորհրդածէ յայսոսիկ բանս. «Ո՛վ, զինքդ տրքնութիւնս պահանջէ»։ Ընդ երևել այսոցիկ անդէն խայթք խղճի յառնեն, որ ոչ հանդուրժէ տեսանել զինքն առաջնորդեալ առ ուխտս դնել՝ դաշինս կրնել ընդ զառանցանաց. այլ մանաւանդ դուպարիլ կամի ընդ նմա բացաւ երեսօք։ Ադաջի ուշոյ անառակին բերէ նա՝ առ յամօթ առնել զնա, զառածս մաքրանոյց հրահանգացն, զամենատես աչքն Աստուծոյ և զանակնառու դատաստանն վերահաս, և զաններելի զհուրն անշէջ՝ որ սպասէ նմա։ «Լխորժ շնութեան հոգ և տաղտապանք»։

ԼՃէ այս անձկութիւն հանապազորդեան ընդդիմութեամբ անյագ տենչանացն, որոյ կամք՝ զհեշտութիւնն համեմել վտանգաւոր գործոցն յաղթութեամբ՝ որք խոչընդոտն լինին։ Խորշիլ 'ի մարդկան տեսութենէ, հաճոյական փաղաքշանս հանձարել, զգուշանալ 'ի

յընդդիմութեանց՝ որ ըստ ժամանակին ընդառաջ ելանեն. կախարդել զարթուն աչս հօր. գողանալ զգդայշ խնամակալութիւն մօր. հաւատի լինել ըզլուութենէ ընտանեաց. երկիւղ ի յանկարծ գալատենէ ուրուք, սր մերձաւոր և որ հեռաւոր. իրօք կամ կեղծ կամ առ տչօք տանել շողոմութեան կամ զոյացութեան յեղամիտ և միշտ ամբարտաւան կնոջ ուրուք՝ որ իշխան իցէ նոցա։ Այս ամենայն չկարէ առանց անձկութեան լինել. «Այիսրժ շնութեան հոգ և տաղտապանք»։ «Այվ, զնաՀրդ տքնութիւնս պահանջէ»։

Պատանեակք, որք զառաջին մատաղօրեայ տիս ձեր անցուցէք խաղաղս և պայծառս ի գիրկս անմեղ վարուց, այժմ զի զառաջին քայլափոխս ձեր առնէք ի վերայ լպրծուն դիւրասայթաք ճանապարհի մարմնոյ հաճոյից, չսեսանէք զի արբանեակք այսոյն պղծոյ այնքիկ են, որք զձեզ մատն առնեն ի ձեռս խառվութեան և անձկութեան։

Բաջ գիտեմ, զի կամիք զերծ 'ի սոգբ-
տանաց առնել զընթացս ձեր, ասէք.
զիաՀրդ շքով ուրախութիւն, ազնիւ կենդ-
ցաղ, ընկերութիւն հաճոյք՝ որք 'ի բնու-
թենէ անտի են ծնունդք, 'ի հասակէ և
յեղանակէ կրթութիւն՝ զիաՀրդ այսոքիկ
եղեռնականք. այլ զդոյշ լերուք յայնմա-
նէ՝ որ նենգանօքն զառածանել կամի։

Բարուք լուսաբանէ սուրբն Օգոս-
տինոս զայս բան այսու նմանութեամբ.
հանէք ասէ՝ յերկրէ բուն մի փշալից,
և հայեցարուք յարմատ նորա, գտջիք
զնա ողորկ գողտրիկ և գեղեցիկ։ Սակայն
աւասիկ փուշքն խաճանողք, որք ընդ
թիւրաթեք բուն բուսանին, և ընուն
զհամայն ոստս նորա, խայթեն և վըշ-
տացուցանեն զձեզ։ Եւ այսոքիկ ամե-
նեքեան յարմատոյ անտի բղխեն՝ և 'ի
նմին պարուն ակին, զոր թէ շօշափիք՝
ոչինչ դժուարիք։ Այս է ամենեին պատ-
կեր սիրոյ անպարկեշտութեանց և
սիրոյ նոցա. « Սէր մարմնական հեշտու-
թեանց . . . արմատ է փշոյ »։

Համեստ երևոյթ զուարթուն և ընկերական բարուց, քաղաքական ծառայութեանց, հրահանգեալ և ընտանի զբաղուցաբանութիւնք ոչինչ ընդդէմ են, և ոչ իւիք հուպ լինին երկչոտ խղճի մտաց։ Այլ եղուկ ոլոր. անտի ահա ծընունդ առնուն խորհուրդք չարք, հեշտութիւնք և տափանք. անտի խոկմունք առ խորտակել մեղմել զսիրտ ումեմն. անտի շնորհաբանութիւնք, ժամադրութիւնք աղիկամիք. չարաբուն անկոյն ոստք փշաբոյսք, որք խայթեն խածանեն պատառեն անողորմաբար զխիղճ մտաց։ "Ամէր մարմնական հեշտութեանց... արմատ է փշոց"։

Աղջկունք մատաղք, եղկելի օրիորդք, որք մինչև ցայժմ հանդարտ կէիք ընդ հովանեաւ անմեղութեան. ոչ նշմարէք Ի հոգոց անտի՝ որք պատին զձեզ, յանձկութեանցն յորս գտանիք, թէ յայն զուարճաբանութիւնս, յայն համաձայնութիւս թագուցեալ կան առ ձեզ կարապետք այ-

սոյն պղծութեան, զորոց գեղեցիկս ա-
սէ սուրբն Հերոնիմոս. «Նշանք կորըս-
տեան՝ կուսական մաքրութեան»։ Շնոր-
հեալէ ձեզ անդստին 'ի բնութենէ՝ ա-
մօթ, որ մեծագոյնն է և հարկաւոր յայլ
ամենայն շնորհսց և ձրից միջի՝ զորս վայ-
ելէք։ Արդ՝ զիաւրդ ընտրելի է ձեզ
կեալ և կենցաղիլ ընդ այլս՝ վնասու կու-
սական ամօթխածութեան. որպիսի դի-
ւական կատաղութիւն կալեալ է զգ-
ձեզ, զիաւրդ խաղալիկ եղայք դիւական
խաղուց։

Ի ժամանակս յորս բորբոքեալ էին
հալածանք ընդդէմ քրիստոնէից, փոր-
ձիչն սատանայ զիւր արուեստ ճարտա-
րէր. առաքէր և յայնժամ զիւր արբա-
նեակս, որք սրով զինուորեալք և աշ-
տէիւք և նիզակօք, ամօթով դառնային
յետս 'ի պատերազմէն։ Այսպէս պան-
ծալի էին. ոմ զուարճալի տեսարանիս.
օրիորդք փափկասունք ճոխացեալք 'ի
յաջողուածս բարեաց, 'ի ճարտարու-
թեան և 'ի գեղ երեսաց, առաջի տա-

ըեալ լինէին դատաւորաց, դահճաց, ատենից առ 'ի քաջութեամբ թշնամանել զլլկանս նոցա, և մնալ հաստատուն նաև 'ի մէջ անթիւ անողորմ սպանդից, 'ի տես խոշտանգանաց և մահու, պահել հաստատուն 'ի մէջ այսքան բռնութեանց ընդ հաւատոց իւրեանց և ըղհամեստութիւն։

Այլ ո՞ւր է արդ ձեր քաջալերութի, ո՞ւր է անպարտելի հաստատութի ձեր. յաղթեցէք յայնժամ սպառազէն և պատերազմող դիւի, այժմ զի հրեշտակս խաղաղութեան առաքէ նա անզէնս և անպատսպարս, թողացուսջէք յաղթիլ 'ի նմին դիւէն. «Մ՚չինչ ամօթալի քան զոր յաղթի 'ի մարմնոյ»։ Այթէ չէ՞ նորա բռնացեալ այժմ 'ի ձեր վերայ 'ի մերոյմուն, 'ի թշնամանս, 'ի խոշտանգանս. այլ փայփայէ, շոգոմէ, հրաւիրէ. արդ ոչ դիտեմք մեք զնաիրդ 'ի դահավէժ զառ 'ի թափս հեշտութեանց եդեալ զանձինս, կամիք 'ի մոի ոչ շատ խօլանալ ցեղեռնութիւն, կամիք մնալ կառչիլ

'ի ձանապարհի. ապա դեռ չէք տեղեա-
կըք անհնարին սահականութեան զառ
'ի վայրացն, ուր ուրեք երբեք կռիւ ո-
տին չէք գտանել։ Այլ ոչ տեսանէք, զի-
ամրդ դիւրին է անցանել 'ի մնոտեաց յա-
նօրէնութիւն, ասէ սուրբն Գրիգոր։

Կայ Դաւիթ, զաչս քո այլուր դար-
ձո. ուշ 'ի կուրծս արա. չտեսանե՞ս
զդայթակղութիւնն՝ զոր դայթակղեցու-
ցանես զամենայն Իսրայէլ, որ ապա 'ի
քո գլուխ դարձցի. և զկորուստն ոչ տե-
սեր, և ոչ զգուշացար կորուսանել զը-
յարդ անձին՝ զոր յայնչափ ամս ստա-
ցար։ Այլ աւաղ զի ոչ լսէ ինձ։

Անմաքուր կինն և անհամեստ, և զի-
ամրդ չամաչես և դու նուաստանալ 'ի
հաւատարութիւն ծառայի միում և ըս-
տրկի. և բռնաբարել զսուրբ հանգոյցն
որ կապեալէ զքեզ առ հարսն ոմն օրի-
նաւոր, և զանմեղն դատապարտել զըը-
պարտութեամբ։ Աղաղակ իմ զոդս և
եթ բաղխէ, չէք որ ունկն մատուցանիցէ։

Այլ ուստի արդեօք այս աւաղելի ան-

կած. մեզ, առաքեաց և յայնժամ սատա-
նայ զհրեշտակս իւր, և ընկալեալ եղեն
խաղաղութեամբ։ Յայնժամ գնաց և
ինքն։ Յայսոսիկ օրինակս զի՞նչ ինչ յու-
սալի է մեզ 'ի ձէնջ. զոր ցանկամքն 'ի
զ�։ և ընդունայն. բարւոք ընդու-
նելութիւն ձեր զոր ցուցանէք առ
պաշտօնեայս այսոյն պղծոյ, հրաւիրէ
և զնա գալ բնակել 'ի ձեզ։

Փակեցէք զաչս ձեր քրիստոնեայք՝ զի
մի տեսջիք. յահագին 'ի քստմնելի տե-
սարանէ աստի անջրպետեսցէ զձեզ վա-
ղագոյր թանձր։ Այլ զի՞նչ այսու. եկն
և էանց. և զի՞նչ մնաց առ ձեզ հետք
գալստեան նորա, զեղջ և ապաշաւ.
«Իսկ յագուրդ նորա դառն ապաշա-
ւանք»։ Այս է՝ զոր սուրբն Բեռնարդ-
դոս հաստատէ բանիւքս այսոքիւք.
«Օ՛ իա՞ր վաղանցուկ է հեշտութիւն
տուփանաց»։

Ով յիմարք, յիմար քաջազունք դի-
ւին, որ պարծիք ինքնակամ կապիլ 'ի
շղթայս, ազատ մնալ ընդ բռնակալու-

թեամբ խուժադուժ բռնաւորին, և զփառս դնէք յանարգանս և յանփառութիւն. «Լուս փառք՝ ամօթն իւրեանց». Փիլիպ. Գ. 19։ Անփառութիւն, որ անջինջ տպաւորէ 'ի ձեզ զհետս ապականութեան իւրոյ։ «Պարշութիւն և անարգութիւն միասցին ընդ նմա, և ամօթ նախատանաց նորա ոչ փոխեսցի». Առակ. Զ. 23. (ըստ լատ. թարգ։) Ի զուր խնդրէք զանարգ մոլութիւնդ պատրուակել գեղեցիկ անուամբ։ Ի նանիր է ձեզ փութալ ճեպիլ հաւանելի առնել այլոց զայն՝ ընդ որ և ձեր իսկ չէք հաւանութիւն։ Ընդ վայր ճգնիք հեղձուցանել զամօթ և զօրէնս պատկառանաց, որք միշտ միապէս խորհուրդք են անսեղուիք ամենայն ազգաց, ամենայն ժողովրդոց, ամենայն հասակի, առ ցուցանել զերեսօք ձերովք անտարբերութիւն, անհոգութիւն և կայտառութի։

Հետևանք այսպիսւոյ բուռն փութորկի՝ որ գոռայ 'ի ձեզ, և զոր Ջանայք 'ի ծածուկ պահել յաչաց այլոց, բացա-

յայտ երևի յապաշաւի անդ որ խառոմէ զոդիս՝ «Տաղտապանք, ապաշաւանք»։ Կուտակին յայնժամ մի զմիով ամենայն նշանակք ապաշաւանաց իբրև զլրթուդսն փրփրացեալ ալիս ծովու, յորժամ է 'ի ծուփս մրրկաց. «Ընտատ ալիք ծովու, որք միշտ փրփրեն զիւրեանց անձանց զամօթ». Յուդ. Ա. 13։

Ալիք են այսր մրրկածուփ ծովու նողկանք, տաղտկութիւնք, որք ընդ ժամ ժամ երևին յակուսմբս երախտանաց ձերոց՝ որք հաճելիք են ձեզ. «Ընտատ ալիք», և այլն։

Ալիք այսր մրրկի են այն դիմեցմունք ախտից, որք 'ի վերայ յարձակին ձեր նա և յակամայս, և անկենցաղս առնեն զձեզ և զայրագինս, միայն պատաղեալ 'ի պագշոտ խորհրդոց չարաչար գաղափարս, և զամենայն ինչ տեսանել տան յայն փոխեալ զկերպարանս։ Արդիւնք են սոքա այսոյն անմաքրութեան, որ ճախանայ ձեզ, զձեր ժառանգութիւն անձին սեպհականեալ. տէր է կամաց ձե-

րոց. ունի զերեւակայութիւնս ձեր, և սէրսպէս անդոյ պատկերս նկարէ 'ի նը-
մին. ունի զմիտս ձեր, և 'ի դարշանս յածեցուցանէ զայն. ունի զսիրտ ձեր,
և սիրով զդայական զառանցանայ՝ ամե-
նայն բարի կամաց ընդդէմ զդրուանս փա-
կէ։ Այլ վասն այսորիկ՝ անամօթին զա-
մենայն սանձ խորտակեալ, զամենայն ա-
կնածութիւն յանպիտանութի հատեալ,
ունի շահս անարգս և եթ, պատիւ ընդ
ոտնհար. յաջողուած բաղմալտանգ, ար-
ժանիք պատուոյ նկուն, յարգ անկած,
խորհուրդք սրտի ամենայայտ, պարտա-
կանութիւն դաւադրուժ։ Այթէ ծնող
է՝ մոռանայ զիւր ծնունդս, եթէ աղ-
նուական՝ զիւր մեծարութիւն՝ անձնա-
տուր լեալ յախտս, որք բռնանան 'ի
վերայ նորա յամենայն ժամանակի, յա-
մենայն տեղւոջ, 'ի պիտառութիւնս,
յարհեստագործ պարապմունս, 'ի շա-
հավաճառի, և մինչև առ ոտս սեղանոյն
սրբութեան։

Այլ ոտս ասեմ սեղանոյն՝ ուր մատչի

և լուանայ գարշելի յաշտն, որոյ նուիրելի ողջակէզ է նոյն ինքն կրօնն։ Ընտոտս սեղանոյն՝ յորում ոչ ևս գան 'ի միտրս պագշտեալոյն գաղափարք ճշմարիտ կրօնից, այլ կանոնք հեթանոսութեան, և յիշատակք ժամանակացն՝ յորում պաշտօն երկրպագութեան մատչէր անառակ կռոցն դրօշելոց յանասնոց կերպարան։ Եւ կարի իրաւամբք ասէ Կղեմէս աղերսանդրացի, թէ մինչչև մերկացեալ նոցա զաստուածայինն բնութիւն՝ նա և զմարդկայինն, և արկեալ զանձամբ զանասնոց կերպարան, չկարէն անձնատուր լինել յանպատկառութիւն։

Յայս աստիճան հասեալ է, որ գերի է անմաքուր ոգւոյն նման լինել անասնոց. «Հաւասարեցաւ անասնոց անբանից՝ և նմանեցաւ նոցա». Սաղ. խԸ. 13։ Եւ վասն այսորիկ առ ձեզ են բանք իմ, որք դեռ կոխեալ էք 'ի շաւիղս դիւրասահս անոտնկելս՝ որք յանառակութիւն առաջնորդեն. ասասցուք առ ձեզ. «Ո՞գայլեր անձին քում... և մի ցանկանայցես

գիտել զմեզս »։ Տ՝ՇՇԻ։ Դ։ 13։ (ըստ լատ։ Թարգ։) Զգուշացարուք ձեզ նա և 'ի սուուերաց անտի մեղայն անժուժութեան, և մի՛ ներեսջիք նա և զանուն իսկ լսել զնոցա։ պարծեցարո՛ւք իբրև ճշմարտիւ անտեղեակս խորհրդոցն չարութեան։

Այս խրատ իբր կտակ Թողեալ 'ի գրովուն և յերկիւղած հօրէ, Թողցի և 'ի մերմէ հայրական գթոյ առ ամենեսեան ձեզ, որ որդիքդ էք մեր սիրելիք 'ի Քրիստոս Յիսուս։ Լու այսպէս երանի՛ Թէ հնար էր մեզ Թափանցել 'ի ներքինս սրտից ձերոց։ լցի՛ Թէ հնար էր յերախանս զուարճութեանց ձերոց՝ ինձ նստիլ առ կողուք ձերովք, 'ի ճեմելիս ձեր ընկերել ձեզ, և գոչել միշտ յունկն ձեր։ «Զգո՛ւշ լեր անձին քում»։ Կամք են ինձ ասել, անդր յայն կողմն հայեցարուք։ կամք են ինձ մատամբ նշանացի առնել առ ոմանս 'ի ձէնջ, որոց աւաւել յանժուժկալութի՛ քան 'ի քաղաքաժամանակեայն լինելոյ տկարացեալ

և եղծեալ, տակաւին 'ի խնձոյից չէն ձանձրացեալք և յափրացեալք։ Տես, զնոքդ կիսափուտ մարմինք նոցա անկանին 'ի Թիկանց. տես, զնոքդ դիւրաւ փխրին փաղաղեալ ոսկերք նոցա։ Ի զուր տագնապէ զնա եղկութիւնն, 'ի զուր խօթութիւնն դալկացուցանէ զնա, որ իբր թէ ընդ քարշ ածի 'ի տեղի հանդիսից՝ քակեալ և շիջանուտ առ կայծեալ ճրագի կենացն, անպատիւ առ մարդիկ, արհամարհ և նողկոտալի առ Աստուած, և անձին իսկ գարշելի։

Ի տես խորշոմեալ և թառամեալ դիմացն, 'ի գարշահոտութեի խղճայթեալ մարմնոցն, կամ 'ի ստուերս մոլորեալս 'ի ճանապարհէ մահուն, յեղծումն գլանոցեալս օր քան զօր յերեսաց անհամեստ գնացից. «Ո՞ գոյշ լեր անձին քում։» Կորդում մեծաձայն. «Մի ցանկացես գիտել զմեզ»։

Պարահայեացն լինել արթնութիւն, փոխուստ, այսոքիկ են առաջին զգուշութիւնք 'ի խօթութենէ ասսի յայս-

մանէ ոմ պատանեակք, կարի դիւրին են այսոքիկ։ Դիտակ լերուք, զի և նոյն իսկ հասակդ չառնէ խելամուտս և քաջախորհուրդս յայս. չիք սանձ բաւական՝ սանձակոծել զապերասան ախտսն, զկամս և զառփանս։ Այլ որչափ, ոյք ոմանք զհետս կոծեն զծերոցն Շուշանայ, ընդ սպիտակափառ ալեօք ծածկեալ զաղտեղի զբոցն. ընդ քարշ գնան դողդոջուն ոտիւք զճանապարհ վատշուէր ախտից. և այնպէս անառակեալք երիտասարդօրէն՝ զղառանցանս իւրեանց տանին ընդ իւրեանս մինչև 'ի հող մահու խեղնէշ և գայթակղեցուցիչ ծերուութիւն իւրեանց։

Դարձայց ապա առ ձեզ, զանձն և ընդ ձեզ հաշուեալ, որք ապաքէն յայս եղեռնաւոր ընթացս յառաջադէմ զարգացաք, և ասասցուք ընդ մարդարէին. "Ամբարձ զաչս քո . . . և տես որ ոչ թաթաւեցար". Երեմ. Գ. 2։ Աստուածոյնն 'ի չարիս ձեր այն է, ոչ ճանաչելն զվիճակն՝ յորում կայքդ։ Արդ՝ ծանեջ

ռուք զանձինս. «Ամբարձ զաչս քո»։ Օ՛ի՞նչ ինչ ասել է մեր առ ձեզ. որովհետև Քրիստոսի զինքն միաւորեալ է ընդ մարդկային մարմնոյ, ամենայն յանցանք որ պղծէ զայն՝ փոխեալ է իբր 'ի բնութիւն. ուստի պարտ է մեզ հայիլ յայն իբրև 'ի սրբապիղծ ինչ յանդգնութիւն առ ոտն հարկանելոյ զբնոյն հանդիսաւոր, որ 'ի մկրտութեան ամբարձ զմեզ յեղբայրակցութիւն Յիսուսի Քրիստոսի՝ մարմնոյն զոր էառ 'ի մէնջ։ Հրաշք շնորհաց պահանջի հանել զմեզ յանդգնոց անտի՝ յոր խարդաւանեալս եմք։ Այլ մեք ոչ ըստ լիովին ընդարձակութիւնն առնումք զայսոսիկ բանս Տերտուղիանոսի՝ որ հղօր պաշտպանն է մաքրութեանս. որովհետև եկեղեցի ընդ մոլորութիւնս կարգեալ զայս առած՝ նըզովս ընթերցաւ յայն բան, թէ արք վաւաշք աններելիք են նա և ապաշխարութեամբ։ Ո՛չ այսպէս սիրելիք, քաջալերացարուք, զի է՛ մեր յոյս դեռ և։

Սուրբ եպիսկոպոսունք անցելոց ժա-

մանակայ, գերապայծառ հովիւք եկեղեցւոյ Յիսուսի Քրիստոսի, զորոց զարժանայարգ աթոռ ունիմք մեք այսօր յամօթ մեզ. դուք՝ որք ըստ հրահանգայ այնց ժամանակայ զհարեալ յանժուժկալութեան այսոյն կացուցանէիք առ սեմաւք տաճարին 'ի գաւթին լալ և աղաչել զԱստուած, աղէ՛ մի՛ զարմասջիք եթէ յառաջ կոչեմք զայդպիսիս, և խնդրատեմք զնոսա լինել քաջայոյս։

Մանաւանդ յաւուրս յայսմիկ յորում եկեղեցի սուրբ տանէ զտօն փրկութեան մերոյ. այս ողջոյնելիքդ, յուսացարուք, յառեցէք զաչս ձեր յորոյանն, 'ի խանձարուրսն, 'ի Բանն մարդացեալ, որ եկն վասն ձեր և վասն ձերոյ փրկութեան։ Հայեցարուք յայն, որպէս Եբրայեցիք յօձն մովսէսեան, և եղիցի ձեզ այն նշանակ փրկութեան։

Հուսկ յետոյ դառնալն 'ի ձեր ձեռս է, զայն հրամայէ Աստուած. հաշտութեան են ժամանակս. զազգումն զայն լսէք. քաջահմուտ ոք խոստովանահայր

կարող է օգնել ձեզ. արագ փախուստ յառաջէ մեղաց. և 'ի վերջ քան զամենայն հանապազորդեանն աղօթք եռանդուք կոչեսցեն 'ի վերայ ձեր. այս սատմ ձեզ, ածցեն 'ի վերայ ձեր շնորհս, որ և զձեզ յաղթանակողս արասցէ 'ի վերայ անձանց։ Եւ յումմէ՞ երկիւղդ ձեր. Աստուծոյ, ոչ երբէք, զի նա կոչէ զձեզ, և ապասէ ձեզ։ Ի մարդկանէ՞, օն անդր՝ նոքա յօգնութիւն ձեզ պատրաստք են։ Յանձանց, և կարի խիստ քաջ. այլ նախ դարձարուք. նախ դարձուցէք զերեսս ձեր յառաջից. նախ ընտրեցէք անձանց փոքր զոք խոստովանահայր, ապա երկերիւք յանձանց և 'ի հաստատութենէ ուխտին ձերոյ. և այս իսկ երկիւղքաջ յարդարեսցէ զայն դարձ, և զուխտս ձեր անջրելիս հաստատեսցէ։

ՃԱՌ ԺԱ.

Ի վերայ հոգւոյն մոլորութեան՝ որ պարտիչն է 'ի ժամանակիս։

Բողոք է ընդհանուր 'ի բերանի ամենեցուն յաւուրս մեր, յոմանց բարբառով ձայնի, և յայլոց գրով ձեռին հրատարակեալ՝ թէ դադգեսս լիմն յաշխարհէ ասսի սարագիր է լեալ քան զամենայն գեղեցկագոյնն և սիրելին յառաքինութիւնս՝ երախտագիտութիւն. և ապերախտութիւն հակառակ նմին՝ սխտ գարշելի՝ իշխէ և ճոխանայ բռնաւոր սրբայութիւնն 'ի միտս և 'ի սրտի մարդկան։ Մինչ զի որպէս երբեմն դարքն անցեալք կոչին 'ի մէնջ դար վաշխուց և նենգութեանց, դար վրէժխնդրութեց և հարստահարութեանց, դար անպարկեշտութեան և խառնակեցութեան. նոյնպէս և արդի ժամանակս ամենայն իրաւամբք կարէ կոչիլ դար ապերախտութեան, մինչև առնել ուժեք շնորհս,

և առնել զոք ապաշնորհ, յայժմու ժամանակիս երկոքին սոքա ընդ մի համարեն։

Այլ զիաւրդ, և չիցէ՞ այս դար՝ ժամանակն այն, զոր ոչ անպատեհ ինչէ կոչել դար ոսկեղէն. մարդիկ կրթականք և լուսամիտք՝ խղեալ յանձանց զուծ կանխակալ մոռահաճութեաց ամացն անցելոց, դէմս եդեալ գնան 'ի սկզբնաւորս ազատութիւնն, և կանոն դնեն անձանց զարդարն և զպարկեշտն՝ օրինօք անկեղծութեան, զոր նոյն իսկ բնութիւն օրինադրէ ունել առ իւր անձն և առ ընկերս 'ի կենցաղական ընկերութեան։

Զիաւրդ ապա այսոքիւք գեղեցիկ ըստկրզբամբք, փրկագործ առածիւք, զորս դիւրաւ ուսան, և կամակարուց ներհմտացան. զիաւրդ ապա ընդ հակառակն առածիցս այսոցիկ և վճռոց գործեն, պղծելով յաճախութեամբ անտեղի հաւրածոյ ապերախտութեան. այլ չէ՞ հնար ուրանալ զայն, զի առաւել յաւուրս մեր՝ քան յամն առաջինս անշնորհագէտ է մարդս և ապառում։

Խարուոք և ամենայն իրաւամբք ցուցանել հնարին է, թէ գուցէ այս վասն այնորիկ է, զի զհետ կրթելով զսկզբնական աղատութեան, 'ի տես աչաց ունել կամելով զկանոնս, այլ միայն զբնաւոր անկեղծութեանն, յաչաց նորա վրիպեն առածք և վճիռք կաթուղիկէ հաւատոց։ Եւ զիաՀրդ շնորհակալու լեցի եղբարց իւրոց այր այնպիսի՝ որ անշնորհակալու և անճանաչող է երախտեաց Աստուծոյ իւրոյ հօր, և ամենաբարի բարերարի. որ ապառումէ և անխրատ առ եկեղեցին՝ մայր իւր և յանձանձիչ։

Հաճոյ Թուեսցի ձեզ եղբարք սիրեցեալք, առաջի աչաց առնուլ և զընել ընդ մեզ զայս ապերախտիս մարդոյ առ Աստուած բարերար. զի և դէպք իրացն չմարթի լինել քան զաւուրս քաջադէպ, յորում մեծահանդէս տօնեմք զփառաւորեալ յիշատակ մեծի շնորհին՝ զոր արար Տէր բարեգութ. որ էջ յերկնից 'ի յերկիր, էառ մարմին մարդկայ-

ին, և եղև մարդ վասն մեր և վասն մերոյ փրկութեան. «Որ վասն մեր մարդկան, և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից ... մարդացաւ»։

Այս անշնորհակալութիւն հաճոյ է մեզ ազգ առնել ձեզ անշփոթ յատկութեամբք՝ի հոգի մոլորութե՛, զորմէ ասել կարեմք, թէ իշխան է մերոյ դարուս։

Այլն ՏԷր յաշխարհ, և մարդ եղև ըստ քանչելեօք գթութեան՝ի լրումն մեծի գործոց փրկութեան մերոյ։ Այգեցաւ և մարդ՝ ըստ իւր մարթելոյ՝ հոգի մի, որով ճգնի քանդել զայս գործ, և գործել յանձին և յայլս շինուած հոգևոր կործանման և կորստեան։ Այլ հնա՞ր է մարդոյ գիտել կամ իմանալ անշնորհակալութիւն մեծ քան զայս։

Այս այնպիսի ինչ նախադրութիւն է, որ զոր օրինակ զմեր նախանձ՝ նոյնպէս և զձեր ուշ մտաց գրգռել արժան է յուշկնդրութիւն։

Այթէ յընթացս բանից մերոց ստաւնամբ անձանց թշնամիս, որպիսիք գու-

ցէ ոչ գտանին ասա՝ այն է՝ մոլորեցու-
ցիչք հոգւոյ անշնորհք առ Աստուած
և առ մարդիկ, այս առ 'ի զգուշացու-
ցանել է զձեզ և վառել 'ի ձեզ փափաք
զլաւոյ ձերմէ։

Արտաքոյ է ամենայն երկուանայ, զի
միշտ եղեալ են յաշխարհի բաղմութիւն
արանց՝ որք օրինակաւ իւրեանց ապա-
կանեն զլաւս այլոց։ Այլուշադիք 'ի ճիշդ
նշանակութիւն բառ իս՝ Մոլորութիւն,
զորմէ խօսիմ. խօսիմ զհոգւոյ մոլորու-
թենէ, որ բուռն է և զօրաւոր քան ըզ-
մեզս, որ համոզէ և եթ, և ընդ քարշ
ածէ գոգցես առ չարութիւն՝ պէսպէս
եղանակաւ գունագեղեալ զնա և պատ-
րուակս բարւոյ զդիմաքն արկեալ։

Յն մարդոյն կրկին պահապանք ան-
մեղութեան նորա, ասէ Ուգոն Բեկտո-
բեան, երկու արթուն դէտք կելոյ նո-
րա ուղիղ և յանեղծութեան. արտա-
քին դատաստան այլոց՝ և ներքին դա-
տողութիւն անձին. «Երկու են վկայք՝
կեանք և խղճմտանք. առաջի Աստուծոյ

է խիղճն, և առաջի մարդկան կեանք »։

Այս ներքին աղդեցութիւն խղճի, որ է խայթոցն այն՝ որ բանայ զաչս մեղուցելոյն տեսանել յոր վտանգ թակարդեցաւ պատրանօք. և թէ տեսող է այնմ Աստուած, ակնառու վրէժխնդիր յանցուածոց։ Այս խիղճ է, որով մաքուրն Շուշան յանուանէն և եթ անպատկառութեան դողացաւ։ Այս է՝ որով արդարն Յովսէփ փախեաւ յերեսաց մեղացն։

Եթէ բարձցի 'ի մարդկանէ այս ներքին աղդեցութիւն խղճի, եթէ հալածեսցի 'ի նմանէ այս դէտ և պահապան բարեկեցութեան նորա, և հեղձուցիկ լինի սարսափ մեղացն՝ և երկիւղ պատժոցն. 'ի մէջ անցանէ բուռն մոլորութիւն՝ զի այսպէս ասացից, և զօրաւոր, որ ընդ քարշ տանի 'ի չարիս գործել։ Այս է որ կարի յաճախութեամբ տեսանի յաւուրս մեր յարս այնպիսիս՝ որք ոտնփոխի իւրեանց առնուն առաջնորդ զնորահնար պաճուճանս, զհամարձա-

կութիւն, զվարս, և սոքօք նախ անձամբ զանձն զառաջանէ, և ապա զայլս։

Զիսկ՝ Ճշմարիտ, զի ոմանք 'ի մէնջ ապաւինեալ 'ի վճիռս ինչ իբրև յառաջնորդս, որք ընդ շաւիղս անծանօթս եկեալ հասեալ են առ մեզ, խօսին և գործեն հաւանեցուցանել անձանց բարուք խօսիլ և բարուք գործել զմեզս. կամին ոչ միայն թոյլտուութիւն ունիլ մեզանէ՛լոյ, այլ և փաստս ըստ Լակլանտիոսի, քաջախորհուրդ կշռադատել զպատճառս, և խորհրդով գործել. «Կամին երևիլ մեղուցեալս, ոչ ներմամբք միայն՝ այլ և իրաւամբք»։

Ո՛չ իսկ Ճշմարիտ, զի յաւուրս մեր ոմանք ըստ սրբոյն Կիպրիանոսի՝ «Ոչ 'ի մեզայ քաւեն զանձինս, այլ նոյն իսկ մեզայն կանգնին ջատագովք»։ Ոչ ոք անձին պաշտպանել կամի 'ի մեզայ, այլ գովեն հրճուանօք. ընդ այն և եթ ստրջացեալք, զի անագան ուրեմն ծանեան. և զի չէ՛ միշտ առ ինքեանս մնալոյ. «Ո՛չ 'ի մեզայ քաւեն զանձինս, այլ նոյն իսկ

մեղայն կանգնին ջատագովք »։

Կամք են ումեք վրէժս պահանջել, այլ վասն այնորիկ՝ զի աստիճան պատուոյն և աղնուութեանն զայն պահանջէ։ Հաճոյ է ումեք խենեշութեամբ կեալ, այլ վասն այնորիկ՝ զի կայտառութիւնն զայն հրամայէ, և հաստակին այժ յայն միտէ։ Յափշտակեն զայլոցն վասն այնորիկ՝ զի այնպէս վայելէ զարդուն. յաջողակութիւնն առ այն ձեռնտու է, նորոց սովորութիւնն, ընաւորութիւնն. խընդրին ամենայն պատճառք վտանգաց՝ գըտանել առիթս խաստանալոյ. ամենայն պատրանք, իմաստակութիւնք յաճախեն առ 'ի մնալ անշարժ 'ի խստութեան իւրեանց։ Ո՛չ հետ գայ մեղասէրն զհետոյ խառնակեցիկ ընկերին և աղասին՝ առ 'ի յարմարել զիւր գործ ընդ նորայուն. և քաջ ևս լինել յոճրագործութիւնս առ եղեռնաւոր ընկերակցութեան իւրոյ ընդ այլ անպատկառ զաղրագործս։ Ա՛ռ նոյն իսկ մեղանս փոփոխութիւն առնեն անուանց բառնալ զվատ համբաւն՝

որ ատելիս առնէ զնոսա և նողկալիս յա-
ջիս այլոց. և անուն տան նմա զքաջու-
թեան չիմանալ զկշտամբանսն զոր ազգէ
'ի սիրտ քրիստոնէի կրօնն՝ որ պահանջէ
յարգութիւն սրտի։

Յատկապէս երևի, զի զմեզն որք
չեն այնչափ զաղիրք, խաղալիկս տղայոց
համարին, և գործս ապուշ և փախած
մարդկան։ Թուի նոցա թէ չէք հանգիստ
այնմ, որ ոչ ընթացցի ընդ հեղեղալայ-
ըիս անօրէնութեանն, որոյ ոչ իցեն բուռն՝
զաղրութիւնք անկարդ, տափանք, հե-
տամտութիւն փառաց՝ եռանդնոտ և
կաշմքուռն, զեղծ դատարկապորտութի՛ն,
սէր խօլական, զեղծումն վարուց արձա-
կերասան. կարծեն թէ ոչինչ է վիշտ,
բայց խոկումն՝ թէ անմարթ է յերկա-
րել զկեանս ցանմահութիւն, զի անվախ-
ճան իցէ ժամանակ չարութեան նոցա։

Որպէս սուրբն Գրիգոր վկայէ զ-
մանց. «Կամին կեալ յաւիտեան, զի յա-
ւիտեան մեղիցեն»։ Այսպա ածէք զմտաս-
առ 'ի ձեր օգուտ, առաջի աչաց նկա-

բեսջիք զպատկերն, զոր իբրև 'ի հայե-
լոջ ցուցանէ ձեզ սուրբն Օգոստինոս
'ի խոնարհ խոստովանութեան իւրում.
և տեսէք, գոնէ զուրուական ինչ նկա-
բագիր նորա ունիցիք յանձին, որք գո-
նէ ըստ մասնէ նմանեցուսցեն զձեզ նոյն
իսկ անձանց ձերոց։ «Այս, ասէ, յամաց
» անտի առաջնոց աղայութեան իմոյ թո-
» ղի զշաւիղս քո Տէր գնալ ընդ թիւ-
» բեալ ճանապարհս անառակութեան.
» և առ մեղմել զախտս մեծամեծս, այլ
» չառի ինձ զիմ գնացս առաջնորդ, այլ
» զհամարձակութիւն. և մնացի մինչև
» ցայն օր 'ի խաւարի, յապականութե-
» և 'ի կուրութեան։ Անօրէնութիւն
» իբրև զքուր ըմպէի. և յայնպիսի վի-
» ճակ անարգութեան հասեալ էի, զի
» հաճոյք իմ 'ի մեղս էր, և 'ի նոսին պար-
» ծէի, և ցաւէի՝ զի չէի անզգամ, որ-
» չափ այլք ասէին լինել։ Ամօթ հա-
» մարէի անձին ոչ գիտել յառաջանալ
» մինչև 'ի ծայրագոյն աստիճան անսանձ
» ցոփութեան. և յօրանայի 'ի նոսա ոչ

„ առ հաճոյից և եթ անձին, այլ և զի՝
„ մեծահռչակ եղէց, և անուն մեծ ըս-
„ տացայց 'ի դմին զարգացման, և գո-
„ վեստ մեծ ընկալայց յայլոց. և ցյիմա-
„ բուեթիւն հասանէի, պարծեցեալ և
„ զոչ գործելոյն իմոց մեղանաց, առ ոչ
„ համարիլ յանամօթութեան երկրորդ
„ առ այլովք՝ յեստ կալոյ 'ի պատկառելի
„ ինչ գործոյ »։ Ահա զգենուլ յանձին
հոգի մաքրութեան. ահա աշխատիլ 'ի
շինուած կորստեան անձին և յաւիտե-
նական հոգևոր կործանման։ Ահա քա-
կել զգործ իւր յաւիտենական փրկու-
թեան։ Ահա անշնորհակալու յայտնել
ընդդէմ երեսաց մեծի բարերարին։

Այլ ոչ ասա միայն մեայ հոգին մա-
քրութեան։ Ով, զի՞նչ է այն՝ որ յառաջ
մատչի զկերպարանս քրիստոնէութեան
նշմարել. մարդ՝ որ առաջնորդ ունի ին-
քեան զհամարձակութիւն՝ զնորութիւն՝
զսովորութիւն, ոչ կարէ շատանալ մե-
ղաք և եթ. կամի՝ զի լցէ այն ճարտա-
բահնար՝ գեղեցիկ՝ բաւական լինելոյ օ-

ընական այլոց. կամի առաջի դնել աչաց ամենեցուն զբարս իւր առ 'ի հրապոյր և 'ի գաղտփար, զի և այլք զնոյն կալ-ցին Ճանապարհ «Բնտ ապդեցութեան սատանայի». Բ. Թէս. Բ. 9։ Կամի սեր-մանացան լինել անօրէնութեան, հաւա-քել ապա արգասիս չարութեան. և ամ-իրաւամբք անձին սեպհականել զհան-գամանս մարդոյն մոլորութիւն, կամ լաւ ևս ասել՝ «Մարդոյ մեղաց». անդ. Բ. 3։

Դիզաբանութիւնք ինչ համարիցին այսոքիկ առ 'ի զարհուրեցուցանել ըղ-ձեզ. տացէ Տէր, զի յապացոյց այսր ա-մենայնի՝ զոր գտանութեամբ և կոծով սրտի ասեմ, մի գտցին չարաչար օրինա-կքք յաւուրս մեր 'ի մերում քաղաքի, 'ի դմին իսկ 'ի մեր քաղաքացիս։ Տացէ Տէր, զի մի գտցին ոդիք զդայապաշտք՝ ջերեալք պանծալ ըստ զառանցանս իւ-րեանց, անպատկառք առ 'ի հրատարա-կել զայնս իբր գործս երևելիս և վսե-մականս. մոադիքք սկէսպէս գեղեցիկ երանգօք գունաւորել զնոսա. անիրաւք

և չմարդիք, ոչ բարուք առնուլ 'ի կիր զիշխանութիւն իւրեանց, զզօրութիւն և զհանճար, առ 'ի և զայլս ածելոյ 'ի շաւիղս մոլորութեան, 'ի զեղծումն վարուց, 'ի խառնակ վարս, վայելել զայլոց զյաւիտենիսն զկենաց վաճառ՝ անօրէն գնով յաջողուածոյ նոցա։ Ոգիք խառնաղանջից, որոց արդիւնք են գործք անկրօնութեան. բարք նոցա օրինակք մոլեգնութեան. առածք նոցա վարդապետութիւնք եպիկուրեան, զեղխութիւն և ապականութիւն, վարդապետութիւնք հանեալք 'ի ժանտաժուտ մատենից ինչ, որք նորօրինակ գրականութիւն յօրինեցին. որք իւրեանց ուսմամբք պանծան սրել զհանճար, այլ արդիւնք նոցա եղծ բարուց է և խառնակեցութիւն անհնարին։

Սիրելիք իմ, 'ի գործոց անտի ծանիջիք զնոսա։ Ընդէն ընդ ելանել օրիորդի ումեք յաղնուապաշտ առանձնութենէն, համարի 'ի կարծիս հանճարեղաց ըստ լեղուի այսր ժամանակի, զի եթող

զմտածութիւնս, զբարեպաշտութիւն, զաղօթս, զընթերցումն ջերմեռանդն գրոց, զյաճախութիւն խորհրդոց. և թէ հնար ինչ իցէ՝ ելանել նմա նա և 'ի սահմանաց ամօթխածութեան, յոր աշխատին փութով ինամովք ըստ առաքելոյն՝ «Ամենայն պատրանօք անիրաւութեամբ». Բ. Թէս. Բ. 10։

Այն ինչ մտանէ պատանեակ ոք 'ի քաղաքական ընկերութիւն, և ահա այր ոք յարանուանելոյ անտի հանճարեղ ա-բանց ճգնի բառնալ 'ի նմանէ «Օ՛ան-հարթ կեղևանս կանխակալ մտահաճութեանց». զի յայս անուն կոչին առ նոսա հրահանգք քրիստոնէութեան՝ զոր ընկալեալ իցէ նորա յառաջին ամս կենաց իւրոց։ Այլ այնչափ մոլորեցուցանէ զնա և զառածանէ, մինչև նկարագրէ 'ինքն զհամարձակութեան նախագիծս, զհեշտին կենաց և զնորասիրութեան ընդ ապականեալ և խանգարեալն աշխարհի. «Ամենայն պատրանօք անիրաւութեան»։

Ով հոգիք արդարք, անմե՛ղ աղաւ-
նիք, որք լսէքդ լինձ, և որ ընդդէմ
այսմ մոլորութեան և անիրաւութեան
սխոյեան կանգնիք, աղէ՛, փակեցէք զա-
չքս ձեր մի՛ հայել 'ի յաղճատեալ և 'ի
զառանցեցուցիչ օրինակս. խցէք զա-
կանջս ձեր առ բանս մոլորութեան, մա-
նաւանդ փախերուք 'ի յափշտակիչ վա-
րուժանակաց անտի՝ որք որսալն կամին
զձեզ. «Որոգայթս իբրև զվարմս հաւ-
որսաց կանգնեցին ապականել զմարդիկս.
Երեմ. Ե. 26. և պատասպարեցարուք ընդ
հովանեաւ անմեղութեան ձերոյ։ Թէ-
սկէտ անյուսալի է թէ այդ որսորդ հո-
գւոց այդչափ դարանօք և նենգանօք
յայդ անօրէն գործ պատաղեալ՝ բարձ-
ցէ ամենևին 'ի մտաց զսէթ վտանգին.
զի չիք հոգի պարզամիտ՝ որ ոչ ծանիցէ
զվիհն՝ յոր թակարդեցան կանուխ կամ
անագան. ոչ ոք անզգոյշ՝ որ ոչ խաբի-
ցի. ոչ երկչոտ՝ որ ոչ զարհուրեսցի. ոչ
յերկուոտ և կասկածաւոր՝ որ ոչ որո-
շեսցէ զտարակոյսն, և ոչ գահավիժես-

ցի յանդունդս և՝ի գրգանս կորստեան,
«Ամենայն պատրանաք անիրաւութիւն»։

Ով զառանցեցուցիչք, գործարանք սատանայի, ամենեքեան ներկուռք՝ի կատարել զկսեալ գործն, և տապալել ըզ-շինուածն մեծ՝ զոր ծնեալն Յիսուս եկն շինել՝ի մեզ. «Զոր դուն շինեցեր, աւերեցին». Սաղմ. ԺԱ. 4։ Եւ այսոքիկ են արդասիք առաձոց ձերոց և վարդապետութեանց։ Օգուտքն սոքա են՝ զոր բնաւորական կանոնք անկեղծութեան սաղբեն մարդկային աղատութեան։ Այս յալթանակ է աղատութեան։

Երբէր երբեմն մեղքն գմնէ իւրով բնաւոր տգեղութեամբ, և կոչէր ընկերս միայն յաղագս հեշտութեանն զոր ընդ իւր ունի. այլ ոչինչ ունէր ապա յարգ և պատիւ. զանփառութիւն իւր անձամբ խոստովանէր։

Այլ այժմ ձերովդ ճարտարելով սիր մոլորեցուցիչք, և վճռաւն զոր դուք հնարեցէք մոլորեցուցանել զանձինս, և յայլս ևս տարածեցիք դայթակղեցու-

ցանել զձեր նմանիս, զձեր եղբարս։ Այժմ պատուիրանաղանցն լինել՝ քաղաքավարութիւն իմն է վարկուցեալ, և զդէմ վեհութեան առեալ ունի և զնորաձևութեան. անձնասանձ սիգայ, և դատի լինել իրաւունս ինչ խաղաղական ստացութեանն իւրաքանչիւր ուժեք զիւրն. և պարծի գոգցես իմն ընդ մտայ հաճոյս՝ որք իրաւացի վարկանին զայն։

Արդարև այդպիսի մոլորութեանցդ ազգ համարէր երբեմն սեպհական ժողովրդոց՝ անարժան գլուխս ամբառնալ առաջի աղնուականի ուրուն սեպհոյ կամ մեծազգի տիկնոջ։

Այժմ գլխաւորապէս ՆԻՄ արժան իցէ յարմարել զբանս մարգարէին. «Որդայթք եղերուք զիսանոցին». ՈՒԷ. Ե. 1։ Արդարև որոգայթ եղեր այր կանամբի, և ոչ յանչան ինչ ազգէ, տածելովք ըստ կնոջդ համարձակութիւն։

Այր՝ որ մոլեսդ առաջի դատերացդ. որոգայթ դու՝ այր պալատական, որոյ հոգք միշտ 'ի խաղարկութիւնս են, 'ի

ղնին պէսպէս տեսարանաց. ոչ երբէք յեկեղեցի գնացեալ 'ի տես պատարագի և 'ի լուր քարոզի, ըստ որում հարկ 'ի վերայ կայ կրօնիս մերում։

Տիրուհի և դու որոգայթ, որ ըստ հաճոյից ունայնասէր կամացդ շքեղս զգեցեալ՝ անհոգ գտանիս 'ի պահպանութիւն համեստութեան։

Որոգայթք դուք, "Որոգայթք եղերուք դիտանոցին". այս, զանկեղծութեան և զվայելչութեան օրինաց զհետ եղերուք։ Այն վայելչութիւն լիցի յաւուրս մեր մաքրութեան սանձ, թէ ուսմամբք և վարդապետութեամբք ձերոյ ուսուցչաց անմասութի համարեսցի յարգել զվայելչութիւն։

Ի՞նչ վայելչութիւն յանպարկեշտութեան անդ, ուր սչինչ ամօթ և ոչ պատկառանք։ Ի՞նչդ հաւանելի է թէ վատանուն լիցէ մաքրութեանն ճանապարհ, ուր հզօրացեալ բռնութեան յինքն ձգեալ առարկանէ զանմեղ հոգիս՝ առնել զնոսա մոլիս։

Ո՛վ պահապանք Երուսաղէմի, մարգարէք Խորայէլի, պաշտօնեայք բարձրելոյն և եկեղեցւոյ, ընդդէմ այսր յարձակման և կատաղութեան մոլորութեան՝ ախոյեանս կանգնեցարուք իբրև սիւնս երկաթիս և որպէս խարիսխս պղնձիս։ Այլ զի՞նչ, եթէ ոմանք յեկեղեցականաց կորուսեալք զիւրեանց ուշ՝ զառածեալ և յայս պղծութիւնս ժամանակիս վարակեալ իցեն՝ ի հոգւոյ անտի մոլորութեան կալեալք. եթէ ագահեալք յիւրեանց սպասահարկութիւն առ սրբարանաւն և սեղանովն և սրբով խորանաւն՝ հաղորդ լինի պղծոց դաղտնեաց և սեղանոց և խորանաց։ Եթէ զխստամբերս վարուց վարդապետութիւնս յառածս առցէ կատակել առ այլս՝ համաձայն երգիծանաց, և անզուսպ վարուք, և անձամբ իսկ. աղէ՛ աղաչեմ զձեզ, քոզ տրկէք զայդու պղծութեամբ սրբութեան տաճարիդ։

Զ՝ձեզ դարձուցից զբանս իմ արժանաւո՛ր եկեղեցականք քաջածանօթք

առ մեզ, որոց թիւ չէ կարձեալ ողորմութեամբն Աստուծոյ և 'ի մեր քաջալերութիւն յայսմ պայծառ քաղաքի. առ ձեզ՝ որք առ հրահանգս մեր դիւրասացք էք, 'ի վարս ձեր անարատք, և 'ի կատարումն գործոյ ձերոյ անվաստակք և անպարտասելիք։ Հապա, ըստ քաջաց ճակատ յարդարեցէք, կռիւ մարտի տուք ընդդէմ անօրէն և մոլորեցուցիչ օրինացն։ Ի մեծ գործս յայս ընկեր կալարուք ընդ ձեզ և օգնական զաղնուականան՝ որք բարեպաշտութիւն են նշանաւորք, որք ոչ վստահին 'ի համարձակութիւն որդւոցն Բելիարայ. որք ոչ միայն բնական օրինաց անարատութեան և անկեղծութեան ակն ածեն, այլ և զառաձս և զվճիռս քրիստոնէութեան մեծարեն։ Դպրոցք եղիցին սոքա առաքինութեան՝ առ 'ի և զայլս ուսուցանելոյ։ Ընդ ձեզ միայեալ թուիմք կանգնեսցեն ընդդէմ յորդահոսան հեղեղաց մոլորութեանցն՝ որ գնայ դարիւ և դարիւ։ Որպէս զի և 'ի ամին դարու

անշնորհակալութեան ի՞նչ ոք՝ որ զիւր շնորհագէտ երախտապարտութիւն յայտնեսցէ առ հասարակաց ծայրագոյն բարերարն, որ էջ յերկնից յերկիր վասն մեր, և վասն մերոյ փրկութեան։

ԺԱՌ ԺԲ.

Յաղագս հոգւոյ հայրապետութեան, որ զջրաջրեալէ 'ի ժամանակիս։

Պորոգեալ 'ի միտս քրիստոնէիս ըղհրաշալի գործ փրկութեան մարդոյ, զոր Աստուած և մարդն Յիսուս կատարեալ գործեաց. որ յարուցեալ 'ի սպասնէ գերեզմանին փառօք՝ ծանուցաւ սուրբելոց, և 'ի հաւատս հաստատեաց զնոսա. և իւրով առաջնակայութեամբն աներկեայս արար զնոսա, և քաջալերեաց զնոսա բանիւք իւրովք հաստատել ըղնախնի հաւատացեալս. զի և օր ըստ օրէ

ուձեսցին և բազմասցին հաւատացեալք
'ի նա և յեկեղեցի սուրբ, զոր հաստա-
տեաց կալ միշտ իւրովք օրինօք ընդ վար-
չութեամբ իւրոց հովուացն . . . :

Այս նորոգութիւն ասեմ յիշատա-
կի՝ է զարթուցանել զմիտս ազնուակա-
նաց և ջերմեռանդս : Այո՝ զարթուցա-
նել է զփափուկ, զդիրդ և զքաղցր հա-
ճոյս՝ յաղագս մեր բարերարելոցս շնոր-
հակալութեան առ Աստուած բարերար
և առ Եկեղեցի : Այլ այս այն իսկ է,
յոր խմբեալ եմք կատարել զսերկեան
աւուրս հանդէս :

Սիրելի եղբարք, թէ արդարև իցեմք
'ի թուոյ անտի գրելոցն 'ի դպրութեան
կենաց, թէ ունիցիմք իրաւունս որդե-
գրութեան 'ի ժառանգութիւնն երա-
նական, թէ անդամք իցեմք եկեղեցւոյ՝
յոգեալք 'ի մի մարմին ընդ բազում ե-
րևելի անձանց, որք հաւատացին 'ի հան-
դերձեալ Քրիստոսն, և որք հաւատան
յեկեալ Մեսիայն, հանդերձ հոգւովք
արդարոցն կատարելոց . չիցէ՞ այս՝ պա-

տիւ. այնպիսի՝ որ գերազանցէ զամենայն պատուո

Այսպէս արժան էր լինել արդեամբք, այսպէս եղև և յաւուրսն առաջինս. այլ ոչ օտարալուր հրէշեցս, չև ևս է այլ այսպիսի յաւուրս մեր առ ոմանս 'ի քրիստոնէից, որք այլ խորհուրդս 'ի միտս իւրեանց յածեցուցանեն. որք առաջի ունիլ պանծան զկանոնս՝ որ 'ի բանէ և եթ թեղադրին յաղագս բնաւորական զգաստութեան, և կորուսեալք և վրիպեալք են 'ի վճռոց և 'ի պարտեաց քրիստոնէութեան։

Ի սմին ժամանակի անպատմելի իմն ցնորիւք ոմանք 'ի քրիստոնէից, ոչ շատացեալք անշնորհակալու և եթ գտանել առ Աստուած հոգւով մոլորութեաւ, զորմէ ոչ երբեմն յորժամ դէպ եղև՝ խօսեցաք, անշնորհակալուք ոմանք նոյնպէս և առ սուրբ Եկեղեցի գտանին հոգւով հակառակութեան ընդդէմ ամենայնի՝ որ եկեղեցական գահապետութիւնքն է, կամ անձինք, կամ իրաւունք, կամ ինչք եկեղեցւոյ. զորոյ ըստ որում կարծիք են, կամին իսպառ բառնալ

յերկրէ զանուն և զյիշատակ, հաստատելով միշտ զհասարակաց զայս բողբք, թէ ժամանակս այս դար է անշնորհակալուաց։

Ար զգուշացուցանել զձեզ ոգիք սիրելիք, եռայ յայսմ ետեղ իմ նախանձ աղքատին յառաւօտուս, զգուշացուցանել զձեզ'ի վտանգէս, որ եկեալ հասեալ է 'ի վերայ հաւատոց ձերոց, և պարանել կամի զձեզ 'ի հաղբս մոլորութեան. որչափ, զի 'ի նոցանէ իսկ է վտանգդ՝ զորս ոչ թշնամիս ոմանս, այլ սիրելիս և ընտանիս կարծէք այդմ հաւատոյ ձերոյ։

Այս ոմ արդեօք 'ի ձեզ ասցէ, որ զոր ամենայն հեռի կայցէ 'ի մարդկան ընկերութենէ, և ոչ տաղտկասցի խօսիլ զոր ամենայն վասն բանտարկեալ աղաւտութեան, զշղթայից, զգերութեանց, զնծոյ, զհալածանաց, զլկանաց։ Այս ուստ՞ գերութիւնքս այսոքիկ. շղթայքս յորմէ՞ տեղւոջէ. ո՞ք հալածիչք, և հալածանացդ ո՞վ սպանդ։ Թուի թէ դարբ

խժդժութեան արդէն իսկ անցեալ լ-
ցեն. չէք այլ ևս լսել ուտեք զանուանս
կոտորածոց, զբստմնելի անուանս զայ-
նոսիկ. չէք ուստեք դոռ մարտի յարու-
ցեալ՝ զբրիստոնէական խաղաղութիւնն
վերդովել։ Արդ փոխեալ թուին դարք և
բարք. յաշխարհի սէր թագաւորէ՝ և ոչ
հեռ. հեղութիւն՝ և ոչ բարկութիւն
կամ հալածանք։

Այլա՞ որպէս, եթէ լսէք ձայնի նոր
դրագիտաց մերոց՝ հալածիչ է եկեղեցի.
ողորմագին տառապեալք են մանկունք
եկեղեցւոյ նուաճեալքն և հնազանդ-
եալք եկեղեցւոյ, և երկաթի լծոյ օրի-
նաց նորա, որ ծանրացեալ՝ի վերայ՝ ասա
նոցա մեծապէս բաղձալ աղատութեան,
որ ամենայն երջանկութեանց է աղբիւր։

Եկեղեցի՞ն. և ե՞րբ փոխեաց արդեօք
զիւր բարս և զբնաւորութիւն։ Յո՞ր-
ջամի ժամանակաց հետէ թշնամի դար-
ձաւ որդւոց իւրոց՝ զորս խանդիւ սի-
րէր։ Հնարք ուրեմն են սոքա, և գիւտք
թշնամեաց նորա։ Այսպէս է հրեշն օ-

տարալուր, զոր անպատմելի կոչեցի։

Թէ նամիք եկեղեցւոյ կամին յաչաց հաւատացելոց հանել զնա. անարգանօք հային 'ի կամաւոր միութիւն, 'ի յոգն նուիրական, որ 'ի վեր ունի և զօրաւ ցուցանէ զնոյն իսկ հաւատս. յայն հըլու հպատակութիւն հաւատացելոց՝ զոր ունին առ հովիւս ... որ պահապանն են կարգիս այսմիկ և ուժի, զի բարձցեն 'ի բաց զհերձուածս և զանմիաբանութիւն։ Յայն քաջայարմար միութիւն՝ որ պահէ զեկեղեցի յիւր վիճակին հաստատուն, որպէս եղև յերանելի ժամանակսն, յորժամ միաշունչ և միաբան էր ամենայն բերան, և պակասութիւն չէր հրաշալեաց,

Այս չէ ինչ 'ի զարմանալեաց սակի. այլ զի և քրիստոնեայք՝ յիւրումն ծընեալք գաւթի, և աճեցեալք սրբովք խորհրդովք սորա՝ երկնեն հակառակութիւնս ընդդէմ նորա. այս է զարմանք անհաս 'ի մտաց. թէ էր ասա 'ի սոցանէ՝ զոր՝ կարէաք 'ի հարցփորձ մատչիլ առ նա

զայս օրինակ։ Օ՛ր ինչ վնաս ընկալար դու
'ի գթած սիրուն մօրէս. որովք վշտաք
հալածեաց զքեզ. նա զքեզ յաստուածա-
գիտութիւն յորդորէ և յանձին ծանո-
թութիւն, տալ քեզ երանելի կեանս 'ի
սմին՝ և 'ի հանդերձեալ յաւիտեանսն.
բանիւն ճշմարտութեան բուծանէ ըզ-
քեզ, ճարակս փրկութիւնագործս պատ-
րաստէ քեզ, զբոյսս մոլեբոյս թունաբերս
քանցէ 'ի քէն։ Ո՛դնի կարճնովին ջնջել
յաշխարհէ զչարախտավատ զեղխութի՛
վնասաբեր հոգևոր բարւոյ և ժամանա-
կեայ շահու քաղաքական ընկերութե։
Այ՛ է՝ որ ապահովէ և պաշտպանէ զիշ-
խանութիւն աւադայ ընդդէմ խորա-
մանկութեան ժողովրդեան. պաշտպանէ
և ժողովրդեան 'ի մոլեգին զրկանաց իշ-
խանայ. ընդ շաւիղս առաքինութեան
առաջնորդէ քեզ 'ի կեանս. ընկերէ 'ի
մահուն իբր փեսաւէր տանել զքեզ առ
երկնաւոր փեսայն։ Այսոքիկ են, որք ոչ
ըստ քո կամայ են. այս պատճառք են
սրտնեղայ քո։ Ընդ այս ցաւի, նա և յար-

տօսր ցնդի. «Որդիս ծնայ, ասէ, և բարձրացուցի. և նոքա զիս անարգեցին». Յոայ. Ա. 2։

Գիտեմք, զի ասէք սիրել զեկեղեցի և յարգել զնա, այլ որպէս էր յերջանիկ ամսն առաջինս։ Գիտեմք, զի ասէք հաւատակիցնմա ըղձիւ տեսանելոյ զնորոգութիւն նորա։ Այլ եթէ դիտուցն մտայ ձերոց ուղիղ է, առ իմէ՞ այդպիսի թիւրութեք միջոցք. եթէ ձայն Յակոբուն է՝ ի ձեզ, զինքդ զԵսաւայ ձեռս շօշափեմք։ Յեթէ սիրտ ունիք բարեկամի, զինքդ բանք ձեր բանք են թշնամւոյ։

Այլ այս ամենայն չէ՛ ձեզ՝ ի կշտամբութիւն, Աստուած պահեսցէ զձեզ սիրելիք, այլ՝ ի լուսաւորութիւն. զի մեզ արժան է յաւելուլ՝ ի բանքս և զանուանս Լուտերի ուրուցն և Կալվինոյ։ Յս նոքա պարծէին մաքուր լինել. կամէին նորոգութիւն, այլ ատելութիւն էր՝ ի նոսա՝ և ոչ սէր, որ հղօրիչ էր նոցա տապալել զեկեղեցի։ Այլ թէ որդիք էք եկեղեցւոյ՝ ընդէր զանայք հա-

տուցանել զոր պարտիք նմա, տառապե-
ցուցանէք զպաշտօնեայս նորա. խոչ ար-
կանէք ընդդէմ խորհրդական հրահան-
գացն. ապստամբէք յիշխանութենէ նո-
րա. արհամարհէք զնա 'ի մէջ ժողովուրդ-
եան. ընդէ՞ր կան տակաւին 'ի մէջ ձեր
վարդապետութիւնք դատապարտեալք
յեկեղեցւոյ, առ 'ի մէ՞ջ։

Գիտեմք, զի ձեր այս է արդարացու-
ցանել զանձինս. «Գնացք եկեղեցական-
» նաց՝ զորս այսչափ 'ի յարգի ունիք և
» պատուէք մեծապէս. նորանշանք են
» ամենևին և ըստ այժմու սովորութե-
» յարդարեալք, ոչինչ 'ի նախնեացն սո-
» վորութենէ անվթար պահեալք»։ Այ-
մեզ չէ՞ն կամք մխտել զայս. զի են և 'ի
մէջ եկեղեցականաց զեղծք բարուք, որք
զբարս ապականեն, և զպաշտօն իւրեանց
անպատուեն։ Այլ ընդէ՞ր սակաւուց
յանցանք՝ ամենեցուն ընծային միապէս։
Անիրաւութիւն է զամենայն ամուսնա-
ցելոց շնացողս ասել, իբր զի այնպէս
են ոմանք. զվաճառականս ագահս համ-

բաւել, զի ապահ են ոմանք 'ի նոցանէ։

Այլ օ՛ն անդր, այս ամենայն ձեր մատցենոյց խաբկանք են. կարգաւորք մարմնազեղջք՝ չեն այնչափ յոգնաթիւք, եթէ ոչ յաւելցին 'ի թիւ նոցա և դասալիք քն և վտարանդիք, և որք այնպէս կարծեցուցանեն զանձինս կեղծեօք։

Ո՛չ այնչափ յոգնաթիւք են՝ եթէ կամիջիք համեմատել ընդ նոսա, որոց վարք օրինակ շինութեան է այլոց։ Զե՛ն այնքան, եթէ և զպակասաւորս յայն թիւ ոչ հաշուեսջիք. ամենեքեան պակասաւորս խոստովանիմք զանձինս, այլ և աշխարհականաց իսկ հարկ է զանձանց զնոյն խոստովանել. "Յառանգաւորք սուտք, և հաւատացեալք սուտանունք" ասէ սուրբն Օգոստինոս։

Ո՞վ եմք մեք, զի չիցէ 'ի մեզ տկարութիւն և կարիք՝ մարդկայինք. և զի՞նչ զգեստ արժան է որդւոց Ադամայ առնուլ զանձամբ 'ի քօղարկել զիւրեանց թերութիւնս։ Այլ թէ մի առ միով ըզթերութիւնս եկեղեցականաց 'ի համար

արկանէք, ընդէր ոչ նոյնպէս և զնոցա առաքինի գործս, զառաքինութիւն նոցա՝ որք ըստ պահանջել գթոյ պատրաստք են ամենայն ուրախութեամբ խորհուրդ տալ՝ որում 'ի գահոյս է բազմեալ, և քաջալերել զաղքատ առ կախաղանաւ. մնանել միապէս 'ի մեծաշուք դահղիճս՝ և յանարուեստ խրճիթս. յայց ելանել մեծափառ տիկնայց և պայծառ աստղոց 'ի տիրական ապարանս նոցա, և հիւանդաց 'ի չարահոտ անկեալանոցս, և բանդելոց 'ի մթին կապարանս։

Լիթէ ոչ պակասաւորք միայն, այլ և քան զամենայն վատշուէրք ոմանք էին ոմանք յեկեղեցականաց, հիմ զզառանցանս նոցա՝ որք ձայնի եկեղեցւոյ ոչ լսեն, 'ի վերայ արկանել եկեղեցւոյ մօր՝ որոյ ապաշնորհ որդիքն են։ Ի պաշտօնէ նոցա է յայդ ոճիրս անկղխանալ դոցա, հաւանի ընդ այն եկեղեցի։

Ի տան Դաւթի ոչ պակասին պագշոյք ըստ Ամնոնին, և ոչ ստահակք ըստ Աբիսողոմայ. այլ զի՞նչ վասն այնորիկ։

Տեսանի 'ի յանդս ընդ ստոք հասկին՝ և որոմանն աՃել, այլ անհոգանայ արդեօք քաղել զայն. ոչ ձեռս զգաւաղանաւ արկանէ պատժել զչարագործս առանց ուժեք բողոքելոյ։ Այլ յայնժամ ապա բանայք զբերանս ձեր նախատել զմեծ անգթութիւնն զչարագործն պատժելոյ։

Ապա միաբանեցարուք և դուք ընդ նմա. հայեցարուք 'ի սրբազան եղանակն որով յիւրեանց պատշաՃեալ պաշտօն հրաւիրէ զզարտուղեալսն։ Յայնժամ տեսջիք զայնոսիկ՝ որք ոչն այնպէս գնան. զայնոսիկ որք կեան որպէս զեկեղեցականս, կենցաղին ըստ նախնի աւանդից։ Զի բաւական անուն և զգեստ կրօնաւորի և եկեղեցականի՝ նախատել ձեր զնա, և յառակս առնուլ զնա, իբրև բարձրայօն ոմն 'ի մարդկանէ, և փարելի ամենեցուն։ Այլ առ նոսա՝ որ ըստ նորա հընար աւանդից գնան, և 'ի շաւղաց գլուխաւորաց իւրեանց խոտորին, ակնածութի՞ ինչ առնել արժան է 'ի շնորհս լաւոյ։

Քանի՞ յանցանս եթող Աստուած 'ի Սողոմոն և 'ի Ռոբովամ 'ի շնորհս Դաւթի՝ որոյ տոհմին շառաւիղք էին։ Այլ դուք խորհեցեալք թէ այնպիսիք ոմանք են որպէս դուքդ կամիք՝ յորժամ 'ի նըստաստ ձեր միանան, ակն ածէք նոցա. և միայն այսու հաճելի լիցին ձեզ՝ յորմէ վիճակ նոցա կախեալ կայ։

Այլ ինձ 'ի զուր են այս ճգունք, և դուք հաստատուն կայք 'ի խորհուրդս ձեր։ Այկեղեցականք անօգուտք են ասէք, մանաւանդ բեռինք են տէրութեանն և գերդաստանաց։ Զի՞ այսպէս, բարի. նոր դար սկսցի. 'ի միում վայրկենի եկեղեցականք 'ի կենաց կարձեսցին. ջնջեսցին միանգամայն 'ի դպրութենէ կենաց։ Ահա երկին նոր, և երկիր նոր։

Զարհուրիք 'ի բարբառոյս լաւաբարոյ և երկիւղած անձինք։ Այլ և դուք թշնամիք եկեղեցւոյ, և դուք շուարիք ընդ խորհիլ իսկ չմնալ աշխարհի առանց եկեղեցականաց։ Այս արդարև որպիսի

անշքութիւն 'ի սուրբ տաճարս։ զիարդ դատարու�մն աստուածային սաղմոսերգու պաշտամանց՝ որ 'ի առնջեան և 'ի գիշերի։ որչափ նպաստից նահանջք 'ի գոհութեան խորհրդոյն առնջեցեալ։ որպիսի՞ դատարումն աղօթից, պահոց, տքնութեանց, և մեռելութեան անձին, զոր Նազիանզացին քաւութիւնս կոչէ աշխարհի։

Որ ընկալցի զնորածին մանկունս ձեր յեկեղեցի՝ ջրով մկրտութեանն։ ով կրքութեացէ զմանկունս, ուսուցցէ և երաւխայացուցցէ։ Որ արձակեցէ 'ի մեղաց։ ով մխիթարեցցէ զձեզ 'ի վիշտս։ Այս որ մեծն է, ով հաստատեցցէ զձեզ 'ի վերջին շունչ կենաց ձերոց։ Քանի՞ աթոռք համր լինին 'ի համալսարանս։ քանի՞ բեմք լռեն յեկեղեցւոջ։ քանի՞ պաշտպանք եկեղեցւոյ 'ի միում վայրկենի կորուսանեն զեկեղեցի, զկրօնս, և զվիճակ անձանց։ Այս հերետիկոսութիւնն յոխորտ և ահեղագոչ 'ի մոլորեալ գաւառս՝ ոչ լինիցի արդեօք դշխոյ և թա-

գուհի, գրեթէ ոչ ուրուք լեզուի գտա-
նելով որ վիճիցէ ընդ նմա, և ոչ գրչի՝
որ եղծ զնմանէ գրիցէ։ Անօգուտ են
կրօնաւորք, և կեան միայն առ 'ի ծան-
րութիւն թագաւորութեան և գեր-
դաստանաց։

Ընթերցարուք զվէպս մօտաւոր ժա-
մանակաց։ Որք 'ի հակառակութիւնս
կուսակից գտաւ տէրութեան, 'ի կշիռ
եդեալ զանձն և զկեանս, բայց թէ ե-
կեղեցականք՝ անլուր օրինակաց սիրոյ և
հաստատութեան։ Դէնուա և Վենետ-
կոս միշտ գիտակ են այսմ, և են հատա-
րակաց արձանագիրք՝ որք պատուեն զը-
մեսիրս և բարձրացուցանեն զյիշատա-
կըս եկեղեցականաց յաղագս քրիստո-
նէական սիրոյ նոցա, զոր բոլորանուէր
ընծայեցին յօգուտ տէրութեան։

Այլ անօգուտ են եկեղեցականք, ոչ
ինչ յարգի են նոքա յաչս ձեր. քանզի
և հոգևորական բարիքն՝ որոյ են նոքա
մատակարարք, (զի արժան է մեզ համար-
ձակ ասել, և հաստատել ճշմարտութի-

մի՝ որ անհաճոյ է ուղղութեանց,) անարգ համարին առ ձեզ։

Եթէ փոխանակ աղօթից, խորհրդոց, քարոզից, և այլոց ջերմեռանդական սընընդոց՝ տային ձեզ զիւրեանց եկամուտս, զպարգևս և զհասոյթս, լեալ այսու ճարտարք ոչ 'ի խնամել և յանձանձել հոգևորապէս զաղքատս Յիսուսի Քրիստոսի. արդարև լինէին նոքա լաւագոյնք ոմանք, բարեբարոյք և բարեացապարաք տէրութեան, բարեկամք ազգի մարդկան, և շնորհապարաք ընկերական առաքինութեանց, և առ ձեզ յոյժ սիրելիք և արդոյք։

Այլ եթէ այսչափ յարգէք զժամանակաւոր բարիքս՝ սիրեցէք զեկեղեցական։ Նոքա աղօթիւք իւրեանց հեռի առնեն 'ի ձէնջ զսով, զժանտամահ, զողողել ջուրց, զերաշտութիւն, զասասնութիւնս երկրի։ Նոքա ընդունին զԱստուծոյ պտղաբերութիւն անդոյ, յաջողութիւն վաճառաշահութեանց, խաղաղութիւն 'ի տունս, յաղթութիւն

թշնամեաց, առողջութիւն հոգւոց և մարմնոց։

Այս ոմն ելեալ ինչ ի ձէնջ որ կարիցէ կեալ առանց այսպիսում միջնորդի։ Զմ օգուտ էր բաշխել զիւրեանց ժամանակաւոր գոյս ի ձեզ՝ փոխանակ ի ճշմարիտ աղքատս սփռելոյ։ Այլ միայն ի մաստուն եկեղեցականք օգտաւէտք ընկերութեան և տերութեան՝ խոնջք և տաղտկացեալք տեսեալ զձեզ՝ այդպէս հեղգս ի վաստակոցն փոխարինութիւն՝ ըստ ցեն զզբաղմունս կենցաղական գործոց, և պարապեսցին միայն անդադար կենաց, յիրքան բարեաց գտանիք զուրկքք։ Այլ այսպիսի փցուն գաղափարք դադարեսցին։

Արի պարտասեալդ Հեղիաս, և քաջալերեա զոգիս կթուցեալս. մի վհատեցուսցէ զքեզ թշնամի անդոր. պատերազմեա զպատերազմ ցեռուն։ Տակաւին կշտամբին եկեղեցի, պաշտօնեայք նորա, եկեղեցականք, վանականք, նա և աղնուապաշտ որեարն, հանճարեղք,

նախանձաւորք, և անվաստակք 'ի գործունէից՝ որք վասն ձեր աշխատին։

Այլ մեք սիրեսցուք զձեզ, աղօթս արասցուք վասն ձեր, աշխատութիւն վասն ձեր յանձն առցուք. եթէ օգուտ ինչ է՝ և զանձինս մեր դիցուք 'ի վերայ ձեր։ Եթէ հնար է՝ գնեսցուք քանու

և իցէ զձեր փրկութիւն։ Զմենայն խորհուրդ, խնամ և գործք վասն ձեր եղիցի։ Ի ձեր սակս վաստակեսցուք զամիս և զգիշեր յեկեղեցիս, յաղօթարանս, յատեանս, 'ի խոստովանութեան վայրս, 'ի դպրոցս, 'ի բանդս, յարգելանոցս։

Այս խորհուրդք են և բանք անխոնջ գործաւորաց եկեղեցւոյ. և կեանք մեր սիրելի լիցի մեզ 'ի ձեր սակս և եթ։ Ցաւեսցուք՝ եթէ կարձեսցի, միայն վասն այսորիկ՝ զի ոչ կարեմք ընդ երկար ժամանակս օգնել ձեզ։

Այլա խաղաղեցէք 'ի վերայ մեր լեզուաւ կատականաց. զերծէք զհամբաւ մեր 'ի մէնջ դրչաւ ճարտար մատենագրի. առէք 'ի մէնջ զինչս մեր և զպա-

տիւ, և տուք ընդ այնոցիկ փոխանակ լինել մեզ առակ և այպն կատականաց. «Ծաղր նախատանաց վասն քո». Ա. Սակ. Ժ, 70։

Ընդ այսր ամենայնի ոչինչ ՝ի խրախուրդս մեր երկնեմք բանս ատելութեան կամ վրիժուց. այլ մանաւանդ առաւելութեամբ զաղօթս մեր, զի մի բարկացեալ Աստուծոյ պաշտպան լիցի մեզ, և հեղցէ ՝ի վերայ ձեր զանօթս բարկութեան իւրոյ։

Այս է մի միայն տրտմութիւնն, որ խաւոմէ զմեզ։ Վասն ձեր և հալածիչ՝ ուրախութեան մեզ իրք են, նմանողս եղեալ օրինակին մերում Յիսուսի Քրիստոսի, որ հալածեալն լինէր։

Այլ այս որ տրտմեցուցանէ զմեզ՝ վասն ձեր է, վասն ձեր՝ որք անձանց ձերոց մատնիչ լինիք. և դաւաճան էք գոյից ձերոց, ևս և ժամանակէից, և աւաւել ևս հոգևորին և փրկարարին։ Վասն ձեր՝ որք թերևս գրգռէք ՝ի վերայ ձեր զդատաստանն Աստուծոյ,

զոր Տեր մի արասցէ. և 'ի մէջ այսոցիկ կորուսանել զմեծ և զամենապատիւ յարգն՝ որ է 'ի ձեզ՝ անդամ լինել եկեղեցւոյ։

Ապաքէն վասն ձեր Թուին լինել այն դառն կսկիծքն՝ զոր նոյն ինքն եկեղեցի յայտնէ և հրատարակէ զԹախծագին արտօսր իւր։ Այս՝ ասէ, որ յայսքան գլուխս մարտից պաշտպանեցայ 'ի Թշնամեաց, և մեծաւ ցաւով Թողի նոցա զանարգանս նոցա և զնախատինս. այժմ 'ի խաղաղութեան տեսանեմ զնմ երախտաւորեալ բարեկամս, որոց սիրտ լի է անհամեմատ դառնութեամբ. "Ահաւասիկ 'ի խաղաղութիւն դարձաւ դառնութիւն իմ". Յովհ. ԺԸ. 17։

Իւռնարդոս է որ 'ի բերան դնէ ըղբանս զայսոսիկ։ Ինձ դառն եղև ցաւն զոր կրեցի, յորժամ անգթութիւն բընաւորաց հեղոյր զարիւն վկայից իմոց. "Դառնացայ 'ի ապանդ վկայից"։

Դառնացաւ ինձ կսկիծ 'ի պատերազմունս՝ զոր հերետիկոսքն յարու-

ցին՝ որք զմիութիւն իմ բաժանեցին. «Դառնացայ 'ի մարտս հերետիկոսացս»։

Այլ թէ բռնաւորք թէ հերետիկոսք եռուն ինձ ցաւ դառնակսկիծ, ապա առաւել ծանր է ինձ ցաւն՝ որ յընտանեաց իմոց, որ 'ի բարեկամաց իմոց 'ի խաղաղ ժամանակի։ «Ահա 'ի խաղաղութիւն դարձաւ դառնութիւն իմ»։

Ի սոյն պայքար խորհրդոց և գործոց զինչ արդեօք եղիցի կատարած վիճին. աւաղ ինձ, գիտեմք՝ զի ոչ պակասին հաւատք ցկատարած աշխարհի. և դրունք դժոխոց ընդ նմա դէմ յառնել ոչ իշխեսցեն։ Այլ ոչ գիտեմք թէ այս այսպէս և'ի ձերում միջի հաստատեսցի։ Անաւանդ թէ համբարձցուք զաչս մեր տեսանել ընդ ամ աշխարհս, և խորհիլ զաւուրսն զառաջինս։ Տեսանեմք՝ զի այս հաւատք 'ի միոջէ յայլ հարստութիւն էանց, 'ի միոջէ յայլ գաւառ. յեղիպտոս բուղջեցաւ, այլ ապա ըստ Դաւթի 'ի Պաղեստին փոխեցաւ. «Այդի յեղիպտոսէ փոխեցեր»։ Սաղմ. Հթ. 9։ Օ՝աղկե-

ցաւ յեբրայական տղին, այլ առ հեթանոսս անց. «Դառնամք 'ի հեթանոսս». Գործ. ԺԳ. 46։ Օ՛ աթոռ իւր յարևելս եդ, այլ՞ գիտէ ցորչափ ժամանակս կացցէ ասա կամ այլուր։

Ո՞վ եկեղեցի սուրբ. ո՞վ յարգոյ սեղանք. ո՞վ գերափառ արձանագիրք կրօնի. այլ աղէ՛, հեռասցի աղետաւոր այս յիշատակութիւն, և մի՛ ամբոխեսցէ զաւուրս հանդէս։ Լ՛ կայք լաւաբարոյ հոգիք, Ջերմեռանդն քրիստոնեայք՝ սիրողք բարութե՛ մօր ձեր սուրբ Եկեղեցւոյ, յաւուր յայսմիկ՝ յորում՝ յիշատակ լինի մեծի գործոյն կատարման՝ որ առ 'ի մարդկան փրկութի։ Նորոգեցէ՛ք զուխտն՝ զոր եդին հաբք ձեր փոխանակ ձեր յընդունելութեան ժամու անդ ջրոցն մկրտութեան, զայն՝ զոր դուք նորոգէք 'ի նորոգ դաւանել ձեր զհաւատոյ խոստովանութիւն. զուխտն օրինաւոր և անբռնադատ հաւատարմութեան, և գթոտ և խանդակաթ սիրոյ առ սուրբ Եկեղեցի։

Եւ դուք՝ որ մինչև ցայժմ տառապեցուցիք զբաղմագութ մայր ձեր զԵկեղեցի, այս եկայք և դուք յանդիման լինել Քրիստոսի յարուցելոյ, որպէս եղբարքն Յովսեփայ յանդիման եղեն Յակոբայ ցուցանել նմա զարիւնաներկ ըղգեստ որդւոյ նորա և եղբօր իւրեանց՝ զոր նոքա վաճառեալ էին 'ի գերութի. որպէս Յովսէփ դեռ շաղախեալ 'ի ջերմ արիւն Աբիսողոմայ՝ առաջի եկաց Դաւթի, յանդիման նորա՝ որ յարեաւն այսօր 'ի տապանէ գերեզմանին, որ կրէ ընդ իւր 'ի յարութեան իւրում զնշանակս վերայ իւրոց 'ի հաստատութիւն հաւատոյ։ Ընդմարթ է ձեզ յայնժամ անփոփոխ ունիլ զմիտս ձեր և զսորհուրդս. չթողուլ զհոգի հալածանաց. ըզգենուլ նոր ոգի քրիստոնէական եռանդեան և որդիական գթոյ առ Եկեղեցի, որպէս զառաքեալն Պօղոս՝ որ 'ի հալածչէ եղև նմա պաշտպան հզօր և նախանձաւոր. որպէս զի ընդ նմին Պօղոսի կարասջիք արդահատել զանձինս

յանկեղծ խոստովանութիւն. “Հալա-
ծեցի զեկեղեցին Աստուծոյ . . . այլ
առաւել . . . վաստակեցի ”. Ա. Կորն.
Ժ. 9, 10։

Ի ՍՈՒՐԲ ԿՈՒՍԱՆՍՆ

ՃԱՌ Ա.

Ի ԲԱՆՆ

«Եղիցին ձեզ քարինքս այսոքիկ 'ի յիշատակ 'ի մէջ որդւոցն Իսրայէլի մինչև ցյաւիտեան». Յեհ. Դ. 6։

Ի ՀԱՅԵԼՍ իմ 'ի քեզ՝ սուրբ հարսն Յիսուսի Քրիստոսի, 'ի քննել ըղձաեղին ուստի եկիրն, յոր գտանիս, և ընդէր, զարթնու 'ի մեզ տիպար և յիշատակ ընտրեալ ժողովրդեան Տեառն. որ նախ մոլար և վարատական յանքնակ և յանկոխ ճանապարհս յանապատին, ապա ուղղեալ զգնացս յերկիրն Աւետեաց. և հուսկ ուրեմն 'ի Յորդանան գետ հասեալ, և եդեալ անդ զխորհրդական քարինսն, երդուաւ նոքօք ուխտ ընդ Տեառն իւրում ասելով. «Եղիցին քարինքս այսոքիկ 'ի յիշատակ 'ի մէջ որդւոցն Իսրայէլի մինչև ցյաւիտեան»։

Եւ արդարև չիցէ՞ ճշմարիտ, զի յետ փոփոխ պէսպիսութեանց հուսկ ապա այսօր զսուրբ ուխտն զայն երդուայք, որ սնդէ զձեզ քաղցր կապով ընդ սրբոյ կրօնիցն, և իրաւունս ընտանութեան և միաւորութեան տայ ձեզ ընդ Տեառն ձերում։

Դարձուցէք, դարձուցէք զաչս ձեր 'ի խաղաղնաւահանգստէ այսի՝ յոր խաղիսխ արկէք, 'ի մրրկածուփ կենցաղս յորմէ անցէք։ Ահաւասիկ աւ ձեօք են ծովեզերեայք ալետանջեալք յաշխարհէ, որ զհետևողս իւր խորասոյզ առնէ։ Տեսէք, զի՞նդ եղկելիքն խաղան ընդ ալեաց հեշտութեան, փառաց և յաջողութեանց. և դուք խաղաղ միայեալ էք ընդ Աստուծոյ՝ որ զպատարագս ձեր ընդունի, և խոստանայ ձեզ անվրդով խաղաղութիւն ընդ հովանեաւ խնամոց իւրոց։

Վասն այսորիկ ցնծացէք անապակ ցնծութեամբ. և այժմեան զուարթուն և կայտառ վիճակ ձեր բացցէ զլեզուս ձեր 'ի գովութիւն և յերգս Տեառն։

Լրա զի այս ցնծութիւն մի ամուլ մը-
նասցէ, ամենեքեան դուք մեօք հան-
դերձ ուշի ուշով հայեսջիք միով հայե-
ցիւք ընդ համօրէն պարտիս ձեր, որք
անլոյծ հանդուցիւք ընդ Տեառն կապեն
զձեզ, որպէս զի մեծ ևս արժանաւո-
րութեամբ և դուք յեղյեղօջիք ընդ
իսրայէլեան ժողովրդեանն ասել. «Լրզի-
ցին», և այլն։

Նոքիմբք խորհրդական քարամբք երդ-
ուաւ ժողովուրդն Իսրայէլի անապակ
պահել զօրէնս Տեառն, որ այնչափ ե-
զանակօք բարիս ուղերձեալ էր նոցա.
երդուաւ այլ ոչ ևս դնել ուխտ ընդ կր-
ռապարիշտ ժողովրդեան, և միշտ հրա-
ժարիլ 'ի սուտ աստուածոց նոցա, և կը-
նիք երդման եդ զյաւիտեանն ցուցա-
նել զանսեղլի հաստատութիւնն։

Արդ և դուք ըստ նմին օրինակի հար-
կիք 'ի պահպանութիւն օրինաց ինչ.
յօրէնս աղքատութեան, որ յամենայն
'ի կենցաղականացս մերկէ զձեզ և զա-
տուցանէ։ Յօրէնս ողջախոհութեան,

որ արդելու 'ի ձէնջ զամենայն ազգ հեշ-
տութեան անխտիր։ Յօրէնս հնազան-
դութեան, որ զձեր կամս ընդ այլոյ կա-
մաք նուաճէ։

Պահպանութիւն օրինացս ոչնիւթա-
կան ճշդութեամբ պահանջի 'ի ձէնջ,
այլ մաքուր հոգւով կրօնաւորական կա-
տարելութեան. վասն այսորիկ աղքա-
տութիւնն զոր բաղձամբ կրեն ըստ բը-
նատուր բերման, պարտի լինել 'ի ձեզ
'ի կամաւոր հրահանգս տուաքինութե-
նէ, զոր այլք քամահեն, զի զառաձանէ ըզ-
մարդ, և ընդ համբաւ նորա բաղխի.
դուք պարտիք անարդիլ, զի այնպէս հա-
ճոյ լինիք յաչս Տեառն։ Այն զոր թա-
գուցանեն մարդիկ յաչս աշխարհի, և
ամաչեն ընդ այն՝ ուր ոչ գոյ ամօթ զօ-
րէն գեղջկաց, զայն արժան է յայտնել
ձեզ, ընդ այն պարծել, ընդ այն ցնծալ
և ուրախ լինել, և 'ի նա հաստատել
զամենայն գոյս ձեր, և զՀոխութիւն.
և ընդ սուրբ հօրնդրիգորի ասել. "Այս
իմ Հոխութիւն. այսոքիկ զիս ոչ փա-

ռաւորս միայն արասցեն, այլ և մեծաւ փառս »։

Ողջախոհութիւնն՝ որ 'ի համեստ ինչ ժուժկալութիւն պարտաւորէ զայլս, և 'ի չափաւոր հրաժեշտ, առ ձեզ զայն խստութիւն վարուց աղդել արժան է, որք ապահովի արասցեն զձեզ յանձանց վտանգէ, և յաչս այլոց բոլորովին անկասկած։ Յուշ առնել արժան է ձեզ քաջապինդ խնամովք հոգալ քանցել 'ի մտաց զամենայն խորհուրդս զաղրութեան, որ յանդգնի մտանել 'ի միտս ձեր և թափանցել 'ի խորս սրտից ձերոց, որով իւրաւամբք ասել կարասջիք, թէ կայք « Ի մարմնի անմարմնաբար »։

Հնազանդութիւնն՝ որ յայլս զյատուկ կամս իւր ծառայեցուցանէ այլոց կամաց, պահանջէ 'ի ձէնջ և կամակար յօժարութիւն հետևել կամաց մեծին ձերում, իբր այն թէ՝ նորա կամին գրելխովին՝ ձեր իցէ։ Անկեղծ և անքօղ պարզութիւն խնդրի, զի զձեր յօժարութիւս առանձնաւորս անտեսաբար լքեալ, և

զանօգուտ հետաղօտութիւնս և զանվայել քրթմնջիւն և զընդունայն և ըզսուտ ջատագովութիւնս յանձանց հեռի արասջիք։ Խնդրի՝ զի «Մի առ հարկի և տրտմութեամբ». որպէս ասէ առաքեալն. Բ. Կորն. Թ. 7. այլ անկեղծութեամբ և զուարթամիտս. ոչ հեստութիւն և յակամայս՝ այլ կամակար յօժարութեամբ և խոնարհութեամբ՝ 'ի կամս Աստուծոյ լինելով ապաստան՝ հըրամայելոցն ձեզ պատրաստ եղիջիք ինքնին հնազանդել, զի կարիցէք ասել ընդ մարգարէին Դաւթի. «Յս կամօք իմովք պատարագս մատուցից քեզ». Սաղմ. ԾԳ. 8։

Յրդուաւ իսրայէլեան ժողովուրդն թշնամի լինել կռապաշտից, և դուք երդնուլ պարտիք 'ի կենցաղականացս ամենայնի հրաժարիլ քնաւ։ Յս արդարև այլով իւիք ոչ է հնար ձեզ անփոփոխ պահել զօրէնս և զուխտն՝ ճշմարիտ հաւատով կրօնաւորական կատարելութեան, բայց եթէ վահանաւ այսր անկրկետու-

թեան։ խարոյ՝ զոր նախ պարտ է դնել ընդ արտաքինս և ընդ զդալիս աշխարհիս այսորիկ։ «Ահա արձան, զոր հաստատեցաք ընդ իս և ընդ քեզ»։ ասայ երբեմն Լաբան առ փեսայն իւր Յակոբ։ Օնդ։ ԼԱ։ 81։ Ահա քարինք նշանակք սահմանաց մերոց, բաժանել զամենայն ինչ զմեր, և զմեզ իսկ գլխովին։ ոչ այլով իւիք կանգնել կարէք ընդ աշխարհի դէմ իբր կամաւ յաղթական զձեր խոստովանութիւն և ասել՝ «Ահա արձան»։ Ահա վէմ, որ զիս 'ի ձէնջ որոշէ, և առ հրապոյրս քո անաղդակ առնէ զիս և առ հրաւէրս քո ծանրալուր։ «Ահա արձան»։ Այլ իբր բրտութիւն ինչ համարի այս վեմ կոթող յիմաստնոց աշխարհի, որք հոգևորին անճաշակք են, այլ յարգի է առաջի Տեառն, որ արդար է ճանաչել և խելամուտ լինել գործոց մարդկան։

Այլ 'ի լուսն խարոյիս՝ խնդրի և անջրպետ ներքին, որում չեն շատք պարիսպք մենաստանին ձերոյ, այլ պիտի հոգի՝ յորոյ 'ի ձեռին լցէ ամենայն ցան-

կուԹի սրտից։ Ինձ կարի յարմարուԹիւն առ տեղեաւս յուշ եկն. զի Եսայիաս 'ի մարգարէական հոգւոյ աղդեալ գուշակեաց առ Իսրայէլացիս նուաճեալս և հալածեալս 'ի ձեռս Եգիպտացւոց, ընդդէմ հակառակ կալ նմա ամենայն պիղծ կռոցն հեԹանոսաց. «Եւ շարժեսցին ամենայն ձեռագործքն Եգիպտացւոց». Եսայ. ԺԹ. 1։ Եւ ինձ զիաՀրդ հնար էր, բայց Թէ մարգարէական հոգւոովն Եսայեայ և առ 'ի նոյն միտս ճշմարտուԹեան գուշակել ձեզ, Թէ նա և 'ի սուրբ լուսուԹեան վանական առանձնուԹեան, և 'ի կանոնական պահպանուԹեան միակեցական վարուց արտաքոյ ամենայն զգուշուԹեանց սպրդեսցին մայեն 'ի ներքոյ դրօշուածք ձեռագործք Եգիպտացւոց, փորձ փորձել զձերոյ արուԹիւն։

Ձեռագործք են Եգիպտացւոց՝ ոգի հակամիտուԹեան 'ի մի կողմն, և օտար ոգի հակառակուԹեան առ այլ։ Արդ՝ շարժեսցին այսքիկ 'ի սիրտս ձեր։ Ձեռագործք Եգիպտացւոց են սէր լինելոյ

նախագահ զայլովք, և դժկամակել առ
'ի հնազանդութիւն. և այսոքիկ շարժեսցին։

Այս է ահա տեղին՝ ուր արժան է ձեզ զամենայն ձեր ոյժ ունել ամփոփ. յուշի ունել զձեր ուխտ ոչ երբեք մերձենալոյ 'ի կուռս զաղբոտիս՝ որ մտանէ 'ի մենաւոր առանձնութիւն վանայ ձերոյ, այլև 'ի սիրտս իսկ ձեր։ Ուստի «Խարձէք 'ի միջոյ ձերմէ զԱստուածս օտարոտիս». Յեսու. Իդ. 23։

Յողովուրդն իսրայելեան կնիք եղուխտին զյաւիտեանն՝ առ 'ի ստուգել զանջրելի տևականութիւնն։ Այժմ և ձեզ զայն հարկ է հաստատել անկեղծ հաւատարմութիւն հաստատուն մնալոյ ընդդէմ փորձութեանցն 'ի վերայ եկեալոց։ Այս առ ինչ արժիցէ առնացի աշխոյժք ձեր ընդդէմ նեբքին ախտից, եթէ դարձեալ յարուսցեն նոքա 'ի սիրտ՝ մարտ դոռ և դժնդակ։ Այս իմի՞ յաղթութիւնք այնքանեաց արտաքին թշնամեաց, որք ոչ ի առնուն կրկին բաղ-

խիլ ընդ ձեզ։ Հիմ անընդմիջահատ զե-
նաւորութիւնք կրօնաւորական կենաց,
եթէ ոչ անյեղլի կնքեսցի արձանագիր
ուխտին՝ հաստատուն յաւիտենիս։

Եթէ Ժողովուրդ Տեառն անդ ու-
բեմն յերիւթրեան ծովու, որ յամոք
ճանապարհ ընծայէր նոցա ապրիլ 'ի
սարսափելի բարկութենէն փարաւոնի՝
որ զհետ պնդեալն էր հալածել զնոսա,
երկուցեալ ընդ տեսանել աղի կոհակաց՝
որք ծփային 'ի կողաց անջուր անցիցն,
ընդ կէս ճանապարհին զփախստեայ ո-
տրս իւրեանց նահանջէին՝ յանսովոր ի-
րացն խուսափեալք։ Թէպէ, ընդ ըն-
կրկմելն լինել նոցա առ ջրովքն անբա-
ւութեան՝ միայն հեղձուցիկ դիոցն բաղ-
մութեան յանկայուն ալեացն ցիր ասա
անդ տարուբերեալ տային արդեօք ա-
ւետիս փարաւոնի՝ որ 'ի վերայ յարու-
ցեալ էր, զհամայնաջինջ կորստենէ նո-
ցա, և աներկբայ նշանակ լինէր անա-
րութեան նոցա և հեղդաստութեան։
Այսպէս հաճիկ է, զի զվէ հանձնեայ գոր-

ծրս ձեր տեսողութիւնն պսակեսցէ։

Այլ այս յառել արժան է ձեզ զամենայն ուշ ձեր, 'ի բաց քերել 'ի մտաց պիշատակս ընկերական հանգանակութեանց՝ յորմէ նահանջեցիք զանձինս՝ մեռանելովդ ձեր աշխարհի. միշտ կենդանի ունել 'ի միտս ձեր և 'ի սրտի ըղդաշն ուխտին՝ զոր կռեցիք ընդ Տեառն, որ պարտաւորէ զձեզ 'ի զդուշաւոր պահպանութիւն ուխտին, և առաջի առնէ ձեզ ամենևին հրաժարել, և հարկէ զձեզ յանցեալի և 'ի հաստատուն սնդութիւն 'ի խոստացեալ դաշինսդ։

Ամանք արտաքոյ այսր սրբոյ ապաւինի խնդրեն ստանալ զերջանկութիւն, մոլորեալք ընդ անհետ խորհուրդս 'ի շաւիղս նորա, երբեմն 'ի զդայական իրրս կենցաղոյս, և երբեմն յինքեանս. դուք ընդ առաջնորդեալ ձեզ պողոտայն՝ պահպանութեամբ ուխտիցդ երդուելոց՝ ժառանգեալ էք զնորա փափաքելի ժառանգութիւնն։ Այլ սովաւ ընդ խրատամբ եր կանոնական պահպանութեանց

յայտնեսջիք առ հետևողս այսր յաւիտենի, թէ բարի է մի ժամ 'ի տան Տեառնն՝ քան հազար ամս 'ի յարկս մեղաւորաց. և յայտնեսցէ Թերևս յաջողութիւնդ ինն դէպ լոյսն նոցա, զի փրկաւէս ինն գժդմնութիւն և հերձիք յափշտակեսցէ 'ի նոցանէ զնոսիս, և սուրբ նախանձ գրգռեսցի 'ի նոսա ընդ ձեր խաղաղութիւն. որ հրաւիրեսցէ զնոսա վերադարձով հետևողդ հանդիսանալ ձերումդ բարեպաշտութեան։

Այլ դուք սուրբ կուսանք՝ հարսունք Քրիստոսի, առ որս հուսկ յետոյ առ վայրօքս յաւելում զիմ բանս, դուք որք 'ի տեսիլ ամենեցուն ընծայէք զհաստատութիւնն՝ որովք նոր այս ձեր միութիւն հաստատէ զիւր ուխտ, մի՛ իցէ 'ի ձեզ կամք վրէպ ունել յաչաց զայս բաղմաշահ խորհուրդս. այս հաստատութիւն ուխտին յուշ արասցէ ձեզ զձեր պարտիս։ Պարտիք՝ որ այնչափ հարկէ զձեզ, և այնչափ մեծ է 'ի ձեզ, որչափ զի առաւել և ս արագ անցանեն ամք և

ցանկութիւնք կենաց 'ի սուրբ յայս բնակարանի ։

Ո՞տայր, զի այս եռանդն, որով 'ի սրբազան գործս աշխատիք զօրութեամբ խոստովանութեան ձերոյ, մի՛ լինէր 'ի ձեզ յետ ամաց զաղփաղփուն ոք և հեղգ և ցրտացեալ և անազդակ ։ Այսօր առաջի իսկ եկեղեցւոյ դարձեալ արծարծեացի այն ջերմեռագին եռանդն. դարձեալ տապասցի, նոր նորոգեսցի, նորոգ զօրութիւն յանձին զգեցցի, որպէս զի կարասջիք իրաւամբք ասել առանց երկիք ինչ պատկառանաց. "Եղիցին քարինքս այսոքիկ 'ի յիշատակ որդւոցն Իսրայէլի մինչև ցյաւիտեան" ։

Ի ՍՈՒՐԲ ԿՈՒՍԱՆՍՆ

ՃԱՌՈՒ.

Ի ԲԱՆՆ

«Եղ՝ ի խաղաղութեան տեղի նորա». Սղ. Հե. 3.

Պսեմափառ հանդէսդ՝ որով ուղեկից լինի ժողովդ ի նուէր պատարագաց, զոր այսօր առ Տէր ընծայէք սրբազան հարսուանք Քրիստոսի, զարթուցանեն յանձին իմում տարակուսանս ինչ, զոր արժան է առաջի դնել ձեզ ի ձեր քաջալերութիւն. զոր և ապալուծիչ և բացայայտեցիչ, զի լիցի հասարակաց յօգուտ և ի շինութիւն։

Եւ տարակոյսն այս ինչ է։ Հայեցեալ ընդ մի կողմն ի ձեր յայդ նուէր, ի դաշնաւոր յանդիմանութիւս, ի խորհրդական ընթերցմունս՝ որովք լի է սերկեւանս հանդէս, յամենայնէն ցոլման ահ, սարսափ, ողբք և տրտմութիւն։ Ոչ զայլմէ իմեքէ բանք են ասասանօր, բայց

զմերկանալոյ, զկաչէ, զոքնութենէ, ըզ-
ըռութեանց, զառանձնութենէ, զմիայ-
նութենէ, զհպատակութենէ, զհանա-
պազորդ մարտէ ընդդէմ ամենայն յօժա-
րութեանց անձնասէրն լինելոյ, զմշտըն-
ջենաւոր արտասահմանութենէ ամե-
նայնի՝ որ միանգամ հաճելիքն են կե-
նաց։ Դ-այ 'ի հոգիս ձայն այսպիսի. եր-
կիր է սա, յորում բնակեցայք, յորմէ
վտարանդի է ամենայն սրտի դիւր. եր-
կիր նման ահագին անապատի՝ որ զբնա-
կիչս իւր ուտէ և ծախէ։ "Երկիր մարդա-
ծախ է բնակչաց իւրոց". Թվ-Ժ. Յ.Գ. 33։

Յայլմէ կողմանէ հայեցեալ՝ տեսանի
'ի դէմս ձեր անհամբերութիւն ընդ յա-
պաղել աւուրս. խնդանք և ցնծութիւն
տեսանի անդ յաւուր յայսմիկ. խնդրին
հաճոյք հոգւոյ, և սոքիմբք քաղցր ըս-
փոփութեամբ ամոքին այն դառնութիւք
ամենայն։ Երթ յերասա հանդիսիդ հայ-
իմք՝ յամենուսսա դարձադարձ արձա-
գանգ երգոց ցնծութեան, և նուագք
գոհութե՛ն, օրհնութիւնք առ Աստուած՝

որ կոչեաց զձեզ, երանելիս ասելով զՁեզ և երջանիկս՝ որ պատրաստ գտայք ձայնի կոչողին։

Զ. Ի՞նչդ այսց երկուց առ երևոյթս հակառակաց միաբանութիւն, յորոց միջի է անբաւ խորոց։

Ա. Ը. ԼՈՒԾՈՒՄՆ ՍԱՐԱԿՈՒՍՈՒԹԵԱՆՆ՝ վեմաշուք պարոնայք, և որք միանգամ գտանիք աստ. եկայք և մտցուք միահաղոյն ամենեքեան յայս երկիր, որ ահագին տեսանելով անբեր և աւազուտ։ Գտցուք անդ ծառ մի արմատացեալ՝ հանդերձ յոստս իւր ամենայցեալ պըտղովք, որ քաջայարմար է 'ի սնունդ ամենեցուն. և որք ուտեն 'ի սմանէ, առնուն զճաշակ դրախտին փափկութեան. «Եղից 'ի վերայ արմաւենւոյն, (ասէ հարսն յերգսն, ըստ լատ. թարգ.) ժողովեցից զպտուղս նորա». Երգ. Է. 8։ Ի՞նչպէս անուշակ հոտոցս, զուարթութեանս, սնդեանս, բուրիցս անուշից երկնայինքաղցրութեան յերջանիկ պըտղոյն 'ի սնդուանս իմ բուրէ։ Եւ զի՞նչ

առնկ է այս. զի՞նչ պտղոյն անուն կո-
չեն, որ ի նմանէ ելանէ։ Այսպէս բանք
Եսայեայ. «Այս եղիցի պտուղ արդա-
րութեան՝ խաղաղութի՛ն». Իսայ. ԼԹ. 17։
(ըստ լատ. Թարգ.)

Առաջին խորհրդածութիւն մեր լե-
ցի ի վերայ համոյ այսր պտղոյ։ Երկ-
րորդն՝ ի վերայ եղանակի պահելոյ զայն՝
զի մի հերձցի կամ եղծցի։ Առաջինն է
առ ի տեղեակս առնել զանծանօթս պըտ-
ղոյս։ Երկրորդն՝ յօգուտ այնորիկ՝ որ ճա-
շակէ զայն և ժառանգէ։

Առ ի դիտել թէ ո՞րչափ քաղցր և
համեղաճաշակ իցէ խաղաղութիւնն ի
սրտի, զայն և եթ շատ է խորհիլ, զի այս
պարգև է իջեալ յերկնից. և զի գերա-
գոյն բարերար պարգև ատուն Քրիստոս
Տէր մեր ինքեան միայն սեպհականեաց
զկարողութիւն և զիշխանութիւն մա-
տակարարութեան երկնաւոր շնորհիս։
Լուսաւոր զհեշտալուր բանս՝ որովք սի-
րելի Քրիստոսն մեր կոչեաց ի ժառանգու-
թիւն այսր խաղաղութեան զառաքեալ-

սին, նախ քան զվերջին դառն բաժա-
նումն իւր 'ի նոցանէ։ Թողում ձեզ սի-
բելիքդ իմ, ասէր նոցա դԹալով, զի այս-
պէս պահանջէ պատիւ իմ և Հօր իմոյ.
Թողում զձեզ աղքատս և բնաւ զուրկս
'ի կենցաղականս գոյից։ Զեր բաժին ե-
զիցին վաստակք և վիշտք, հակառա-
կութիւնք և հալածանք. և նպատակք
եղիջիք այլոցն ատելութեան, և ոչ ա-
պահով լինիջիք. ունիջիք զնոյն իսկ կեանս
'ի խժդժութենէ իմոց և ձերոց Թշնա-
մեաց։ Այլ փոխարէն այսոր ամենայնի՝
Թողում ձեզ շնորհ մի, որ իմ է յատուկ,
և աշխարհ 'ի նմա չունի ինչ մասն. և
որպէս ոչ կարէ աշխարհ տալ զայն, նոյն-
պէս և ոչ երբէք և բառնալ կարասցէ.
այս շնորհ է խաղաղութիւնն։ «Օ՛խա-
ղաղութիւն Թողում ձեզ, զխաղաղու-
Թիւն զիմ տամ ձեզ, ոչ որպէս աշխար-
հըս տայ, տամ ես ձեզ». Յովհ. ԺԴ. 27։
Այս ոչ 'ի հատուցումն միայն է վշտացն՝
որոց համբերէքդ, այլ և 'ի նոյն իսկ 'ի
վիշտս ձեր, զի անփոփոխ իցէք, զուար-

թամիտք, ուրախք և երանելիք։ «Ուրախ լինիցին սիրտք ձեր, և զուրախութիւնն ձեր ոչ ոք հանիցէ 'ի ձէնջ». Յովհ. ԺԸ. 22։

Ստուգեցաւ այս յառաքեալս. այլ և այսօր ճշմարտի յայս նոր հարան Քրիստոսի, զոր ընդ առնուլ իսկ յուս իւր ըղծանրակիր բեռն խաչին, և սուրբ պըսակօք պսակել զգլուխն, տեսանէք ծաղկափթիթ վառիլ խնծղանօք և երկնային քաղցրութեամբք յաղեալ և պարարտացեալ։ Գործ է այս այնր խաղաղութեան՝ յորոյ մտեալ է դա 'ի ժառանգութիւն։ Այլ զի 'ի վանան՝ յորում փակեալ է, գոգցես նոյն իսկ իւր աթոռ, ինչեան, և թագաւորութիւն տեսանի. «Եղև խաղաղութիւն տեղի նորա»։ Այլ մի նուազ զճաշակ առեալ զհամեղութեան պտղոյն, համարի զայն ծաղեալ 'ի դրախտէն. «Աւաքուսն քո դըրախտ». Երգ. Դ. 13։ Այլ արդարև դրախտ համարի իւրոյ փափկութեան զայն կեանս՝ զոր գեղեցկութիւն այսր

խաղաղութեան զարդարէ և նորատեղծէ. «Ինակեսցէ՛ի գեղեցկութեան խաղաղութեան». Լուսայ. ԼԲ. 18. (ըստ լատ. Թարգ.)

Արդ՝ առ ձեզ դարձայց կուսա՛նք բարեբաղդք, և՛ի պայծառափայլ հաւատոյ ձերմէ խնդրեցիս լսել զՔրիստոսի։ Զի՛ մարմին ձեր պղնձի՝ ասասցուք հաւատարմութեամբ ընդ Յովբայ, և ոչ կաղմած սրտի ձերում երկաթոյ նմանի, կամ անգծելի որձաքարի. «Մի թէ զօրութիւն վիմա՞ց իցէ զօրութիւն իմ, կամ մարմին իմ պղնձի՞». Յովբ. Զ. 12։ Այլ փափկասուն ձեր սիրտ վշտանայ ընդ հեռանալդ՛ի սիրելեացն ընտանութենէ, և բնաւին հրաժարումն յամենայն հեշտութեանց կենաց վշտացուցանէ և ամբոխէ զսիրտ ձեր՛ի ներքուստ։ Առնչէր ընդդէմ ձեր՛ի զարհուրեցուցանել զձեզ նոյն իսկ բնութիւնն՛ի ժամուն՝ յորում առաջին պատուեցիք զհնազանդութիւն քան զաղատութիւն. զաղքատութիւն քան զմե-

ծութիւն. զլուին միայնութիւն քան ըզ-
պայծառ և զանդատին կենաց կցորդու-
թիւն. զանձկութիւն մենաստանին քան
զընդարձակ ազատութիւն հաճոյական
ընկերութեաց։ Ներժեցիք զանձնասի-
րութիւն, զի հանապազորդ աղօթից պա-
րապեսջիք. զի խստութեամբ յուսե-
լեաց ժուժկալեցէք. զի ընդ լծով պահ-
պանութեան օրինաց մտջիք. զի մշտն-
ջենաւոր կրթութեամբք ապաշխարու-
թեան զմարմինս ձեր սպանջիք։

Արդ՝ զիաբդ և էր վասն ընդդէմ այս-
քան լկանաց և վշտաց բնութեան և
արեան՝ դուք դեռ ուրախ էք և միսի-
թարեալք խնդութիւն մեծաւ, որ թա-
փանցանց 'ի ներքս 'ի ձեզ մտեալ է։
Չիցէ՞ այս արդասիք այնր խաղաղու-
թեան, որ առատաձիր պարգևօք Տեա-
ռըն զեղու 'ի սիրտս ձեր, և իբրև գետ
բարերար ըստ մարգարէին՝ ոռոգանէ
զայն և զարդարէ. "Իբրև գետ խաղա-
ղութիւն քո"։ Այլ զի՞նչ զարմանք ի-
ցեն, զի ձեր զայս խաղաղութիւն յա-

ռանձնութեան ձերում դտեալ՝ առ ա-
մենայն ցանկութիւնս աշխարհի բա-
րեաւ մնալ ասացիք, և առ կեղծ և պա-
տիր և առ երևոյթ բարիս նորա։

Ով սրբազան խաղաղութիւն սրտի,
ով երանեալ պտուղ դրախտին, զոր բա-
զում խնդրեն, և սակաւք են որք ճա-
շակեն. ով է 'ի ձեզ և 'ի գեղեցիկ աշ-
խարհի ձերում վսեմաշուք սեպուհք,
պերճափառ տիկնայք, առ որում օթե-
ւանս կալցէ այս խաղաղութիւն, և ե-
զնցի նմա մխիթարիչ և ընկեր։ Այլ ա-
ւաղ, փոխանակ այնորիկ տեսանեմք մեք
'ի ձեզ ընդ բիւր շաւիղս դառնութիս,
տաղտկութիս, հոգս, տուփանս անյագ,
կասկածանս վրդովիչս, նախանձ երկիւ-
ղալի, ահ սաստիկ. սոքա դառնացու-
ցանեն զկարի հեշտալի զբօսանս, վրդ-
ովեն զհանգիստ խաղաղ գիշերոյ։

Այլ չէք 'ի ձեզ խաղաղութիւն,
գուցէ վասն այսորիկ՝ զի աղբատին ի-
ջիւանս սիրէ, և ընկերութիւն ընդ գոր-
ծոց բարեաց, և մխիթարիչ է մաքուր

և անապակ խղճի մտաց։

Ապա բարեբաղդ էք դուք սուրբ հարսունք, որք 'ի մենաստանն առանձնութեան, 'ի գիրկս ապաշաւանաց, յանպատրաստակ աղքատութեան, 'ի բոլորովին հնազանդութեան, 'ի լռութեան անշահ զբաղմանց հասէք առնա, և գլուխք զայն, և բազմօգուտ կրթարան բացիք մեզ՝ ոչ խաբիլ։ Արդէն իսկ ընդ Ոսկէբերանին հաւանեալ եմք ունիլ ձեզ 'ի նմին մեծ և բարութիւնս քան զկենցաղականքս համայն. և զի արժանի է ձեզ ժառանգել զայն ամենայարդ մարգարիտ, զոր փոխանակեցիք յայլմէ ամենայնէ բացե 'ի բաց հրաժարեալք։ Յառիմք ուշով ոչ առանց նախանձու՝ ընդ ամենահրաշ գեղ պաղոյ դրախտին։

Արդ՝ որպէս զի մի յեանեալ գտջիք 'ի դրաւականէ հաւատոյն զոր ետուք, դոյզն բանիւք ցուցից ձեզ զեղանակ պահպանութեան պաղոյս, զի մի եղծցի կամ կորիցէ, 'ի միխիթարութիւն՝ որոց ստացանն զայն։

Որպէս արդարութիւնն է ծառ ըստ մարգարէին, յորմէ ելանէ պտուղս այս. «Եղեցի գործք արդարութեան խաղաղութիւն». այսպէս տեսարք իմ արդարութիւնն պահէ զսա անապական։ Արդ՝ զինչ է 'ի ձեզ արդարութիւն պահպան այսմ անգիւտ պարգևի։ Պահպանութիւն օրինաց՝ դատեարք սիրելիք, հոգի և զօրութիւն կանոնաց, որ պարտաւորէ ըզձեզ հրաժարել յաշխարհէ, և յորդորէ զձեզ և հրաւիրէ 'ի կատարելութիւն կենաց. որպէս զի նատջիք ընդ Հովանեաւ երջանիկ ծառոյս այսմիկ, և միասջիք ընդ Աստուծոյ՝ որ անապառ աղբիւրն է խաղաղութեան։ Սիրարձէք զսուրբ ձեռս յաղօթս 'ի վեր, և փոփոխս տուրեաւ ուրութեամբ ընդ նմա դասջիք զերակս ամենայն ներքին միսիթարութեանց։ Գիտակցութիւն սուրբ՝ պահեսցէ յանդորրու զսիրտ ձեր, և բանն արթուն արկցէ ընդ ձեօք զբազմամբոխ բազմաւորդավ կրկց։ «Եղեցին գործք արդարութեան՝ խաղաղութիւն»։

Այլ թէ ընդ մի և եթ վայրկեան 'ի նմա-
նէ բաժանեսջիք, աւաղ ձեզ, 'ի բաց
ձգել առաջի կայ ձեր յանձանց ձերոց
թշուառութիւն զայն բարիս՝ զորս այն-
քան խնամով խնդրեցիք, և մեծաւ ու-
րախութեամբ ժառանգեցիք։

Այնու զի մենակեացն ըստ նմին հո-
գւոյ վարի՝ որով կեայ ըստ առաքելոյն.
«Յթէ կեամք հոգւով, հոգւով և շրջ-
ջեսցուք»։ Գաղատ. Ե. 25. (ըստ լատ.
թարգ.) նովաւ իսկ 'ի խաղաղութեան
է ընդ Աստուծոյ, որ այցելութեամբք
իւրովք պատուէ զնա և 'ի խորհուրդս
իւր տածէ զնա, 'ի խորհուրդս՝ որք
քաղցր են քան զմեղր, և քան զխորիսխ
մեղրոյ ըստ մարգարէին. Սաղմ. ԺԸ. 11.
յանձին իւրում ունի զխաղաղութիւն։
Այսուրոյ ոչ կենցաղականացս հոգք զը-
զուեն զնա, ոչ աշխարհի յաջողուածոց
խածատիչ հեշտութիւնք տրտմեցուցա-
նեն, և ոչ ապստամբ յօժարութի պիղծ
ոգիք կոխէ 'ի նա առ 'ի տիրել. յան-
դորր հեզութեան և 'ի դիւրանսայ խո-

նարհուրթեան հանգիստ գտանէ զխոստացեալն թեթևաբեռնուրթի. «Գտջիք հանգիստ անձանց ձերոց». Մատ. ԺԱ. 29։ Քաղցր հանգոյցք ինչ բարեկամուրթե, ընկերական հրահանգք գորովուն զըթուրթեան, փոխանակաւոր քաջալերք անուշակ հաղորդակցուրթե կենաց տան նմա ճաշակ դքաղցր պտղոյ անվրդով խաղաղուրթեան հոգւոյ։

Ամենայնիւ զհակառակին առնու ըզփորձ՝ որ հանդերձիւ միայն է կրօնաւոր, և ոչ հոգւով և սրտիւ։ Հրաժարեալ յաշխարհէ՝ անմարթ է նմա զիւրոյ հաճոյից կրթիլ զհետ. և ոչ բարուք կապեալ ընդ Աստուծոյ՝ վրէպ գտանի ի ներքին արգահատանաց ասոյ միխիթարուրթեան. տաղտուկ է նմա հնազանդուրթիւնն, ծանր է աղքատուրթիւնն, այլ հարկ է տանիլ այնմ ամենայնի։ Ընտանելի են նմա կրթուրթիւնք հոգևոր կենաց, սակայն անմարթ է յեռանիլ յայնց։

Մի՛ր չգոյր սուրբ խաղաղուրթիւն, միակ սփոփիչ հոգւոյ, և աղ համեմիչ

ամենայն վշտաց։ Արդ ասել մաքթ իցէ, թէ և անձինք նուիրեալք Աստուծոյ, և ընդ հովանեաւ խորանի նորա պատըսպարեալք զարտուղեցան 'ի ճանապարհաց խաղաղութեան, մնացեալ թշուառք և զուրկք յերջանկութենէ։ «Ի-եկուսին և թշուառութիւն 'ի ճանապարհս նոցա. և զճանապարհն ճշմարտութեան ոչ ծանեան»։ Հռովմ. գ. 16, 17։

Հեռի եղիցին 'ի մէնջ այս սղմկայոյզ խորհուրդք, և մնասցէ միայն յիշատակ այսմ. մի վրդովեսցէ զպայծառաղարդ զայս օր՝ որ ցնծայ աստուածային կենդանի լուսով հոգւոյն, և կենսաբեր տապով շնորհաց՝ անուշակ արգասեօք ամենայնցուցանէ զսա, և բեղմնաւորս գործէ։

Լիցիս 'ի խաղաղութեան կուսանդ ընտրեալ, և խորհուրդ մտաց քոց անարատ և անխախտ ծանուսցէ քեզ թէ խաղաղութիւնն Քրիստոսի է, որ զհոգի քո նորոգէ, և անտի 'ի սիրտ քո զեղանի. «Խաղաղութիւնն Քրիստոսի մը-

խիթարեսցէ զսիրտ ձեր ». Կողո. Գ. 15։
Այս պատուէր՝ զոր մինչև յայժմ մշակեցիք երանելի պատուստաւիք արդարութեան, և որ զձեր պատերազմն կռուի ընդդէմ ձերոց յօժարութեանց, ժառանգել զարդիւնս շահեկանս, ընդ մօտաւուրս պակէ հիւսեսցէ ձեզ՝ անյեղլի տեսողութեամբդ 'ի բարին։ Այսպիսի է օգուտն, զոր օգտին 'ի ձերոց կրօնակցացդ. որք ուրախ են ընդ ձեզ 'ի կոչմունս իւրեանց, զի և 'ի սուրբ օրինապահութեանն ճիշդ ևս գտանին։

Այս երջանիկ հոգիք՝ միշտ մշակեսջիք զհոգի ձեր յերկնային կացութեան վիճակիդ. և շնորհք Տեառն յաւելցէ 'ի ձեզ զխաղաղութիւն. «Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն բազմասցի». Ա. Պետ. Ա. 2. մինչև յագեսջիք երանութեամբ բազմաւ 'ի հանգիստն յաւիտենից։

Ի ՍՈՒՐԲ ԿՈՒՍԱՆՍՆ

ՃԱՌ Գ.

Ի ԲԱՆՆ

«Զքեզ ընտրեաց Տէր Աստուած քո լինել նմա ժողովուրդ սեպհական քան զազգս ամենայն, որ ի վերայ երեսաց երկրի». Բ. Օրէն. Է. 6։

Լուր ինձ Իսրայէլ, ասէր Մովսէս, և որչափ էք յաղգէն Յակովբայ գլուխք զօրաց և ցեղապետք և զօրք՝ լուարուք ինձ. զերկինս և զերկիր վկայ կոչեմ քանիցիմոց, որով մեկնեմ ձեզ զկամս Աստուծոյ։ Տէր զօրութեանց և պետ գերագոյն պետութեանց Աստուած մեծ՝ զձեզ ընտրեաց հրաշափառ օրինակաւ իբրև իւր ժողովուրդ սեպհական, սիրելի և հաճելի 'ի մէջ ամենայն ազգաց երկրի. «Զքեզ ընտրեաց Տէր Աստուած քո», և այլն։ Այսպէս քաջ զօրապետն՝ ազատ 'ի բռնաւորէ լծոյ անցեալ գերութեանն, ամենևին յապահովի զերկնային խնամոցն և յանդարձու, 'ի ծործորս Մա-

վաբու 'ի Ճանապարհս երկրին աւետեաց այսպէս խօսէր առ իւր ժողովուրդ, յա-
բեալ առ նովաւ և զաստուածային հր-
բամանսն։

Լաճոյ Թուեցաւ նմա զգԹած աչս
իւր առ ձեզ դարձուցանել քան առ այլ
բաղում ազգս և ալինս, որ Թերևս ա-
ռաւել արժանաւորք էին քան զձեզ նի-
սազ գոլով յապաշնորհն լինելոյ և յան-
ճանաչող, և անքաւ հրաշիւք ազատել
զձեզ յահեղ Թշնամւոյ. և բանալ ձեզ
ընդ անկոխ ալիս կարմիր ծովուն անցս
անքոյԹս առ 'ի փախուստ առաջնորդել
ձեզ ընդ անապատն Փառան, ընդ Սին
և ընդ Սուր. անխոցելի պահել զձեզ 'ի
մահաբեր նետից հսկայից որդւոցն Եփ-
րեմայ։

'Նա եղև ձեզ ապաւէն, պաշտպան
և տեղի ապաստանի մինչև յերկիրն՝ յոր
հասջիք ընդ հուպ, կոխեալ զերկիրն Մո-
վաբու։

Զեզ անկէ հոչակ հարկանել զառա-
տաձեռնութենէ ողորմութեան նորա,

և հաւատարմութեամբ զհրամանս նո-
րա պահել, զի հասցէք 'ի ժառանգու-
թիւն երկրին բարութեան, որ բղխէ
զկաթն և զմեղր 'ի ստացութիւն երկրին
աւետեաց։

Օրհնեալք դուք քորք՝ ընդ լուր
պատմութեանդ յաջողուածոյ ժողովրդեանն
Իսրայելի, և ապշեալք ընդ խանդակաթ սէր
Աստուծոյ՝ որ առ նոսա։ Այլ մեզ ան-
ձուկ է, զի ձեր առաւել ևս յակձիռս
լեալ իրացս, կերպարանեսջիք յայսցանէ
վեպս զողորմութեանն Աստուծոյ՝ հան-
դիսացեալ 'ի ձեր հոգիս, որ համարի
այսօր իբր ժողովուրդ՝ զոր որպէս իւր
սեպհական՝ մասնաւոր խնամովք սաս-
ցէ։ Խաղաղասեսցուք՝ թէ հաճոյ լցէ
ձեզ մասն ըստ մասնէ. զի տաղ հրաշալոյ
գործելոյ 'ի բարեբաղդ աղէնն վերայ,
զոր յուշ ձեր ածեմք յընտրութեանն՝
որում նուիրիք այսօր 'ի Քրիստոս, լու-
սաւորեսցէ զսիրտս ձեր մեծաւ գթով
շնորհս ունել զնմանէ որ ընտրեաց զձ-
ձեզ քան զաղգս ամենայն՝ որ 'ի վերայ

երեսաց երկրի »։ Խնամեր զժողովուրդն յաջողուածովք, միջոցօք և հրամանօք, որովք ցուցաներ զճանապարհ՝ զերկիրն աւետեաց ածելոյ զբռամբ։ Յուշ ածեալ ձեր զսիրալիր հայեցուածս, զընդնախանկար տեսչութիւնս՝ որ 'ի վերայ ձեր, յորդորեսջիք և դուք ըստ այնոցիկ փոխանակաւ՝ զձեր հայեցուածս առ նա դարձուցանել, որ ընտրեաց զքեզ «Լինել նմա ժողովուրդ սեպհական »։ Լուսերիուցս յայսցանէ անսպառ աղբերաց անապակ հաճութեան առջիք ձեզ իմաստս՝ ամենցուցանել նոքօք և սքանչելս զշնորհակալութիւն և զնմանութիւն։

Մ՝եք նախ զմտաւ ածցուք զժողովուրդն Իսրայէլի ըստ վիճակի եգիպտական գերութեանն, յորժամ ծանրաբեռնեալ յանտանելի լծոյ դժնդակ ծառայութեանն՝ յորում ոչ գոյր առ նոսա թոյլատրութիւն զոհել առ Աստուած ճշմարիտ զոհս խաղաղականս. քանզի և անասունքն նուիրելիք՝ աստուածք էին զաղքատի երկրպագուաց Եգիպտացւոց.

և ոչ յոյս ինչ երևէր ըստ մարդկան ա-
կընկալութեան՝ ստանալ Իսրայէլի զա-
զատութիւնն վերստին։ Մի՝ ղի վահ-
րոտեալ սիրտ անառաջնորդ և անխոր-
հուրդ ժողովրդեանն ընդդէմ էր այսմ.
և միւս ևս՝ ղի ուժեղակ էր բռնաւորն՝
որ ծառայեցուցանէր զնոսա։ Իսկ առ
Աստուած, առ որում չիք ինչ դժուա-
րին, հաճոյ եղև երկնային խորհրդով
տեսչութեանն ընտրել զնա իւր ժողո-
վուրդ և ժառանգութիւն. և զսիրտ նո-
ցա ներքուստ կազդուրեալ յայն գործ
մեծ, և զՄովսէս առաջնորդ տուեալ
նոցա՝ և պատանէշ հղօր ընդդէմ ցասման
Եգիպտացւոց, հրաշիւք ամենազօր կա-
րողութեան իւրոյ եհան զնոսա 'ի դը-
ժընդակ ծառայութէ 'ի բաղուկ հղօր։

Յօրինակէս յայսմանէ քաջ իմանայք
ձեղէն, առ ի՞նչ օրինակ բերին ասա-
ցեալքս. և իմանայք զառաջնորդու-
թիւն տեսչութեանն, զոր եցոյց Ա-
տուած Իսրայէլացւոց, յիշատակ կարգ
ըստ կարգէ շնորհացն՝ որ հեղան յոգիս

ձեր հրաշափառագոյն և սս 'ի շղթայիցն գերութենէն ազատել զձեզ, և առնուլ ածել զձեզ յայժմեան յայս ազատութիւն ծառայից իւրոց։ Զի արդարև կարծեմ թէ և ձեր յաշխարհի աստ ոչ էր նուազ յօժարութիւն՝ զոհս մատուցանել Տեառն։ Այր նա 'ի դեռահասակ մանկութեան իւրում ծանրացեալ 'ի լծոյ ապարասան սխտից, 'ի բորբոքեալ ցանկութենէ հեշտութեց՝ դիւրութեան և ազատութեան։

Արդ՝ առ 'ի նուիրել զանձն Աստուծոյ, հարկ էր զոհել նմա զայսոսիկ՝ զոր աշխարհ պաշտէ, կամակար հրաժարեալ 'ի սանձակոտոր եղանակէ աստի կենաց, յապականեալ բարուց 'ի կենցաղական զուցացս, 'ի շքոց՝ որք քրիստոնէութեան անվայելք են, սիրելով զատելիս և ատելով զսիրելիս նորա։

Զի զիարդ յուսալի այս 'ի մանկամարդ օրիորդէ յընդհանուր ապականութեան աստ աշխարհի, որ առնուլ կամեցեալ զքաջայարմար փոխաբերութի

Դաւթի, ամենայն ուստեք անձրևս ո-
բոգայթից տեղայ. «Տեղասցէ ... որ-
գայթ». Սաղմ. Ի. 7։

Աղետաբեր երևոյթք հրաժարելոյ և
միայնութե՛ն, ահագին յիշատակք ժուժ-
կալութեան և մեռուցանելոյ զանձն.
սոսկալի ուրուականք անհրաժեշտ մա-
հու 'ի կենաց, որ ըստ աշխարհի, սո-
քա նկարագրէին 'ի հոգիս ձեր տեսա-
բան երկիւղալի, և արտաքուստ առաջի
ածէին ձեր բռնաւոր հարստութեամբ
նորա, որով Ճոխանայր 'ի վերայ խոր-
հրդոց սրտից ձերոց։

Վասն այսորիկ ահա Աստուած մեծ,
որ զգթած աչս իւր դարձուցանէ 'ի ձեզ
և ընտրէ զձեզ յայլոց անտի ըստ հա-
ճութեան կամայ իւրոյ և մասն առնէ
զձեզ ընտրեալ շնորհին։ Օ՛աներուք ըղ-
բարերար ընտրութիւնն, որոյ թողեալ
զայլս՝ որ անփոյթ եղեն զհրաւիրանաց
շնորհին՝ առ զհետ գնալ զընթացից բը-
նութեան, և խաբէպատիր հետոց հեշ-
տութեան պատուոյ և փառաց, զձեզ

ընտրեաց։ Օ՛ն ներում՝ զի՝ ճանա-
պարհի փրկութեան առաջնորդ առիք
անձանց զաստուածային տեսչութիւնն,
որ սքանչելեաք աչքս իւրոյ եհան զձեզ
՝ի բիւրաւոր վտանգից կորստեան. և
յայս տեղի ապաստանի զձեռանէ կա-
լեալ ած զձեզ՝ որպէս մայր որդեսէր
ածէ զմատաղ մանկունս իւր ընդ իւր։
՝Լսվաւ քաջայայք կանգնել անպարա
ախոյեան ընդդէմ հզօր ախտից ձերոց,
որք ճակատ մարտի հանդերձէին ՝ի սիր-
տս ձեր։ ՝Լմա պարտիք գոյաղթութիւն
ձեր ընդդէմ արտաքին թշնամեաց ձե-
րոց, որք և ոչ վայրիկ մի դադային բաղ-
խիլ ընդ ձեզ հզօրեղապէս։

՝Բանի՞ փոփոխութիւնք կենաց եղեն
ձեզ յառաջին տիոց անտի ձերոց, այն-
քան սքանչելիք եղեն ամենաբաւ զօրու-
թեան, այնքան շաւիղք փրկութեան։
՝Բանիցս բողոք կալայք զդիպուածոյ աբ-
կածից։ Ա՛յլ այն ամենայն քաջ և յառա-
ջատես անօրէնութիւն էր աստուածայ-
ին, որոց մի միայն կէտ նպատակի էր

առնել զձեզ յաւուր միում ապահով և խաղաղ ընդ հովանեաւ իւրոյ սրբութեան վայրացն։ Ո՛անապարհք փրկութեան և ցուցակութիւնք ամենակալ զօրութեան եղեն ապարասան ախաք՝ որք զչղթայս խորտակեցին, ամպք մառախլապատք՝ որք զսրտիւ շուրջ փակեցին, արգելք չար ցանկութեանց զընթացս ձեր նահանջեցին։ Այն իսկ ընդդիմութիւնք, որ զսիրտ ձեր խռովեցին, և կասկածք երկմտութեան՝ որք տրտմութիւն զձեզ արկին. տրտմութիւն փոխարկեալ 'ի խնդութիւն. յեղամտութիւն 'ի հաստատութիւն. յուզմունք թախծանաց 'ի խաղաղութիւն։ Այս ամենայն նշանք ամենակալին. այս ամենայն շաւիղք փրկութեան։ Այլ թէ հաճոյ իցէ ձեզ անդր ևս քան զայս զուշ մտացդ յառել, 'ի նշանս ամենազօրին գործեալս 'ի լուսն ընտրութեան ձերոյ. "Հայեցարուք, դստերք ազգի մարդկան"։ Միրոյ. Բ. 11։ Ասացուք և մեք առ ձեզ. շատ է մի և եթ արկնար-

կութիւն շուրջանակի յաղդս ամենայն որ 'ի վերայ երեսաց երկրի։

Յորժամ ժողովուրդ տեառն ընդ հարկանել հրաշալի գաւազանին Մովսէսի, ետես բացեալ ճանապարհ ապահով փախստեան 'ի մէջ փրփրացեալ կոհակաց կարմիր ծովուն, ծանեաւ զերկնային ձեռն Աստուծոյ փրկչին իւրոյ։ Այլ յորժամ դարձեալ յետս՝ ետես ընկղմեալ և խորտակեալ զԵգիպտացիս զԹշնամիս իւրեանց, զկառս նոցա և զերիվարս, զսպառազինութիւնս, և զամենայն մեռեալ դիակունս նոցա խաղալիկ եղեալ ծփանաց ալեաց, յայնժամ ծանեաւ և զսէր Աստուծոյ, և բարձրացոյց զձայն իւր բարձր առնել զերախտիս. աղաղակէին. «Տէր ոմն է քեզ». Սմ. ԼԴ. 10։

Այս և դուք՝ որք անցիք ընդ առասպար շուրջս կարմիր ծովուն, դարձուցէք զաչս ձեր և տեսէք, ոչ չափ բազմութիւնք են զրկելոց յերջանկութենէ, որք ընկղմեալ նաւակոծին 'ի մրրկածուփ ծովուն ընդհանուր ապականութեամբ։ Տեսէք՝ ոչ-

չափ մարմնասէրք, անձնասէրք, ոչչափ կեղծաւորք և կենցաղակիրք, և ընդ անհամար բազմութեան նոցա 'ի համար տրկէք զայնոսիկ թուով սակաւուն, որք կեան յանդորրութեան ընդ հովանեաւ երկնային խնամոց։

Այլ դուք առաւել ևս ուշադիք, զանձնեալ քաջ զկենցաղոյս բարիս՝ որք կաղ ժեն զնոցա սատապատիր երջանկութիւն, և զոր ընդ զառանցեցուցիչ վարագուրս այսու քօղարկի՝ զթոյնն մահաբեր՝ որ սպանանէ զնոսա։ Հայեցարուք 'ի հարսունս բաժանեալս 'ի փեսայից, եղբայր յեղբօրէ, նոյն ինքն հայր յորդւոյ. տեսէք բարեկամս, որք գայթակղեցուցանեն զբարեկամս իւրեանց. և որք վատշուէրք զկեղծիս իւրեանց սքօղեն սարկեշտ վարագուրաւ։ Ընդ դաշինք բռնաբարեալք, խարդախ բարեկամութիւնք, օրէնք լուծեալք, կեղծեալ ատելութիւնք, տոկոսիք անիրաւք, կասկածք, նախանձ, վրդովմունք, որք զձանապարհս հեշտութեանց թունիւք լը-

նուն։ Այս աշխարհ է, զոր լքիք. այս հեշտութիւնք նորա, որոց բարեաւ մի-նալ սասցիք։

Զգիտեմք, արժանահաւատ ի՞նչ ի-ցեն պատմեալքն յաղագս նախնի մարդ-կանն, որք յորժամ յանշէնս բնակէին՝ չէր ինչ 'ի նոսա գոդցեալ նշմար մարդ-կութեան. մինչև ապա 'ի քաղաքական կրթութիւն մտեալ հաստատին ընդ մի-մեանս կցորդութիւն կենաց՝ ըստ բա-նականացս յատկութեան։ Այլ մեզ կա-րի ճշմարիտ թուի, թէ կենաց կցորդու-թիւն այսմ քաղաքական ընկերութեան՝ սակաւ տեւեաց ժամանակաւ. քանզի ի-մաստուն՝ 'ի նոցանէ լաւ համարեցան ապա միայն ընդ միայնոյ յանապատս թա-փառել, և ընդ կենդանեաց կենակից լի-նել, ընդ առիւծս և ընդ գայլս, քան ընդ զգայուն և բանեղէն մարդկան։

Արդ՝ 'ի հայել մեր 'ի սակաւութիւն խոհականաց՝ յընդհանուր ապականու-թիւն աշխարհի, որ ըստ Ռոկէբերանին՝ զբարին չար ասէ, և զչարն բարի, որ-

պիսի խորհուրդք զարթիցեն 'ի սիրտս ձեր։ Եւ 'ի հայել առ ձեզ՝ որ յայնքան վշտաց վտանգէ խուսափեցիք, և յանքոյթ ապաստան ածեալք եղերուք ձեռամբ Տեառն, ուր սուրբ պարիսպք շուրջ փակեն զձեզ, ուր կուսանք պսակկըս բոլորեն ձեզ. և երջանիկ քօղ կրօնաւորական ծածկէ զձեզ յաշխարհէ և յունայնութենանց աշխարհի. որ քաղցր տօն ցնծութեան և անապակ բերկրութեան ելից զսիրտս ձեր, որք ընդ սրբոց ժողովրդեանն ձայն բառնայք երգոց գովութեան առ Տէր։

Ամբարձէք և ես զմիտս ձեր 'ի վեր. ոչ ասա է կատարած պատմութեան ազգմութեանն Աստուծոյ 'ի վերայ ձեր, որպէս 'ի կարգս սքանչելեաց Աստուծոյ առ իւր ժողովուրդ ընտրեալ, խորտակեալնոցա յիրաւի զԵգիպտական լուծն՝ դարձուցին սերտիւ զշուխդս իւրեանց 'ի խոստացեալ երկիրն կոյս. և այս մեծաւ մասամբ՝ աստուածային գթոյն էր գործ. այլ մասնել 'ի ժառանգութիւն

երկրին՝ մնայր արդասեաց նոցա։ Մի՛ անգիտութիւն կեղծեսցուք ընդ այն՝ որ չափ ինչ վիշտս և տառապանս կրեաց այն ժողովուրդ մոլորեալ ընդ անկոխ անապատսն ընդ Փառան, ընդ Սին, ընդ Սուր, և ընդ անմատոյց առապարս լերինն Սինայ։ Մի՛ և զայլ ահագին և ըզսարսափելի դէպս նոցա 'ի մտաց 'ի բաց արկցուք։ Յուժկալեաց ժամանակս ինչ 'ի հարկաւոր կերելեացն պակասութեան. 'ի վերայ յարձակեցան նոցա գոռ մարտիւ զօրք Ամովրացւոց և Փերեզացւոց՝ բաղումք թուովք, անմեղկելիք բարուք, և ուժով անպարտելիք։ Այլ Տէր խնամէր զնոսա, երբեմն տեղալով ընդ ամենայն տարածութիւն բանակի նոցա մանանայ յերկնից. այլ երբեմն 'ի վիմէ ջուր բղխեցուցեալ նոցա 'ի զովացումն. և էր՝ զի ընդդէմ զինուց թշնամեաց զօրացոյց զանչաղթ բազուկ Յեսուայ, ըստուգել զյաղթութիւն առ ժողովուրդն սուրբ։

Զդ առնեմ ձեզ, ոչինչ անման է

և ձեր վիճակ, զի ընտրութիւնդ ձեր այդ 'ի նուիրել Քրիստոսի, գոր ծ էր Աստուծոյ։ Այլ 'ի մասին հրաժարելոյ յաշխարհէ և 'ի վայելչութեանց նորա՝ ձեր համարի։ Այս ոչ այլ ինչ է, բայց եթէ ըստ ասելոյ Պուլինոսի, առաջին քայլ դժուարասելոյ ուղւոյն՝ որ տանի 'ի կրօնաւորական ընթացս։ Վասն այսորիկ մնայ՝ զի շնորհ կալջիք զառաջնորդողէ ձերմէ 'ի հրաւէր շնորհայ, և հաստատ զդէմ կալջիք աղդեցութեանց բնութեանց և հակառակութեանց անձնասիրութեանց։

Այլ զի չիք ամն գետոյ այնմ՝ որ առ 'ի լեղ անցանել ընդ գրգանս արագընթացս գետոյ՝ զերծեալ լցէ յանձնէն զնչբ հանդերձս առ 'ի չլինել խոչ. այլ հարկ է այնպիսումն հերձուլ զբուռն վազս ջրոյն և զայլ խոչս՝ որք պատահիցեն. ըստ այնմ՝ սկսոք են և ձեզ զամենայն ընդդիմահար վանել, զամենայն կարծրութիւն փշրել. և այնպէս մտանել յուղին կրօնաւորական կատարելութեան։ Արդ բարւոք հրահանգեալ յայս ամե-

նայն պարտականութիւն ձեր, յայս ուշ խորհրդեան զմիտս ձեր յառեսջիք։

Ընդհանրելի դաշնդ՝ զոր կնքեցիք, արքնաթոյր աղաբողոնդ որ ծածկէ ըզ ձեզ, մաղթանք եկեղեցւոյ սրբոյ 'ի վերոյ ձեր իբրև 'ի վերոյ մեռելոյ, յուսացանեն՝ թէ լուծիք զամենայն կապ՝ որով ընդ աշխարհի կապեալ էիք, որպէս թէ ոչ ևս կալոց իցէք 'ի նմին, այնպէս գործելոյ իցէք՝ իբր թէ աշխարհ մեռեալ իցէ վասն ձեր. հանդիսաւոր ուխտն՝ զոր ուխտեցիք, հաւատարիմս առնեն զմեզ թէ լքեալ 'ի բաց զդործս աշխարհի՝ գրեցայք 'ի զինուորութի Քրիստոսի. այլ ոչ թէ զհոգի նորա առիք, թէ սէր կաթոգին ունիք առ կրօնաւորական աստիճանութիւնս, և հաստատուն իցէ՛ հանապազորդելոյ 'ի հրահանգս նորա։ Ընդ այս ամենայն 'ի ձէնջ են, և 'ի ձէնջ խնդրեն զբուսումն. ասա պէտք են ձերոյ ըստ ճգանց և վաստակոց։

Հակառակ կան կրօնաւորական կենաց ձերոց խոչք յօժարութեանց առ

բարութիւնս և առ հեշտութիւնս՝ կիսամեռք. սէր ընկերութեան և համաձակութեան՝ անհաշտ թշնամիք սրբութեան ձերոյ։ Մ՝նայ ձեզ ընդոստնել զայսոսիկ. 'ի թողուլ զբարիս կենցաղոյս՝ ըստիպէ զձեզ աղքատութիւնն զոր երդուայք. այլ ըստ Ոսկ". ձեզ արժան է անձնովին զգոյս ձեր յաւար մատնել։ Յանապակ մաքրութեան կալ պարտաւորեցիք զանձինս՝ զօրութեամբ անջրելի օրինին զոր ընկալայք. այլ պէտք են ձեզ՝ զի զևստութիւնդ զայդ և զառանձնութիւնդ սիրիցէք, որով ըստ առաքելոյ կայք "Մ՝արմնով... այլ ոչ ըստ մարմնոյ". Բ. Կորն. Ժ. 3։

Հուսկ յետոյ 'ի հնազանդութի սակայն զձեզ՝ խորտակել զկամս ձեր, որ հակառակ կայ այնմ. այլ ձեզ մնայ ապահատառնել զանկութիւն ձեր և զկամս, հնազանդել ոչ նմա միայն՝ որ քաղցրամոք բարոյիւք և դիւրալուր մտօք առաջնորդեալ կառավարէ զձեզ, այլ և զամենեցուն նոցա՝ որ ընդ բովանդակ ըն-

թացս կենաց ձերոց յայս դահ մեծու-
թեան անցեալ կայցեն։ Անցեալ ընդ այս
դժուարին յորձանուտ՝ առաւել ևս դը-
ժուարութիւնք անցիս կան առաջի, մըր-
ցիլ ընդ նոսա. 'ի յաղթել զնոսա՝ այլոց
զինուց են պէտք, զինուց հաւատոյ, բա-
բեպաշտութեան, սիրոյ և աղօթից։

Եւ զի՞նչ, փոքձն արդեօք երկեցու-
ցանէ զձեզ. անծանօթ է ձեզ արդեօք՝
թէ ճանապարհ է այն ախտից լաստ բա-
նի հարց. ճանապարհ ճգանց է անքոյթ
ճանապարհն՝ որ 'ի փրկութի՞ առաջնորդ-
է։ Վէ՛մն այն՝ յոր փոքձէ Աստուած,
և կատարեալս առնէ զզօրութիւնս ծա-
ռայից իւրոց, թէպէտ և ճանապարհ
ճգանց ասացի, քանի՞ այնոքիկ են որք
անուշակ միսիթարութիւնս խնդրեն զը-
ւարճանալ երկնային հաստիչ մանանայ-
ւն. սրչափ գեաք բերկրապատար խըն-
դութեան և խաղաղութեան հոսեն ընդ
սա՝ առ զպասքեալս արբուցանելոյ։ Ի՞չ-
ցեն յերկնից անպատիր փափկութիւնք
ուռոդանել զհոգիս ձեր, և յօղ քաղ-

ցրութեան զովացուցանել զսիրտ ձեր։ Եւ Աստուած գթած՝ որ'ի մատաղ տիոց անտի կոչեաց զձեզ, միշտ առ ընթեր կացցէ ձեր որպէս փեսայ հաւատարիմ, և միշտ յաղթողս արասցէ զձեզ։

Այլ ասա՞ր չարագուշակ խորհուրդ բօթաբեր ախրեցուցանէ զձեզ։ Խրայելեան ժողովուրդն ապաշնորհ առ ողորմութիւնն Աստուծոյ, և միշտ խրստասպարանոց առ բարերարութիւնս նորա, այլ ոչ կարաց ընդդէմ կալ նեղչաց իւրոց. և թիկունս դարձուցեալ անարգաբար յերկրէն աւեաեաց, ցանկացեալ'ի սոին Եգիպտոսի՝ թեքեաց զմիտս իւր խնդրել զերկիրն անհաւատից։ Հիմ վերդովմամբ մեք. առ ինչ ամբոխդ և քրթմնջիւն. չէք մեր յայսմիկ համեմատութիւն ընդ նոսա։ Ժողովուրդ էր այն անմիտ և կամակոր. ձեզ'ի բազնութենէն վիճակեցան բարք քաղցունք և դիւրանասցք, և'ի բարեպաշտութիւն պատրաստք։ Նորա աներկբայ նշանս էր տուեալ զիւրոյ յեղյեղկոտութ-

թեան և անհաստատութեան, դուք ընդ հակառակն ցուցէք զանձինս ձեր առ 'ի բարիս հաստատուն։

Վասն այսորիկ արժան է և իրաւ՝ բարի գուշակութիւնս առնել մեզ ըստ ձերմէ առաքինութէ. «Հաստատեալ եմ վասն ձեր ... 'ի լաւ անդր, և որ լինի է փրկութեամբ». Եբրայ. Զ. 9։ Եւ խնդրեմք զի իջցեն 'ի ձեզ օրհնութիւնք երկնից՝ զոր համօրէն ուխտիւս մաղթեցաք, որք իջին 'ի վերայ ընտրեալ հաւատարիմ մասին սրբոյ ժողովրդեանն։

Եւ Տէր իրաւամբք ընտանութեանն՝ որով մերձեցայք առ նա, երանելիս ապրացէք զձեզ մինչև ցկեանս 'ի վերայ երկրի, և զձեզ և զգործս ձեր զօրացուցէ զօրութեամբ շնորհաց իւրոց. եղծցէ զթշնամիս հոգւոյ ձերոց. բացցէ ձեզ զդանձս ողորմութեան իւրոյ, զի հաստջիք 'ի լրումն փափաքանաց ձերոց, և յաւետիսն խոստացեալ ձեզ. և յետ համբառնալոյ զձեզ ընտրանաք 'ի վտանգէ աշխարհի 'ի վեր՝ փառաւորեսցի 'ի

ձեզ, տալով ձեզ տեղի յանժամանակ և յանեզբական տաղաւարս վերինն Երուսաղէմի։

Ի ՍՈՒՐԲ ԿՈՒՍԱՆՍՆ

ԾԱՌԻ Դ.

Ի ԲԱՆՆ

«Խօսեցայց զքեզ ինձ հաւատով, և ծանիցես զՏէր»։

ՈՒԵ. Բ. 20։

Եթէ արժան էր մեզ 'ի սերկեան աւուրս 'ի տեղւոջ սատ յայսմիկ ընդ ձեզ միայն խօսել՝ և ընդ այլ ձեր վիճակակից միանձուն, որք հաճեցան յիւրեանց քոյրութիւն հրաւիրել զձեզ զառաջին զայս նուագ, ոչ առ այլ ինչ զդէմս բանիցս ուղղէի, քայց և եթ երանելի առնել զվիճակ ձեր, և բարձր առնել և փառաւորել զպարծանս յաղթանակի ձերոյ։ Օ՛վ հանձնաւոր գործդ նուիրա-

նայ՝ զոր նուիրէք այսօր պայծառադէմ և անվեհեր սրտիւ, համարիլ էր ինձ նը-
ման գործոց Դեբորայ կնոջ պատերազ-
մականի և Յուդիթայ. զի և Սողոմոն ձե-
ռըն տայ մեզ միաբանութեան ասել՝ թէ
յաղթութիւն մե՛ծ է նուաճել զհոգւոյ
կիրս, քան պատերազմի կահիւք առնուլ
զքաղաք. «Որ յաղթէ անձին իւրում,
լաւ է քան զայն՝ որ առնու քաղաքս հը-
զօրս». Առակ. ԺԶ. 32. (ըստ լատ.
Թարգ.) Այս յառաջադիմութիւն բա-
նից ապա հաւանեցուցանէր զձեզ, զի
առ պատուականութեան 'ի ձեռս ձեր
հասեալ գանձուդ՝ նախանձաւորք լի-
նիջիք 'ի պահպանութիւն նորա։

Այլ քանզի շուրջ զմեօք բոլորեալ
տեսանեմք իբրև պսակ պատուական՝
անձինս յամենայն կարգէ արս կենցա-
ղականս, որք կեան յաշխարհի, և զօրէնս
և զսովորութիւնս և զբարս նորա ոչ ա-
նարգեն, թերևս և յարգեն խակ՝ և 'ի
պատուի ունին. ապա հարկ համարեա-
ցուք մեզ առաջի առնել զդժուարու-

թիւն ինչ՝ որ գուցէ 'ի միտս նոցա պե-
ռայ լռելեայն, մերձ դնել և զլուծումն։
Լրթէ օրիորդ դեռատհաս, մատաղ տիօք,
ուժով առոյգ, կազմածով առողջ, խուլ
առ հրաւէրս առատաձեռն բաղդին՝ ըղ-
դէմս իւր դարձուսցէ 'ի լռին առան-
ձնութիւն, անձամբ զանձն 'ի ճգուն
դատապարտեալ և յապաշխարութիւն,
փակեսցի յանել բանտ 'ի յաւիտեանս։
Հնար է այսմ լինիլ ոչ այնքան 'ի վեհան-
ձնեայ վսեմութենէ սրտի, քան յանգէտ
պարզմտութենէ, յանհրահանգ տգի-
տութենէ, 'ի վահրոտեալ փոքրոգու-
թենէ, որ ծաղու արժանի իրք են՝ քան
գովութեան և դրուատանաց։ Այս լե-
ղու է փափկասնունդ հակառակորդաց
աւետարանական խստութեանս, որք յա-
նիրաւել առնուն 'ի բերան զվարդապե-
տութիւն կրօնաւորական, և յանչափս
յարգեն զանսանձ համարձակութիւնն
աննուաճելի։

Արդ ընդդէմ այսպիսում լեզուոյ՝
որ բղխէ 'ի մոլար և 'ի սուտանուն դի-

տուԹենէ այժմուս ընդդէմ անսայԹաք և անսուտ իմաստուԹեանն Յիսուսի Քրիստոսի, ամբարձցուք մեք զձայնս մեր. և դոյզն ինչ հատեալ ընդմիջեալ զկարգ վերամփառ սրբազան երգոցս և արարողուԹեանց, ապացոյցս 'ի մէջ առցուք առ 'ի հաստատուԹիւն ոմանց և առ 'ի ձեր քաջարանս. զի անձինք աշխարհիկք անարգեն և ծիծաղին զմիանձնականն առանձնուԹեամբ, որով 'ի կուսաստանս մտանէ աղջիկ օրիորդ իմաստուն. որոյ դիտումն մտաց անդստին 'ի մանկուԹենէ՝ կամ աշխարհի ուղերձիլ ունի, կամ առ Աստուած նուիրիլ պարտի։ Քանզի աշխարհս տէր է ժանտաժուտ, յորմէ հրաժարէ նա մշտնջենաւոր բաժանմամբն. և Աստուած տէր է բարեբարոյ, զորոյ զսուրբ լուծ յանձն առնու և նուիրի նմա հաւատովք 'ի հարսնուԹիւն. «Խօսեցայց զքեզ ինձ հաւատովք»։

Այլ արդարև զի՞նչ է աշխարհս այս, որ սփռեալ տարածեալ ունի զբռնաւոր տէրուԹիւն իւր 'ի վերայ ամենայն մի-

տաց և սրտից մարդկան. որ վարէ բու-
ռըն ճոխութիւն և անտանելի մտահա-
ճութիւն կանխակալ 'ի վերայ նոցա, որ
պաշարէ զամենեցուն դատումն յարգա-
նօք և ակնածութեամբ զինքեանէ՝ որպէս
ոմն որ առատաձեռնէ նոցա շնորհս, նը-
պաստս, բարերարութիւս, յաջողութիւն.
և երանացուցանէ զմարդ, և նովաւ յա-
ջողն նմա 'ի գործս նորա։

Պ՚ելէ ասեմ սա. դու՝ աղջիկ մատաղ,
'ի մայրենի տան քում թերևս 'ի ձան-
ձրոյթ ըմբռնեալ ոչ կարացեր քաջքին-
նել զնրացն կերպարանս՝ յոր այժմ բու-
ռըն հարեալ է քո. և թէ յանարժան
ծաղուէ կամ յանպարկեշտ երգոց 'ի
հեռուստ ուստէք 'ի լսելիս քո հասելոց,
կամ 'ի պէսպէս տեսարանաց՝ զոր լուեալ
իցէ քո պատմել՝ որոց 'ի զննին թատրո-
նաց իցեն յաճախեալք, զպարուց, ըղ-
խաղուց, և զկենցաղակցութեանց. 'ի
սոցանէ ասեմ դատեալ հաւանեցար
գալ ասա՝ իբր 'ի գտանել զայն զոր ցան-
կայիրն 'ի լոյս, յանդգոյշս պատրեցար,

խաբեալ է երևակայութիւն քո։

Մեզ առ 'ի լուսաւորել և ուղղել ըզ-միտս ձեր՝ հնարէ առաջի առնել զբանս սուրբ գրոց և սրբոց հարց, որք ասեն զսա եղծեալ և ապականեալ ըստ բա-րուց յինքեան, և այլոց եղծիչ. ասեն թէ չէ՛ այնպիսին 'ի համարի աշակերտաց Տեառն, և ոչ ինքն Յիսուս Քրիստոս կամի ընդունել զայնպէսն յայն պար։ Որոց միայն զդպայական է իմաստասիրութիւն, և 'ի մարմնապաշտից վրիպանուն դիտութիւն ածէ առաջնորդեալ. որք զառաջինն մարմանէն զլսելիս 'ի ցանկութիւն ախտիցն, զի ապա և 'ի գործն կարապետեսցեն։ Այթէ միայն այսու օրինաք լինէր կանոն ընկերութե՛ մարդկան, որք կեանն. և թէ 'ի փոփոխութեան պաշտաման և վիճակաց կերպարանեն զայն հաւասարութիւն և ներդաշնակութիւն ախտից, վախճանաց և առածից՝ որովք ամրանան և պատսպարին բարեկարգ կառավարութիւնք, թագաւորութիւնք և հասարակապետու-

թիւնք. 'ի նմին ժամու յայլ կերպարան փոխէր աշխարհ բովանդակ ըստ սրբոյն Օգոստինոսի, և զընկերութիս որ յայն-ժամ հնար լինէր Բաբիլոն կոչել, կամ Տիւրոս, կամ դիւաց ժողովարան։

Հնարէ մեզ այլ ևս ասել 'ի հաւաստեաց՝ որ 'ի փորձոյ։ Քանզի յորժամ պէտք լինին բուժել զչարագուշակ հեռևողս աշխարհի 'ի խղճայթեալ 'ի շարաւալից վիրաց անտի իւրեանց, լսեմք գանգատս, լալենս, ողբս և հեծութիւնս։ Այլ ոչ... անձամբ անձին խոստովան եղերուք։ Լուարուք զձայն նոցին իսկ կենցաղականաց, որք 'ի գրկաց ճշմարտութեան խուսափեն յայնժամ՝ յոր հաւակ տիոցն, խորհուրդք, վաստակք անչատեն զնոսա 'ի մտահաճութեանց և 'ի պաշարմանէ կրիցն։

Ասացեն նոքա յայնժամ, թէ աշխարհս ծովէ ալէծուփ. բաւիղէ դիւրամուտ և դժոխելանելի. տեսարան է՝ որ զհաճելին հանդէս փոխէ 'ի կերպարան յայլ՝ յանկարծակի. 'ի մի բան

համառօտեալ՝ կեղծուպատիր է այն, վատշուէր, սուտ սուտ, մասնիչ։ Եւ միջահատեսցեն զբանս իւրեանց ողբով, լալով և հեծեծանօք։ Մեք յաւելումք, և դուք թերևս զնոյն կրկնէք 'ի սիրտս ձեր։ Դուք այնպիսում տեառն ծառայէք՝ որ չէ արժանի ծառայութեանց ձերոց. ապա յանիրաւի 'ի վերայ յարձակիք այնմ՝ որ քամահէ զնա և թշնամանէ և խոյս տայ 'ի նմանէ. և ծաղր ձեր իրաւամբ 'ի ձեզ դարձցի. որք քաջ իրազեկ լեալք անարգութեան աշխարհի՝ տակաւին 'ի լուծ նորա երկայնէք զպարանոց ձեր, և հպատակ լինիք անօրէն օրինաց նորա. 'ի ձեզ՝ որք ծանուցեալ զընութիւն ձեր գերազանց, ծառայս առնէք այսպիսում փցուն տեառն, որ չունի օրինաւոր իշխանութիւն 'ի վերայ բանեղէն և աղաս գոյակաց. որոյ իշխանութիւնն միայն յաթոռ կրկից է և ախտից և ցանկութեան և ապստամբութեան մարմնոյ և հոգւոյ։

Փառք է օրհորդիս այսմ, որ ունչս

քերեալ առ ձերով շինչելափառ լուսով կանխեալ քան զանօգուտ ապաշաւ՝ գիտաց 'ի մատաղ ամս հասակի իւրոյ ճանաչել զանայնութիւն և զպատրանս աշխարհի. ուստաւ արհամարհել զայն, և առ բռնակալ տէրն այն թիկունս փոխանակ դիմաց դարձուցանել արիական համարձակութեամբ։ Ընդ այլովք երկնիւք այլ յաջողուածս խնդրելով, Աստուծոյ նուիրեալ զանձն բոլորովին։

Այլ ո՞վ է այն Աստուած, որում՝ այս նորեկ կրօնաւոր ուղերձէ զմիտս իւր և զզօրութիւնս հոգւոյ իւրոյ, զխորհուրդս մտաց, և զգործս սրտի իւրոյ։ Եւ զայս յանձն առցուք քննել, և զսակ տալուելոյ դաշինն ծանուցանել։ Աստուած ամենաբաւ է, որում՝ հնազանդին նա և անգոյք իբրև զորս գոյութեանն են վիճակեալք. որ զհուր առնէ ցօղ զովացուցիչ, և զընթացս ջուրց յետս դարձուցանէ, և անհոսելն ունի զնոսա. աբեղային կասի յընթացից իւրոց և կեաց. Աստուած ամենազօր, որ բարձրացու-

ցանէ զխոնարհս, և զբարձուն ցածուցանէ, հալածէ յաթոռոյ զնաբուգոդոնոսորեանս՝ արածել նոցա խոտ և ընձիւղս. հանէ զԴաւիթ 'ի հօտից, և առնու տանի զնա մինչև յաթոռ արքայութեան. տայ Սամփսոնի զզօրութիւն, Սողոմոնի զիմաստութիւն, Յեսուայ զյաղթութիւն։ Այսոքանչ ամենազօր է նա, որոյ թշնամիք եթէ ընդդէմ նմա հակառակ կացցեն, որպէս չորացեալ տերևք աշնայնոյ մնան թօթափեալք, և լինին որպէս մէգ և մառախուղ, որ առ մի և եթ շնչիւն հողմոյ ցրուին և 'ի չիք դառնան։

Փառք է հնազանդել այսպիսի մեծի և հզօր Տեառն. ծառայել նմա՝ է թագաւորել. և վասն այսորիկ փառք է աղջկանս՝ որ մեծապէս պանծայ այսու ծառայութեամբս. հաճի ընդ այն, և առաւել համարի զնա քան զամենայն մեծութիւն և զհարստութիւն։ Ակնածութիւնք և արհամարհութիւն 'ի վերայ այնպիսումն անկանի՝ որ կամաւ և յօժա-

ըուԹեամբ ընդվզեալ կքրի ընդդէմ այսպիսի ամենաղօր և ամենամեծ Աստուծոյ։ Այնչափ առաւել, զի սորա ընդդէմ կալով ընդհանուր զեղծման՝ փառաւորի յամենեցուն, Թէ և յոչ կամայ. քանզի որք ոչ փառաւորեն յերկինս զողորմութիւն նորա, հռչակ հարցեն զարդարութիւն նորա 'ի դժոխս։

Այսպէս միւսմ դիպուածոյ հնար է պատճառս տալ կենցաղականին՝ ծաղրելոյ զձեզ և երգիծանելոյ. և մեզ հարկ է խնամով և զգուշութեամբ յայտնի առնել ձեզ։ Այն է՝ յորժամ լիցի ձեզ հեղգըս գտանիլ 'ի պաշտաման կրօնին՝ Եթէ ցրտասջիք յեռանդանէդ ձերմէ սրբոյ՝ որովք այժմ բուռն հարէք զկրօնաւորական ընթացիս. յայնժամ ոչ յանիրաւի յորջորջելի էր ձերդ ընտրութիւն՝ անմտութիւն և յիմարութիւն, Եթէ յետ հրաժարելոյ յիրաց մեծ կարծելոց յաչս աշխարհի՝ կորիցէք 'ի փոքունդ յայդոսիկ 'ի չնչին և յաղկաղկս ըստ ամենեցուն վարկածոյ։ Այթէ թո-

զեալ զաշխարհ հեշտութեան, փառաց և ամբարտաւանութեան, աշխարհ այլ կազմիցէք 'ի ձեզ առանձինն զինքնակամ աղիկամիս զհեշտութիւնս և զյօժարութիւնս։ Լցթէ կործանեալ զկուռս Բաղաամու կամ Մողոքայ, դրօշուածս այլս՝ անարգս քան զայնոսիկ ամբարձջիք. կանգնեսջիք նոցա սեղանս, և յաշտս նուիրանաց, որպէս բանիս կարգ է ասել, ձօնեսջիք։

Ընժխտելի է, թէ յիմարութիւն է այդ և խօլամտութիւն, ոչ կարացեալ այլ ևս զաշխարհի վաղանցուկ և սրագահաս հեշտութեանց առնուլ զճաշակ, անհոգ լինել զնաղաղ ժառանգութեամբ ճշմարիտ և անպատիր հոգևոր բարութեանց։

Վասն որոյ առ 'ի լրումն սերկեան յաղթական հանդիսիս արժան է հաստատութեամբ ունել 'ի միտս ձեր ոչ զկրօնաւորն միայն լինել, այլ և լինել կրօնաւոր սուրբ։ Ոչ ողջակէզ մատուցանել Աստուծոյ զհեշտութիւնս միայն

և զդրդռութիւնս աշխարհականս. այլ և խօսիլ կամեցեալ ըստ ոճոյ սրբոյն Գրիգորի, զձեզ իսկ 'ի գլխովին՝ բոլորանուէր ողջակէզ հանդերձել առաջի աչաց Տեառն 'ի հոտ անուշից։ Կոչեալ նորա զձեզ 'ի կրօնաւորական վիճակ՝ անդերկուանալի եղիջիք. զի նա հոգայ վասն ձեր նպաստս կարևորս՝ անսայթաք ընթանալ յուղիղ շաւիղ կոչման ձերոյ։

Վասն այսորիկ ուղեցոյց կարապետք ձեր եղիցին նեբբին լուսաւորութիւնք մտաց, և արտաքին յորդորք կամաց. որոշել և ընտրել տայ ձեզ նա զայս աստենային մինչև ցորոշումն սրտի՝ միջնորդութեամբ Հոգւոյն և մեծաւորին, երկուց անսխալակ կառավարաց։

Մեծաւորին ասեմ, որ այսպէս իմաստուն և խոհական բարեկարգութեամբ կանոնաւորէ զձեզ և կառավարէ. բազում այնք՝ զի հոգևոր հրահանգք կրթէ զձեզ, այլ յաճախս և օրինակաւ. ուսջիք օրինակաւ նոցա պահել զտեսանելիս յայրատ հայեցուածոյ,

սանձ դնել բաջաղանաց լեզուի, հանդուրժել օր ըստ օրէ դաժան ձանձրութեանց. զդէմ ունիլ զուարթամիտ արթնութեամբ ամենայն անհաճոյ արկածից. և զգուշեաւ պահել 'ի սրտի, և բացայայտ մերկել ըստ հարկին ստիպելոյ զկայտառութիւն զուարթ և խաղաղական հոգւոյ։

Ուսջիք օրինակաւ նոցա մի՛ ներել՝ զի յաղօթս ձեր մեղկագին խորհուրդք մտցեն սպրդեալ. զգուշանալ ձեզ 'ի ըզբօսանաց խորհրդոց. յառանձնութեան խրճթին ձերոյ անձամբ առանձինն ըզմեծութիւնն Աստուծոյ խոկասջիք, կամ հանդերձ այլովք 'ի մի միաբանութիւն եկեալ՝ զնա գովեցէք և բարձր արարէք երգովք օրհնութեան. սաղմոս և առաւօտին երգս նուագելով, հրաւէր կարդացէք առ աշալուրջն, առ արևն, առ ստուերս, առ ջուրս և առ ծաղկունս՝ օրհնել զնա։

Այսոքիւք հրահանգօք կատարելութեան մտանէք 'ի ճանապարհ ստանալոյ

շնորհս. զի առաջին խորհուրդք ձեր ամբարձցին առ Աստուած ընդ ծագել արևու. ուղղեսցին առ Աստուած ընդ ժամս ժամս աւուրն. ընդ Աստուծոյ հանգիստն 'ի վերայ հասանիլ դիշերոյ. արագ թռուցիք առ Աստուած ընթացցին ընդ ծաղկազարդեալ անտառսն Լիբանանու, և ընդ անուշահոտ այգիսն Ենգադդեայ. ևս և ընդ անմատոյց առապարս լերինն Գեղբուայ. այսինքն՝ եթէ առատաբաշխ աջով զեղցէ 'ի ձեզ մխիթարութիւնս հոգևորականս՝ ճաշակել զայն խոնարհ խնդութեամբ, և եթէ տանջեսցէ զձեզ ամլութեամբ հոգւոյ՝ տալով ձեզ ստինս աչաց ցամաքեալս, երախտագէտ լինել և զայնմանէ ցածուն շնորհակալութեամբ։

Գիտեմ լինել այսմ լեզու օտար և անծանօթ առ որս որք ըստ աշխարհի կեան. այլ մի ըմպահկեսցէ այնպիսին ըզբանքս, և խոստովան լիցի, զի եթէ երբեմն և ինքն 'ի մէջ խնծղանաց իւրոց և պարուց՝ մտայոյզ անձկութեան սրբ-

տի հանդիպեսցի, հնար է նոյնպէս և ջերմեռանդն կրօնասիրի 'ի մէջ լուռ-թեան իւրոյ և խստակրօն կենաց ճաշակել զդաղանի մխիթարիչ հեշտու-թիւնս։ Եթէ վասն նորա են ուրախու-թիւնք, որք բերեն տրտմութի և թախ-ծութիւն, մարթ է լինել և վասն ջերմ-եռանդն կրօնաւորի, զի ի ցեն ողբք և լալիք՝ որք բերցեն ցնծութիւն և ու-րախութիւն, որպէս ասէ սուրբն Օգոս-տինոս. «Լ՛ողբ՝ որ ցնծութի ունի յին-քեան»։ Եւ այս վասն այսորիկ՝ զի յամօթ հետեւողաց աշխարհի, և 'ի քաջալերու-թիւն քո նորամուտ հարան Յիսուսի Քրիստոսի, անչափ բարերար է Տէր և ազատ առատապարգև. իսկ աշխարհ անշնորհակալու, ժլատ և անճանաչող։

Ապա կացէք 'ի փակարանի, կացէք յառանձնութեան մենաւորք. այսպէս համարեսջիք առ ականէ մարդկան, և ոչ առաջի Աստուծոյ, որ է ընդ ձեզ 'ի գի-շերային լռութեան և 'ի սենեկի առան-ձնութեան ձերոյ. և յամենահայեաց

աչաց նորա սխալէ և ոչինչ՝ զոր արժան էցէ տեսանել. որում՝ վարձս տալ վայել էցէ և տայէ ձեզ ճանաչել, թէ լաւ է մի օր 'ի դաւիթս իւր կալ, քան հազար ամ 'ի յարկս մեղաւորաց. և տեսեալ զձեզ հետևիլ կոչման իւրում՝ և ծառայել նմա 'ի կրօնաւորական ընթացս յայս մահացու յաւիտենի, կոչեսցէ զձեզ լաւիւ վայելել զձեր յաղթանակ 'ի վերս անդր յերկինս։



Ի ՍՈՒՐԲ ԿՈՒՍԱՆՍՆ

ՃԱՌԵ.

Ի ԲԱՆՆ

«Ի դոյն խակ կոչեցայք . . . զի զհետ երթայցէք զհետ նորա». Ա. Պետ. Բ. 21։

Թէպէտ և հետևիլ Քրիստոսի իբրև ընդհանուր իմն օրէնս համարի, կարևոր հարկ լինէր առ հասարակ ամենայն քրիստոնէից ըստ իւրաքանչիւր հասա-

կի, վիճակի, աստիճանի, պաշտաման և սպասու. այլ կարի իրաւամբ արժան է առնուլ իբրև մասնաւոր իմն շնորհ պա-հեալ առ այնոսիկ՝ որք առանձին կոչ-մամբ զկրօնաւորական կենաց բուռն հա-րեալ իցեն։

Արդարև քրիստոնեայք ամենայն կո-չեցեալք են զհետ երթալ զհետոց Քրիստոսի հարկիւ հրամանի, այլ կրօնա-ւորք կոչեցան հետևիլ նմա ազատ և ան-բռնադատ ընտրութեամբ կամաց ըստ հրահանգացն։

Կարիք ստիպեն զսոսա աչալուրջ կալ 'ի ճիշտ պահպանութիւն աւետարա-նական պատուիրանացն. ընտրութիւն սոցա յինքն փակէ զվերհանձնական լրու-մն աւետարանական խրատուց. և պար-տի յանձն առնուլ և խոստովանիլ զեղա-նակ տարազու կենաց, և զկերպարանս միջնորդաց յայն ուղերձելոց ընդ նոյն ճանապարհս և ընդ նոյն շաւիղս՝ զոր Յիսուսի Քրիստոսի հաճոյ թուեցաւ կնքել, և նոքաք կամեցաւ որոշել զհրա-

շալի ճանապարհ մահացու կենցաղոյս։

Ահա առանձին շնորհն զոր յանձին զգեցար 'ի վայրկենէ ասսի՝ յորում ըզ-կրօնաւորական վարս ընկալար. շնորհի քեզ այս Աստուծոյ իբր նպաստ մասնաւորեալ քեզ բարեգթութեամբ. «Ի դոյն իսկ կոչեցայք... զի զհետ երթայցէք զհետոց նորա»։ Վախճան կենաց ձերոց յօրէ յայսմանէ և առ յապա՝ պարտի լինել նոյն իսկ վախճան բազմարդիւն կենաց Յիսուսի Քրիստոսի. քանզի և գաղափարդ՝ որ առաջի դնի քեզ 'ի զբնին, ընդօրինակեալ է 'ի նոյն իսկ յաստուածային գաղափարէ, որոյ կէտ նըպատակի է նոյն ինքն Աստուած՝ հեղինակ կարգացս։

Ո՛վ մեծի շնորհիս, ո՛վ անպատում բարեացս, որ այսօր աստուածանմանս առնէ զձեզ։ Օ՛ինչ ինչ տրիտուր արժանի ընդ այսքան նպաստից. զկաթդ, ունիջիք կանոնս՝ որք առաջի եդան ձեզ. ունիջիք յօրինակ զչերմեռանդն հոգևոր քորս ձեր. ունիջիք աղդեցութիւնս և

յիշատակութիւնս 'ի հոգևոր առաջնորդաց ձերոց։ Ի մէջ այսքան ուղղչաց ձերոց՝ որք ըստ սմին օրինակի շաւիղս ձեզ ցուցանեն, մի՛ ինչ անհաճոյ թուեսցի ձեզ՝ թէ յետ առաջնորդեալ լինելոյ արտաքս քան զաշխարհ՝ յուշ արասցուք ձեզ զկարատն տուեալ 'ի հրեշտակաց առ Ղովտ, յորժամ առաջնորդեալ ած զնոսա մինչև 'ի սեամն անօրէն քաղաքին։ «Մի՛ դառնայցես յետս։ (ասացին հրեշտակքն առ Ղովտ, զոր և մեք այժմ առ ձեզ կրկնեմք)։ և մի՛ կայցես յամենայն կողմանս աշխարհիդ։ զերծիր 'ի լեառն»։ Ծննդ։ ԺԹ։ 17։

Արդ՝ զայս վայրկեան յորում զսուրբ հրահանգս ընկալարուք, մի՛ իցէ թէ արկջիք յետս զուսովք, կամ դարձջիք յետս հայել յաշխարհ յայն՝ զոր լքեալ թողէք։ Քաջախսրհ գտայք՝ յորժամ վճռեցիք լքանել զնա։ մի՛ և յիշատակ անգամ նորա զոզեսցի յանկիւնս ինչ յիշողութեան ձերոյ։ Արդէն իսկ գիտէք, զի ցրուեալ են 'ի նա և ընդ ամենայն կողմունս նո-

բա որոգայթք և հաղբք, ասէ Օգոստի-
նոս. թէ յաջ դառնայք, ահա որոգայթք.
թէ յահեակ՝ նոյնպէս որոգայթ. «Թա-
կարդք յաջմէ, և թակարդք 'ի ձախմէ»։
Օ՞ուշակս դնէ աշխարհ զգոյս իւր, ըզ-
բերկրանս իւր, զպատիւս իւր. յորո-
գայթիցս յայսցանէ ապրեցայք յաջո-
ղութեամբ, մի դառնայք դարձեալ 'ի
վտանգ 'ի նոյնս ըմբռնելոյ։ Մի նորա-
լուրս խնդրիցէք զաշխարհէ, և մի ըզ-
նոցանէ՝ որ նորայն իցեն. զի մի ընդ յա-
ջողուածս նոցա խնդասջիք, և ընդ ձա-
խողակս նոցա տրտմեսջիք։ Գիտասջիք՝
զի Յիսուս Քրիստոս, զորոյ զշուիղս կո-
խել պատուիրեցայք, խոստովանի յաշ-
խարհէ ասսի չլինել. «Ես չեմ յաշ-
խարհէ». Յովհ. ԺԷ. 16։ Այս և եթ
շնոր է՝ զի և դուք հրաժարեսջիք 'ի նմա-
նէ հրաժեշտ կատարեալ, և հեռասջիք
մշտնջենաւոր նողկանօք։

Ընհնարին է խաղաղութեան թա-
գաւորել 'ի մեզ, ասէր երբեմն Աբրա-
համ առ Ղովտ. վասն այսորիկ՝ թէ յայս

կոյս դարձցիս դու՝ ես յայն կողմն. «Թէ դու յահեակ՝ ես յաչ. եթէ դու յաչ, ես յահեակ». Ծննդ. ԺԳ. 9։ Օ՛նոյն և ձեզ արժան է ասել առ աշխարհ. ոչ է հնար լինել՝ի մէջ մեր զոդ սիրոյ և խաղաղութեան. այլ և այլ են նպատակք մեր, վախճանք և դիտողութիւնք տարբազան. շահք մեր և օգուտ չունին համեմատիլ ընդ միմեանս. ապա բաժանումն, անջատումն. «Թէ դու յահեակ՝ ես յաչ. եթէ դու յաչ, ես յահեակ»։ Իմ ժառանգութիւն է Յիսուս Քրիստոս. նմա միայնոյ եմ նուիրեալ՝ի հարանութիւն մշանջենաւոր. և մի՛ եղիցի ինձ ուծանալ հեռանալ՝ի նմանէ. «Ոչ դարձայց յետս»։

Այլ չէ արժան զամենայն դաշն ըրել՝ որ ընդ աշխարհի, մանաւանդ ըստ կրօնաւորական կապս առ աշխարհականս արժան է հաստատել. միայն ոչ փոյթ ունիցի՝ի յառաջադիմութիւն կրօնաւորական կատարելութեան համարի յետս խուսել։ Կասիլն և եթ՝ի ճանապարհի՝

ոտոտանայ արժանի իրք են։ Այլ ի դուռ-
ըս մենաստանին, ի խօսակցութեանց
վայրս և յաստիճանս շնչէ անմաքուր
հողմն աշխարհական հեշտութեց, փա-
ռաց և կենցաղական սնոտեաց։ Ընդ
սեսանին նոյն իսկ բերկրութիւնք, զը-
ւարճութիւնք, հեշտութիւնք. լսելի
լինին նոյն ձայնք ծաղրս, խեղկատա-
կութե, երկդիմի բանից։ Հրեշտակու-
թիւնք են հրապոյրք եկեալ յաշխարհէ,
որք շողոքորթեն, հրաւիրեն, թովեն,
և ընդ ինքեսամբ ողորմելի իմն եղանա-
կաւ նուաճեն։ Աչք տեսանեն՝ զորս գոր-
ծինն արտաքոյ. լսէ ուշկն՝ որ ինչ խօսե-
ցեալ լինի. արդ՝ զի՞նչ ապահովութիւն
յուսալի իցէ յայնժամ։

Որ ջրջի ընդ ճանապարհսն՝ որք ի
քաղաքս մօտաւորք իցեն, հոգւով ևս
հաճիլ ցուցանէ ընդ վայելուչ հեշտու-
թիւնսն. «Յայգուոյն Սոդոմայ որթ նո-
ցա, և տունկ նոցա ի Գոմորայ». Բ. Օրի.
ԼԲ. 31։ Ի դեղեցիկ այգեստանուոյն որ
արտաքոյ ցանկոյն Սոդոմայ՝ հեշտաց-

եալ, զմայլի նոքօք մինչև յարուարձանս Գոմորայ։ Այդի Սոդոմայ և արուարձան Գոմորայ կարեն ասել իրաւամբք յաղագս կրօնաւորի ուրումն՝ նորալուր արտավէպք և անշահաբերք, նախագահութիւնք փառասէրք և մնոտիք, պչրանք շքեղք և մոլորեցուցիչք, պաճուճանք, յարդարութիւնք և յօրինմունք. «Յայգեւոյն սոդոմայ»։ Չեւ այսմ անմարթէ առանց յանցանաց լինել յայնմ՝ որ այլ պարտիս յանձն էառ, և այլ պաշտօն ընկալաւ 'ի խոստովանութեան իւրում։ Այլ մանաւանդ պարտ է այնպիսւոյն յառաջադէմ եւս զարգանալ յայսպիսի ընթացս, լուեալ հրեշտակին ձայնի. «Օ՛երծիր 'ի լեառն»։

Ոչմարիտ է, զի և ընդ պարսպօքս են դաշտք, են ծործորք, են և լերինք. դաշտս և ծործորս կոչեմք զտարաղ ինչ կենաց, որ թէպէտ չէ ըստ կենցաղական նացս, այլ ոչ և քրիստոնէական կրօնաւորի կենաց սեպհական. կեանք հեղգ, ըստ սովորութեան, անկատար, որ չու-

նի տեղի յիսկական պահպանութիւն օրինաց. այլ և ոչ իսկ լաւ արժանաւոր յանձն առնու յաժարութեամբ զայնոց պահպանութիւն։ Ի առանձնութենէ իւրմէ չէ ինչ գոհացող. չառնու զինաշխարհիկ ճաշակ մեռելութեան անձին. ոչ անձին սեպհականէ զայլոյ կամս. երբ կընչի տխուր և թախծագին վարել կեանս, ճղճիմ մնացեալ 'ի մանր մանր պատուիրանացն պահպանութիւնս։ Այլ 'ի նոսա այնու աչօք, որով երբեմն եբրայեցիք հայէին յերկիրն Աւետեաց՝ կարծեցեալ թէ իցեն անդ հսկայք տիտանեանք, և նհանգք վիթխարիք ամենակուլք. "Երկիր մարդածախ է բնակչաց իւրոց". Թիւ. Գ. 37։ Այլ աղէ, այս ահ և երկիւղ մի պաշարեսցէ զքեզ. քաջալերեաց հարան նորընծայ, և մի վհատեցուցաներ զոգի քո. փորձեա և տեսցես. "Ճաշակեցէք և տեսէք". Սաղմ. ԼԳ. 9։

Ամարգարէին Եզեկիէլի յափշտակեալ ուշիւ մնայ՝ եռեսս առաջի իւր ստուար

մատեանդ գրեալ ներքուստ և արտաքուստ. և ՊՐՊԻՍԻ գրովք. ողբովք, երգովք և վայիւք. «Այր գրեալ 'ի նմա ներքոյ և արտաքոյ ողբս և ձայնս և վայս». Եզեկ. Բ. 9։ Ազգ տունէ նմա Աստուած ուտելզգիրսն. «Կէր զմատեանդ զայդ». անդ. Գ. 1։ Յաւալից մարգարէ, զի՞նչ առ այդպիսի գործ՝ պատգամ. այլ սակայն քաջալերեալ ուտէ զայն. և հաղիւ 'ի ստամոքս նորա հասեալ՝ այն ինչ յաւիշկ փոխարկեալ և յարիւն, ահա գառնացան քիմք նորա՝ որք զճաշակն առին. ապա փոխեալ 'ի քաղցրութիւն՝ որ ըզգառնութիւնն զայն վանեաց, իբր ըզքաղցրութիւն խորսխոյ մեղու. «Այս է զի 'ի բերանի իմում որպէս մեղր քաղցրը». անդ. Գ. 3։

Տեսէր հարան ցանկալի՝ զմատեան կարդայ ձերոյ. առ զայն 'ի ձեռս. հայեաց ընդ այն. ոչ միայն ընթերցիր զայն, այլ և զայն խորհեաց զտիւ և զգիշեր անընդմէջ, մինչև յաւիշկ փոխեսցի այն քեզ և յարիւն։ Այն 'ի նմա ներքուստ

ողբք և ձայնք և վայք։ Լու արդարև մեծ վայ է յաչս մարդկան՝ ուրանալ զնոր կամս. ապաշխարութիւն, ժուժկալութիւն, առանձնութիւն, հանապազօր սաղմոսերգութիւն, անընդհատ աշխատութիւն։ Ո՞վ դառնութեանս. այլ քաջալերեաց, կեր զմատեանդ։ Ընդդէմ է բնութեան. յաղթեա նմա, կեր զմատեանդ, և տես՝ ցես փոխեալ զհամ նորա 'ի նմանութիւն մեղրոյ քաղցրոյ։ Օրացեալ յայս ամենահամ յերկնային կերակրոյ՝ զհետ գընասցես զվաստակաւոր հետոցն ընդ Յիսուսի Քրիստոսի, որ առաջնորդ լինի քեզ և ուղեցոյց յաներկեւանութիւն. "Որպէս ընկալայք զՅիսուս Քրիստոս զտէր՝ նովին գնասջիք". Կող. Բ. 6։ Նովին ելջիք ընդ զառ 'ի վերս լերին կրօնաւորական կատարելութեան. "Փախիր 'ի լեառն. փոփոխեաց 'ի լերինս որպէս ճնճղուկ". Սաղմ. ԺԱ. 2. և անդ անելիկեան եղիցիս. "Օրծիր 'ի լեառն"։

Ահաւասիկ քեզ հարանդ նորամուտ՝ խրատն հրեշտակական, զոր յուշ քեզ

ածեմ. մանաւանդ՝ ոչ քեզ միայն, այլ և համօրէն կրօնակից քերց քոյ։ Ամենայուն տուաւ իբր շնորհ առանձինն՝ ըստ հետ ընթանալ զհետոց Յիսուսի Քրիստոսի. և առ 'ի վայելել զայս շնորհ, հարկ է բաժանիլ յաշխարհէ, և յամենայնէ որ նորա իցէ, և սերտիւ միանալ ընդ Աստուծոյ։

Եւ զինչ, երևի ձեզ այս յիշատակ առաւել խստութիւն ցուցանել 'ի կրօնաւորական կեանս. Թուին ձեզ այս ամ կամ ոչ ըստ ամենայնի կարևորք, կամ շաւիղք ոչ այնչափ դիւրակոխք. շատասջիք ընդ միջակային ինչ առաքինութիւն, որով աշխատ լինիջիք միայն՝ ոչ լինել անարժան իսկական օրինազանցութեամբ՝ փրկութեան և արքայութեան։

Կամեսջիք վրիպել յաչաց զայն հոգի՝ որ կառավար պարտի լինել ձեր և բաժին և ժառանգութիւն 'ի վանս. Թիկունս դարձուսջիք այսմ մեծափառ շնորհի կրօնաւորական խոստովանութեանն ձերոյ. ո՛չ, քաւ 'ի ձէնջ այդ, լսել ըստ

տկար զկերկերեալ և զանպիտանացեալ ձայն բնութեան։ Եթէ յողոք նորա խոնարհեալ ձեր՝ ոչ կամեսջիք յառաջադէմ ընթանալ ընդ դժուարակոխ աշխատասյոյր և անհարթ ճանապարհս առաքինութեան, զի՞նչ իմիք ակն ունիցիք յաղագս գործոյդ յանձն առելոյ։ Զի՞նչ լիցի զձէնջ։ Ո՞վ կարէ գիտել զծածուկ խորհուրդս տեսչութեան. այլ և ո՞վ աներկեւան իցէ զփրկութենէ իւրմէ։ Եթէ և գիտացեալք թէ առանց մտանելոյ 'ի լրիւ ժառանգութիւն հոգւոյ կրօնաւորական կատարելութեան՝ կարէք ըստանալ զայս փրկութիւն, արժա՞ն էր ձեզ անտես լինել զմիջոցսդ՝ որք յայն առաջնորդեալ ածեն։

Ո՛վ իմաստիցս առելոյ 'ի սրբոյ Հայրապետէն, 'ի հօրէն և 'ի հիմնադրէն ձերմէ 'ի սրբոյն Օգոստինոսէ։ Քանի՞ քրտունք հեղեալք. քանի՞ ակնկալութիւն առաջին հիմնադրաց այսր սուրբ վանից 'ի դերև ելեալք։ Եթէ այն աղնուապաշտ կրօնաւորք յիւրեանց նախ-

ընծայ հետևողս այսպիսի գտանէին հետևողութիւն, ուր լինէին յայնժամ յաղթանակք փառաց կանգնեալք 'ի կատարաւերածոց վաստչուէր բարոյից, անկարգութեան և մոլորութեան, աշխատութեամբ այնպէս քաջ և հուժկու քերց ձերոց՝ որք կեցին նախ քան զձեզ. և շինութի՛ ետուն մենաստանիս իւրեանց օրինակաւ, և թողին 'ի սփոփանս յիշատակ զօրհնութիւն և զփառս։

Արդ՝ ընդ հովանեաւ արմատենեացս այսոցիկ նստիք դատարկացեալք ապշեալք ընդ դիւցազնական առաքինութիւնս նոցա, և անարդիւն գովեալք զյաղթանակս նոցա։ Գործք այնց պայծառաշուք քերց ձերոց՝ զարմանալիք հրեշտակաց և մարդկան, և սարսափելիք դիւաց, յանօգուտս եղիցին յանձն առեալք 'ի փառս և 'ի պարծանս անցելոց դարուց, և յամօթ և 'ի նախատինս այժմուս. և առ յաջորդս ձեր թողջիք օրինակ զանարդ և զհեղդ վարս ձեր. պակասեցուսջիք յայսմ քեռէ ձերմէ

զեսթանս՝ որով նախանձորդ լեցի վե-
հանձնեայ գործովք հաւասարիլ առա-
քինութեանց ձերոց։

Այլ մեզ 'ի զուր են զրոյցքս, ու-
րուական և ստուերս անգոյս ստեղծա-
նելով առաջի հոգւոց ձերոց։ Զի՞նչ ոք
'ի ձէնջ և ոչ մի, որ այսպիսի կեղտ ա-
բատոյ յանձն առցէ՝ մոռացեալ զանձն։
Ամենայն ոք այսօր գլխաւորապէս նորոգ-
գէ առ հայր և հիմնադիր կարգին իւ-
րոյ զորդիական հլութիւն խոստովանիլ
առ կանոնս նոցա և առ օրէնս. զհաւա-
տարիմ պահպանութի՛ն ամենայնի, որոց
զօրութիւ կրօնին գտաւ պարտաւոր. և
արժանահայց մաղթանօք իւրովք խընդ-
րէ, որպէս զի՝ զոր օրինակ առ այս նորընծ-
այ կրօնաւոր ետ այսօր զհոգի իւր և ըզ-
հոգի կանոնաց իւրոց, ըստ նմին յանցն-
իւրան 'ի քերց անտի գլխաւորապէս նո՛ր
նորոգեսցէ զայն ոգի, և ծաղկափթիթ
զուարթացուսցէ. և ամենայն գործովք
բարութեան պաղաբերս արասցէ, զի
ամենայն ոք համաձայն լեցի հոգւոյ կոչ-

ման իւրոյ. «Ի դոյն իսկ կոչեցայք ... զի զհետ երթայցէք զհետոց նորա»։

Ի ՍՈՒՐԲ ԿՈՒՍԱՆՍՆ

ՃԱՌ Ա.

Ի ԲԱՆՆ

«Կոչեցեալս զնա, և ես տայց քեզ պատասխանի».
Յովհ. ԺԴ. 15։

ԵԹԷ կոչումն 'ի վիճակ կրօնաւորական՝ իցէ մեծ իմն պարգև, որ բաբերար նպաստիւք երկնից հաղորդի շնորհի հոգւոց ոմանց, ճշմարտութիւն ինչ է այս քաջ հաստատեալ փաստիւք և հանապազօրեայ փորձիւ։

Ի զուր խնդրեն ոմանք անարդ երեւեցուցանել զայս վիճակ 'ի յաչս մարդկան, կամ թուելով զպակասութիւնս՝ որք 'ի սմին գտանին, կամ զվտանգս՝ որոց պարտ է լինել դիմագրաւ։

Եթէ յինքեան մտածի՝ վիճակ իմն է կատարելութեան, վասն որոյ և կոչումն առ այն՝ շնորհէ պարգևեալ 'ի Տեառնէ. և պակասութեանց միոյ ուրուք՝ քաւթէ հնար լցէ կեղտ արատոյ բերել ամենայնի։ Սուրբն Թովմաս զմուսան 'ի սուրբ կրօնս՝ կոչէ երկրորդ մկրտութիւն. որ Թողու զմեղս, յորում է յայնժամ նուիրեալն, ոչ միայն եղանակաւ ներողութեան՝ այլև հատուցման. և սուրբն Յովհան Ոսկեբերան հանդերձ այլովք սրբովք հարամբք Յունաց և Հռովմայեցւոց՝ մեծամեծ ներբողիւք գովեն զսա։

Սակայն և այս անյերկուանալի է, զի այս երանութիւն կոչման կախի և ըստ մերոյ համաձայնութենէ 'ի նոյն. այնպէս՝ զի որ 'ի խորհուրդս Աստուծոյ երկնային օժանդակութիւն է մեզ և նշան փրկութեան, պակասեալ համաձայնութեան մերոյ՝ լինէր յայնժամ մեզ 'ի թշուառութիւն, և 'ի նշան դատապարտութեան. «Կոչեսցես զիս, և ես ասացից քեզ պատասխանի»։ Այս երկու

խորհրդածութիւնք՝ մի՝ յաղագս կոչման Աստուծոյ՝ որ շահաւոր և բաղմօգուտ է մարդոյն, և միւս ևս՝ յաղագս համաձայնութեան՝ որ կարևոր է 'ի լրումն խորհրդոցն Աստուծոյ, լիցին նիւթք առաջակայ համառօտ ճառիս, 'ի մխիթարութիւն եռանդուն և արիասիրտ կրօնաւորաց, և հեղգացելոց՝ թէ գլուցին, 'ի կշտամբութիւն, և ձեղ յօգուտ և 'ի քաջալերանս։

Ար քաջ սրոշել զաբերարութիւնն կոչման՝ կարևոր է մեզ զառաջինն զմիճակ կրօնաւորական կենացն զնեել, վերլուծանելով զնոսա յիւրեանց առաջին սկզբունս, և 'ի դիտաւորութիւն եկեղեցւոյ յընդունիլ զնոսա. բարեպաշտիշխանաց՝ 'ի ճոխացուցանելն զնոսա պէս պէս պարգևօք, սրբոյ հիմնադրաց՝ որք կանոնս յօրինեցին սմա, ջերմեռանդն հաւատացելոց 'ի յարգել զնոսա ընծայութք, և նորընծայ կրօնաւորաց 'ի խոստովանիլ զայս կրթութիւն։

Յորժամ առաջին աւուրք էին նորա-

ՏԻՆ ԵԿԵՂԵՑՒՍ, ՄԻՆՉՂԵՌ ԱՌԱՋԻ ԱՀՍՍ ԷԻՆ ՕՐԻՆԱԿՔ ՔՆԻ ԵՒ ԱՌԱՔԵԼՍՍ, ՅՈՐԺԱՄ ԱՐԻՒՆ ՄԱՐՄԻՐՍՍԱՍ ԴԵՌԱԿԵՆԴԱՆ ԵՒ ՋԵՐԱՋԵՐՄ՝ ՎԱՌԷՐ ԵՒ ԱՐԾԱՐԾԱՆԷՐ ՁԼԱԽԱՆՃ ԵՒ ՁԵՌԱՆԴՆ ԱՄԵՆԱՅՆ ՔՐԻՍՏՈՆԷԻՍ, ՉԷԻՆ ՃԳՆՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՃԳՆԱՐԱՆՔ, ԿԱՄ ԼԱՒ ԵՒ ԱՍԵԼ ԿԱՄԵՑԵԱԼ՝ ԵԿԵՂԵՑԻՔ ԻՍԿ ՀԱՄԱԿ, ԵՒ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՆ ՀԱՒԱՏԱՑԵԼՍՍ՝ ՁԼԱՆԱՍ ԻՆՉ ԲԵՐԷՐ ՁԼՄԱՆՈՒԹԻՆ։

Ա.ՅԼ ԸՍՏ ԿԱՆՈՆԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆՍ՝ ԱՅՍ ԵՌԱՆԴՆ ՆՈՐԱԾԻՆ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՎԱՂՔԱՋ ԽԱՓՈՒՑԱՒ, ՄԵՂԿԱՑԱՒ ԵՒ ՆՈՒԱՂԵՑԱՒ. ՈՒԱՍԻ ՄԸՏԵԼ ՅՈՄԱՆՍ ԻՂՁ ԵՒ ՆԱԽԱՆՃ ԱՆՄՈՌԱՑ ՊԱՀԵԼ ԶՍՈՌԱՋԻՆ ՀՈԳԻՆ՝ ՀԻՆԵՑԱՆ ԱՆԱՊԱՏՔ ԵՒ ԱՌԱՆՁՆՈՒԹԵԱՆ ՎԱՅՐՔ, ԵՒ ԱՊԱ ՀԵՏ ԶՀԵՏԷ ՄԵՆԱՍՏԱՆՔ ԿՐՕՆԱՒՈՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՄԲ, ՊԷՍՊԷՍՔ ԸՍՏ ԱՐՍՍՔԻՆ ԴԻՍԱԿԻՆ, ՅԼ ԸՍՏ ԳՈՅԱՑՈՒԹԵԱՆՆ Ի՛ՄԻ ԵՒ Ի՛ՆՈՅՆ ՎԱԽՃԱՆ ՈՒԽՏԻՒ ՈՒՂՂԵԱԼՔ. ՀԻՆԵԼ ԲՆԱԿԱՐԱՆՍ, ՈՐՈՑ ԸՆԴԴԷՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՁԵՂԾՄԱՆ ՄԸՆՈՑԻՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ ՀԱՒԱՏԱՐԻՄՔ։

Ահա դիտաւորութիւնք եկեղեցւոյ, հիմնադրաց, ուսուցչաց՝ Ջերմեռանդն եղելոց 'ի կրօնաւորական կատարելութիւն։ Արդ՝ ըստ իւրում սկզբանն մըտածեալ զկեալն ըստ կրօնի, չիցէ՞ արժան կոչել զսոյն զկոչումնս յայս վիճակ՝ բարերարութիւն Աստուծոյ, որ ընդունի և պահէ իբր յաւանդի զՀոգի Տեառն, հաստատէ և առատացուցանէ ըզնախանձ և զեռանդն նախկին քրիստոնէից։

Թէ ըստ այժմու վիճակիս հայիցիմք 'ի կրօնաւորութիւն, թերևս չիցէ՞ նոյնպէս ըստ ամին հանգամանաց շնորհ համարել զ'ի նոյն կոչումն։ Աթափեցարուք 'ի պատրանաց ձերոց քրիստոնեայք. կարի ճշմարիտ է գտանիլ յաւուրս մեր Ջերմեռանդն կրօնաւորաց ոչ միայն ընդմիայն, այլև կենաց կցորդս միմեանց յառաքինութիւնս՝ որք պահեն զՀոգի Յիսուսի Քրիստոսի։ Ոչթէ դէպ լինէր ձեզ թափանցել մտանել 'ի ներքս 'ի վայրս ապաստանի բարեպաշտ կենաց, որպէս

շինութիւն լինէր ձեզ այն, և յամօթ և 'ի խիղճ մտայ։

Այլ ոչ դիւրին են այսոքիկ. քանզի հաւատարիմ ծառայքն այնոքիկ են, որ ծածկեն և թագուցանեն զանձինս յաչս աշխարհի, և կեան միայնակ 'ի լուսութեան ըստ առաքելոյն. "Հոգւով եռայեք, Տեառն ծառայեցէք". Հռոմ. ԺԲ. 11։ Իսկ նոքա և եթ են ծանուցեալք սովորաբար, որք 'ի զրոյցս դեգերին, և որք կամակարուց ընդ աշխարհիկս պատաղին։ Հաւատարիմ ծառայք նոքա են՝ որք փառս և պարծանս համարին անձանց՝ յանարդ և 'ի չնչին գործս կրօնին թարթափիլ. և նոքա են ծանուցեալքն՝ որք սիրեն և խնդրեն պայծառ գահակալութիւնս, և ընդ առ 'ի մարդկանէն պատիւս և փառս հաճին։ Հաւատարիմ ծառայքս այսոքիկ զամենայն երջանկութիւն իւրեանց դնեն յանընչութեան և յանհանգստութե 'ի կեանցս. քանզի այսու տիրապէս նմանողք լինին օրինակի իւրեանց Յիսուսի Քրիստոսի։

րիստոսի, հրաժարեալք, խոնարհք և ապաշխարողք։

Այ՛ն են արդարև յաւուրս մեր այսպիսիք բաղումք շնորհիւ Տեառն, որ ոչ է համառօտեալ զբարերար բաղուկ իւր. և են, թէպէտ և ոչ առ մեզ միշտ ծանուցեալք, այլ կարի քաջածանօթք Աստուծոյ՝ որ տեսանէ զսիրտս, և հատուցանէ ըստ ժամանակին զվարձս արժանաւորացն յայտնապէս։ Հաւատարմութիւն նոցա՝ զօրութիւն և հաստատութիւն փայլէ մանաւորապէս 'ի դժուարին գործս ինչ՝ յորս տկարանայ սովորական առաքինութիւնն զդէմ ունիլ բուռն թափոյ յարձակման թշնամեաց նոյ։

Պնութիւն կրիտիսաց, կատականք մարմնապաշտից, այպանութիւն պղծոց, չար օրինակ վատելոցն՝ են յարձակմունք թշնամւոյն, որք փորձ փորձեն իբրև հակառակորդ արշաւել 'ի վերայ. այլ սաքա չերկնչին երբէք 'ի նոցանէ, զինեալք քաջազօր սպառազինութեամբ, ախոյեանք կանգնեալք խաթարելզգրոհխու-

ժանի նոցա. «Արէք զսպառազինութիւն Աստուծոյ, զի կարողք լինիջիք 'ի դիմի հարկանել չարին յաւուրն չարութեան». Եփես. Զ. 13։ Այսպէս՝ ապաւինեալք յայս զինուորութիւն, թերաբաց աչօք ըմպահկանաց հային 'ի գեղարդունս թըշնամեաց ըթեալս և անպիտանացեալս, կախեալս զանջապանակաց իւրեանց 'ի պայծառ և 'ի փառաւոր յիշատակ անցելոց յաղթանակաց նոցա, և առ արդարացի հաւատարմութիւն ապագայից յաղթութեանց։ Այլ սրբութեան տեղին՝ յորում բնակիին, յարդ վիճակին՝ յորում աշխատին, միշտ առաջի է աչաց նոցա, և զօրհանապազ զօրացուցանէ զայժ նոցա։ Հաւատարմութիւնն երդուեալ առ Աստուած առաջի սրբութեան սեղանոցն. աչք տիեղերաց 'ի զննին հանդիսի օրինակի նոցա, առաւել և ս արծարծանեն զեռանդն նոցա, անհպելի պահելով զառաջին անմեղութիւնն, զոր մկրտութեամբն ընկալան 'ի մուտս իւրեանց յաշխարհ մինչև 'ի շերիմ ատապա-

նի իւրեանց. կամ գոնէ 'զոր ընկալան երկրորդ մկրտութեամբն 'ի մուտս իւրեանց 'ի կրօնս։ Արդ՝ չիցէ՞ այս մեծ բարերարութիւն կոչմանն։

Այլև ճշմարիտ է, զի համաձայնութիւնն առաւել ևս պտղաբերս առնէ զայս շնորհ. «Կոչեսցես զկա, և ես տայց քեզ պատասխանի»։ Համաձայնութիւն՝ զորմէ մեր բանս է, ոչ այն միայն է զոր այժմ յայտնէք, գալովդ ձեր ընդունիլ զկրօնաւորական սքեմդ. այլ այն՝ որոյ պահանջն 'ի ձէնջ փորձ հանապազօր, զոր ընդ ամենայն աւուրս պարտիք պահել միանձնութիւնք 'ի վանս ծերացեալք յանընդհատ հրահանգս կրօնաւորական խորհրդոց։

Կոչեսցէ զձեզ Տէր գթած՝ սաղմոս ասել 'ի դասի, առանձնանալ 'ի խցի, աշխատիլ հնազանդութեամբ։ Զեզ մինայ ժամ 'ի ժամէ համաձայն գտանիլ կոչմանցս այսոցիկ նուիրն եռանդեամբ։ Տէր պահեսցէ զձեզ, զի մի առջիք զորինակ այնպիսւոյ քեռ՝ եթէ ուրեք գլուխ

ցի զք 'ի ձեզ, որոյ լի իցէ հոգի ազդե-
ցութեամբ թմբրութեան, որ անկայ-
ուն իցէ, բարբարական և անհանգիստ.
որ յածիցէ 'ի խորհուրդս իւր ցանկու-
թիւնս անշահս, անոտիս, և կենցաղա-
կանս մտաբերիցէ. որ բարեկամութիւնս
հաստիցէ, և հակառակութիւնս գըր-
գռեսցէ. յորոյ 'ի ձանձրոյթ գայցեն ա-
ղօթք, ապաշխարութիւն, և հրահանգ
հոգևորական զինուորութեան։

Արթ ինչ իցէ ասել յայնմամ թէ
պատասխանել է այս ձայնի կոչողին.
և ոչ մանաւանդ արժան է հարցանել
այնպիսումն ընդ սրբոյն Բեռնարդոսի.
առ ինչ եկիր. զինչ վախճան գալըս-
տեանդ. հիմ լքեր թողեր զաղդատոհմ,
զհայրենիս և զհանգիստ։ Առ ինչ եկիր,
ծառայել Աստուծոյ, թէ մանաւանդ ան-
ձին առանձին սպաս հարկանել յանձն-
դիւրութիւն, 'ի հեշտութիւն, 'ի փափ-
կութիւն, և 'ի ցոփութի. առ ինչ եկիր։

Խնդրեցք ճիշդ գաղափար համաձայ-
նութեանն՝ զոր 'ի ձէնջ պահանջէ Ա-

տուած։ յառեսջիք զՀայեցուածս յայն
աշխոյժ կրօնաւորս, որք նախ մոին յայս
վենասատան, որք նախ զգեցան զսուրբ
սքեմս զայս, որք նախ ուխտեցին 'ի ձեր
սուրբ կրօնս։ և համեմատեսջիք զնոցա
վարս ընդ հեղդասիրտ կրօնաւորին։ Այ-
քա ճշդել խնդրեն նա և 'ի մանր մանր
պահպանութիւնս հրահանգացն, սոքա
թեթևացուցանել խնդրեն զայն և հա-
մառօտել։ Նոքա և 'ի կարևորացն յանձն
առնուն մերկիլ, սոքա և ընդ աւելոր-
դացն յապաւումն խոժոռին։ Նոքա ճը-
գունս կամաւորս յաւելուն, սոքա և
զ'ի կանոնի գրեալսն ջնջել հնարին։ Մա-
նաւանդ՝ քանզի 'ի կարծեցեալ վիճա-
կիդ թմբրութեան համարի սէր առ աշ-
խարհ ունել։ աղէ, հայեցարուք և յայն,
քանի՞ անձկով, ո՞րքան վտանգօք, քանի՞
երկամբք լի են հետևողք նորա։ Այպա
առ Աստուած նուազ ինչ ծառայութիս
հատուցցեն կրօնաւոր անձինք քան զե-
ռանդն և զնախանձ՝ որովք պաշտի աշ-
խարհ յիւրոց երկրպագուաց։ Եղուկ

թշուառ հանգամանաց ժամանակացս և բարուցս։ Այլ զինչ զարմանք, եթէ կեանք կրօնաւորական անդ ուրեմն երբեմն մեծարգոյ և վսեմական՝ այնչափ անկած իցէ, և յառաջնոց մեծաջահ ճառագայթից անտի առկայծեալ՝ մինչև սսել ընդ ողբերգողին. «Օ խորդ շլացաւ ոսկին, այլագունեցաւ արծաթն սպիտակ». Ողբ. Դ. 1։ Զինչ զարմանք, եթէ «Լղեաք մեք նախատինք, ծաղր և այպն կատականաց այնոցիկ՝ որք շուրջ էին զմեզ». Սաղմ. ՀԸ. 4։ Լթէ առ մարմնապաշտս էր այս, ոչ ինչ էր մեզ փոյթ. Նոքա կամ առ չարութեան առնեն այնպէս, կամ վասն շահու. և զի մի խայթ լիցի նոցա կեանք այլոց։ Այլ զի և անձինք բարեբարոյք շինութիւն ինչ չառնուն, և ոչ գտանեն զնախնեայն բարեկարգութիւնս յայժմու կրօնաստանս. ոչ ճանաչեն լինել զնա վարժարան մահացուցման անձին, առանձնութեան, ճծային և կատարեալ ներանձնաւոր կենաց. ահա մեծն 'ի չարիս։

Ահա այս վայր է՝ յոր զձեր նախանձ կոչեմք մեք, զի արծարծեսցի երբեմն առ ոչ կամիլ անարժան ինչ գործել՝ ի ղեղչել զբարուք համբաւ կենաց կցորդութեան ձերոյ, և որ պաշտպանս առնէ զձեզ բարւոյ համբաւոյ ձերոյ, պարտեայ, հնութեան, առանձին շնորհայ, արտունութեանց, յարգութեանց։ Արտնեսջիք նախ ընդ ձեր դէմ. արժանի դատերք լերուք մօր ձերում. արժանի ժառանգորդք առաքինութեան և սրբութեան։ Իրանդն և նախանձ՝ ի ճիշդ պահպանութիւն օրինաց՝ որպէս էրն առ նոքօք, լեցի և առ ձեօք. յայնժամ տեսջիք զփոփոխութիւն յարգի վիճակի ձերոյ։ Յուշ լեցի ձեզ, զի առաջնորդութի ջերմեռանդն ուրուսն կուսանի առաւել պատիւ տայ ընկերութեանն և պայծառութեան իւրում կարգի՝ քան զայլ շնորհս Հոգւոյն, քան զհանճար և քան զյաջողուածս։ Իրանդն այն է՝ ոչ կեանք միայն ընկերութեանն՝ այլև փառք և պատիւ, յոր-

մէ սփիւռ ծաւալի անուշահոտութիւն բարի վարուց մինչև ցվայրս հեռաւորս, և ազդէ յամենեսեան յարդ լմն և ակնածութիւն։

Ոչ պարիսպք մենաստանիդ են, ոչ ոք սքեմդ, կամ այլոց վիճակակցութի, որք առաւելուն զյարդ ընկերութեան կամ սուրբս առնեն զձեզ, թէ և նը պաստս ինչ սրբարարս մատուցանեն. սրբութիւնն ծագէ 'ի յատուկ և 'ի սեպհական առաքինութեան իւրաքանչիւր կրօնաւորի. որոց լուեալ ձայնի կոչողին 'ի հանապազորդ կրթութիւնս անձնաւոր առաքինութեանց՝ յարմարելոց իւրեանց վիճակին, պատասխանեն նմա առաջնորդեալք 'ի հրաւէրն Քրիստոսի 'ի շինութիւն այլոց 'ի շնորհս։ Այս է որ եղև միշտ վեմափառ պարծանք և փառք մենաստանաց։

Ի զուր պանծային Եբրայեցիք ունիլ առ իւրեանս զտաճար Տեառն, "Տաճար Տեառն, տաճար Տեառն". Երեմ. Է. 4։ Այլ զինչ օգուտ. զի կորուսեալ են զիւ

բաւունս ցէր լինելոյ այնմ։ Օ՛ի անկեալ 'ի գերավսեմ փառաց լինելոյ ժողովուրդ սուրբ, քանզի ոչ ևս հետևեալ գնային ընդ շաւիղս ճշմարտութեան ցուցեալս նմա, և ոչ ևս տային պատասխանի կոչման ցեառն։

Օ՛այս արժան էր և առ ձեզ ասել, եթէ էր հեղգասրտութեան մուտ գըտեալ 'ի ձեզ։ Այլ գոհութիւն Աստուծոյ, ճշմարիտ սրտիւ գոհանալ պարտիմք գնմանէ. ոչինչ մուտս գտեալ է նորա. և միշտ թագաւորէ 'ի ձեզ եռանդն կրօնասէր. և այս զոր կեղծեաք իմն գոգցես նկարագրեցաք, պիտոյացի ձեզ առ 'ի զգուշութիւն. մի տալ տեղի հեղգութեան, այլ միշտ յամենայնի փացափայլել զհամաձայնութիւն ձեր, որպէս քաջարանօք իմն ասել կարասջիք բանիւք սրբոյն Յովբայ. «Կոչեսցես զիս, և ես տայց քեզ պատասխանի»։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
СССР Ազգ. ԱՅԳԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
7/XI 1923
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ

ՑԱՆԿ

ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԳՐՈՑՍ

Ա. ՃԱՌ. Յաղագս պարտեաց եպիսկոպոսի և հօտի նորա 1

Բ. ՃԱՌ. Յարութիւնն քրիստոսի՝ օրինակ յարութեան մերոյ ի շնորհս 19

Գ. ՃԱՌ. Ի ծնունդն Քրիստոսի, յաղագս ճշմարիտ խաղաղութեան. . 39

Դ. ՃԱՌ. Ի ծնունդն Քրիստոսի, ի սուտ խաղաղութենն աղերեալ ի մեղայ 54

Ե. ՃԱՌ. Ի յարութենն Քրիստոսի, ի ճըշմարիտ յոյսն՝ որ ի Քրիստոնեայս 78

Զ. ՃԱՌ. Ի յարութենն Քրիստոսի, ի վերայ սուտ վստահութեան կամ յանդգնութեան. 97

Է. ՃԱՌ. Ի ծնունդն Քրիստոսի, ի փգիութենն մեր պարտեաց Քրիստոնէութեան. 115

Ը. ՃԱՌ. Ի ծնունդն Քրիստոսի, յաղագս ծուլութեան. 134

Թ. ՃԱՌ. Ի յարութենն Քրիստոսի, յանանութեան գործոց ընդ հաւատոց. 150

Ժ. ՃԱՌ. Ի մարմնառուութիւն պէտուն, յաղագս անմահութիւնն 171
ԺԱ. ՃԱՌ. Յաղագս հոգւոյն մոլորութիւնն, որ ղօրացեալն է 'ի ժամանակիս 196
ԺԲ. ՃԱՌ. Յաղագս հոգւոյն հակառակութիւնն, որ ղօրացեալն է 'ի ժամանակիս 216

ԲԱՆԲ Ի ՍՈՒՐԲ ԿՈՒՍԱՆՍՆ

Ա. ՃԱՌ. Ի բանն Յիսուսայ. Դ. 7. 241
Բ. ՃԱՌ. Ի բանն Սաղմոսին. ՀԵ. 3. 254
Գ. ՃԱՌ. Ի բանն Բ. Օրինայ. Է. 6. 269
Դ. ՃԱՌ. Ի բանն Ովսէայ. Բ. 20. 289
Ե. ՃԱՌ. Ի բանն Ա. Պետ. Բ. 20. 305
Զ. ՃԱՌ. Ի բանն Յովէայ. ԺԴ. 15. 320

Է.Հ.	ՏՈՂ.	ՎՐԻՊԱԿ	ՈՒՂԻՂ
3	13	այնպիսի	այսպիսի
8	22	առ ձեզ	առ մեզ
26	8	Ժուլովբը-	Ժողովբը-
29	2	Տերտուղի-անս	Տերտուղիա-նոս
44	22	որոց	որոյ
56	5	Թարգմա-Թեան	Թարգմանու-Թեան
61	17	ձայնից անդ	ձայնից արանց անդ
102	5	ապարասա-նուԹիւն	ապաստա-նուԹիւն
113	6	արդէն	անդէն
119	7	զվերածնողը-սըն	զվերածողը-սըն
121	5	քրիստոնէի	քրիստոնէլ
152	17	յառաջին	յառաջեն
157	16	ախտարծած	ախտարծարծ
193	15	ընդարձա-կուԹին	ընդարձա-կուԹեն
195	3	եռանդուք	եռանդունք
201	6	ակնառու	անակնառու
202	10	Լակլանտիոսի	Լակտանտիոսի
203	16	գայ	գնայ
207	19	ըստ	ընդ
250	23	հաբկէ	հարկէ
300	13	արագահաս	արագասահ
301	1	զգրգռուլիս	զգրգուԹիս
333	11	առաքինու-Թեան	առաքինու-ԹենԷ

3191